


ԱՐԻՔԵԼ ԶԱՐՅԱՆ







A ["]
65-715

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱԲՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

✓

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

9959-80



ԵՐԵՎԱՆ • 1980

Կազմեց և խմբագրեց՝ ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Составитель и редактор БАБКЕН АРУТИОНЯН

Ժողովածուում տեղ են գտել ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Զարյանի մասին 1959—1979 թթ. գրկած այն հրութերը, որոնց առիթը եղել են նա Օրբ Բորելյանները՝ 1959-ին, 1969-ին և 1979-ին։ Որոշ դեպքերում օգտագործված են նաև այլ բնույթի նորուածներ։ Տպագրության ժամանակակից գրվել են սույն ժողովածուի անդամ Բորելյաններ, որոնք հատկապես գրվել են սույն ժողովածուի համար։ Նյութերի դասավորության համար նիմք է ծանուակագրական կարգ։

Զ 4907000000—009 9—80 (Տ)
728 (02) 80


РУБЕН ЗАРЯН

СБОРНИК

(На армянском языке)
Армянское театральное общество
Ереван, 1980

© Համական թատերական ընկերություն, 1980

ՀՈԴՎԱԾՆԵՐ



ՏԻԳՐԱՆ ՀԱԽՈՒՄՅԱՆ

ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ ՀԻՄՍԱՄՅԱԿԸ

Այսօր մենք նշում ենք մեր շատ շնորհակի գրականագետ և թատերաց Գորեն Ռուբեն Զարյանի ծննդյան հիսնամյակը: Նշում ենք սիրով ու ջերմացած սրտով, բարձր գնահատելով նրա կատարած գործը, նրա աշխատանքային անսպաս կորովը, նրա ստեղծագործական նուանով, նրա ակտիվ սեռ դեպի հայ ժողովրդի արվեստն ու գրականությունը և նրա ազնիվ երազաքը՝ ողջ կուտուրական աշխարհի առջև բարձրացած և ճանաչված տեսնել իր ժողովրդի ստեղծած հոգեւոր գանձերը:

Սրժեքավորել ստեղծագործողի անցած ուղին, բարոյական գնահատության ծանրակշիռ խոսք ասել նրա ստեղծած արժեքների մասին—դա շատ հին տրադիցիս է և չենայած որ հին է՝ լավ տրադիցիս է: Սակայն այդ տրադիցիս մինչև մեր նոր դարաշրջանը ունեցել է մի թերի կողմէ: Ստեղծագործող էն համարել պուետին, վիպասանին, դրամատորդին, երաժշտին, նկարչին և չգիտել ինչո՞ւ այդպիսին չեն համարել արվեստի տեսարանին, գրականագետին, քննադատին:

Մարդիկ հնիպայական գործ են կատարել և գրեթե միշտ մնացել չարժեքավորված, անուշադրության մատնաված՝ մանավանդ անցյալի մեր հայ իրականության մեջ:

¹ 1959-ի նոյեմբերի 1-ին Հայկական թատերական ըմբէրտուրյան Զարյանի ծննդյան 50-ամյակին նվիրված նորելյանական երեկոյում կարդացած զեկուցումը: Տպագրության մեջ:

Դա շա՞տ արտասոց և շա՞տ տխուր երկույթ է:

Անժխտելի փաստ է, սակայն, որ ազնիվ ու անկողմնապահ, շիտակ և սկզբունքային քննադատությունը բոլոր դեպքերում էլ անխորի հնայական ազդեցություն է ունեցել արվեստի և գրականության զարգացման պրոցեսի վրա և ապա՝ որ այդ կարևոր գործը արժանավոր կերպով կատարելու համար քննադատին, գրականագետին նույնքան անհրաժեշտ է շքեղ տաղանդ ունենալ և իր կրծքի տակ հոգական հարուստ մի աշխարհի, որքան պուտին, դրամատորգին, նկարչին...

Անմա այդպիսի ճշմարիտ արվեստագետն է, այդպիսի հարուստ ներաշխարհով մի ստեղծագործող է մեր սիրելի Ռուբեն Զարյանը, այս երիտասարդը, որը զգիտել ինչպես եկալ ու բոլորեց իր առաջին հիմնայակը:

Անկետային տվյալներից երևում է, որ նա ծնվել է հոյժ հայկական Սլեքսանդրապոլ (այժմյան Լենինական) քաղաքում: Երբ այդ փաստն ինձ հայտնի դարձավ, խստովանում եմ—ես անշափ ուրախացա, քանզի մեր հայկական հին քաղաքների մեջ Սլեքսանդրապոլը հայտնի է իբրև տրադիցիոն աշուուների քաղաք, երգեր ծնող քաղաք: Այստեղից են եկալ նշանավոր աշուու Զիվանին, աշուու Ծերամը և շատ որդիշները: Այստեղից, Ծերակի այս լայնածավալ դաշտերից է մեր անմոռանալի վարպետը՝ Ավ. Խահակյանը, Նիկողայոս և Արմեն Տիգրանյանները:

Անմա, ասացի,— անմա՝ թե որտեղից է գալիս Էմոցիաների ամս նոխորյունը, որ մենք տեսնում ենք Ռուբեն Զարյանի բոլոր գործերի մեջ և գրավվում դրանց ներությամբ: Բայց պարզվեց, որ ծնվելով Սլեքսանդրապոլում, ևս Սլեքսանդրապոլը փաստորեն չի տեսել, որովհետև... վեց ամսական է եղել, երբ իր նոր ընտանիքը փոխադրվել է Թիֆլիս:

Թիֆլիսն ինարիկ Սլեքսանդրապոլ չէր, բայց Թիֆլիսն էլ բանատեղծական ուրուսն ոճի ու կողորդի մի քաղաք էր այն ժամանակ՝ իր առանձնահատուկ տրադիցիաներով, իր գունագեղ կենցաղով, իր ազնիվ Պեպոներով,— այստեղ ևս կար երգ ու պար, կար Հովհաննես Թումանյան, կար Գարդիլ Սունդուկյան, կար հայ բարորոն, կար պայծառ երկինք ու շուալ արև և այդ արևով շողավորված կյանք՝ իր ուրախություններով ու վշտերով...

Թիֆլիսում միշնակարգ դպրոցը, մանկավարժական տեխնիկումը ավարտելոց հետո Ռուբեն Զարյանը մեկնելում է Ախմարզակ, որտեղ 1929—1932 թվականներին աշխատում է որպես հայոց լեզվի և գրականության դաստիու: Այս երկրամասն էլ իր տերյանական անշարժեր պելզամով պետք է որ ինչ-որ չափով մասնակցեր ենա ի բնութենք լիրիկական խառնվածքի կազմավորմանը, առավել հարստացներ ենա հոգական ներաշխարհը:

Հիմա ես հասկանում եմ, թե այդ ինչպես է պատահել, որ նա կարողա-

ցել է իր բոլոր աշխատությունները այնքա՞ն ջերմացնել, մոտեցնել ընթերցողի ոչ միայն մորթին, այլև սրտին, դարձնելով դրանք և անլիմենտորեն գիտական ուսումնասիրություններ, և միևնույն ժամանակ կարծես թե սրտագին, ինտիմ մի զրոյց մեզնից յորաքանչյորի հետ առանձին:

Այսուհետև կարձատու մի պահ վարելով Թիֆլիսում հրատարակվող «Գրոհ» ամսագրի պատ. բարտողարի պաշտոնը, 24-ամյա Ռուբեն Զարյանը 1933 թվին գալիս է Երևան՝ համալսարանում ուսանելու նպատակով: Այստեղ նա ընդունվում է բանասիրական ֆակուլտետը, որն ավարտում է 1936 թվին՝ հինգ տարվա դասընթացն անցնելով երկու և կես տարում:

Սա նրա ամսագործությունների և ներքին ատեղծագործական թարմված ուժերի առաջին գորավոր պողոքումն է, որից արդեն կարելի էր եզրակացնել, որ մեր կողակի ասպարեզն է ուրք դնում հարուստ կարողությունների տեր երիտասարդ խոստումնայից մի ուժ:

Ուզում եմ նշել այսուղև հետաքրքրական մի փաստ:

Սրանից ուղիղ երեսուն տարի առաջ՝ 1929 թվին Թիֆլիսում լուս է տեսնում Ռուբեն Զարյանի առաջին գրքով՝ մանր պատմվածքների փորձիկ մի ժողովածո՞ւ «Թեկարանի տղան» ընհիմանոր վերնագրով: Իմ հարցին, թե՝ դրանից առաջ նա երբեք բանաստեղծություններ գրել է արդյոք, Ռուբեն Զարյանը շատ որոշակի պատասխանեց— ո՞չ: Եվ ես զարմացած հարց տվի. «Ինչո՞ւ», որդվետու այդ պատասխանով, կարծես, խախտվում էին ինչ-որ կարևոր օրինաչափություններ:

Նայս որ՝ գրեթե բոլոր բիշ թե շատ շնորհակի երիտասարդներն եւ համարյա թե անխուսափելիորեն բանաստեղծություններ են գրում, մանավանդ երբ նրանց կողքին կա մեկը, որի աչքում նրանից տաղանդավոր մարդ չկա ողջ աշխարհում:

Եվ ապա այն, որ չեն խոսափել այդ զարմանափի օրինաչափություննից ո՞չ փիրխութիւն Մարքսը, ո՞չ դրամատորգ Շեքսպիրը, ո՞չ վիպասան Տորգենիկը, ո՞չ քննադատ Դորրոլուքովը: Նույնիսկ Լև Տոլստոյն էլ բանաստեղծությունն գրելու մի երկու փորձ է արեւ, և չեմ խոսում Գորկու մասին:

Ռուբեն Զարյանը՝ նոգով բանաստեղծ լինելով, բանաստեղծություն չի գրել: Ոչ մի հաստ: Ուրեմն որքան ուժեղ է շեշտված եղել նրա մեջ գրականությունն ու արվեստն ուսումնասիրողը, գիտական անխոնչ և խանդավառ պրագտողը, որ անվիճելիորեն լիրիկական խանճաղք ունենալով և էմոցիոնալ հարուստ երաժիշտը՝ նա իր գրիշը երբեք չի տվել հաճագավոր տողերի: Իր սրտի բոլուսնակ շերմությունը նա առանց տատանվելու ամրողապես տվել է գրականագիտական և թատերագիտական այնպիսի ծավալուն աշխատություններին, ինչպիսիք են նրա «Սիրանուշ» մենագրությունը, «Թա-

տերական դիմանելութիւն» և հասորը և մանավանդ՝ Գ. Սունդուկյանի երկերի ակադեմիական հրատարակության երեք հանորի մանրակրկիտ և ընդուռական կոմիտարժներն ու ծանոթագրությունները, որոնց ընդհանուր ծավալը հասնում է մոտ 500 մեծադիրի էջի:

Ահա այս աշխատանքն է եղել նրա պոեզիան, այն պոեզիան, որ նա սիրել է անսահմանորեն, և լիրաբերելով դրան իր կյանքի բովանդակությունը և իր արտի ողջ հանդապահությունը:

1936 թվականին մենք Ռուբեն Զարյանին տեսնում ենք արդեն Հայպետիրատում, որտեղ նա մեկ տարի վարում է մանկական գրականության բաժինը, ապա՝ Եղիշե Զարենցից հետո՝ տասնմեկ տարի շարունակ նոյն հրատարակչությունում գլխավորում է գեղարվեստական գրականության բաժինը:

1941—1943 թվականներին նա եղել է «Սովետական գրականություն» ամսագրի պատասխանատու խմբագիրը և, իմ խորին համոզմամբ, «Սով. գրականություն» համեմատ այդ շրջանում և ավելի բովանդակալից էր, քան երբեմ, և առավել օպերատու ու արդական, և շատ ավելի բազմակողմանի: Զգիտեմ, թե ժամանակին մարդիկ ի՞նչ թերություններ և սխալներ տեսան ամսագրում, բայց ահա այսօր հետադարձ հայացքով վերանայելով ամսագրի արդեն պատմական դարձած էջերը՝ և տեսնում եմ հրանցում այն ալեկոծ ժամանակի ճշմարիտ պատկերը և նորից ամեն ինչ ելնում է անցյալի մշուշից ու պայծառացած կանգնում իր ողջ հասակով մեկ:

1938 թվականից մինչև այսօր Ռուբեն Զարյանը աշխատում է Գիտությունների Ակադեմիայի պիտույքում, ազգրում նրա Գրականության ինստիտուտում, իսկ հետո, վերջին տասը տարին՝ Արվեստի սեկտորում, որը հետագայում վերածվեց Արվեստի ինստիտուտի: Այդուել նա աշխատում էր նաև՝ որպես ավագ գիտաշխատող, հետո՝ սեկտորի վարիչ, իսկ այժմ Արվեստի ինստիտուտի ղերեւուրն է:

Սակայն լրիվ չէր լինի Ռուբեն Զարյանի այս «ցուցակը ծառայությանց», եթե ես ոչինչ չափեմ այն մասին, որ անմատու պատկեր տարի է, ինչ նա մեծ խանդապահությամբ և վայելելով ուսանողության սերն ու հարգանքը, աշխատում է նաև Թատերական ինստիտուտում որպես հայ թատրոնի պատմության դասախու:

Ինչպես տեսնում էր, ընկերներ, իմաստես որ լրիվ չափով աշխատանքային քննությունն— և ո՞չ մի տրսունչ, ո՞չ մի զանց առնված գործ:

Եվ իրոք, եթե վերցնենք, ասենք, 1941 թ. մինչև 1948 թ. տևող ժամանակաշրջանը, ապա զարմանքով պիտի արձանագրենք, որ դա այն շըրշանն է, երբ նա միաժամանակ եղել է և Հայպետիրատի գեղարվեստական

գրականության բաժնի վարիչ, և՝ «Սովետական գրականություն» ամսագրի պատասխանատու խմբագիր, և ԳԱ Արվեստի մելքոնորի վարիչ, և Թատերական ինստիտուտի դասախոս: Կարևոր ու է Էալիանը այսուհետ այն է, որ բոլոր այդ դիրքերում նա պատվով ու օրինակելի բարեխաղճությամբ կատարել է իրեն հանձնարարված գործը և միևնույն ժամանակ աննկուն կերպով ատեղծագործել է, տալով ընթերցողին երկեր, որոնք իրենց արժանավոր տեղն են գրավել մեր գրականագիտության և թատերագիտության մեջ իրեն մնայուն արժեքներ ոչ միայն իրենց հարուստ բովանդակությամբ և ճշմարիտ ու խոր վերլուծություններով, այլև իրենց ճաշակավոր գեղարվեստական ձևով:

Որորեն Զարյանը զբաղվել է մեր կլասիկ գրականության մի շարք վարպետների ստեղծագործական վաստակի ուսումնասիրությամբ: Հենց միայն արդյունագիտության գծով նաև գրել է մեծ թվով փոքր և ծավալուն հոդվածներ, իր խորհն է ասել Արովյանի մասին հայտնաբերված նոր հոդվածների վերաբերմամբ, գրել է ««Նախաշավիլը» և նրա պատմությունը» ոսումնասիրությունը, որ հնատագայում դարձավ նրա թեկնածուական դիմերտացիան և վերջապես գրել է ««Արովյանի կանքը» գրքովը, որն ունեցել է արդեն հինգ հրատարակություն և 1954 թվականին թարգմանվել և հրատարակվել է անև իսպաներեն լեզվով:

Նրա աշխատավոր ներքի շարքում դուք կգտնեք սրտով ու ավյունով գրված հոդվածներ Հովհաննես Հովհաննեսի պատմակի, Դերենիկ Դեմիրճյանի, Վրթանես Փափազյանի, Պետրոս Աղամյանի, Վահրամ Փափազյանի, Ստեփան Զորյանի և Ակնել Բակունին մասին: Կտեսնենք նրա խմբագրությամբ լուս տեսած Նար-Դոփ երկերի լոր հաստորը, Հովին. Հովհաննեսի երկերի ժողովածուի առաջին հաստորը, Խաչ. Արովյանի երկնասորյակը և ապա ամենագլուխավորը՝ Գ. Սունդուկյանի ակադեմիական հրատարակության առաջին երեր հաստորը:

Որորեն Զարյանի մուտքը թատերագիտության մարզը տեղի է ունենալ 1942 թվականին, երբ նա հանդես է գալիս «Սովետական գրականություն» ամսագրի էջերում պոլեմիկական տաք շնչով և անկուտրելի տրամաբանությամբ գրված մի հոդվածով՝ «Համեստը նորից հայ բեմի վրա» վերնագրով, որի համար ասիր էր համեստացել Վ. Վաղարշյանի Համեստի դերակատարությունը Սունդուկյանի անվան թատրոնում:

Սյու հոդվածով բացահայտվեց (որպես շատ ուսախավի մի անակնելավ) Որորեն Զարյանի ոչ միայն պոլեմիկական կրծոտ տաղանդն ու իսկական մարտիկի խառնվածքը, այլև նրա՝ աղքափի մի լորջ դիմումավի մեջ մըսնեկու համար անհրաժեշտ հիմնավոր երուժիցիան:

Աշնուինետն գալիս է Վահրամ Փափազյանի Օթելլոյի ընդարձակ վերլուծությունը (1946 թ.), ապա՝ առանձին հրատարակություններով լուս են տեսել նրա «Պայքար ուս դրամատորգիայի համար հայ թատրոն» գրքույկը, «Սիրանուշը», «Թատերական դիմանկարների» առաջին հատորը, որտեղ նաև տպիս է ժողովրդական արտիստներ Օլգա Գոլազյանի, Համիլկ Հակոբյանի և Արու Ռոկանյանի ստեղծագործական պորտրետները, նրբորեն բնորոշելով նրանցից յուրաքանչյուրի համար խարակութիւնն ու առանձնահատուկը, նրանց արտիստական տաղանդի համար առավելապես որոշիչը:

Վերջապես նետաքրքրական և յուրահատուկ են նրա հուշերը Ծիրվանցադեի, Նար-Դոսի և Եղիշե Զարենցի մասին, նրա ակնարկները այն հանդիպումների մասին, որ նաև ունեցել է ուկրաինական գրականության և արվեստի ներկայացուցիչներ Պավլ Տիշինայի, Բուշմայի և Ուժվիի հետ, վրաց բնիմի խոշորագույն վարպետներ Ալկալի Խորավայի և Վերիկո Անշահարիձեի հետ, ադրբեջանական ժողովրդական պուռ Սամակ Վորդոնին հետ:

Այդ հուշերն ու ակնարկները նետաքրքրական են թե իրենց ոճով ու ձևով և թե ներինակի ձգումով, ինչպես ասում են, «որապէ» իր հիշողության հերոսի «հավերժականը վայրկյանի մեջ», շանալ հշմարել նրա այս կամ այն առանձին, թենիով և անհարկոր թվացող մի գործողության մեջ նրա բարդ բնավորության մի անսպասելի փալավառակումը:

Այդպիսի դեպքերում երեւնն կարող են տարբեր մարդկանց հուշերը նույն անձի մասին հրաց չգտն, կամ լշորեն իրար հակասել, բայց դա շատ հաճախ հրանից չէ լինում, որ հուշեր պատմողն իր թե վսալվում է, այլ հրանից, որ ինքը՝ հուշերի օրինակն է իրեն ցույց տվել մի նոր անսպասելի կողմից, բացահանդելով իր բարդ ու հակասական խարակութիւն բազմաթիվ երանգներից մի նորը, մինչ այդ անհայտ մնացածը:

Այսպես են ահա և Ծորեն Զարյանի հուշերը, որոնց մեջ մենք համայն հշմարում ենք մենք արդեն քաշածանոյ սիրելի դեմքերից շատերի բնավորության ինչ-որ նոր գծերի հայտնագործում, նրանց խոների և հույզերի ինչ-որ նոր արտահայտություն, և այդ ամենը անսպասկույս վկայում է հանե նրա սուր դիտողականության մասին, մարդկանց բնավորության առանձին դետալներից ամրողական կերպար վերատեղծելու կարողության մասին:

Նրա այդ հասկությունը առանձնապես ցանուու կերպով երևում է «Թատերական դիմանկարների» և մանավանդ Վահրամ Փափազյանի Օթելլոյի հոգեբանական մանրակրկիտ և նորը վերլուծության մեջ: Նրա երկերի այդ և նման էջերը կարդացվում են մեծ հետաքրքրությամբ և ընկալվում են իբրև հշմարիտ արվեստի անհարդախ գործեր:

Այսպես է ահա մեր սիրելի Ծորեն Զարյանի կյանքն ու գործը, և նրա

վաստակի շատ թողոցիկ այս ակնարկը իհարկե երբեք չպետք է դիտվի որպես շատ ամենայնի սպառի խոսք: Այն անշուշտ կարելի է շատ ամելի հարստացնել նորանոր փաստերով, գործերի անուններով և այլն: Սակայն թվում է ինձ, որ տվյալ դեպքում Էականը քանակը չէ,— կատարածի որսակն է, նրա կատարած գործի հապարակական-կոլլտորական դերն է մեր իրականության մեջ, իսկ այդ դերը նշանակալից է թեկող մենց նրանով, որ եթե մեզանուն հեղինակներն սկսել են քիչ թե շատ հաշվի առնել քննադատների դիտողությունները, գեթ նվազագույն ստուգարտությամբ լսել նրանց խոսքը և ինչ-որ եզրակացություններ անել դրանցից իրենց հետագա աշխատանքի համար,— ապա մոտերի այդ կարևոր հեղաշրջման համար մենք պարտական ենք նշանակալի չափով նաև Ռուբեն Զարյանին:

Քաղքենական շրջաններում կատարածված մի կարծիք՝ թե աշխատավորի մեծարման այսպիսի հանդեսները վերջին հաշվով կեղծ քաներ են, որովհետև, ասում են, տարիների ընթացքում դուք մարդկանց անվերջ խըլում ու քննադատում եք, իսկ մետք նրանց 50-ամյակին, 60-ամյակին կամ 75-ամյակին գալիս՝ գովասանական ճառեր եք ասում,— քանի՛ կոպեկ արժի:

Ծա՛տ կոպեկ արժի, անթի՛վ ուուրիխներ արժի— և ահա՛ թե ինչո՞ւ:

Տարիների ընթացքում ժողովուրդը՝ քննադատներով իր այս կամ այն արվեստագետն կատարած գործը, նրա վաստակը, նշում է նրա սայշաբումները, նրա սիսակները, գնահատելով նրա տաղանդը և ի սրտե կամենալով, որ այդ սիսակներն ու սայշաբումները ազևս չկրկնվեն, որ զուի և առավել պայծառանա նրա տաղանդը, որից ժողովուրդը չի հրաժարվում երրեք:

Իսկ այսպիսի հոբելյանական հանդեսներին ժողովուրդը լիիվ քաց է անում իր սիրտը իր վարպետի առջև: Այդ օրը նա ուզում է, ինչպես մենք այսօր մեր միջազգային հարաբերությունների մեջ, տեսել իր սիրած վարպետի վաստակի մեջ լոկ այն, ինչ հարազատ է իրեն ժողովուրդին, ինչ սուտեցնում է վարպետին իր ժողովուրդին, նրա կատարած գործի ակտիվ բարան-սը և ոչ թե այն, ինչ նրան բաժանում է ժողովուրդից:

Եվ կա այս ամենի մեջ և խոր իմաստություն.— դու ստեղծագործող ես եղել և դու տվել ես քո ժողովուրդին մի շարք գործեր՝ և՛ լավ, և՛ թուլ, և՛ մենք քնազ խփել ենք քո սիսակների և սայշաբումների համար: Բայց դու չես վիառվել, չես ընկնվել, քո գրիշ-զենքեր վար չես դրել, դու շարունակել ես քո գործը, վասնի սիրել ես այն և վաստիլ ես քո ուժերին:

Եվ ահա այսօր մենք գալիս ենք խոսելու քո կատարած լավ գործերի մասին,— այս գործերի, որոնցով դու հարստացրել ես մեր կոլլտորան և

նվաճել մեր սիրտը: Դու արիաբար ես դիմացել մեր հարվածներին, որեւմն՝ արժանի ես լսելու և քո ժողովրդի սրտից բխող շերմ խոսքերը:

Ահա ա՞յս է, որ քաղընենին չի՛ հասկանում:

Սրտանց ոգում եմ, որ մեր սիրելի Ռուբեն Զարյանը, ոչ ծավալուն և բնավ ոչ հերկովեսայն մարմնով այն անխոնչ մշակը, որի կրծքի տակ բարախում է սակայն հայ արվեստի և գրականության համար միշտ խանդավառված շերմաջերմ մի սիրտ, խորապես վաստահ լինի, որ բոլոր այն խոսքերը, որ արդեն ավել են և դեռ ավելու են այսօր՝ ճշմարիտ բարեկամության անկեղծ ու սրտաբուխ խոսքեր են:

Նա շա՞տ բան է արել, և մենք բոլորս խորապես համոզված ենք, որ դեռ է՛լ ամելին կանի, որովհետև նրա վերջին տարիների լորջ և ծանրակշիռ աշխատությունները աներկրայելի ապացուց են, որ նրա տաղանդն այսօր իր աճի և զարգացման ամենափայլուն շրջանն է ապրում, որ նա հասունացել է՝ առավել բարձրարժեք գործեր կատարելու, արվեստի առավել բարձր գագաթներ հսկանելու համար:

Նա աշխատանքի մարդ է, և նրա կյանքի գերագույն իմաստն ու արդարացումը ստեղծագործ աշխատանքն է— այն, որ ապրում է միշտ նաև ստեղծագործողից հետո, որպես մարդկանց սիրուն ու հոգին ազնիվացնող գեղեցկության մարմնացուն:

Սիրելի՛ Ռուբեն, սրտանց շնորհավորում եմ քո կյանքի առաջին հիւնամյակը՝ ի հավատով, որ ստեղծագործական այն եռանդը, աշխատանքի այն սերը, որ դու ունես, զորավոր խթան կդառնան նորանոր գործեր ստեղծելու համար:

Բարի երթ եմ ցանկանում քեզ այդ դժվար վերելքի ճանապարհին և անկոտրում առողջություն՝ բոլոր դժվարությունները հաղթահարելու համար:

ՀԵՎՈՆ ՔԱԼԱՆԹԱՐ
ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր

ՄԻՐԱՆՈՒՅԹԸՆԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

... Ոչ մի այլ վերաբերմունք, քան թե երախտագիտություն, չի կարող առաջացնել Ռ. Զարյանի ահա ի կատար ածխած մտադրությունը՝ մի ընդհարձակ ուսումնասիրությամբ վերակենդանացնել Սիրանուշի կյանքն ու գործը արդի ընթերցողի և թատերասերի համար:

Վերին աստիճանի ուշագրավ մի աշխատանք, որ պահանջել է հեղինակից կուսական վիճակում գտնվող նյութերի մանրակրկիտ ուսումնասիրություն, մեծաքանակ շանք և տոկունություն:

Ընթերցողին հնարավորություն է ընձեռված քայլ առ քայլ հետևելու հշանավոր արտիստունու բնմական գործունեության ամբողջ ընթացքին, երա ստեղծագործության ոլորտն ու խճողված, երբեմն նույնիսկ հակասական ուղիներին. Ակարագրված ու հնարավորին չափ օրյեկտիվ լինելու ձգտումը վերլուծված են երա ստեղծագործած գրեթե բոլոր կերպարները, ըստ որում հեղինակին հաջողվել է ցույց տալ այդ կերպարների օրգանական կապը իրար հետ, այսինքն՝ ցույց տալ, որ դա լոկ շարան չէ առանձին առանձին կերպարների, այլ մի շղթա է, որի օղակներն անցնում են իրար միջով, իրարից բխում և իրար պայմանավորում:

Ուկյա մի շղթա:

Ի վերջո, գրքում փորձ է կատարված նաև պարզել ու որոշել Սիրանուշ-

շի արվեստի ընդհանուր մկարագիրը, բացահայտել հրա ստեղծագործության ոճը՝ թե նեղ պրոֆեսիոնալ առումով և թե էսթետիկական ընդհանուր տեսանկյունով:

Գրքի այս մասը թերևս ամենից արժեքավորն է և ոչ միայն այն պատճառով, որ նեղինակին հաջողվել է ճշգրիտ և սպառիչ որոշում տալ այդ կնճոռոտ հարցին, այլ այն պատճառով, որ հազ թատերական արվեստի երեք մեծագույն դեմքերից մեկի արվեստի մասնագիտական բնորոշման առաջին լորջ ու խիզափի փորձն է կատարվում, առաջադրվում են Սիրանուցի առենձագործության հետ առնչված մի բանի սկզբունքային հարցեր ու խնդիրներ, որով և լավ սկիզբ է դրվում Սիրանուցի արվեստի բարդ պրոբլեմի գիտական քննարկման:

... Ավարտելով խոսք, կուզեի մի անգամ ևս նշել այն մեծ ծառայությունը, որ մատուցում է Ռ. Զարյանը՝ հրապարակելով այս շատ արժեքավոր աշխատությունը, որով սկիզբ է դրվում մեր թատերագիտության կարեւոր ճյուղերից մեկին՝ սիրանուշագիտությանը:

Ռ. Զարյանի «Սիրանուց» մենագրության համար գրած առաջարանից (Երևան, 1956, էջ VI—VII, XII):

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿ

Բանատեղծ

ՎԵՐԱԿԵՆԴԱԿԱՑԱԾ ԱԴԱՄՅԱՆԸ ԵՎ ԻՐ ՎԵՐԱԿԵՆԴԱԿԱՑՆՈՂԸ

Մենք էլ՝ կրտսեր և կրտսերագոյն հայերս, գիտեինք Աղամյանին, բայց այնպես, ինչպես գիտեինք Հայկին՝ Խորենացուն անտեղյակ, Վարդամին Եղիշե չկարդացած, Նարեկը՝ Նարեկացի չըմբռշխած: Լսել էինք: Ինչ-ինչ կարծիքների տեղյակ էինք: Գիտեինք իրրև առասպել, բայց ոչ պատմույուն. իրրև պատմություն, բայց ոչ իրականություն: Ու եկան մեր առաջին ուսուցիչներն արամյանավանդ: Այսօր չիշել կրանց՝ նոյնն է, թե ինեւ երախտամոռ աշակերտ, ինչից, փառք ասոծոն, հեռու ենք:

Նրանց շնորհիվ էր, որ մենք հպարտացանք Աղամյանով, բայց չկարդացանք գնահատել. ակնածեցինք, բայց չհասցրեցինք սիրել. «կոչեցիմք զնա և ոչ ես մեզ զայն»— կարճ ասած՝ ծանոթացանք, բայց չճանաչեցինք:

Ու եկավ մենք, որ աշակերտել էր մեր նոյն այդ ուսուցիչներին: Աղամյանի մասին իր առաջին գիտելիքները բատկ կրանցից՝ մեզ նման, բայց մեզանից տարրեր այնքանով, որ իր ուսուցիչների հանդեպ տաճած երախտագիտությամբ շքավակրանցաց, այլ ընթարձակեց կրանց գործը, ընդարձակելու շափով բարձրացրեց, բարձրացնելուց ավելի խորացրեց և հայ մշակույթի ամեն մի ջաթագովի գրաւելանին դրեց երկու պատկանազդու հաստոր, երկուսն էլ նոյն խորագով՝ «Աղամյան»:

Ոորեն Զարյանն էր, մի անձնավորություն, որի ուսումնավիրությունները հայ դասական գրողների մասին և մանավանդ քննադատական հոդվածները ընթացիկ հայ գրականության շորք, կրա անոնք դարձրել էին ծանոթ և սիրելի: Ավելին. կային բաղձանքներ և ակնկալիքներ, որոնք գրասերների մորում շաղկապվում էին միայն այդ անվանը: Այսօր, այլև չվախենալով անփափկաներան կոչվելուց, կարող ենք ասել, որ Ռ. Զարյանը

չկատարեց այդ բաղձանքներն ու ակնկալիքները: Ոչ թե չկարեցավ, այլ չկամեցավ: Եվ չկամեցավ երևի այն պատճառով, որ այլ էր ժամանակի կամքը, իսկ դա ավելին է, քան մարդկայինը: Այս ուշացած պահանջարկը կարող է արդարացվել և խիստես էլ արդարացվում է լոկ այն իրողությամբ, որ Ռ. Զարյանը մեզ պատճառած հիմքափության փոխարեն մեզ համակեց երախտագիտությամբ, մեր երեկվա ցավը գերակշնեց մեր պաօրվա որպատճառ, որովհետև իր երեկվա թերառը լրացրեց մի այնպիսի կողմից և այնպիսի կերպով, որ այսօր, ի պատիվ երա, կարող ենք սեր:

— Հայ գրականագիտությունից ու թենադասությունից հայ թատերագիտության ու արվեստագիտության անցնելով՝ Ռ. Զարյանը նմանվեց այն դասակիքն, որ հետո դառնում է գրասենյակ: Եվ դարձավ: Վկա՞ «Սիրանուշը»: Վկա՞ «Սորամյան» խորագրված երկու հատորը:

... Ռ. Զարյանի մեծագույն ծասարդությունն այն է, որ համարելով ամենը, ինչ ասված է հայկական և ստավել և ուսական մամուլում, համադրելով ու հայկադրելով ողջ ասվածը, հասել է մի այնպիսի արդյունքի, որից ստանում ենք գեղագիտական կրկնակի հանույց: Նորից ենք հաղորդվում անզուգական Ծերսափիրի անզուգական կերպարներին: Ապա և ըմբոշչումն անզուգական Սորամյանին տեսնելու պատրանքը, մի պատրանք, որ այս անգամ ավելին է, քան շեքսափիրյան ոչ-գերազանց բենադրության իրականությունը: Բայց Ռ. Զարյանը Ռ. Զարյան չէր լինի, եթե բավարարվեր հյութի հավաքմամբ ու մշակմամբ միայն: Ռ. Զարյանը գործել է մի այնպիսի եղանակով, որ պիտի որակի առերևույթ իրար չփակչող երկու բառով՝ տրամաբանական հոգերանությամբ: Միայն տրամաբանույթամբ՝ մենք գիրք կկարդայինք, բայց չէինք տեսնի Սորամյանին: Միայն հոգերանությամբ՝ մենք թերեւ տեսնեինք Սորամյանին, բայց չէինք հավատա Ռ. Զարյանին: Հիմա տեսնում ենք և հավատում, որովհետև Ռ. Զարյանը լինելով տրամաբան՝ միաժամանակ հոգերան է, առանց որի անկարելի է լինել արվեստաբան, առավել ևս թատերագետ, որովհետև թատրոնը ոչ նեղ փողոց է, ոչ էլ նույնիսկ լայն պողոտա, թատրոնը խաչմերուկ է, որեմն և պահանջում է իրենը՝ խաչմերուկային ունակություններ:

Այլ կերպ ասած՝ Ռ. Զարյանը, բարեխախտորեն, կարողանում է մասունքերականքներ ամբողջը, ակնարկը հասցնել մեկնաբանության, ժամփրու պատկերել մամոնտին, ամերակիւած Զվարթնոցից ստեղծել բորբանականական Զվարթնոց, որ այս անգամ կոչվում է «Սորամյանի Ծերսափիր»:

Ռ. Զարյանն ունի մի այլ ունակություն էլ, որ (առանց խնակելու իր համաստույքներ) պիտի կոչել տաղանդ: Ռ. Զարյանը գրե՛ զիտի, որ ավելին է, քան գրագիտ լինելը: Նա զիտի՝ երբ դնել վերջակետը, երբ ական նոր

տողից, երբ դիմել հարցականի օգնության ու երբ՝ կոչականի: Այն, ինչ ուրիշ մենք կափ մի անձունի պարբերությամբ՝ հարդէ ու ցորենը, աղև ու երկանքը խառնած իրար, սա ասում է մի շարք նախադասություններով. աճ, ինչ որիշ մենքն ասում է մի շարք նախադասություններով՝ կենդանի մարդուն դարձնելով մարդակազմության դպրոցական դասագիրք, սա ասում է մենք պարբերությամբ՝ առաջին դեպքում թույլ չտալով, որ մենք ստիպված լինենք տիսանությամբ լվանալու իր ճաշի ափսեն, երկրորդ դեպքում թույլ չտալով, որ մեր ուղենող ծովանա և հենց այս պատճառով էլ ապստամբի՝ գունե գործազորութիւն չափ... Նա եռթյամբ է զգում այն, ինչ քչերն են ողում գիտակցել. այն, որ զբաղվել գրականագիտությամբ կամ արվեստաբանությամբ՝ Եշանակում է այդ գիտությունները եթե չըարձագնել գրականության կամ արվեստի աստիճանին, ապա գոնե չօտարարցնել-չխորթացնել դրանցից, սահմերեն՝ հասնել այն պարտադիր վիճակին, երբ ընթերցողը ստանում է իմացական և գեղագիտական հաճոցը: Անս այս պարտադիր ճանապարհով է բայլել Ռ. Զարյանը և հասել մի մակարդակի, որ բարձրանալու տեղ ունի, բայց իշնելու տեղ՝ բնաւալ: Ու եթե աշխարհի առջև մենք կարող ենք հապատանապ Սորամանով, ապա չենք էլ ամաչի Ռ. Զարյանի համար...

Որեմն՝ Ռ. Զարյանը միայն բանասեր-հետազոտող-պատմաբան չէ, այլև բնաւատան: Այս բարեքաստիկ միացությամբ է նա կերտել Աղամանի կերպարը՝ իր գիրքը հիմնարկելով պատմականության վեմերին, բայց կառուցելով ժամանակակից ձևերով, վերծանելով հին վիմագրություններ, բայց որմնանկարելով արդիական վրձնի օգնությամբ: Այս պատճառով էլ Ռ. Զարյանի գիրքը լինելով պատմական հետազոտություն՝ ունի ժամանակակից հնչողություն:

Ռ. Զարյանի «Աղաման» գրքի մասին Պ. Սևակի գրած նոդվածից, որը տպագրվել է «Սովորական գրականություն» ամսագրում (1966, № 11) և տեղ գտնել բանաստեղծի «Երկերի ժողովածուի» 5-րդ հատորում (Երևան, 1974):



ՎԱՐԴԱՆ ԱԾԵՄՑԱՆ

ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, սոցիալիստական աշխատանքի հերոս

ՀՊԱՐՏ ԵՆՔ, ՀԱՎԱՏՈՒՄ ԵՆՔ...

Ռուբեն Զարյանը բոլորեց իր կյանքի վարչուն տարին:

Մեր հասարակայնությունը և, հատկապես, արվեստի և գրականության աշխատողները առանձին շերմությամբ են նշում սիրելի հոբելյարի վաթ-սունամյակը: Այս ընդհանուր համակրաքի մթնոլորտը դրդված է արվեստագետ-գիտնականի այն մեծ վաստակով, որ նա գումարել է հայրենի մշակույթին: Այդ մեծ վաստակով էլ Ռուբեն Զարյանն արվեստի ու գրականության մեր ականավոր գործիչների շարքում վաղոց գրավիլ է իր առանձին տեղը:

Բուռն ու բեղմնավոր է եղել Ռուբեն Զարյանի ստեղծագործական կենացքությունը: Իր կյանքի չորս տասնամյակները նա ինաստավորել է արվեստի և գրականության կարևոր ու առեղջվածային հարցերը լուսարանելով, մեկնաբանել ու բնութագրել է գրականության ու թատրոնի դասականակրին, ձգտել է հասկանալ ու հասկացնել կրանց ժառանգության չափն ու կշիռը, և այդ ամենը ծառացեցրել է մեր առաջնաժամկետին: Ծնորինկ երևույթների խորքերը բափանցող մտքի ու կարողության, վասն երևակայության ու նրբին կումումների, արվեստաբանը հասավ փայլուն արդյունքների:

Երկար ու դժվարին ճանապարհ է քայլել նա: Որոնումների, ոգևորությունների, հիանալափությունների միջով է անցել նրա ուղին ու հասել այն բարձունքին, որ կանգնած է այժմ մեր հոբելյարը:

Պատահի էր, երբ կախարդվեց թատրոնի անքացատրելի հմայքով: Ծփվեց ու մտերմացավ անվանի դերասաններին, և դերասան դառնալը ե-

դավ նրա երազանքը: Սակայն կյանքը նրան մղեց դեպի գրականություն: Դեռ բոլորովին երիտասարդ՝ հանաչվեց իբրև խոստումնալից գրականացեան ու քննադաս: Այդ հանձնարարականը հիմնված էր տաղանդավոր բանասերի աշխատությունների վրա, գործեր, որոնք այսօր են չեն կորցրել իրենց արժեքը:

Շուտով Ռուբեն Զարյանը հանդես է գալիս իբրև հմուտ խմբագիր և եռանդուն գրական գործիչ՝ ծավալելով կազմակերպչական, առենդագործական նոր հախաձեռնություններ:

Ծանչված գրականացեան այս անգամ առավել սիրով ու ակնածանքով, առավել համարձակ ու վստահ մոռավ թատերական արվեստի ոլորտներ՝ դառնախով նրա պատմության և ամենօրյա աշխատանքի ակտիվ կառուցողը:

Ռուբեն Զարյանն այն արվեստաբաններից է, որոնք ձգտում են և ունեն այդ իրավունքը զբաղվելու բովանդակ արվեստով: Խոկ թատրոնը լայնանուն արվեստաբանի համար անհնահրական ասպարեզն է, որը համադրվում են արվեստի բոլոր տեսակները, արտահայտվելով համար բացում լայն հորիզոններ, և ահա Ռուբեն Զարյանն ասպարեզ է հանում «Սիրանուշ», «Ադամյան» հատորները: Թատերագիտական փայլուն գործեր, որոնք բարձր հեղինակությամբ պատճեցին արվեստաբանին: Նրա անոնք դարձավ հանրածանոթ մեր երկրի բոլոր ժողովորդներին:

Այսպիսով, արվեստագիտության դոկտոր-պրոֆեսոր, արվեստի վաստակվող գործիչ Ռուբեն Զարյանը ներկայանում է մեզ, նախ և առաջ, իբրև խոշոր թատերագետ, թատերական արվեստի ականավոր տեսաբան ու պատմաբան:

Երկար տարիներ Ռուբեն Զարյանը զբաղվել է մանկավարժությամբ: Մեր երիտասարդ թատերագետներից շատերն են աշակերտել նրան: Հըմուտ մանկավարժի սաներն այսօր աշխատում են մեր թատերական արվեստի բոլոր օջախներում:

Վաթսունամյա հորելյարը երիտասարդական ավլունով տարված է նյո ծրագրերի, նոր հոդացումների իրականացման հոգակրով: Երկար տարիներ ևս գլխավորում է գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտը: Այդ ևս հայաձեռնեց ու հիմնեց իր բնույթով եզակի «Ծերապիրյան» գրադարանը, որն արդեն դարձել է միութենական արժեք, ստեղծեց «Ծերապիրյագիտական հայկական կենտրոնը» և այլն, և այլն:

Ռուբեն Զարյանը սույն գրասեղանին գամկած գիտնական չէ, այլ զարմանալի աշխատությամբ մասնակցում է մեր արվեստի առօրյային, չխնա-

յեղվ իր շանքերը՝ օգտակար լինելու արվեստի մարդկանց: Նա դարձել է մեր որոնումների, դժվարությունների ուղեկիցը:

Ռուբեն Զարյանի գրավոր և բանավոր ելույթները եղել են միշտ հետաքրքիր և ուսանելի: Նա կարողակում է ազդել ոչ միայն մտքերով, այլև իր պրոտով: Կարողակում է գիտությունը ներկայացնել բանաստեղծորեն-արտիստորեն: Դրանով է բացատրվում այն վարակիչ հոգականությունը, որով համակվում են ունկնդրողները լսելով կամ կարդալով տաղանդավոր արվեստաբանի խոսքը:

Մեծ ու շնորհակալ գործ է ծավալել Ռուբեն Զարյանը՝ սերտ կապեր հաստատելով ափյուղի հետ: Նրա արտասահմանյան շրջապատճյուններն ու համակագրությունները մեծապես նպաստում են մեր մշակույթի հարստացմանը: Հայրենասիրական այդ գործունեությունը արժանի է ամենայն գնահատանքի:

Սիրելի Ռուբեն, սիրով ու ջերմորեն շնորհավորում ենք քո ծննդյան վաթուն տարին: Հպարտ ենք քո ծանրակշիռ վաստակներով, հավատում ենք, որ դեռ շատ տարիներ հույն կրքոտությամբ ու սկզբունքավորթյամբ, հույն բարձր տաղանդով կշարունակես քո իդձերի ու հաղումների իրականացման գործը՝ հորախություն մեզ ու մեր ծողովրդի:

«Սովետական Հայաստան», 1969, 7 դեկտեմբերի, № 284:

ԱԵՎ. ՎԱԳՆԵՐ
Արվեստաբան

ԱՅԴՊԻՍԻ ՄԱՐԴԻԿ ԶԵՆ ԾԵՐԱՆՈՒՄ

Արվեստագետը ոչ միայն տեսնում է աշխարհը, ճանաչում, այլև այն անցկացնելով իր անհատական աշխարհնեկալման պրիզմայով, մատուցում մարդկանց: Ռուբեն Զարյանը գիտնական է և արվեստագետ: Նա միաժամանակ մտածում է և՛ գիտական ճշգրիտ կատեգորիաներով, և՛ կերպարներով: Այն աշխարհը, որ Զարյանը մատուցեց մարդկանց, Ծերսպիրի աշխարհն է:

Մեծ անգիտացին պատկանում է ոչ միայն իր ժողովրդին, այլև ամբողջ մարդկությանը: Ծերսպիրը մեծ հումանիստ է: Հայերը՝ ստեղծագործ ժողովորդ: Այդ ժողովորդի անման զավակներից մեկը՝ մեծ հայ Պետրոս Սդամյանը շերսպիրյան ներուներին վերակերտեց յորովի, նրա մեջ բացահայտելով մարդու իր բոլոր որպանություններով ու ցավերով, իր հոգեկան խոր տվյալաներով: Դեռևս հանճարեղ Սպլինին է ասել՝ «Սդամյանի Համեսը մեկ անգամ ևս անմանացրեց Ծերսպիրին»:

Պետրոս Սդամյանը Ռուբեն Զարյանի սիրած ներուն է: Նա Սդամյանի մասին ատելոծել է երկխառոր մենագրություն, «Ադամյանի Ծերսպիրը» գիրքը: Այժմ գիտնականի գրասեղանի վրա է նրա նոր աշխատությունը՝ «Հայ Համեսի պատմությունից»: Իր ներուի և նրա միջոցով՝ Ծերսպիրի նկատմամբ տաճած սերը անսպաս եռանդ է հաղորդում գիտնականին. նրա նախաձեռնությամբ ու ազնիվ ջանքերով է Հայաստանում ստեղծվել շերսպիրյան կենտրոն, որն առաջին միակն է Սովորական Միությունում:

Այդ ամենը սկսվեց 1964 թվականի ապրիլան այն երեկոյից հետո, երբ Ռուբեն Զարյանը գեկուցում կարդաց Շեքսպիրի 400-ամյակին նվիրված նիստում: Օպերայի թատրոնում հավաքված Շեքսպիրի հարյուրավոր հայ երկրպագութերը երկար պահեցին գիտնականին, որ նրանց առաջ բացել եր պատկերացումների ու զգացումների մի նոր աշխարհ:

Այդ երեկոյից հետո, Շեքսպիրի նկատմամբ դրսերված սիրո այդ ցուցից հետո, Ռուբեն Զարյանը կրկին ու կրկին և նոր ուժով ամրապնդվեց իր համոզմունքի մեջ, որ Շեքսպիրը այսօր մեզ պետք է, որ Շեքսպիրը հարստացնում է մեր ժամանակակիցների հոգևոր աշխարհը... Այդ երեկո Ռուբեն Զարյանը մոտեցավ իր գրադարանին և սկսեց առանձնացնել Շեքսպիրյան գրականությունը՝ Շեքսպիրի գործերը և Շեքսպիրի մասին եղած գրքերը:

Ընդհանուր 68 կտոր էր: Խոկ այժմ հայկական շեքսպիրյան գրադարանում 2000 գիրք կա՝ աշխարհի տարբեր լեզուներով: Դրանցից 500-ը Շեքսպիրի մասին է: Նորանոր գրքեր են ստացվում աշխարհի բոլոր երկրներից, և այդ գործում մեծ հաճախակի նույնականություն են դրսերում սիրութքահայերը:

Աշխարհում գոյություն ուներ շեքսպիրյան երեք գրադարան՝ Բիրմեն համայնք, Վայմարում, Վաշինգտոնում: Հորրորդը եղավ երեսական գրադարանը: Խոկ հիմքերորդը ծնվեց դրանից ավելի ոչ՝ Մյունիենում:

Շեքսպիրյան գրադարանի հիման վրա Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտին կից աստղագլուխ է շեքսպիրյան կենտրոն, որի ղեկավարուն է Ռ. Զարյանը: Արդեն լույս են տեսել «Շեքսպիրական» ամենամյա հանդեսի երկու հատորները, շուտով լույս կտեսնի երրորդը:

Հայկական շեքսպիրյան կենտրոնը գրանված է այնպիսի պարբերական մշակմամբ, ինչպիսիք են՝ «Շեքսպիրը հայ հասարակական մտքի գնահատմամբ», «Շեքսպիրի հայերեն թարգմանությունների պատմությունը», «Շեքսպիրը հայ բնույթում»:

Մարդ պետք է ունենա սիրած գործին ծառայելու անհուն հալաւարմություն, գործի բաշտելյակություն ու բանիմացություն, նախակին հասնելու կիրք, նախանձելի եռան՝ այսքան կարճ ժամանակամիջոցում Հայաստանում Շեքսպիրի հոգևոր հուշարձանը կառուցելու համար:

Ռուբեն Զարյանը ոչ միայն հետազոտող է և շեքսպիրյան ժառանգություն ժողովող: Նա պրոպագանիստ է: Լոնդոնում, Փարիզում, Կանեքենում նա հանդես է եկել դասախոսություններով՝ «Շեքսպիրը և հայերը» թեմայով: Այն տպագրվել է հայերեն և անգլերեն: Մենք արդեն ասացինք, որ Զարյանը գիտնական է և արվեստագետ: Նրա գեղարվեստական շնորհը ցայտում կերպով դրսերում է հրա հրապարակային դասախոսություններում: Անա թե այդ մասին ինչ է գրել Կանիրենի «Արև» թերթը. «Հոս թե հոն, ժողովուրդը

Հատած է սրահին մեջ, և իր դեմ կեցած է մարդ մը, նուրբ դիմագծերով, աղայանական երկար մազերով, վտիտամարմին մարդ մը, որ հազիվ խոսիլ սկսած, արդեն չքացած է. չկա այդ վտիտամարմին մարդը. անոր տեղ կանգնած է խորաթափանց և միաժամանակ խորախորհուրդ աշքերով հնկա մը՝ իր միտքով, տիտան մը՝ իր հմտությամբ...»:

Ռուբեն Զարյանը 60 տարեկան է: Նա ականավոր արվեստաբան է, Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտի դեկան վարը, մի շարք գրքերի հեղինակ, համաշխարհային արվեստի մեջ հայկական արվեստի հաստատման կրթու ջատագով: 60 տարեկան պրոֆեսորը լի է պատանեկան կրակով և ստեղծագործական իր բազմաթիվ մտահղացումները իրագործելու հաստատ կամքով:

Այդպիսի մարդիկ չեն ծերանում: Ռուբեն Զարյանը՝ դա ոճ է: Օրինակ Է բոլոր նրանց համար, ովքեր նոր են ուոք դնում գիտության կաճառում:

«Երևանա Երևան», 1969, 8 դեկտեմբերի, № 285:

ՍԱՐԳԻՍ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
Արվեստագիտության դոկտոր

ԱՐՎԵՍՏԱԳԵՏԻ ՀԱԾՎԵԿԾԻՈԾ

Ուրբեն Զարյանը մեր գեղարվեստական մտավորականության ականավոր դեմքերից մեկն է: Նա ճանաչված ու գնահատված է ոչ միայն իր հայրենիքում, այլև ամբողբահայ մտավորականության մեջ: Հասարակության մեջ իր այսօրվա դիրքն ու հեղինակությունը նաև նվաճել է նաև և առաջ իր գիտական աշխատություններով, որոնց թիվը քիչ չէ և որոնցից ամենաարժեքավորներն ամենուրեք լայն ընդունելություն են գտել: Արվեստական ո՞ր մտավորականի գրադարանու խնամքով չեն պահպանվում, ասենք, նրա երկու հատորամոց «Պետրոս Սղամյանը», «Սիրանուշը», և ո՞վ է, որ հափշտակությամբ չի կարդացել: Իր այդ հշանավոր աշխատություններում Ուրբեն Զարյանը լուսարանել է նաև աշնաբիս հարցեր, որոնք նախկինում կամ չեն արձարձվել, կամ գիտական լայն ընդհանացման չեն արժանացել: Խոր և լայն այդ լուսարանությունները մեծ ուժ ուն են հաղորդել գեղեցիկ կառուցվածքով և հիմնալի լեզվով գրված նրա ստեղծագործություններին:

Սակայն Ուրբեն Զարյանի ստեղծագործական կորով վաս արտահայտություն է գտել ոչ միայն հայ մշակույթի անցյալի գործիչների վերապատկերման, մենագրական-բանասիրական երկերում, այլև տեսական-քննադատական մարզում: Մենք այդ տեսնում ենք նրա «Պալքար ոսու դրամատորգիայի համար հայ թատրոնում» աշխատությունում: Զնայած իր բանասիրական բնույթին, նրա տեսական-քննադատական հակումներն առկա են հայ 1965 թ. մայիսին Լոնդոնում կարդացած «Շեքսպիրը և հայերը» հայտնի դասախության մեջ, որն առանձին գրքով լույս տեսավ երկու տարի անց:

Այս ամենը Զարյանին լինի չեր ներկայացնի, եթե պահանձ նրա քընադատական գործունեության մի շատ կարևոր մոմենտը ևս, որն առնձին գրքով լույս տեսավ երկու տարի անց:

Է սովորական շրջանի հայ թատերական արվեստի հետ, քանի որ նա եռանդուն մասնակցում է հայ թատրոնի այսօրվա բոլոր հարցերի քննարկ-մանը:

Ուրեմն Զարյանը արվեստագիտության ասպարեզ է եկեղ գրականագիտությունից: Գրականագիտուն Ռ. Զարյանը նշանարելի հետոք է թողել նոր շրջանի գրականության հիմնադիր Խաչատոր Արտվանի կանքին ու գործերին Ալեքսանդրով իր հետաքրքրական ուսումնակիրություններով: Նոյն տարիներին մեր պարբերական մանուկում և զանազան հրատարակություններում նա հանդես է եկեղ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսխանի ստեղծագործությունների վերլուծումներով և սովորանա պոեզիայում երևացած նոր, տաղանդավոր բանաստեղծների բերթվածքների բացահայտումով: Այնպէս որ, երբ նա թատերագիտության ասպարեզ մտավ իրեւ քննադատական, ճորելուկ չեր և որոշ փորձ ուներ: Այս անցումով, անկանած, շահեց թատերագիտությունը, որի գիտական նշակմերը այդ տարիներին ասկավ էին: Զարյանի գրական բեղմնավորությունը առանձին ուժով դրսոր-վեց թատերագիտության մեջ և աչքի ընկնու դեր կատարեց:

Ուրեմն Զարյանը հայտնի է նաև իր կազմակերպչական ընդունակություններով և նպաստելունություններով: Դեռևս Պետքրաստի գեղարվեստական գրականության բահին դեկավարդեկիս նա հայ դասական գրողների երկերի տպագրության մեջ վճռական դեր է կատարել: Երեսնական թվականներին լուս ենասած ընտիր երկերի գեղեցիկ հրատարակությունները հրաշանքերի արդյունքն են: Իր եռանդի շնորհիվ նա շատ թարմացրեց «Սովորական գրականություն» ամսագրի բովանդակությունը, ներգրավվով բազմաթիվ երիտասարդ շնորհալի գրողների, որոնցից շատերն այժմ հայտնի անուններ են:

Բայց Զարյանի կազմակերպչական եռանդը և նոր նախաձեռնությունները եռապատճիկ չափով հանդես եկան այն օրերից, երբ նա սկսեց գիտավորել Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի պատմության և տեսության ինստիտուտը: Ահա գրեթե 15 տարի է, ինչ նրա նախաձեռնություններով ու դեկավարությամբ ինստիտուտը կատարում է շատ կարևոր և արժեքավոր գործեր, որոնք բարձրացնում են նայ գեղարվեստական մշակույթի տեսակարար կշիռ՝ միշտ արժանանալով համընդհանուր ուշադրության: Այդ ուսումնակիրությունները վերաբերում են երաժշտությանը, կերպարվեստին, ճարտարապետությանը, թատրոնին, կիրառական արվեստին և այլն: Զարյանի նախաձեռնություններից մեկը (շերապիրագիտությունը համընդհանուն մեջ) այժմ շերմ ընդունելություն է գտել ոչ միայն մեզանում, այլև Սովորական Միության, ժողովրդա-դեմոկրատական երկրների, մինչև իսկ

Արևմտյան Եվրոպայի շեքսպիրագիտական շրջաններում: Պետք է առնա-սարակ նկատել, որ ինստիտուտը Զարյանի ղեկավարությամբ վերջին տաս-համյակում կարողացավ ամուր կապեր ստեղծել բազմաթիվ երկրների ար-վեստագետների և գրականագետների հետ, ամենուրեք ժողովրդականացնե-լով հայ գեղագիտական մորի արգասիքները:

Անհրաժեշտ է ավելացնել մի շատ կարևոր պարագան ևս: Գիտահետա-զուտական այդ հաստատության մեջ վերջին տասնամյակում երիտասարդ-շատ ուժեր ընդգրկվեցին, որոնց մի մասը արդեն շատ լորչ դեր է կատա-րում տարրեր բնագավառների արվեստագիտական աշխատանքներում: Նը-րանք իրենց առաջադիմությամբ պարտավան են թե ինստիտուտի փորձված ու հնուր ավագ գիտաշխատողների և թե, մանավանդ, դոկտոր-պրոֆեսոր Զարյանի հոգատարությանը և բազալտանքին:

Անա այսպիսին է մեր բազմավաստակ արվեստագետ ընկերոջ գործու-նեության հաշվեկշիռը, որով նա այսօր, իր կյանքի վեցերորդ տասնամյակը լրանալիս, ներկայանում է իր ժողովրդին:

«Ավանգարդ», 1969, 9 դեկտեմբերի, № 146:

ԱՐՏԱՇԵՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ
Քանայիրության դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՅՈՒՆԱԾՈՒՆՉ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Այս դեպքում ամենահարմարը գոտում եմ «հանդավառ» մակդիրը, որն ամենից լավ է բնութագրում մեզ, 30-ական թվականների սկզբի պատահեցրին՝ ուրծ-իններորդ դասարանների աշակերտներին, արտահայտում է նաև ժամանակի նոգերանությունը: Մի համընդհանոր պացք էր դեպի վեր, դեպի վեհը: Բողորին միացնում էր մի նպատակ՝ նոր աշխատավորների երկիր կառուցելու, կունունիտական կյանք ստեղծելու նպատակը:

Բողորը համակված էին մեծ գործի մասնակցի գիտակցությամբ, և դա իր կնիքը էր դրեւ մարդկանց նույնիսկ արտաքինի, դեմքի արտահայտության, բայց վաճառքի վրա:

Մենք ունեինք մեր «աստվածները», մեր սերն ու հավատը, պաշտամունքն ու ոգեշնչման աղբյուրը. ամենաբարձր դյուրից սկսած մինչև մեր անմիջական ավագ սերունդը՝ մի ինը-տաս տարով մեզանից մեծ, մեր իդեալի կենտրոնի մարմնացումները, որոնց գոտն հեռվից տեսնում էինք, լսում, անմիջականորեն զգում: Նրանք՝ խանդավառ ժամանակաշրջանի երիտասարդները, մեզանից երշանիկ էին, որովհետու արդեն գործի մեջ էին: Մենք պատրաստվում էինք մտնելու, իսկ նրանք սկսել էին: Նրանք մեզ պատկերանում էին որպես մարդկային կատարելության մարմնացում՝ մեր իդերի, ցանկացած, երազած տիպարի մարմնացում: Երշանիկ սերունդ: Այդ սերունդն արդեն հասցրել էր ձևավորվել, ամրանալ, պատերազմի դաժան ու ներսական տարիները կարողացավ տանել արիարար՝ ընթացքում հասունացով, խորանարկ, ինստանանով:

Եվ հիմա է մեր սերունդը, կես դար ապրած, գտնում է ավագ սերներին համակից, նրան պիրահարված: Ու այսօր անշափ երշանիկ է ներկայացած

առիթի համար՝ խանդավառ ողջույն հղելու այդ սերնդի բոլոր լավն ու բարդն իր մեջ կրող Ռուբեն Զարյանին:

Թրիխիսիում, Զարյանցի խորենով ասած, այդ «քազմացեղ քաղաքում, արևելքի և արևմտուքի այդ երիներանգ խառնարանում» են անցնում Ռուբեն Զարյանի, բոլը արևելցու և նորը ելյուացու մանկությունն ու պատանեկությունը, վաղ երիտասարդությունը: Սյստեղ է նա կրակում իր ամենազրել կրով՝ սիրով դեպի գրականությունն ու արվեստը, այստեղ է նա հայտնաբերում իր գեղագիտական Էլույունն արտահայտելու պահանջը՝ «Թեյարանի տղան», պարբերականներում՝ գեղարվեստական երկերում և քննադատական հոդվածներում:

Սուաշին փորձերում արդեն տեսնում են ապագա գեղագետ-գրականագետ-արվեստաբանին, որը ձգտում է հոգու կանքի նրբերանգների վերահանումով բացել ոչ միայն արվեստի Էլույունը, այլև՝ տցիալական, հասարակական երևույթներ, որոնց հայելին, «մի կարֆիլը», ի վերջո, հոգին է հանդիսանում:

Պատմվածք՝ «Առաջի երկու օրը» («Գրական շաբաթ», 1929, 11 օգոստոսի). գործողությունների մանրամասներ, որ բացահայտում են ապրումների խորքերը. զգում են ժամանակի հագեցվածությունը խիստ կարևորությունունիկը— առավույշն ծառայությունն, երեկոյան՝ բանֆակ:

«Գրոհի» պատասխանատու քարտուղարն է, Հայարտանը հանդես է գալիս զեկուցումներով: 1933-ի մարտի 12-ին դասախոսություն է կարդում «Մեր պոեզիայի այսօր» («Գրոհ», 1933, № 3): Նույն 1933-ի ապրիլի 12-ին Ավ. Ղուրբանյանի բնասատեղծությունների քննարկմանն է մասնակցում, ապրիլի 23-ին ներածական խոր է ասում Ռ. Լուսինյանի «Մայանեի» մասին («Գրոհ», 1933, № 4): Հողված Վ. Կիրշոնի «Ռենեմերը զնգում են» պիեսի բևմադրության առջիկ («Պոլետար», 1928, 8 մելոդիաների) և այլն: Քանի երերամյա քննադատը շատ ավելի ամուր գտնվեց, քան անոն հանած, «հաստոն» շատ գրականագետներ, որոնց իր հոնով տարավ շրերթայնության, շեփորային ու թմրուկային գրականության հեղեղը: Ռոբեն Զարյանը, Եռիքամբ գեղագետ, այդ հունի դեմ գնաց: «Պետրոս Դուրյանի «Տաղերը» հոդվածի հեղինակը հպարտությամբ է գրում. «Տրտմաթախիծ բանաստեղծը մեռավ «արցունքու տողերի», «արև տեսցնելու» ցանկությունը շորթերին: Որպես պատասխան այդ տողերին՝ Դուրյանի մահից 60 տարի անց՝ Հայաստանի պետհրատը, Ալազանի և Նորենցի խմբագրությամբ, հրատարակել է նրա «Տաղերը»: Վաղամետիկ Դուրյանի «քանաստեղծական հմայքով» ներշնչված այս հոդվածը, ապրումով շնչող ու մտածող լեզուն, զգացմունքով ու մտքով խորացած տողերը, որոնք և ներթափանցում են բանաստեղծի գե-

Դարվիստական առանձնահատկությունների ոլորտները, և նիստում ու սերպահապում, և բանաստեղծի արածի պրափ գնահատական տպիս, նոր սկսող քննադատ-գրականագետի խոսուն երաշխավորագրերն էին: Դուրս լինի մասին գրում է: «Նս բանաստեղծական գործունեության առաջին բազմերից կարողացավ կողմնորոշվել»: Այս խոսքերը վերաբերում են և Ռուբեն Զարյանին: Նա սկսեց և գնաց ճշմարիտ գեղագետնի ճանապարհով:

«Գրոհում» (1933, № 4) տպագրվում է Ռուբեն Զարյանի «Մարիանա Շահինյանի «Հիորոցենորապ» վեպը» հոդվածը: Լավ է գրված այս հոդվածը, հաստես գրականագետն գրչով: Խոկ սեղանները 24 տարեկան եք: Հկա այն ժամանակ շատերին հատուկ կամ անզուսաց գովերգություն կամ անհարկի կշտամբանք: Ռ. Զարյանը չի սպասարկում կամ ոգևորված հիմն կարդում Մ. Շահինյանին, աշխատում է որքան կարելի է խորը եերթափանցել այս շատ ոչագրավ սուղծագործական անհատականության մեջ:

Ռուբեն Զարյանը տեղափոխվում է Երևան՝ մայր հայրենիքում հոգալու իր եղոյնուն կյանքում և արվեստում հաստատելու մասին: Մեր ոչ միայն գրական, այլև լայն հասարակայնությանը հայտնի է ալիսավոր գեղագետ-գրականագետ-արվեստաբանի խիստ արգասավոր ու հագեցած գործունեությունը Հայաստանի պետհաստում, «Սովետական գրականություն» ամսագրում, գիտաբանութեարի ակադեմիայի գրականության և լեզվի ինստիտուտում, Մատերական ինստիտուտում, հայ շերսպահիրագիտության բնագավառում... Ընթերցողների լայն շրջանների լայն սեփականությունն են դարձել Ռուբեն Զարյանի հարուստ ու նրբագաց հոգու, պրատուն, սրատես մորի արտօնայսություններ, մեր մշակույթի մնացուն, դասական արժեքներ «Արվեստի կյանքը», «Թատերական դիմանկարները», «Սիրանուշը», «Ադամյանը», Վահրամ Փափազյանի մասին աշխատություններ... Վերջիններս հասուն մորի, խորագին պրատումների արգասիք են, հայ գրականության մեծանուն երախտավոր Խաչատոր Սքովյանի և հայ բանագիրայան թատրոնի ու հայ թեամի հուկաներ Սիրանուշի, Պետրոս Սիրանուի, Փափազյանի անհատամ վաստակը բնույթագրու, նրանց նկատմամբ խորուն սիրու վառ օրինակներ: Աղյատս շերմաշոնց են գրված Զարյանի հուշերը մեծասաղանու վիպսաւան, դրամատորգ Շիրվանզադեի, ազատարար Հոկտեմբերի երգիչ Եղիշե Զարենցի և այլոց մասին:

Ռուբեն Զարյանի ինքնամոռաց նիմրումը գեղեցիկին՝ կյանքում և արվեստում, ոգեշնչում է մեզ, հանդիսանում է գեղագիտական դպրոց, ոտուցիչ և դասագիրք, որ էսթետիկական գերագույն ճշմարտության հաղթանակի հավատ է եերշնչում գրասեր, արվեստաբեր ընթերցողի հոգում:

ԱՎԻԳԵՆ ԽԵԶՈՒՄՅԱՆ
Արակագիր

ՍԻՐԵԼԻ ՄԱՐԴԸ ԵՎ ՀԱՆՐԱՀԱՅՑ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Նման պարագայում, երբ լրացել է սիրելի մարդու և հանրահայտ գիտականի ծննդյան 60-ամյակը, գիտեմ, հարկ կա հիշելու նրա համակ կենապրությունը. նրա կյանքի ճանապարհը ծայրինայր, կատարած գործի և երախտիքի պատմությունը...

Բայց ես այդ ինչպե՞ս անեմ:

Ու եթե փորձեմ, նախ պիտի տամ անուն՝ Ռուբեն Զարյան, իսկ դա չէ՝ որ արդեն ահագին բան է ասում: Եվ պիտի կողք-կողքի շշարեն տարեթվեր, բանի որ դրանց գումարից է կազմված 20-րդ փոթորկուն և դժվար դարը: Ու եթե կամենամ համագումար խմբել ու նկարագրել Ռուբեն Զարյանի անցած ուղին, կատացվի մի բարդ ժամանակի ձոր ու լեռնա ճանապարհ, օր ու գիշերների աննոնչ տքնություն, կյանքի, մոքի փայլուն շնորհների և վաստակած նախանձենի իմացությունների անդադար նվիրաբերություն հայրենի գրականությանը և արվեստին:

Բայց այսքանը թի կինի, թեպեսն շատ քերի մասին է հնարավոր այս բանն ասել:

Եվ, հիսրեկ, չափազանց սակավ է պատահում այսպես. դեռևս երիտասարդ, և արդեն ճանաչում վաստակած արովյանագետ, որ հնայիված, տաղանդավոր գրչով աշխարհ է թերում «Արովյանի կյանքը», «Նախաշավիդի պատմությունը», «Նոր տվյալներ Արովյանի կյանքից»: Արանք մի բանի անգամ հրատարակված, մի բանի լեզվով խարգմանակած պատկանելի գրքեր են, խորիմաստ ուսումնասիրություններ՝ ընթերցված և մշտապես ընթերցվող, ինչպես լինում են միայն տաղանդավոր վիպասանությունները:

Թերևս տարօրինակ է գիտական ուսումնասիրության այսպիսին լինել-

լը, բայց դա գորավոր մի պատճառ ունի. Արանք ծննդեցին գոյչակված անհրաժեշտության մղումով. Արանց պահանջում էր Արդվյանով վերստին, ժողովրդով հետաքրքիր ժամանակը, ինչը նախապես իմացրին մեծ Զարենցը և մեծ Բակրինցը:

Ու հետո, անմիջապես, Ռուբեն Զարյանի բանադրական ժամանակայինու շնորհը աշխարհի բերեց Գարբիել Սունդուկյանի երկերի գիտական հրատարակության երեք անկրկնելի հատոր:

Մտերիմ գրքեր էին սրանք բոլորը. եկան՝ ուշը ու միտք գրավեցին: Եկան՝ նիշեցրին, որ պիտի բարձրահոն մնալ և չինել երբեւ տարադեմ. կան Արդվյան, Սունդուկյան, և որիշ շատ՝ վիթխարի վեմություններ ունի հայ ժողովորդը:

Տասնեւեկ տարի գլուխ կանգնած Պետրասի գեղարվեստական գրականության անդաստանին, որտեղ շոնդակից նախորդ էր եղել Եղիշե Զարենցը, նորից այդ բանն ասաց Ռուբեն Զարյան: Եվ կրկնեց նույնը՝ հոգատար և ուշադիր բանասեղծ ու արձակագիր նորեն տաղանդներին, ովքեր և բացվեցին նրա ձեռքով:

Իր ճշմարիտ ասելիքին մշտապես հետամուս գիտնականը, հետո, դարձավ արվեստին, գնաց ու բերեց որիշ հայրենի մեծություններ. «Սիրանուշ», «Ադամյան», չանքեր գործադրեց հիմնադրելու գիտությունների ակադեմիայի Արվեստի հետախոսությ, Ծերապիրյան գրադարանը, «Ծերապիրագիտության հայկական կենտրոնը», «Ծերապիրական» տարեգիրքը...

Հայ թատրոնի պատմության ժամանակակից գիտությունը և հայկական շերապիրագիտությունը՝ արդեն արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր Ռուբեն Զարյանի կենսագրության այն մասն են դարձել, որ նրա Ակարագիրն է, նրա ՅՕ-ամյա կյանքի հազվագյուտ երիտասարդական բնավորության կոլյուսը:

Բնավորություն ասացի: Ռուբեն Զարյան մարդը: Նա խոսում է Արդվյանի, Սունդուկյանի, Զարենցի, Բակունիցի, Սիրանուշի, Ադամյանի, Ծերապիրի մասին. խոսում է ներքին մի հրայրով, նրբուն բացում նաև հրանց մարդկային բնավորության՝ մեզ համար բանկ ու սիրելի հատկությունները: Եվ, զարմանք է, ամեն մեկի շավից տեսնում ես իր իսկ՝ Ռուբեն Զարյանի մարդկային նկարագրում, նրա նորք ճաշակավոր գացցողությունների, խոսք ու մտքի, վարեցողության մեջ և նույնիսկ մոտագրալ հայացքում:

Եվ ահա, լրացել է Ռուբեն Զարյանի ծննդյան ՅՕ-ամյակը: Հիմա միայն պիտի կամենամ նրան նոյն եռանդն ու խանդակառությունը շատ երկար տարիներ, նոյնը, ինչ նա ունեցել է մշտապես:

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ
Բանաստեղծ

«ԴՈՒ»-ՈՎ ԵՎ ՄՐՏԻ ԹՐԹԻՌՈՎ

Կարծես թե հարկ ու պատշաճ կլիներ գոնե այսօր «Դուք»-ով խոսել մի մարդու հետ, որի 60-ամյակն ենք տոնում սիրով ու մեծարանքով:

Մե՞ծ, շա՞տ մեծ բան է ՀԱՐԳԱՆՔԸ: Բայց կա մեծագոյնը, որ ՍԵՐ է Խոչվում: Խակ որտեղ ներկա է մերը, ջնջվում են տարիքային տարրերությունները իրենց պարտադրանքով, և հարգալից, բայց սահմանադիր «Դուք»-ի տեղն է գրավում ջերմացնող ու սահմանազանց «Դու»-ն:

Ռուբեն Զարյանը աշխատանք երջանիկ անձնավորությունն է, որին «Դուք»-ով դիմելիս կլ մտքիդ մեջ «Դու» ես գործածում, որովհետև իր հանդեպ տաճած հարգանքը այլ բան չէ, բան սիրո խտացում: Նաև աշխատանք երջանիկ անձնավորությունն է Ռուբեն Զարյանը, որի տարիքը կարծես թե մեծանում է իրեն և առանձին՝ անկախ իրեն կրողից, որ մեռում է կարծես թե նույն առաջ-վանը:

Ահա թե ինչու չես կարողանում հավատալ, որ Ռուբեն Զարյանը արդեն... 60 տարեկան է:

Տե՛ս հավատում, որովհետև 60-ամյա Ռ. Զարյանի գրական և գիտական ամբողջ գործութեալթյունը եղել է ոչ այլ ինչ, բան թարմի և դալարի պաշտպանություն, որեմն երիտասարդության ջատագովանք: Թարմի, դալարի, երիտասարդականի պաշտպանություն և ջատագովանք՝ ոչ թե այս բառերի անմիջական ընկալմամբ, այլ այս նույն բառերի միջնորդական հասկացություններով:

Սպրեյով ԱՅՍՈՐՎԱ մեջ և ԱՅՍՈՐՈՎ, Ռ. Զարյանը միշտ էլ ունեցել է ՎԱՂՎԱ մտահոգություն: Այսպես կարող են լինել միայն հրանք, որոնց միակ «քուլությունն» է երիտասարդ լինելը, կյանքին երիտասարդի աշքերով



1927





1928

նայելը, այլ կերպ ասած՝ վաղվա մասին մտածելը: Եվ միայն ոմանց ծանոթ Ռուբենը բոլորին ծանոթ Զարյան դարձավ հենց այն օրից, երբ իրեն նվիրեց... Աքովյանին՝ այն զարմանալի ԵՐԻՍԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ, որին մենք բոլորս մեր նոր գրականության ՀԱՅՐՆ ենք համարում:

Ի՞նչ աղյուկ հարուցեց «Վերք»-ին կցված այն փոքրիկ առաջարանը, որ ստորագրել էր Ռ. Զարյանը: ԱՆՁՅԱԼԻ մասին գրելիս Ռ. Զարյանը մտածել էր Վ.Ա.Վ.Վ. մասին: Այս պատճառով էլ նրա անունը մտապահեցին բոլոր նրանք, ովքեր մտածում էին վաղվա մասին: Նոյն այս պատճառով էլ Ռ. Զարյանը աչքի փուշ դարձավ բոլոր նրանց համար, ովքեր (քենազդութեան գիտակցարար) վախենում էին վաղվանից: Եվ Ռ. Զարյանի «հնացանք» բնորոշվեց մի բառով, որ իր օրինական հապատակածն է այսօք՝ ԷՍԹԵՏ, ապիներն՝ ԳԵՂԱԳԵՏ:

Այն, Ռ. Զարյանը գեղագետն էր ծնվել, երբ դեռ չկար գեղագիտության կարիք, բայց հաստևանում էր դրա անհրաժեշտության գիտակցությունը: Այո՛, Ռ. Զարյանն ուներ գեղեցիկի մի ընկալչություն, որ չէր տեղադրվում հասկացությունների այն անձկության մեջ, որոնք ձևաված էին ոչ թե ՏԵՂԱԴՐՄՍՆ, այլ ՏԵՂԱՎՈՐՄՍՆ վրա: Ռ. Զարյանն իր գործունեության առաջն շրջանում ամեն ինչ արեց՝ ոչ թե անձկություննից դուրս եկելով (նա այդ անձկության մեջ չի եղել երբեմ), այլ այդ անձկությունը լայնացնելով համար: Հայ գրականագիտություննից ու թնադառանություննից հայ արվեստաբանության ու թատերագիտության անցնելով՝ Ռ. Զարյանը հնանալեց այն դասապիքին, որ նետու դառնում է զրապետ: Եվ դարձավ: Վկա՝ «Թատերական դիմանեկարները», վկա՝ «Սիրանաւչը», վկա՝ երկնատորանի «Արամանը», ինչպես նաև Արվեստի ինստիտուտի ողջ գործունեությունը, մի ինստիտուտ, որ դեկանալիքում է Ռ. Զարյանի կողմից՝ պատցուելով նրա նաև կազմակերպչական հմտությունների և նորանոր հոդացումների անպակասությունը («Ծերպափիրագիտական հայկական կենտրոն», «Ծերպափիրական» տարբերք, «Ծերպափիրական գրադարան», «Հայ գիրքն ու գրականությունը օտար լեզուներով» և այլն): Ռ. Զարյանի մասին խոսելիս անկարելի է չհատկանշելու նրա մի ունակությունն էլ, որ (առանց խնայելու իր համեստությունը) պիտի կոչել տաղանդ: Ռ. Զարյանը ԳՐԵՂ ԳԻՏԻ, որ ավելի է, քան անվանի պրոֆեսոր-դոկտոր լինելը: Այն, ինչ որիշ մեկը կասի մի անոնին՝ պարբերությամբ, հարդեն ու ցորենը, աղճ ու երկանքը խառնած իրար, սա ասում է մի շարք հախարասարդություններով. այն, ինչ որիշ մեկն ասում է մի շարք հախարասարդություններով՝ կենդանի մարդուն դարձնելով մարդակազմության դպրոցական դասագիրք, սա ասում է մեկ պարբերությամբ:

Ահա այս պարտադիր հանապարհով է քայլել Ռ. Զարյանը և հասել մի

մակարդակի, որ եթե բարձրանալու տեղ ունի, ապա իշնելու տեղ՝ բնա՞վ։ Ու եթե աշխարհի առջև մենք կարող ենք հապատանալ իր ու մեր Սրբամյան խաղով, ապա չենք ել ամաչի Ռ. Զարյանի մատուցման համար...

Ռ. Զարյանը ոչնինչ չի արել առանց սրտի թրթիռի, ուստի և մենք եւ երբեւ նրան չենք կարդացել առանց սրտի թրթիռի։ Եվ կա ախտորոշական մի խոսք, որ նույնպես կոչվում է «սրտի թրթոռում»։ 60-ամյակը մի տարիի հ. որ չի բացառում նաև այս «սրտի թրթոռումը»։ Բայց դա չի վերաբերում Ռ. Զարյանին և թող չվերաբերի նաև իր 80—90-ամյակների ժամանակ։ Նրանը «սրտի թրթոռումը» չէ, այլ սրտի թրթիռը, որ տարափոխիկ է, եթե խոսքը վերաբերում է արլեստագետ-գեղագիտին։

Թո՞ղ այդ տարափոխիկ սրտի թրթիռը երկա՞ր, շա՞տ երկար տարիներ Ռ. Զարյանից փոխանցվի մեզ՝ իր բազմահազար երկրպագուներին, որոնց «Դուք»-ով դիմեիս ել՝ իրենց մտքի մեջ մտերմիկ «Դու»-ով և սրտի թրթիռով են շնորհավորում Ռուբեն Զարյանին այսօր՝ իր մեծավաստակ 60-ամյակի առթիվ։

«Գրական թերթ», 1969, 5 դեկտեմբերի, № 48

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ Բանասիրության դոկտոր

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆ

Սրա մասին, իրոք, արժե միտք անել՝ ինչի՞ց է «գոյացել» Ռուբեն Զարյանի բարի հոչակը։ Նա թատրոնի առաջնակարգ դերասան չէ, աղմուկ հաճած նկարիչ չէ, «մտքերի տիրակալ» գրող չէ և ոչ ել մոդայիկ ռեժիսոր։ Գիտնական է պարզապես և, այսուամենայնիվ, խվական հոչակի տեր։ Մովորաբար ացդակն չի լինում։ Կամ ել լինում է հազվադեպ։ Ո՞րն է դրա «զաղութիքը» Ռուբեն Զարյանի պարագայում։

Ինձ թվում է, որ եթե փորձենք բնորոշել այն անորսալին ու անքնորոշելին, որ հոչակ է բերում և ինչ-որ ձևով կապվում է Զարյանի անձնավորության ու գործունեության հետ, դա, թերևս, երա մտածողության, աշխարհը ընկալման, կենսազգացողության և նոյնիսկ մարդկային ինքնազգացողու-

թյան գարմանակի արխասովկրատիզմն է: Եվ, ըստ իս, հենց դրա մեջ է Ռուբեն Զարյանի գիտական ու անձնական հնապի գալունիքը: Դա ինչ-որ անկրկնելի կնիք է դեռևս ոչ միայն նրա մտածողության ձևի, գրքերի, հոդվածների, դասախոսությունների, մարդկանց հետ նրա ունեցած ամենօրյա շըփումների, այլև նրա իմացության բնույթի վրա: Եվ այսուղեղ պարադրու չկա:

Հենց արխասովկրատիզմն է սեր հարուցում անձնապես «լավ պահպանված» այդ մարդու հանդեպ, հանդիսավոր և կարծեն կասեցված սեր վերջերս կայացած հորելլանի օրերին, և շատ անհանդիսավոր և անկատելի սեր՝ բոլոր մնացած օրերին:

Ի թեպ, հորելլանական երեկոյին դահլիճը լիբն էր, և ամենատարբեր մարդկանցով, այնուղեք էին և՛ նրանք, որ քառասնական թվականներին շատ հուզիք վայելչությամբ լցնում էին ֆիհարմոնիայի Փոքր դահլիճն ամենաբարձր ճաշակի համերգներին, և՛ տղաներ ու աղջիկներ, որոնք ծնվել են ծովյա այդ քառասնական թվականներին: Այդ վերաբերմունքը ցույց է տալիս, որ նա ոչ թե ձեռքբերովի, այլ ի ծնել տղված ամրողականությունն է: Դա հշանակում է նաև, որ Ռուբեն Զարյանի ճակատագիրն անցնում է սերունդների միջով և, մնալով այդ սերնի հետ, մյուս սերնի միջով թափանցում է երրորդի մեջ, եթե հովանուկ այդ սերունքը քանեինք տարեկան է:

Պատկերացնենք երկնարկանի մի ուսառան, որի առաջին և երկրորդ հարկերում հավաքվում են երկու սերունք: Նրանք տարբերվում են նոյն երևոցների հակադիր ըմբռնումով: Այն աստիճան, որ մի սերունքը չի հջնում առաջին հարկ, իսկ առաջին հարկի մարդիկ երկրորդը չեն հջնում: Մինչդեռ Ռուբեն Զարյանը կարող էր երկու հարկում էլ լինել: Եվ ոչ այն պատճառով, որ նա բոլորին էլ կրնողուներ, այլ որովհետև նրան բռնըն էլ կընդունեին: Ոչ այն պատճառով, որ նա հանդործում է ամեն մի միջավայր ու տարբերություն չի դնում սերունդների միջև: Ոչ այն պատճառով, որ այն ժամանակ էլ նա լավ հուսուր էր, այդ ժամերի կոտքերն անզամ թոշենում են ավելի շուտ, քան հեռանում են ասպարեզից: Ոչ այն պատճառով, որ նա հրապարակախոս էր, որ երեսն բռնադատում է ու վրովեցնում: Ոչ այն պատճառով, որ հմայիշ կերպարանը է, դա հմանիշ հոգնեցնում է պարզապես: Այլ, հավանաբար, այն պատճառով, որ նա այն ժամանակ արդեն յուրահասուկ կերպվածքի գիտնական էր, որ անցնում էր սերունդների միջով ու նրանց մեջ թողնում իր կյանքի մի կտորը: Նաև այն պատճառով, որ «իր» և «ուրիշ» սերունդների մեջ շատ ինտելեկտնարար թափանցելու ձիրքի կողքին նաև ունի հովանուկն շատ ինտելեկտնարար նրանց հետ չհամատեղվալու հատկություն ևս: Դա փրկել է նրան, քայլ և նրա կյանքը դարձրել է դժվարին: Նաև այն պատճառով, որ նրա ամրողական բնափորությունը

մշտապես ուղղված է ոչ միայն մարդկանց, այլև հենց իրեն։ Իսկ դա շատ հաճախ կոտորակում է իր ամբողջական քննվորությունը և մշտական ձգտումը գեր մի ռոպեով ազատվելու այդ ամբողջականությունից։ Եվ այդ ժամանակ ծայր են առնում կասկածանքների ու նույնիսկ պատեպատ ընկերությունը, որոնք ևս իր մեջ շատ հմայիչ են։ Ծորեն Զարյանը համեստ է, նույնիսկ քաշվող։ Նրա համեստությունը համեստության տեսք ունի, իսկ քաշվելը երբեմն թվում է անհամեստություն։ Եվ դա՝ կասկածանքների և ամբողջականությունից «ազատվելու» րոպեներին։

Սյս աչքի ընկնող գիտնականը, վաս ու խորունկ արվեստաբանն ու գրականագետը, գրական ու թատերական փայլուն քննադատը, տաղանդավոր բանախոսը, դասախոսը, հուսուրը, գիտության անխոնց կազմակերպիչը և մշակութի գործիչը հնչեղ ու զրնօրն շատ սիտողուներ ունի. չեմ ուզու դրանք աւել ու կրկնել, որովհետոն չեմ ուզու վիրավորել այդ մարդու համեստությունը, մարդ, որի մեջ կարևոր են ոչ միայն իր գիտական վաստակը, այլև մարդկային փայլուն հատկությունները։

Դա ինձ հարազատ մարդ է։ Ես նրա մենա շատ եմ խոտել և գիտել, թե նա ինչպես է կարողանում լրել։ Դա երբեմն շատ կարևոր է։ Ես նրա մենայել եմ գեղանկարչական կտավներ։ Ես տեսել եմ, թե նա ինչպես է դիտում։ Երբեմն դա ևս շատ կարևոր է։

Մի անգամ նա ինձ տվեց կարդարու մի հոդված, որ ինքը շատ էր սիրում։ Ես կարդացի և ինձ դոր չեկավ։ Նրան դոր չեկավ, որ հոդվածն ինձ դոր չի եկել։ Նա երկար ժամանակ ներքուստ պայքարում էր հոդվածի հըկատմամբ ունեցած վերաբերմունքի դեմ, բայց մետք մենք սկսեցինք ավելի լավ վերաբերել միշտանց։ Նա ամենի էր հավաստու ինձ։ Ես սկսեցի ավելի լավ հասկանալ իրեն։ Ավելի ստուգ՝ խորը հասկանալ։

Հստ երևությին, «Պետրոս Աղամյան» նրա գիշավոր գիրքն է։ Ես շատ լավ գիտեմ այդ գիրքը, գիտեմ ամսուն ինչն է, որ արդյունք է արտիստիզմի, և ինչն է, որ արդյունք է դժոխային և աշխատանքի, որը, սակայն, յուրովի արտիստական է ի վերջո։

Այդ գրքում հետազոտված գեղագիտական խնդիրների գումարն աշխատությունը դոր է բերում աղամյանագիտության, նույնիսկ քատրոնի պատմության ասիստաներից և համադրում ընդհանուր գեղագիտության ու ժամանակակից գեղագիտական կոնցեպցիաների հետ, իսկ շերսպիրյան թատրոնի ինչ-ինչ հատկանիշների հետազոտությունը՝ մեծ դերասանի և ուրիշ աշխարհանոչակ ողբերգակների խաղի կապակցությամբ, պայմանավորում է գրքի ներթափանցումը շերսպիրագիտության մեջ առհասարակ։ Բայց իմաս ես ուզում եմ այդ գիրքը տեսել արվեստի այն անձնական զգացու

դուրջան «հոսքի» մեջ, որի մասին ասում էի: Անցյալ դարի 80-ական թվականների թատերական աշխարհի այդ առասպեկտը պետք էր կենդանացնել, ազատել լուսապատճեց և իմաստավորել 20-րդ դարի 60-ական թվականներին, այդ առասպեկտը պետք էր «կարդալ» ծամանակային և գեղագիտական բազմազան կապերի ու զուգորդումների մեջ, ընդ որում խոսափելով թե՛ գեղարվեստական պատուի, թե՛ հոկված ակադեմիզմի վտանգներից: Ուուրեն Զարյանը հետեւ աղդպիսի գիրք է գրել:

Սիազգին փաստական հյութի, ձեռք չտրված արխիվային փաստաթղթերի, մամուլում ցրված երբեմն հակասական, երբեմն տիհանրեն հանելովկային տվյալների իմաստավորումը, հյութի ընտրության հազվագյուտ ընդունակությունը, փաստը գիտականորեն ու, թերևս, գեղարվեստորեն «կարդալու» անվեհակ կարդալությունը, մասշտարային մտածողության և զննումների էստեհասական կերպի համարումը պայմանավորել են Ուուրեն Զարյանի գրքի այդ որակը, որով հեղինակը գիտություն է հիմնում Աղամյանի մասին:

Եվ իր կենդանի գծերն ու պատմական որվագիծն արդեն կորցնել առասպեկտ այդ գիտության մեջ դառնում է հայ թատրոնի պատմության ու, միաժամանակ, թատերական արդիականության «ընթերցված» փաստ: Ու եթե հետազոտողն, այսուհետերձ, հարց է տախի՝ արդյոք վերժամանակային է այդ առասպեկտը, ապա այդ հարցը նա լուծում է լայն ու բազմակողմանի, հետազոտելով Աղամյանի արվեստի ոչ միայն հիմնորոշ, այլև երկրորդային հատկանիշները:

Աղամյանի մասին գրված աշխատության մեջ շոշափված պրոբլեմների դրվագն ու լուծումը կրում են լայն, անհաջկան, բազմանիւս բնույթ: Օրինակ, շոշափելով այն հարցերը, թե հայեցո՞ղ ուսումնատիկ էր Աղամյանը, թե սեղուն վերլուծող, մելոդրամայի ջատագո՞վ, թե մելոդրամայի մեջ մարդուաման հայուսանարդ իմացապաշտ, մեկ որիշ հեղինակ դրանց կարող էր և միանշանակ պատասխաններ տալ: Բայց Ուուրեն Զարյանը հարցերի այդ շարքը կապում է մի ամբողջ որիշ հարցերի հետ (Աղամյանի խաղը համեմատելով Սալվինի, Ռուսիի, Օլդրիչի, Բատնայի, Զննենտափի, Պուարտի խաղերի հետ, հետազոտողն ի հայտ է բերում Աղամյանի բեմական կոնցեպցիան, նրա կապը ավանդական ու արդիական մեկնությունների հետ և, որ հատկապես կարևոր է, մեր օրերի գաղափարների ու սեփական կոնցեպցիայի հետ): Բնուրյան զավակի պարզ ու հսկող հայացք աշխարհի վրա և բաղաբարելուված մարդու լայն ու բարդ հայացք նոյն այդ աշխարհի վրա տագնապափ վերաբերմունք բաղաբարելության նկատմամբ և նոյն այդ բաղաբարելության ջատագով: Վերադարձ դեպի բնությունն ու բնականը և հոգեկան բարդ կերտվածքի տեր մարդու ձգտում դեպի արդիակա-

նությունը. Դեզդեմոնայի սպանությունը իբրև սանձագերծ, վայրի, բնական տարերքի և քաղաքակրթված աշխարհի վերջին կապերի խզում, և Դեզդեմոնայի սպանությունը իբրև տարերքի և քաղաքակրթության ներդաշնակության անմտածելիություն։ Առաջին դեպքում դա Սալվինին է, երկրորդ դեպքում՝ Սդամյանը։

Մեծ է Համեստի նպատակը՝ փրկել աշխարհը, որ բան է, չնչին է դրա միջոցը՝ արյունայի վրեմը։ Այստեղ է թաքնված Համեստի երկիթելկման պատճառը, կապված այն պարագայի հետ, որ հերոսն ապրում ու մտածում է երկու աշխարհի՝ միջնադարի ու Վերածննդի աշխարհի սահմանագծում։ Միջոցները գալիս են միջնադարից։ Ըերսադրյան այս պրոբլեմի լուծման վրա է կառուցված համեստիզմի ու Համեստի այն վերլուծությունը, որ առաջարկում է Ռ. Զարյանը։ Ոչ թե մտքի վշտակին ու տառապյալին, ոչ թե կավածաներերի ու մի սեւուն մտքի տակ ճնշված գյորեական հերոսին, այլ Վերածնության անհատականությունն է հետազոտում հեղինակն իր գըրքում։

Եթե կիրք դեռ արքա է՝ Սդամյանը նրան անձնավորել է ոչ թե իբրև արքայի, այլ իբրև խելամեն ծերուելու, իսկ հետագա պատկերներում, եթե նա ոչ թե արքա է, այլ մի խոճակի ծերուկ, դերասանն անձնավորել է արքային։ Հզորազոր արքա Լիրի անզորությունը և տկար ու խելա ծերուելու զորությունը, նրա արքայական անուժությունը և ոչ արքայական ուժը։ Թատերական քննադատության ցրլած ու կցկուոր տվյալների հիման վրա կառուցված այս կոնցեպցիաներն Սդամյանի Օթելլոյի, Համեստի և Լիրի մեկնությունների մասին ամբողջովին պատկերում են հետազոտողին։

Սուր հիպոթեզը, գիտական երևակայությունը, որոնող միտքը, լայն իմացությունը բացահայտորեն սպատմական բնույթ կրող այս մեկոսի պրոբլեմը հագեցնում են արդիական բովանդակությամբ։ Այն միտքը, թե Սդամյանը միաժամանակ պատկերման թատրոնին», և՝ «ապրումների պատկերման թատրոնին», մենագրության մեջ բացահայտում է այդ երկու թատրոնների արդիական բնույթը։ Այս պրոբլեմի վերլուծության մեջ առևս առկա է անտեսանելի լուսաբանությունը համաշխարհային թատրոնի պատճենության հետագա երևույթների՝ ընդհուպ մինչև թատերական պայմանականության Վախթանգովի ըմբռնումը, Մելեքինորդի ուժիտորական գործունեությունը, մինչև Բրեխտի փորձերը։

Չարադրանքի ազատ ձևը և գլխավորը երկրորդականից զատկու գրեթե ասկետական կարողությունը, սուուզ ճաշակը, ծամանակաշրջանի և թատրոնի էության սուր գգացողությունը, ընդհանուր մշակութային դիմորդումը և արդիականության զարմանալի հիշեղությունն այն հատկություններն շումը։

են, որ առանձնացնում են Ռուբեն Զարյանի թե՛ թատերագիտական, թե՛ գրականագիտական աշխատությունները:

Ռուբեն Զարյանը գրականությունը կոչում է իր համար «կորած սեր»: Ի՞նչ կարելի է ասել դրա մասին: Թերևս այն, որ կորած սերը միշտ չէ, որ կորած սեր է: Հավանորեն՝ Ռուբեն Զարյանի համար ևս (հիանալի է գրված նրա աշխատությունը Խաչատոր Աքովյանի մասին):

Ինձ համար դժվար է և, հավանորեն, հարկ էլ չկա պատմել Ռ. Զարյանի բոլոր գրքերի մասին: Ուստի և ես գերադասեցի ավելի մանրամասն ներկայացնել դրանցից մեկը միայն: Դա, ըստ իս, պարզ պատկերացում է տալիս հետազոտողի, նրա մտածողության կերպի և ուղղության մասին:

Լրացել է Ռուբեն Զարյանի վարչուն տարին: Թվում է, թե դա եղավ անսպասելի: Բայց երևի այսուեղ անսպասելի բան չկա: Պարզաբան մի քիչ տխուր է, որ նույնիսկ Ռուբեն Զարյանը վարչուն տարելան է:

Ես չգիտեմ ի՞նչ է իմ գրածը, դիմանկա՞ր է, թե ոչ: Երևի, ոչ: Գուցե և սրանք պարզապես շատ ցրված և ամբողջությունից անխուսափելիորեն զատված մտքեր են մարդու և գիտնականի մասին: Ինձ հարազատ մարդու և հարազատ գիտնականի:

«Литературная Армения», 1970, № 1, էջ 86—89:

ՀՈՒԻՍ ՄԱՐԴԵՐ
Զիկագոյի համալսարանի պրոֆեսոր (Ա.ՄՆ)

ԱՌԱՋՎԱԿԱՐԳ ՇԵՔՍՊԻՐԱԳԵՑՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Ես դոկտոր Զարյանի աշխատանքների մասին գիտեի տարիներ առաջ, այն ժամանակվանից, ինչ նա ուղարկեց Շեքսպիրականի՝ հայլական տարեգրի առաջին հատորի հրատարակությունը, 1966-ին: Այնուհետև, ես ստացա նույն տարեգրի 2-րդ, 3-րդ, 4-րդ հատորները, ապս՝ ես տեսել եմ նրա «Աղամյանի Համետը» գիրքը, կարդացել եմ նրա «Շեքսպիրը և հայերը» ուսումնասիրությունը: Չորս հատորների հոդվածների վերնագրերից ես ինքս կարդանում եմ եզրակացնել, որ անկախ հայ բարեկամներին կարծիքից, դոկտոր Զարյանը Հայաստանում նշանավոր շեքսպիրագետ է և աշխարհի այդ մասում եղած առաջնակարգ շեքսպիրագետներից մեկը: Դոկտոր Զարյանի ոգևորությունն է, որ ոգեշնչում է մյուս գիտնականներին գործակցելու շեքսպիրյան ուսումնասիրություններին:

Անցած ամառ, սեպտեմբերի 10-ին, ես դոկտոր Զարյանի հետ մեկ օր անցկացնելու հանույքն ունեցա, և թարգմանչի միջոցով ամրապնդվեց իմ կարծիքը՝ Շեքսպիրի հետ կապված նրա ընդարձակ գիտելիքների մասին: Շեքսպիրյան գրադարանը, որը նա է հիմնադրել և հարստացրել, հիմնայի գրադարան է, որտեղ հայ շեքսպիրագետները կարող են կարևոր աշխատություններ գրել:

Ես հիմնայի հայ բարեկամներ ունեմ Էվլանսոնում, որոնք նոյնական հայկական հրատարակություններից գիտեն Զարյանի համբավի մասին, և գրքերի նշանակալից նվիրատվություններ են արել շեքսպիրյան գրադարանին: Նրանք ել են հիմնացած Զարյանի գիտելիքներով:

Ես հավատացած եմ, որ Հայաստանի գիտությունների ակադեմիայի համար պատիվ է և մեծ հարգանքի նշան է այն անունը, որ նա բերել է ասրող աշխարհի հայերին...

1974

Զիկագոյ

Տ. Զ. Բ. ՍՊԵՆՑԵՐ

Բիրմինհեմի համալսարանի անգլերեն լեզվի և գրականության պրոֆեսոր,
Շեքսպիրյան ինստիտուտի դիրեկտոր (Անգլիա)

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԵՔՍՊԻՐՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴԻՐԸ

Ուրիշն Զարյանը, որպես Հայկական շեքսպիրյան կենտրոնի հիմնադիր
և ղեկավար, լայն ճանաչում ունի Անգլիայի Շեքսպիրյան ինստիտուտում:
Նա անցյալ ակտուաթերին մեր ինստիտուտի կողմից, որպես պատգամա-
վոր, հրավիրված էր Սորենֆորդ-Էյվն, մասնակցելու Շեքսպիրյան միջազ-
գային տասնվեցերորդ կոնֆերանսին:

Իմ կողեաները համամիտ են այն կարծիքին, որ ցանկացած պատվին,
որին կառաջադրվի Ուրիշն Զարյանը, կհամարվի սիրավիր ծառալություն
միջազգային շեքսպիրյան ուսումնաժողովականը, որ նա ունի իր ներդրումը:

1974

Բիրմինհեմ

ՆՇԱՆ ՄՈՒՌԱԴՅԱՆ

Բանափառական գիտությունների դոկտոր

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ ՎԱՍՏԱԿԸ

Թատերական քննադատությունը քննադատության ամենանորը բա-
ժնն է: Ընդհանրության շատ եզրեր ունենալով, նրանք ունեն նաև առանձ-
նահատկություններ, որոնցից եականը թերևս այն է, որ քննադատը անմի-
ջականորեն չի կանգնած գրական երկի և ընթերցողի միջև, մինչդեռ թատե-
ռական քննադատը կենդանի ներկայացման և հանդիսատեսի միակ միջ-
նորդն է այն ժամանակ, եթե ներկայացման արդեն տեղի է ունեցել, իսկ
հանդիսատեսը փոխվել է ընթերցողի: Այստեղ է ահա, որ առաջնային է

թատերական քննադատի նկարագրի հարցը. քննադատ լինելուց զատ արտիստ պիտի լինի նա, ստացած տպավորությունները վառ պամելու և ընթերցողին փոխանցելու համար: Այդպես մեկ էլ հմտութաղաքային է պատերացում տախու ցայգածաղկի մասին, երբ վաղուց արդեն ստավու չե...

Այս քննադատուր ձիբրով օժտված թատերական քննադատությունից է և Ռուբեն Զարյանը:

Այն, որ Ռուբեն Զարյանը քննադատությունից է անցել թատերականին, դեռ ոչինչ չի ճշգրակում: Կարող էր և հակառակը լինել: Էկտերիկականի ընկալումն է գրականության և արվեստի մեջ: Եթե 1943 թվականին Գրողների տանը նա հանդես եկավ ընդարձակ մի գեկուցումով Հովհաննես Շիրազի հենց նոր լուս ընծայած «Գարենանուստի» մասին, վերջնականապես պարզ դարձավ, որ մենք գործ ունենք ճշմարիտ մի քննադատի հետ, դրա տակ հասկանալով բանաստեղծական խորքի մեջ թափանցելու տաղանքը, նորը ընկալելու անսովոր կարողությունը: Չնոտանանք, որ թատերագիտական իր անդրանիկ եղույթը՝ «Համլետը հայկական թեմում» թեմայով, նա ունեցել էր դրանից առաջ՝ 1942-ին, եղույթ, որ մի տեսակ հայտ հանդիսացավ արվեստի լայն բնագավառը թևակիտնելու համար:

Եթե նկատի ունենանք, որ Զարյանի գրականագիտական աշխատանքներն ստանդանապես շատ չեն, պարզ կդառնա, որ նրա լայն ճանաչման գաղտնիքը այլ տեղ պիտի փնտրել:

Եվ իսկապես, բանափրական, տեքստաբանական աշխատանքներին զուգընթաց՝ «Աննա Սարդյան» վեպի առաջարանը (1939), Հովհ. Հովհաննեսիանի ընտիր երկերի առաջարանը (1939), «Վերը Հայաստանի» վեպի առաջարանը (1939), Խաչատուր Արովյանի երկնատորյակի առաջարանը, խմբագրությունները և ծանոթագրությունները (1939), «Արովյանի կյանքը» գիրքը (ունեցել է հայերեն երեք հրատարակություն. 1939, 1940, 1954, թարգմանվել է ռուսերեն՝ 1954 և իսլամերեն՝ 1954, Բուենոս Այրես) և վերջապես Արովյանի «Նախաշավիլիի» առաջարանն ու ծանոթագրությունները,— սրանք են Ռուբեն Զարյանի գրականագիտական գործերը: Բայց ահա այլ է եղել սրանց դերը:

Շատ ոչագրավ է Զարյանի մասնակցությունը մասնավորապես արովյանագիտության մեջ. թե՝ «Նախաշավիլի» իր հմտալից մեկնարանություններում (որոնք, ի դեպ, նրան թերեցին առաջին աստիճանը գիտության մեջ) և թե՝, նամանավանդ, «Արովյանի կյանքը» գործում նա հակադրվեց տիրապետող մտաշնությանը և Արովյանին համարեց լուսավորիչ, դեմոկրատ, ազգային մեծ գորդ այս արտահայտության ամենախոր նշանակությամբ: Իրա-

պես նա էր, որ հիմք դրեց նոր վերաբերմունքի «Վերք Հայաստան» հեղինակի Ալատումը, վերաբարձրեց նրան ժողովրդին առանց որևէ վերապահութան, ամբողջությամբ ու մինչև վերջ: Հետագա տասնամյակներում (և մինչև մեր օրերը հարատևող) ուսումնափրոյցները լիովին հաստատեցին այդ մոտեցման սկզբունքային ճշուդիյունը և Սրովյանը վերջապես կանգնեց մեր առաջ իր ողջ հասակով:

Ռոշադրույժամբ հետևելով հանրապետության բատերական կյանքին, կանգնած լինելով նրա ակտուների մոտ, Որիքն Զարյանը միաժամանակ զբաղվում է հայ թատրոնի հարուստ պատմությամբ: Նրա համար ևս հայ բեմի կորիֆեյզները բնակ էլ անցյալին չեն պատկանում. շատ ավանդույթ-ներ կենդանի են ի դեմք այնպիսի անհատականությունների, ինչպիսիք են Վահրամ Փափազյանը, Հասմիկը, Հրաչյա Ներսիսյանը, Վաղարշ Վաղարշյանը, Արուս Շականյանը, Օգա Գոլազյանը, Ավետ Ավետիսյանը, արտիստներ, որոնք այն տասնամյակներին մեր թատերական արվեստի մայր օչախը զարդարեցին ակադեմիական մակերրով:

Զարյանը հղանում է թատերական դիմանկարների մի շաբթ: Լույս է տեսնում միայն առաջին գիրքը (1956), որի մեջ մտնում են Համիկը, Օգա Գոլազյանը, Արուս Շականյանը: Մրան անմիջապես հետևում են նրա հանրահայտ երկու մենագրությունները՝ «Սիրանուշը» (1956) և «Աղամյանը» երկու գրքով՝ «Կյանքը» (1961), «Արվեստը» (1961):

Սյու գործերում է ահա բացահայտվում Ռուբեն Զարյանի տաղանդը իր ամբողջ փայլով, սրանց մեջ են իրենց զարգացումը գտնում նրա հայացք-ները հայ թատրոնի նորագույն շրջանի հիմնական տեսնելեցների, նաև, ինարկե, սովորակայ թատրոնի մասին: Համարյա բոլոր այս գործերում փորձ է արվում տալու դերասանների արվեստի ընդհանուր նկարագիրը, նաևս և առաջ դժվարագույնը՝ նրանց ստեղծագործական ոճը ինչպես պրոֆեսիոնալ առումով, նոյնպես և Էսթետիկական ընդհանուր տեսանկյունով: Կար մի շատ կարևոր պրոբլեմ ևս՝ ազգային նկարագիրը: Առաջին անգամ «Սիրանուշի» մեջ էր, որ նա փորձ արեց ցույց տալու, թե ազգային մեծ դերասան փետեր համար բնակ պարտադիր չէ ազգային կենցաղը, որ ավելի էականը, ազգային ոգին է, ազգային շունչը, ընդորում՝ ողբերգական շունչը, որ հեռավոր անդրադարձն էր հայի պատմական Ալարագիրի: Մասնավորելով խոսքը ականավոր դերասանություն մասին, նա գրում է. «Սիրանուշը մի եզակի երևույթ է, և նրա ուժը ճիշտ որոշելու համար՝ պետք է ոչ թե համեմատել որիշ մեծությունների հետ, այլ համարձակորեն նրան դասել այդ մեծությունների շարքը»:

Բայց հայ թատերական արվեստը, ինչպես և հայ գրականությունն ընդ-

հանրապես, ունի մի տիրապետող գիծ ևս. հումանիզմը, մարդասիրությունն իր ամենալավն, համապարփակ իմաստով:

Այս պրոբլեմն իր առանձին զարգացումն է գտնել «Սդամյանի» մեջ: Որպես ճշմարիտ արտիստ, Սդամյանը նախ և առաջ թափանցում է կերպարի էռոքյան մեջ, եղնում է Ծերսափիրից, Ծերսափիրին վերադառնալու համար: Հենց այդ գլխավորն էլ որում է քննադատող: Նրա կարծիքով, դերասանը շեշտում է կերպարի մուավոր կողմը. ո՞չ թե արտաքինը, ո՞չ թե կենցաղայինը, ո՞չ թե այն, ինչ նրան բաժանում է վենետիկցիներից, այլ այն, ինչ մուտքենում է սրանցից առավել զարգացած անհատներին: Նոյնին Սալվինիի Օթելլոյի համեմատությամբ Սդամյանի ստեղծած կերպարը ավելի բարդ նկարագիր ունի: Սդամյանն ևս սկսում էր իր հերոսի ցեղային նկարագրից, բայց այդ նկարագիրը թողնում էր կես ճանապարհին, որպեսզի շրջապատողների հետ լուծի մարդկայնության հարցը, մեծագույն հարցը այն դարի համար, եթե ստեղծվում էր ողբերգությունը, ինչպես և մեր ժամանակների համար:

Հազվագյուտ թատերագիտական գործերի էր վիճակված այնպիսի շերմ ընդունելություն, այնպիսի լայն ճանաչում գտնել, ինչպես Ռուբեն Զարյանի այս աշխատությունները: Դրանք գրականություն էին բարի լավագույն իմաստով: Անցած-գենացած ներկայացումները նորից էին կենդանանում մեր աշքի առաջ. մենք լսում էինք լեգենդ դարձած մեր արտիստներին, համարյա տեսնում նրանց խալը, ապրում նրանց հետ:

Մրա զաղոնիքը ոչ միան կուրթի խոր իմացությունն էր, դա ինքնին հասկանալի է, ոչ այնքան մեծարանակ շանքն է ու տոկունությունը, դա էլ էր պատկերացվում վկասակոչված աղբյուրներից, այլև քննադատի նկարագրիրը, մասուցելու հրա անորուանալի ձիրը, հրա ինքնատիպ ոճն ու գրեկանը: Զարյանը ցուց տվեց, որ ժամանակակիցների նոյնին անհշան թվացող հաղորդումներից, կցկոտոր տեղեկություններից կարելի է քիչ թե շատ ամբողջական մի պատկերացում կազմել արտիստի խաղի մասին:

Ռուբեն Զարյանը թատերագիտական իր գործունեությունն սկսեց Համեստի ոստինասիրությամբ, առանց ենթադրելու, որ Ծերսափիրն էր մնալու ուշադրության կենտրոնում ամբողջ կյանքի ընթացքում: Միրանուչի և Սդամյանի մասին մենագրությունների լավագույն էջերը նվիրված են նրանց ստեղծած շերսպիրյան բեմական կերպարներին: Հետագայում դրանց ավելացան նաև Հովհաննես Արելյանի, Վահրամ Փափազյանի, Խորեն Արքահամյանի օթելլոներին նվիրված ոստինասիրությունները, ինչպես և այլ հոյդավածներ, որոնք պետք է խմբվեն «Ծերսափիր հետ» գրքի մեջ:

Մեր առաջնամերթ խմբիներից մենք գրականության և արվեստի բնա-

գալիսում մնայում արժեքների մատչելի դարձնելն է այլ ժողովորդներին: Այս տեսակիցների խոր գործունակության է արժանի Ռուբեն Զարյանի վաստակը, մեր առաջավոր արվեստագետների հետ ևս ևս շանք ու եռանդ չի խնայում հայ կոլլուգուրան միջազգային ասպարեզ հանելու գործում:

Դրա պերճախտան ապացուցներից մեկը՝ Ծերսպիրագիտության հայկական կենտրոնի կազմակերպումն է ԳԱԱ արվեստի ինստիտուտին կից, կենտրոն, որի համաձեռնողն ու ղեկավարն է նաև: Անցած տարիների ընթացքում նրա աշխատակիցները զգայի գործ են կատարել Ծերսպիրի և հայ կուսուրայի ու թատրոնի կայֆերն ու առնչություններն ուսումնասիրելու ուղղութամբ: Լույս են տեսել «Ծերսպիրականի» վեց գրքեր, որոնք հանաչում են գույք ոչ միայն մեր երկրում, այլև նրա սահմաններից դուրս: Վերջապես Ռուբեն Զարյանի ընդհանուր խմբագրությամբ է պատրաստվել և առաջիկայում կմիտի լույս տեսնել Ծերսպիրի «Երկերի լիակատար ժողովածուն» տասը հատորով, առաջին ժողովածուն հայ իրականության մեջ, որտեղ դրամատորգի բոլոր երկերը թարգմանված են լինելու բնագրից:

Ռուբեն Զարյանը մեր այն արվեստագետներից է, որոնք միջազգային հանաչում ու կշիռ ունեն: Ես նկատի ունեմ ոչ միայն «Ծերսպիրականի» հաստորները, նրա գեկուցումները Լոնդոնում և Վայմարում, այլև «Ծերսպիրը և հայերը» բրոշյուրի ֆրանսերեն հրատարակությունը Ժնևում (1973, թարգմ. Նորայր Հարությունյանի) և «Սղամյանի Հնակետը» մենագրության իտալերեն հրատարակությունը Վենետիկում (թարգմ. Արմեն Զարյանի):

Այսպիսի լուրջ վաստակով է դիմավորում իր յոթահասունամյակը անվանի արվեստագետը:

ՀՐԱՆՏ ԹԱՄՐՄՁՅԱՆ

Բանասիրության դոկտոր, պրոֆեսոր

ԲԱՐՁՐ ՆԵՐՃՆՉՈՒՄՆԵՐԻ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Բարի անուն և լայն ճանաչում ունի մեր գիտության անվանի մարդկանցից մեկը՝ Ռուբեն Զարյանը: Ծողովրդական այդ հոչակը ստեղծվել է տասնամյակների ընթացքում, բարձրացել է ամոր պատվանդանի և վստահելի հենասյուների վրա:

Դրանցից հատկապես ընդգծվում են իրարու այնքան հազվագյուտ զուգակցվող երկու հատկանիշը: Բնական ակնառու ձիրքը և տևական, կենտրոնացած աշխատանքը: Այս երկու հատկանիշին են կգումարել նաև երրորդը, որն արդեն շատ ավելի հազվագյուտ է: Վերլուծական ձիրքին և անդուր աշխատանքին մի առանձին փայլ է տալիս բարոյական մի ներքին զորորժյուն: Դա արտաքուստ փոքր-ինչ զափկած ներքին սերն է, որից ծնված չերմությունը մի մեղմիկ լույս է տարածում հետազոտվող աշխարհի և մարդկանց վրա, սայծառացնելով նրանց հիմաստը: Այս հատկանիշը բխում է գիտնականի արտիստիկ խառնվածքից, որին բնորոշ են գեղեցիկ բնածին զգացողորժյունը և անվերապահ նվիրումը: Նույն այդ ներքին լույսը՝ բարոյական զորորժյունը, որույն հնայք և ուժ է տախու գիտնականի երկերին: Թերևս հենց այս հատկանիշը, դեռ սաղմի մեջ, նկատեց Եղիշե Զարենցը, որը զարմանալի ներքնատեսությամբ խնկույն զանազանում էր օժոված մարդկանց, մագնիսական ուժով ներքնից վերև բարձրացնում, դեելով մեծ աշխատանքի հունի մեջ:

1933 թ. «Վերելք» ամսագրում լույս տեսավ ուսանող Ռուբեն Զարյանի հոդվածը՝ ժամանակակից պոեզիայի մասին: Հազիվ թե ինքը՝ Զարյանը, այսօր համաձայներ այդ հոդվածի հետ: Այնտեղ կար և տեսական շփոթ, և որոշ տուրք այդ օրերի մոլոր մտածողությանը: Բայց Զարենցը այդ հոդ-

վածի մեջ նկատեց մի փոքրիկ հատված, մի նուրբ դիտողություն Բորիս Պաստերնակի պրեզիդի մասին և անմիջապես պատաճի հեղինակին քաշեց գրական-հասարակական լուրջ գործի մեջ: Մի քարերախոսությամբ նա ընկապ գրական ազնիվ ու քարեր մթնոլորտ: Հանդիպումներ՝ գրական հրակաների հետ: Զրուցներ: Հրատարակչական համատեղ աշխատանք: Ծիրվանքարտե, Նար-Դոս, Զարենց, հետո՝ Իսահակյան, Դեմիքրենան, Զորյան: Մեծերի մթնոլորտը խոր ազդեցություն գործեց Զարյանի վրա: Այդ մթնոլորտի մասին նա հետո պիտի գրեթե «Հուշապատում», որ այնքան հշանակալից խոր է բացվում հայ գրականության և գիտության երախտավորների քարոյական աշխարհի և գրական հայացքների շորջ: 1933—34 թթ. մասունքում տպագրում են երա հոդվածները Պետրոս Դորյանի պրեզիդի, Մարիետա Շահինյանի «Հիդրոցենորավ» վեպի, Նար-Դոսի վաղ շրջանի մուացության մատնաված ժառանգության, գրական-բանափրական զանազան խոնդիրների շորջ: 1934 թ. գրում է «Աննա Սարդյան» վիպակի առաջարանը: 1937 թ. կազմում և ընդունակ ծանոթագրություններով հրատարակում է Հովհաննեսի Հովհաննիսյանի երկերի ժողովածորի առաջին հատորը:

Երիտասարդ գրականագետը բանափրական և քննադրատական լուրջ մտահոգությունների և աշխատանքի մեջ էր: Ըստով գալիք են դժվար ու դրամատիկ օրեր: Դժվար էր և երիտասարդ գրականագետի համար: Բայց նա արդեն բռնել էր գիտության ճշմարիտ ճանապարհը, որը երան բերելու էր և դառնությունները, և երշշանքի ու ստեղծման երջանիկ պահեր:

30-ական թվականների վերջին նա լրաված աշխատում է հայ նոր գրականության պատմության մարզում: 1938 թվականին Զարյանի հանգամանակալից առաջարանով առաջի անգամ առանձին գրքով լույս են տեսնում հշանակոր Վարսունական Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգս» վեպը և «Սուրբ Սարգսի դովը» վիպակը: Նոյն շրջանում գրում է Վոր. Փափազյանի երկխառորյակի և Հ. Հովհաննիսյանի «Հատընտիրի» առաջարանները: Նա լույս աշխարհ է հանում նոր փաստեր, առաջի անգամ գնահատում մոռացված կամ հանդիրավի անտեսված գրական հուշարձանները, մյուս կողմից՝ վերագնահատում բոլորին հայտնի հշանավոր այն երկերը, որոնք մոտ անցնալում կեղերվել էին գոենիկ տղիողգիտական քննադրատության կողմից:

Բայց գրական-հասարակական սուսանով առավել հնչեղություն ստացած Ռուբեն Զարյանի արովանագիտական աշխատանքները: 1939—40 թթ. իրարու հաջորդեցին Ռ. Զարյանի հոդվածները և գրքեր՝ նվիրված Խ. Արդվանի կյանքին և գործին, մասնավորապես ստեղծագործության գրական պատմական արժեքին և կենսագրության մութ մնացած կետերին:

1939 թ. «Խորհրդային Հայաստան» թերթում լույս տեսավ Ռուբեն Զար-

յանի «ՌՎ է Խաչատոր Արքվյան» առերևոյթ փոքր-ինչ սենսացիոն թվացող հոդվածաշարը: Հետևեցին մի շաբթ նոր ուսումնասիրություններ ու գրքեր: 1939—40 թթ. նա գրեց «Վերը Հայաստանի» վեսպի նոր հրատարակության առաջարանը և «Արքվյանի կյանքը» գիրքը: Ռ. Զարյանի առաջարանը, նորահայտ նյութերի պարզաբանումով, գիտական ծանոթագրություններով լուս տեսավ Արքվյանի «Նսխաշավիղը», որն, ի դեպ, գիտնականը առաջին ակադեմիայում պաշտպանեց իրեն թեկնածուական դիմերտացիա: Վերջապես 1948 թ. «Արքվյանի ստեղծագործությունը» ժողովածուի մեջ տեղ գտան Զարյանի բանահրական ընդուրածակ քննությունները Արքվյանի մասին:

Խակապես ասած, ի՞նչ էր պատահել: Միթե հարկ կար հասարակությանը բացատրել, թե ո՞վ է Խաչատոր Արքվյանը, նորից դառնալ երականի դրվագներին և «Վերքին...»: Կար այդ հարկը, և հարցը դրված էր բնակ կը ոչ սենացիայի համար: Ամենից առաջ, ասենք, մեծ գրողները երբեք չեն սպառվում որևէ սերնդի քննադատության կողմից: Ամեն նոր սերնդ մեծ գրողի հետ մտնում է բարդական և գեղագիտական բնույթի նոր առևտության մեջ, որը և բացում է հանճարի հարստության նոր կողմերը: Վ. Բենինկոյի հանճարեղ հոդվածաշարից հետո Ռուսաստանում ոքան գլուքեր են գրվել Պուչկինի մասին... Այս իմաստով Խ. Արքվյանը ևս՝ մեր ազգային նոր գրականության հիմնադիրը, աշխարհայեցողության և գաղափարականության մեծ սկզբանավորողը, տալիս է բազմաշերտ հարստություն, մշտական բացում բարենք հրապուրներով, որոնք, անտարակույս, ամեն սերնդի մղում են նոր որոնումների ու քննության: Մյուս կողմից, այդ քննությունը խիստ անհրաժեշտ էր, քանի որ հենց մոտ անցյալում 20—30-ական թվականներին, մեր գեղարվեստական ու քաղաքական մտածողության այն ազնիվ ակլունքը պղտորվել էր գոներիկ սոցիոլոգների կողմից: Եվ, վերջապես, Արքվյանի ժառանգության գգայի մասը, հոդվածները, համակերպ, բազմանդուր կապերը, կյանքի շատ հանգամանքներ մնում էին արխիվներում, չպահպարակված:

Եվ դարձայ երկու մեծ գրողները խիզախնեցին արվեստի լեզվով, ուրուս ձևով բացել Արքվյանի դրաման և մեծությունը: 1933 թ. Զարենցը գրեց «Դեպի լառն Մասիս» պրեմը, իսկ Սկսել Բակունցի «Խաչատոր Արքվյան» հոյակապ կերպվածքը մնաց անավարու:

Գիտության մեջ Ռուբեն Զարյանը գնում է այս ուղիով: Նոր սերնդին բացատրում է Խ. Արքվյանի գործի և կյանքի մեծությունը, երա անդուր աշխատանքը, ազգային լուսավորության համար մղված պայքարը, մարդկային դրաման, գրական սիրագործության ազգային և ժողովրդական հիմքերը,

կենսագրության, ծննդյան, ուսման, ճանապարհի և երկերի ստեղծագործական պատմության գաղտնիքները: Գրում է հիմնավոր փաստերով, տրամաբանված, շատ հաճախ է բացելով փաստերի պոեզիան: Այսուղ երևան է գալիս նրա ոճի մի հատկությունները: Զարյանը գիտական մեկնաբանությունները, տրամաբանական վերլուծությունները դնում էր գեղեցիկ ձևի մեջ, գըրում է ջերմ ու պատկերավոր, զուզալ ու բյուրեղյա լեզվով, այսինքն գիտությանը մասնակցում է նաև գեղարվեստական խոսքի ներշնչված մարդը:

Ես այսօրվա պես հիշում եմ այն արձագանքը, որ գտավ «Արովյանի կաները» խոր և գեղեցիկ ուսումնասիրություններ, որն, ի դեպ, ունեցավ չորս հրատարակություն, տպագրվեց նաև ոռուերեն և խապաներեն: Այդ գրի գիտավոր արժանիքն այն էր, որ Զարյանը առանձին ոժով, առորովի բացում էր Արովյանի ստեղծագործության արժեքը՝ կյանքում, գրական գործի մեջ և պատմության ճանապարհին: Ուսանող երիտասարդությունը արտասալուր հետաքրքրություն էր ցուցաբերում Զարյանի Արովյանին նվիրված հոդվածների ու գեկուցումների նկատմամբ: Դա մի վառ վկացություն էր այն բանի, որ գրականագիտությունը վերադառնում է նվիրական արժեքներին ու գեղեցիկ ակլինքներին, երիտասարդությանը սերտորեն կապելով հայրենի գեղեցկությունների և տառապանքով ծնված ազգային ավանդների հետ:

Այդ նպատակն էին հետապնդում նաև որոնումներից ծնված բանահրական մեծ ու փոքր գյուտերը, կենսագրական փաստի ճշտումը, նոր ձեռագրի ու կապերի լուսաբանումը: Այս հանգամանքը գրական պատմական առուանձնահատուկ ինասան էր տախու Ռուբեն Զարյանի և նրա սերնդակից մի քանի գրականագետների՝ Սրբամ Ղանաղանյանի, Մ. Մկրյանի, Սողոմոն Սողոմոնյանի, Սրբամ Ինձիկյանի, Էդ. Թոփչյանի աշխատանքներին: Ես այսուղ հատուկ ուզում եմ ընդգծել նաև մեր գրականագիտության մեծ երախտակոր Արտեն Տերտերյանի աշխատանքները, որոնցում տաղանդով հերքվում էին որիշների և սեփական մոլորդությունները, ստեղծվում էր ամոր շլյա գրական մտքի պատմության մեջ:

Որուեն Զարյանի այս մեծ աշխատանքը ուներ իր տեսանելի ու անտեսնելի կողմերը: Քչերը գիտեին, որ նրա զուզալ, բյուրեղացած էտյուդները, բանասիրական և քննադատական նրբին գյուտերը ծնվել են ծանր, այսպէս ասած՝ «ու աշխատանքից», բազում որոնումներից, զուգորդումներից, տասնյակ արխիվային նյութերի հետազոտություններից: Նրա երկերի ազնիվ բնույթը ձևավորվում էր գրական մշակի անդադրում, «հասարակ» աշխատանքի մեջ:

Այս առումով չափազանց հետաքրքրական է նրա աշխատանքը նաև հայ ուսալիզմի ավանդների, մասնավորապես Գ. Սունդուկյանի ստեղծագոր-

ծության գնահատության հարցում: Այստեղ էլ կային կնճռու ու վիճելի հարցեր, կարու պարզաբանման ու վերագնահատության: Տասնյակ տարիներ հայ ունայիզմը, որպես գրական պատմական երևոյթ և գեղագիտական հարստություն, կապվել էր սուկ լիբերալ բորժուազիայի գաղափարախոսության հետ, անտեսվել էր ունավիզմի համաժողովրդական բովանդակությունը, դեմոկրատական ակունքները: Աշխարհայացքը կորելով ստեղծագործական տարերքից, անվերջ վարժություն անելով սոցիոլոգիական սիմեմաների վրա, քենադատությունը, ինքնին հասկանալի է, անտեսում էր երկերի հոգեբանական հարստությունը, ներքին գեղեցկությունները, մարդկային որովան երազներն ու տառապանքը, ապինքն՝ մի տրորինակ անսարքերությամբ, արվեստից դորս էր մղում արվեստի եռլոյունը: Եվ ահա, Ռուբեն Զարյանը 50-ական թվականներին կազմում և մահրամասն ծանոթագրում է Սունդուկյանի երկերի երեք հատորը, որ տեղ են գտնել նաև վարիանտները: Նա հըմտրեան ցոյց է տաղին այդ երկերի ստեղծագործական պատմությունը, ուշադիր քննում հեղինակի գաղափարական-գեղարվեստական վերելքը: Այդպիսի մի կարևոր աշխատանք էր նաև ավելի վաղ շրջանում Նար-Դոսի վեցհասորչակի հրատարակությունը:

Այս հինունական աշխատանքները ստեղծվել են տարիների սկզբունքներում և լարման ընթացքում: Բայց դրա մետք միասին, Ռուբեն Զարյանը քննակ աշքայտող չի արել ծամանակալից գրականության հարցերը: Ես ուզում եմ նշել այս աշխատանքի երկու կողմերը՝ գրական-քննադատական և գրական-կազմակերպչական: Առ գրել է մի շարք ուսումնասիրություններ նորագույն գրողների և նշանավոր երկերի մասին: Այսպես, նա վերագնահատեց Ալեքս Բակրունիցի ստեղծագործությունը, գրելով միհատորդակի ընդարձակ ստացարանը: Գրեց շատ ջերմ, նշորի գգացողությամբ, հնմտորեն բացելով Բակրունիցի աշխարհը, ոնի հայկական և օտար ակունքները, նուրբ և դիպուկ բնութագրելով հրա տարերքը: Այդպիսի ինքնատիպ խոսք է «Քաջ Նազարի» առաջարանը: Բայց ոչ միայն վարպետների մասին: Լինելով նաև «Սովորական գրականություն» ամսագրի խմբագիր, քննադատություն, ինչպես մեր հներն էին ասում, բարձր խոհականությամբ, իր խոհարարությունը գգեստը տարածում է նաև երիտասարդ ձիրքերի վրա: Այսպես, իր հոդվածներում նա գնահատել է Հովհ. Ծիրազին, Ս. Կապուտիկյանին, Վահագն Դավթյանին, Գևորգ Էմինին, Մ. Մարգարյանին, արժեքավորել Անահիտ Սահինյանի «Խաչուղիներ» վեպը, այսպես նա ուղի է նշել Վիգեն Խեչումյանի համար՝ գնահատելով միշնադարյան գոլտրիկ նովելների գիրքը՝ «Զվարթնոցը»: Վերջապես նա առաջինը նկատեց պատանի Պարույր Ալակի խոհական գրեն տարերքը, պատերազմի տարիներին իր խմբագրած ամ-

սագրում տպագրելով նրա առաջին բանաստեղծությունները: Ես կուզեի ընդգծել երա խիստ բարյացակամությունը նաև գրականագիտական նոր սերնդի նկատմամբ: Նա լավ գիտի իր կատարած մեծ գործի հշանակությունը, ուժանց պես չի տագնապում և շիփորվում, երբ նորերը ձեռք են գարկում իր նախասիրած թեմաներին: Ավելին, խրախուսում ու գնահատում է արովյանագիտական նոր աշխատանքները, քանի որ Արովյանի մասին խոսակցությունը ինչ-որ շափով համերժական է, և հենց այդ համերժական գրուցի համար նա շատ բան է բերել իր շահելությունից, հոգեկան լարումներից ու իդեալներից:

Ուրեմն Զարյանը, նույնիսկ այն ժամանակ, երբ մեծապես բռնված էր հայ թատրոնի պատմությամբ և Շեքսպիրով, պահպանել է իր կապը հայ գրականության և նորագույն շրջանի հետ: Բայց որքան էլ ամուր լինի այդ կապը, չենք կարող չնշեն, որ վերջին երկու տասնամյակում նրա տաղանդը ծաղկել է գերազանցապես թատրոնի պատմության դրույում. ես նկատի ունեմ «Սիրանուշ» և «Պետրոս Աղամյան» մենագրությունները, որոնք այսօր կարդացվում են նույնպիսի հափշտակությամբ, ինչպես, ասենք՝ «Արովյանի կյանքը». որքանք իսկական գիտական և գրական հուշաքաններ են...

Բայց ասենք նաև: Ուրեմն Զարյանը թատրոնի տարերքը տարավ մեծ հարատություն:— Բանասիրական նորություն և հմտություն, գրական երեւակությունների հերքին գեղեցկության խիստ զարգացած զգացողություն և փորձ: Եվ հենց թատրոնին նվիրված մենագրություններում դժվար չէ տեսնել գրական քննադատին և պատմաբանին, որը համարձակ մտենում է հայ և օտար դրամատուրգների երկերի հոգերանական գաղտնիքներին:

Բայց ահա մեզ յուզ ենք տպիս մի ենթադրություն անելու: Թերևս, ծանրացած բարձր խոհականությամբ և իր նոր հարատությամբ զորացած, նա մի նոր դարձ կատարի դեպի վաղեամի ներշնչումների տարերքը, հայ գեղեցիկ գրականության ոլորտը, որին տվել է շահել օրերի ոգեռությունը, մտքի լարումն ու հոգու կրակը: Մենք հավաստում ենք այդ բաղձափի դարձին, քանի որ Ուրեմն Զարյանի տաղանդը զարմանալի կենաւուակ է, ստեղծագործական եռանդը՝ անսպառ...

ՊԻՌՆ ՀԱԿՈԲՅԱՆ
Բանասիրության դոկտոր

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Ում գրական հետաքրքրությունները ծաղկել են 30-ական թվականներին, ում համար թանկ են եղել մայրենի խոսքն ու մշակույթը և ով գրասերի մոլուցքով տարիներ շարունակ մաշել է գրախանութերի շեմքերը, ևա չեր կարող անտարբեր անցնել Ռ. Զարյանի՝ հայ գրականության և մշակույթի երկարամյա ու անդուռ աշխատավորի անվան կողքով, որի գրականագիտական-բանասիրական շոնդալից բեմելն ակալում է հենց նոյն ժամանակներից:

Ծփունները հայագիտության ու հայրենի գրականության դասականների հետ Ռ. Զարյանի համար դառնում են ուսումնառության նոյնափի դրայոց, ինչպիսին էր Երևանի պետական համալսարանը, որի շրջանավարտներից է նաև:

Ուսուցիչների և ընթերցող հասարակության հիացմունքին արժանացած նրա ուսանողական աստենախոսություններին և լրագրական հոդվածներին, որոնց թվարկումը մեզ շատ հեռու կրաքար, շտուռ փոխարինելու են գալիս գրական-բանասիրական և բնագրագիտական լուրջ աշխատություններ, որոնց հրատարակության պատրաստումը երիտասարդ Ռ. Զարյանին վասահել էր մեր ամենազարգացած և բարձրաճաշակ գրողներից մեկը՝ Ե. Զարյանը, որն այն տարիներին գլխավորում էր Հայպետհրատի գեղարվեստական բաժինը:

Նախ և առաջ Ռ. Զարյանը ձեռնարկում է հայոց նորագույն բանաստեղծության հիմնադիր Հ. Հովհաննիսյանի երկերի գիտական ժողովածուի հրատարակությանը. ծրագրում էր երկու հասոր, բայց լույս է տեսնում միայն առաջին՝ չափածոյն նվիրված գիրքը (1937), որին այնուհետև հաջորդում

և՛ Սար-Դոսի երկերի լիակատար ժողովածովի յոթ հատորները (1938—1947), 1860-ական թվականների գրական շարժման եռանդուն մասնակիցներից և հայ ուսալիստական արձակի սկզբնավորման գործում իր որոշակի լուսան ներդրած, բայց և հետագայում հանդրավի մոռացված Գ. Տեր-Հովհաննիսյանի «Տեր Սարգիս» վեպը (1938): Չուզահեռարար լուս է ընծայում հայ ամենամետաքրքրական և հետազոտման առումով չափազանց բարդ հեղինակներից մեկի՝ Վ. Փափազյանի ընտիր երկերի երկնաստորյալը (1939—1940): Ավելի ուշ պատրաստում է հայ հոչակավոր հայ դրամատուրգ Գ. Սունդուկյանի երկերի ակադեմիական քառհատորյակի առաջին երեք գործերը (1951—1952):

Այս բոյոր աշխատանքներն են, որ սովորական թեագրագիտության երախայրիքներից են, կատարված են մեծ հմտությամբ ու համբերությամբ, համապատասխան հեղինակների երկերի սկզբնական հրատարակությունների և ստեղծագործական ձեռագրերի ընծեռած տարրերակների հաճախանակից հաշվառման (եթե, իհարկե, աղյափիք գոյություն ունեն), առանձին վերցրած այս կամ այն երկի ստեղծագործական պատմության վերաստեղծմամբ, զոգահեռարար լուսաբանով հայ դրանց առնչություններն ու փոխադրեցությունները, անհայտ նրանից, թե թեկերը որ են տանում՝ դեպի օտար աշխեր, թե՝ հայրենի քերթության խորքերը: Կարճ՝ մասնագետ-քանասերն ամենուր զգացնել է տախի իրեն:

1930-ական թվականների մեր գրական կյանքի մեծագույն հրադարձություններից մեկը Խ. Սրովյանի գրական ժառանգության, ինչո՞ւ չէ, հայ նրա, իր մարդու և ստեղծագործող անհատականության, հայտնագործումն էր, որից ազդակ ծառայեցին նրա հարցուրների հասնող անորոշ ու անհայտ երկերի հայտնությունը, շնորհիվ այն ազնիվ ընդառաջման ու ըմբռնման, որ հայութեան բերին մեծ գրողի թոռները՝ Հայաստանի գրական թանգարանին հանձնելով իրենց հանճարեղ պապի թողունները: Դրանից հետո արդեն կատարվեց աներևսակայտին: Հայ մթնոլորտը, կարծես միանգամից, լցվեց Խ. Սրովյանով: Նրան էին դիմում և կիշումով քանասերները, և գրողներն ու պրվետագետները, և սիրողներն ու մկնակները: Վերածնված Խ. Արովյանը իր կենահաստատար գաղափարներով ու հնայիշ անհատականությամբ հնչուում էր չափազանց արդիական ու ժամանակակից: Հայ մասնակցում էր հայ մարդու հոգեռ աշխարհի վերականուցման ու ազելացմանը, ոուս և Սովորական Միության մյուս ժողովորդների հետ հայության եղբայրական ու բարեկամական կապերի ամրապնդմանը, ազգերի մերձեցմանն ու փոխանորությանն ընդհանրապես:

Եվ այս շարժման հորդանուուրում ամենուր երևում էր Ռ. Զարյանը՝ սո-

վետահայ աբովյանագիտության ճանաչված հեղինակություններից մեկը:

Խ. Աբովյանով խանդավառված իր գրչակից ընկերների հետ ու, թերևս, բոլորից ավելի, Ռ. Զարյանը հանդես է գալիս հրապարակային դասախոսություններով, երա կյանքի ու ստեղծագործության անհայտ էջերին նվիրված հրապարակումներով ու հոդվածներով, Խ. Աբովյանի տիրական գահն ու իրավունքները մեր նոր քերթության պատմության մեջ վերահստատելող ազնիվ ձգտումով. վոլգար-սոցիոլոգիմի վարդապետությունը սերտած որոշ վայ-գրականագետների ասպատակության պայմաններում դա բոլորովին եւ դուրին գործ չեր:

Ծուրը երկուուկես տարվա ընթացքում Ռ. Զարյանը տպագրության է պատրաստում և հաջորդաբար լույս ընծայում Խ. Աբովյանի բայցաթիւների ընտրամին (1939), «Վերը Հայաստանի, ողբ հայրենաւերի» պատմավեպի սովորական առաջին և, ըստ ամենայնի, գոհացոցիշ հրատարակությունը, միայն թե դեռևս ավանդական ծավալով (1939), ընտիր երկերի երկնատորակը (1939—1940), ծրագրում էր մի երրորդ հատոր ևս, բայց ակաված պատերազմը խանգարեց... Հենց այդ ժամանակ էլ նա իրականացրեց «Նախաշալի կրթության» ուսումնական ձեռնարկի լուսատիպ հրատարակությունը (1940): Առաջին երկուսին կցված են հանձնարարական ու սեղմ առաջարաններ, իսկ վերջիններին՝ ընդարձակ ներածական ակնարկներ, բազմաթիվ ծանոթություններ, մեկնաբանական հոդվածներ: Ռ. Զարյանի շանքերով է հիմնադրվում նաև «Աբովյանի գրադարան» մատենաշարը (1941, լույս է տեսնում որ գիրք):

Վարակող էր Ռ. Զարյանի խոսքը՝ ներշնչված ու խանդավառող: Շատ տարիներ անց, այսօր էլ, վերակենդանանում են մարդկանց հիշողության մեջ ու կրակով լցնում նրանց սրտերը «Վերքի» հրատարակությանը կցված երա «Մի քանի խոսքի» բաները. «Վերը Հայաստանին» վեպ չէ տպվորական առումով: Դժվար է նույնակ անոն գտնել, թե ինչ է դա: Հազիվ թե կարելի լինի մի երկրորդ այդախի վեպ մատնացուց անել. թերևս Եղիշեի Պատմությունը, մեկ էլ Նարեկացու Ողբը: Հիրավի, «Վերքը» վեպ չէ, այլ ողբ, դրաբերի ողբերգ: Դարերն իրենց հառաջանքը բամել են «Վերքի» մեջ: Թվում է, թե «Վերքը» բանարով չի գրված, այլ արցունքով, արյունով...»:

Ռ. Զարյանի այս ու մյուս հրատարակությունները աչքի էին ընկերում ոչ միայն իրենց հարուստ բովանդակությամբ և գիտական սկզբունքներով, այլև բարձրաճաշակ ձևավորմամբ ու տպագրության մաքրությամբ և երեւույթ էին նաև նորագույն շրջանի հայ գրատպության պատմության մեջ: Դրանք ընթերցողի մեջ պատվաստում էին գեղարվեստի ու գեղեցիկի ճաշակ...

Այս բոլորից բացի՝ Ռ. Զարյանի գրչի արգասիքն է ընթերցող լայն շրջաններին հասցեագրված «Արովյանի կյանքը» աշխատությունը (1939), որն իր ընդարձակ և համառոտ տարրերակներով ունեցել է վեց հրատարակություն, ապա և թարգմանվել ոռուերեն (Մուսկվա, 1955) ու իսպաներեն (Բուենոս Այրես, 1954), որ անհայտեալ երեսով է մեր գրականագիտական առօրյայում:

Հայրենական մեծ պատերազմը փոխեց շատերի կյանքի և գործունեության ողին, և Ռ. Զարյանը չէր կարող բացառություն կազմել: Հանգամաներների թերությունը բորբոքվում է նրա հին աերը դեպի թատրոն. նա սկսում է ապելի ու ավելի կյանվել հայ թատրոնի պատմության ու տեսության, ոսու դասականների և Վ. Շեքսպիրի երկերի հայկական թեմադրությունների հարցերով, չեայած շարունակում էր մեկ-մեկ հանձես գալ նաև գրականության պատմությանը նվիրված հոդվածներով: Գ. Սունդովյանի երկերի ակադեմիական հրատարակության երեք հաստրոները վերջավետ են դնում Ռ. Զարյանի տատանումներին, և նա այնուհետև ամրողությամբ նվիրվում է հայ թատրոնին ու Շեքսպիրին, աստիճանաբար հրատարակեով Սիրուոչի ու Պ. Սորամյանի կյանքին ու դերասանական արվեստին նվիրված հմտալից ուսումնամիջություններ, հայ թատրոնի ականավոր գործիչների մեծ ու փոքր դիմանակարներ, Վ. Շեքսպիրի ստեղծագործության՝ հայ կյանքում խաղացած դերի ընթացքներ և այլն: Միակ շեղումը, եթե կարելի է դա շեղում համարել, մեկնարաւանան այն փորձն է, որ 1955 թ. լույս տեսավ որպես առաջարև Ա. Բակրոնցի երկերի նումանու առաջին հրատարակության:

Գրական-բանասիրական հետափուզումներին հրամեցու տալու և թատրոնին փարելու օրերին Ռ. Զարյանն ընթերցող հասարակությանն է ենրկանում նաև իր տաղանդի նոր կողմերով՝ հուշագրողի հայտանելելի կարողություններով և գրողի ինքնատիպ ոճով: Նրա պատումների մեջ վերակենդանանում են հայոց նոր ու ժամանակակից գրականության շատ մեծեր, պատկանելի հայագետներ, արվեստի աշխարհի մարդիկ, պետական ու հանրային գործիչներ, մանկավարժներ... Մամուլում և առանձին գրքովներով հրատարակված հուշերի լավագույն մասը Ռ. Զարյանն ամփոփել է երկու գրքի մեջ՝ «Հուշապատում» խորագրով, որոնք հրապարակ են եկել վերջին տարիներու (1975, 1977): Ամեն ինչից երեսում է, որ ենդինակը առաջիկացնում իր երկրպագումներին կորախացնի դրանց նոր շարունակությամբ:

Ռ. Զարյանն իրուն գրականագիտության ու արվեստի աշխարհի եռանդում գործիչ, տարբեր ժամանակներում վարել է մի շարք կարևոր պաշտոններ՝ Հայպետնիրատի գեղարվեստական բաժնի վարիչ, «Սովետական գրականություն» ամսագրի գլխավոր խմբագիր, ՀՍՍՀ գիտությունների ակադե-

միայի արվեստի ինստիտուտի դիրեկտոր՝ Վերջինիս հիմնադրման օրից մինչև այսօր, յորովհանն ու լավագույնն դրանորելով իրեն իրքն գրական ու գիտական կյանքի կազմակերպիչ, հայ շեքսպիրագիտական կենտրոնի հիմնադիր ու գիտական ղեկավար...

Ի գնահատումն արվեստագիտության դոկտոր, արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր Ռ. Զարյանի գիտական մեծ վաստակի՝ նաև ընտրվել է ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ օրերս պարգևատրվել է Ժողովորդների բարեկամության շքանշանով:

Ծննդյան յորթանասունամյակի օրը ցանկանք բազմաշխատ հոբելյարին երկար տարիների կյանք, անսպառ եռամդ և բեղմնավոր գործունեություն հայ մշակույթի անդաստանում:

«Լրաբեր», 1979, № 10, էջ 105—108:

ՀՐԱԶՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանաստեղծ

ՄԱՐԴՈՒ ԳԵՂԵՑԻԿ ԿՈՉՄԱՄԲ

Ակսել Բակունցին բնութագրելիս Ռուբեն Զարյանը հիշեցնում է չեխովյան հերոսի ձևակերպումը. մարդու ամեն ինչը պետք է գեղեցիկ լինի՝ տեսքը, հոգին, հագուստը, ժայտը: Բակունցին ես քիչ եմ տեսել, աղոյ էլ հիշում եմ: Նրա մեջ կատարյալ շատ բան կար, որ ցոլցում է նաև նրա պայծառ ստեղծագործության մեջ: Հիրավի նաև վեմ տեսք ունեմ և խորութիւն հոգի: Բայց լեռնականի ծագում և բնավորություն ունեցող Բակունցին վերագրվող այդ բնորդությը ես աներերա կվերագրեի նաև իրեն՝ Ռուբեն Զարյանին, բայց մշակույթի այն անխոնչ մշակին, որն իր մեջ համադրում է ամենի և գործի մի եզակի ներդաշնակություն: Մի մտավորական, որ ոչ թե այդպիսին է իր դիպումով, գրաված դիրքով, պաշտոնի բերումով, գիտական կոչումով և տարիների մեխանիկական վաստակով: Ռուբեն Զարյանը մտավորական է եղությամբ, ի բնե, ի վերուստ: Մտավորական է մարդկային իր կոչումով, ստեղծագործական դիմամիկայով, վարքով ու բարքով, կեցվածքով ու պահվածքով:

Իսկ ամենից առաջ, անշուշտ, մի հարուստ վաստակից է ձևավորվում մտավորական՝ մորի աշխատավորի նրա կերպարը: Ինչքա՞ն առա բաժին նա ունի մեր գրականության և արվեստի գանձարանում, ի՞նչ կարևոր տարածք ունի նրա գործը մեր մշակույթի անդամանում:

Ռուբեն Զարյանի կյանքի ճանապարհը չի եղել վարդակից, հարթ՝ սիրամարդերով ձգված: Ամեն մի շատնագործական իմաստով՝ նուանուել մտավորականի, գիտնականի ուղին երթևմն կեռմանների դեմ է դրս գաւիս, երթևմն անակնկան վայրէջքի հանդիպում, երթևմն նեղանութ: Այդպես է լինու կյանքի ուղին, որն, այնուամենայնիվ, ընթանում է առաջ և վեր,

դժվարին մի ուղի, որն, իսկապես, թեթև է դատնում, եթե լցվում է ատեղծագործության բուն արգասիքով ու ասեղծագործական անկրկնելի թերկրանքով: Զանձլ տարիներին նա ևս, բնականարար, առանձին դեպքերում կարող էր մողոր կարծիքներ կամ ենթադրություններ անձլ այս կամ այն գործի, գորոշի, փաստի մասին: Բայց որտե՞ղ և եթե է ծնվում այն գիտնականը, գրողը, որ, Զևսի գլխից ծնված Սրբնաս Պալասի նման, ի ծնե անսխալական և իմաստուն լինի: Տարիների հետ, գրեթե հիտուն տարի Ծորեկն Զարյանը կարողացավ հաղթահարել երիտասարդ տարիքին հասուկ մտացնությունների վաղանց պահերը, իր միտքը դարձնելով հարուստ, կայտն, խորունկ ու լայնի: Գիտնականը, որ այժմ, արժանավորապես վայելում է բարձր հարգանք ու համակրանք, միշտ չէ, որ եղել է անվորով, գոնի ու երշանիկ: Տարբեր ժամանակներ նա ունեցել է աշխանաներ, ընդդիմախսներ, բավականաչափ ոժեղ քննադատներ: Դա ևս բնական է, քանի որ նա չէր ապրում մեկուսի, անշատ, ինքնարավ կրաքրով: Այդ ժամանակները բուռն էին, հարափոխոյն, իսկ նա գտնվում էր գրական-գեղարվեստական կամքի բուն ոլորտի մեջ:

Բարեբախտարար, հետագա ժամանակները բազմից հաստատեցին գիտնականի կուսումների ջշմարտացիությունը: Խոսքը վերաբերում էր Խաչատոր Աբովյանի Աղասու կերպարի մեկնությանը թե «Սովետական գրականություն» ամսագրի (որի խմբագիրն էր նա) պրոֆիլին ու բովանդակությանը, Վահրամ Փափազյանի Օթելլոյի դերակատարմանը թե սկսակ Պարույր Սևակի գրական մուտքի հովանավորությանը, նա միշտ հանդիպում էր առանձին դիմադրության, հակամետ կարծիքների և, այնուամենայնիվ, Ռուբեն Զարյանը չէր ընկրկում, չէր հանձնում իր սկզբունքների պաշտպանության դիրքերը: Իսկ դա դյուրին բան չէ: Զարմանալի է, այս, բայց եղել են օրեր, եթե նրա (նաև որիշների) գեղագիտական ճաշակն ու մոտեցումն այպանվում էր, և նա պիտի մարտեր «Էսթետացող քննադատ» հոդի անվանարկումը, քանի որ ժամանակին բարձր արվեստի պահանջը մղված էր հետին, անշատ պլան: Նման դեպքերում սկզբունքի պաշտպանությունը ոչ միայն գիտական, այլև բաղաքացիական սխրանքի նշանակությունը է ստանում:

Զաղակաղեկով իր սկզբունքները և սկզբունքայնությունը, Ռ. Զարյանը, ինձ թվում է, երեսն հոգնում էր երկար վիճարանություններից և համար հակամարտություններից: Դա պատճում էր հատկապես գրական հարցերի հետազոտությունների և մեկնարանությունների շրջանում: Թերևս դա էր պատճառը, որ նա, սկզբում այնքան հափշտակված գրականությամբ, մի գեղեցիկ օր անցավ հայ հին ու նոր թատրոնի ուսումնասիրության մարզը,

հշանավոր թատերագետ և ուսուցիչ երիտասարդ թատերագետների: Նրա գրական ընկերներն ափստանքով են հշում այս փաստը, քանի որ նիշով են, թե ի՞նչ ծաղկությով բացվեց նրա գրականագիտական-քննադատական ստեղծագործության գարունը: Քչերից մեկը, որ իր մուտքից հետո անմիջապես արժանացավ ժամանակի հոչակալոր գրողների ու գիտնականների ու շարությանը և սպասելիքներին, Ծիրվանզարեկի, Խասիալյանի, Դեմիրճյանի, Չարենցի, Զորյանի, ինչպես նաև Արենյանի, Անառյանի, Լևոնյանի, Խորեն Սարգսյանի շերմ վերաբերմունքին: Երիտասարդներս մեր հերթին հայ-փլանակությամբ էինք սպասում նրա հոդվածներին, նրա խմբագրած անսագրի համարներին, նրատարակած գրքերին: Ոչ որ չի կարող մոռանալ, թե ինչպիսի հնտությամբ ու սիրով է նա փախայել գրական նոր անունների հայունությունը, դառնալով շատերի, ինչպես Չարենցը կատեր, չիշերոնեն՝ ուղեցուցը: Գ. Էմինի, Վ. Խոչումյանի, Պ. Սևակի և դարձալ մի քանի տաղանավոր գրողների առաջնակությունը հաստատվել է նրա «Կերպարայրությամբ»: Դա առտնին ու առօրյա գործ չէ: հատիկի մեջ կանխորոշել ապագա համակարգը:

Ուորեն Զարյանը շնորհատառ անհատ է: Ինձ թվում է, որ գրականագետ-թատերագետ լինելով, եթե նա փորձեր ամեր, կարող էր տաղանդակալոր գրող դառնալ, կարող էր նույնիսկ ուժիսոր լինել: Ով նրան անհաջում է, զիտե, թե ինչպիսի հարգալից լույսամբ է ունկնդրում մարդուն, կարծես նետուում է զրուցակցի ոչ միայն մտքին, այլև զրուցելու կերպին, հետևում է նրա ոչ միայն շարժումներին, այլև պահի հոգերանական անոնսանելի ակունքին, ուսումնասիրում է նրան: Եվ զարմանալի չէ, որ նրա հուշագրությունների մեջ ընթերցողը ոչ միայն հաստ է դատում փաստին, այլև տեսում, շշափում է «հերոսի» անձը, նրա տեսքը, մարդկային ինքնատիպությունը, բնորոշ խոսքն ու ձևը, նրա կենցաղային մանրամասները: Զարյանը թափանցում և ընկալում է գրքի ոչ միայն մտավոր-հուզական հովանունը, այլև տղերի, հախադատությունների խորքից երևացող հեղինակի հոգին, նրա դեմքը: Դա չափազանց կարևոր է առանձնապես պոեզիայի ընթերցողի, պոեզիայով ապրող գրականագետի համար:

Արտաքուստ մեջ ու անդորր, թվում է թե՝ ֆեզմատիկ բնավորության տեր Ուորեն Զարյանը հոգով մնում է շատել ու կենասաւեր: Բնավորության «տերյանական» կենսի տակ նրա սիրութ լի է կյանքի կարսով, զվարության երգերով, սիրու և լավատեսության հյութերով: Նրա մանկության և պատանեկության օրերը անցել են կովկասան այնպիսի կենսալից, պայծառ քաղաքաներում, ինչպես Գյումրին է և Թիֆլիսը: Միջավայրը չէր կարող դուռը չդնել կյանքի վրա: Ես մի շարք առիթներ եմ ունեցել համատեղ ուղևո-

բոլոր մեջ տեսնել Ուուրենին՝ ուրախ ժամանցի պահերին: Ծառ շահելներ ձանձրացել, հոգնել ու թոշնել են այդ պահերին, իսկ նա մնացել է անձանձիր, արթուն, ուրախ մինչև լուսարաց: Այսպես, մինչև այսօր, մինչև իր յոթանասունամյակի օրը: Ենք կասկածում, որ նա այդպես էլ կմնա դեռ երկա՞ր ու երկար ժամանակ:

Ուուրեն Զարյանը բախտավոր մարդ է: Զգիտեն, անձնական անկետացին թերթիկը ինչքանով է բավականացնում տեղավորելու նրա աշխատանքների և աշխատությունների ընդհանուր գումարը, բայց նրանց սուկ թվարկումը չէ: Ամեն մի աշխատանքի և աշխատության նշանագրության տակ հարկ է պատկերացնել հոգու և մոտքի լարման, ստեղծագործական որոշման, հույզի, սրտի, արյան բարախը, ներշնչանքի այն հորը, որ բխում է, արձարծիւմ միայն ճշմարիտ ու տարածնեավոր մարդկանց հոգերու բուրալում: Ուստիշ, քննադատ, գրականագետ, արվեստաբան, հուշագիր լինելով հանդերձ, նաև տարիներ շարունակ եղել է մտավոր օշամների դեկալիա՞ ճախացնելով իր հասարակական գործունեությունը: Եվ որտեղ և ինչ եղել է նա՝ հրատարակիչ թե խմբագիր, դիրեկտոր թե գիտական խորհրդի մասնակից, կարևոր հանձնաժողովի անդամ թե նախագահ, հախաձենության կազմակերպիչ թե կատարող, ամենոր նա չի խնայել իր ներշնչանքի ու եռանդի այդ հորը, ամեն անօամ նա երևացել է գրականության, արվեստի, գիտության բագիններին նվիրված անկաշատ ու անքափի կրքով, անսպաս խանդականությամբ, մարդու գեղեցիկ կոչման մշտական գգացողությամբ:

Նրա բարեկամներն այսօր հինք ունեն երախտագիտությամբ դիմելու և շնորհավորելու նրան, իսկ ինքն իրավունք ունի վաստակած մարդու հըպարտությամբ կանգնելու իր բարեկամների բաց և անկեղծ հայացքի առաջ-

ՊԵՐԾ ԶԵՅԹՈՒԽՑՅԱՆ

Սրճակագիր

ՆԺԱՆԱՎՈՐ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԸ

Յուրաքանչյուր կենսագրության գնահատության չափանիշը նրա բովանդակությունն է, այդ բովանդակության հարասուրյունը, մարդկային ու հասարակական արժեքը: Պարտադիր չէ, որ այդ կենսագրությունը, այսպես ասած, հետաքրքիր պուժե ունենա և անպարհան կապված լինի պատմական մեծ իրադարձությունների հետ, մանավանդ, եթե խոսքը վերաբերում է արվեստի ու գրականության մշակին, որի անկետային տվյալները պետք է ոչ սպորական հարցերով լրացնել, որի՞շ տիպի հարցերով: Բայց եթե ևս ոչ թե սույն կարիքնետային անձնավորությունն է, այլ նաև՝ գրական ու թատերական գործիչ, նաև՝ հասարակական, ապա նրա կշիռը, բնականաբար, էլ ավելի է մեծանուն, իսկ եթե այդպիսի մարդու կյանքի ընթացքը թեկադրված է ո՛չ թե մի մասնավոր կենսագրության, այլ երկրի ու ժողովրդի ճակատագրի տրամաբանությամբ, ապա նման անցյալի տեր մարդու վաստակը Էլ ավելի է իմաստավորվում և դառնում ուսանելի՝ իր ժամանակակիցների համար:

Սյուպիսին է Ռուբեն Զարյանը, որ հայոնի է մեզ իրու խոշոր թատերագետ ու գրականագետ, մանկավարժ, գիտության ու հրատարակչական գործի կազմակերպիչ, հայոնի է գործունեության այս լայն շատավիրով, որ վկայում է նրա ակտիվ կառնվածքի ու անհանգիստ բնավորության մասին:

Անհանգիստ ասացինք, թեև բոլորս էլ քաջ գիտենք, որ նա շատ հանդիս և մեղմ մարդ է, վերին աստիճանի բարեկիրծ, արտաքին բոնկումներից կարծես գորկ, ձայնը բարձրացնելու անընդունակ: Անհանգիստությունը նը նրա համար արտաքին զարդարանք չէ և ոչ էլ ցուցադրում, այլ ներքին բովանդակություն, ապրելակերպի ու մտածելակերպի սկզբունք, որ թեկա-

դրում է ակտիվ վերաբերմունք կյանքի հանդեպ, երկրի ու ժողովրդի հրատապ խնդիրներով ապրելու ամենօրյա ձգուում, երևոյթ, որ կարելի է ընդհանրացնել մի կարճ և տարողունակ քառով՝ քաղաքացիականություն: Մրտաքին երևոյթի ու ներքին բովանդակության այս անհամապատասխանությունը վկայում է, որ քաղաքացիականությունը Զարյանի համար ո՞չ թե ճառ է, ո՞չ թե անհարկի և անօգուտ իրարանցում, այլ եռոքյուն: Եվ ադրբյան «լուս» ու «հաղաղ» մարդիկ հաճախ ավելի հավատ են ընծարում, քան աղմբակարաները, որոնց հայրենասիրությունը սեփական արժանիքները ի ցուց դնելու միջոց է և ոչ թե ամենօրյա կոնկրետ ու տքնաշան աշխատանք:

Ժամանակին գոյություն ուներ հրապորիչ մի լեզենդ Սղամյանի մասին, լեզենդ՝ քանի որ ոչ չեր տեսել երան, սակայն բոլորը լսել են երա մեծության մասին: Զարյանն այդ լեզենդը վերածեց ռեալ պատմության, և Սղամյանը, ի պատիվ հեղինակի, նորից լեզենդ դարձավ, քայլ արդեն իմաստավորված, միևնու արյուն ձեռք բերած և ազատված «խորհրդավորության» շղարշից:

Երկու հաստրանց այս ֆունդամենտալ աշխատության մեջ Զարյանը հիմնականում օգտվել է մասմզում ցրված գրախոսություններից, այսինքն, հիմնելու է փաստերի վրա: Բայց ի՞նչ քանի է փաստը ինընին, եթե չկա այդ փաստի համադրումը մի որիշ փաստի հետ կամ ընդհակառակը՝ հակադրումը, չ? որ փաստերի ճիշտ ընտրված հարևանությունն ու հրաբերակցությունն են այն հիմքը, երբ երկու փաստերից յորպահնչյուրի առանձին ճշմարտությունից ծնվում է երրորդը, անսպասելին, այսինքն՝ հեղինակայինը: Ռուբեն Զարյանի աշխատության հորությունը, եթե կարելի է ասել, այս երրորդ ճշմարտության որոշումն է ու հայտնաբերումը, որի շնորհիվ մենք այսօր գործ ունենք ոչ թե Սղամյանի սույն կենսագրության, այլ նաև և առաջ երա ամբողջական կերպարի հետ:

Նոյնպիսի որպես և արժեք ունեն նաև Զարյանի գրքերը Սիրանուշի ու Փափազյանի մասին:

Սակայն կա մի հանգամանք, որ ես ոգում եմ հատկապես շեշտած ու ընդգծած լինել: Գրելով Սղամյանի մասին, Զարյանը չզարգացրեց միայն ադրբյանագիտությունը: Միայն սիրանուշագիտությունն ու փափազյանագիտությունը չզարգացրեց, գրելով հայ բնիմ այս երկու հսկանելու մասին: Զարյանը երանց միջոցով հավասարապես զարգացրեց նաև շեքսափիրագիտությունը, որի առթիվ մենք պարտավոր ենք այսօր մեր երախտագիտության խորք ասել: Եվ պատահական չէ, որ չնայած Շեքսափիրը վաղուց է հայտնի հայ մշակույթին, սակայն, այնուամենապեսիվ, Զարյանն էր առաջինը, որ ստեղծեց Շեքսափիրագիտության կենտրոնը հայ իրականության մեջ:

Մեծ է Զարյանի վաստակը նաև արովյանագիտության ասպարեզում: Ու թեն երկար տարիներ է, ինչ նա ալևս չի գրադպում այդ թեմայով, բայց հրա արած գործի հետքերը թարմ են մնում մինչև հիմա: Եվ ապօք Արովյանի մասին գործիս անհնար է չհենվել Զարյանի մեծ փորձի վրա ու չօգտըվել այդ փորձից:

Եվ, վերջապես, «Հուշապատում», որ մի տեսակ լրացնում է մեր գրականության ու արվեստի «մուր» կամ, ավելի ճիշտ, մեզ համար դեռևս անհայտ մնացած կետերը: Կերպարների մի հարուստ պատկերասրահ է դա, որի ոչ թե ինֆորմացիոն արժեքն է զարմացնում, այլ գեղարվեստական մակարդակը, մարդկային ամրողական կերպարներ կերտելու հեղինակի հըմտությունը:

Սխալ կիմեր, սակայն, Զարյանի մասին խոսելիս մոռանալ, որ պատմությամբ չէ միայն, որ նա գրադլել է: Նա ամենայն ոչադրությամբ հետեւում է նաև թատերական արվեստի զարգացման այսօրվա ընթացքին, և չկա թիշ թե շատ հշանակալի թատերական մի երևոյթ, որին նա արձագանքած չկիմ: Ես, օրինակ, այդ գրախոսությունները, շնայած ծալվաների տարբեությանը, չեմ ստորադափ հրա գիտական աշխատություններին, թե՛ մեկը, թե՛ մյուսը հավասարակես արժեքավոր են: Որովհետև այդ գրախոսությունները միշտ ել պրոբլեմային բնույթ ունեն, սուր են, անզիջող, սկզբունքային և միտք շարժող:

Զարյանի գլուխվոր հատկանիշներից մեկն այն է, որ հրա գործերում, թե՛ մեծ, թե՛ փոքր, մշտապես միմյանց են զուգակցում հետազոտական միտքն ու քննադատական միտքը, մի միասնությունն, որ հնարավորությունն է տալիս խուսափելու միակողմանիտթյունից ու ամեն երևոյթ ուսումնասինելու համապարփակ ձևով, այսինքն՝ ամրող խորությամբ, ոչ միանշանակ:

Ռուբեն Զարյանը, շնայած իր պատկանի տարիքին, երբեք չի կորցրել արվեստում նորև գգալու, հայտնաբերելու և պաշտպանելու իր հրաշալի ունակությունները: Զարացնենք, որ տարիքը երբեմն-երբեմն իր հետ ինչ-որ չափով բերում է նաև պահպանղականությունն, որ պեսք չէ շփոթել կայուն համոզմունեցների հետ: Զարյանը բախտավոր է, ու մենք նրանի ավելի, որ նա կարողացավ խուսափել այդ ախուր հիվանդությունից, և արվեստի հրա ընկալումը մնաց միշտ երիտասարդ, թարմ և ինքնատիպ: Բազմաթիվ դեմքեր են հիշում, որ երբ այսինչ կամ այնինչ արվեստագետը բայսլել է իր գործի ճակատագիրը որոշող պնդաճական, նեղմիտ և արվեստի հետ ըստ եղության ոչ մի կապ չունեցող մարդկանց հետ, օգնության է կանչել Ռուբեն Զարյանին, որի անվիճելի հեղինակությունը կարող է բանել ամեն տեսակի արգելքներ ու պատճեններ: Եվ այսուղի, կարծում ենք, տեղին է նշել,

որ յուրաքանչյուր արվեստագետի ու գիտնականի վաստակն ու արժեքը շափվում են ոչ միայն նրա բուն ստեղծագործություններով, այլ նաև այն իրողությամբ, թե ինչպիսին է նրա վերաբերմունքը նոր մերժության համեմատ։ Այս իմաստով, տարբեր մերունդների ներկայացուցիչներ կարող են վկայել, թե ինչպիսի բախտորոշ դեր է կատարել Ռուբեն Զարյանը իրենց ճակատագրի մեջ։

Զգլանանք և օգտվելով ամիոթից կրկին հիշենք, որ Ռուբեն Զարյանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ է, արվեստագիտության դոկտոր, արվեստի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, արվեստի հնատիտուսի դիբեկստոր՝ ինստիտուտի հիմնադրման օրից, ժամանակին՝ Հայպետհրատի գեղարվեստական գրականության խմբագրության վարիչ, «Սովետական գրականություն» ամսագրի խմբագիր, իսկ մինչև այսօր՝ նաև սիրված մանկավարժ, բազմաթիվ գրքերի հեղինակ, որոնք լույս են տեսել նաև այլ լեզուներով, նաև արվեստի անխոնչ պրոպագանիժան արտասահմանում, հասարակական անվանի գործիչ և բոլորովին վերջերս՝ Ժողովուրդների բարեկամության շքանշանակիր։


Բայց խոսովանենք, որ նման անվիճելի բարեմանություններն անգամ միշտ չեն, որ հիմք են տալիս այդ ամենի մասին ոգևորությամբ խոսելու։ Մեր ընդհանոր ոգևորության պատճառը, հավանաբար, պետք է շատ հասարակ ու շատ մարդկային իրողության մեջ փնտրել։ Ռուբեն Զարյանի հմայքի, նրա բարձր նկարագրի, ազնվական, իմաստով ընկալելու պահիվածքի, որ պետք չէ, անշուշտ, միայն կենցաղային հմաստով ընկալել։ Մարդկային այս գծերը, որոնք մի առանձին շուրջ են տալիս նրա անձին, նշանակալից են նաև այն տեսակետից, որ անպայման, ինչ-որ չգրված օրենքով, վիշնանցվում են նրա ստեղծագործություններին ու աշխատություններին։

Ռուբեն Զարյանի պրատող և անհանգիստ միտքը տարիեր չի ճանաչում։ Ոչ մի հորելյան անցած ճանապարհի վերջնական ամփոփումը կամ հանրագումարը չեն, այլ շարունակություն։ Ուրեմն, բացի զուս մարդկային մաղթություն, երկար կյանք, երջանկություն, անհրաժեշտ է մաղթել նաև նորանոր անհանգիստ տարիներ, և ստեղծագործական այդ անհանգստությունը թող միշտ անբաժան լինի նրանից։



П. Симонов
Листок из альбома 1956 г.





1059

ՌՈՒԶԱՆ ՄԱՐԳՈՒՆԻ
Արվեստագիտության թեկնածու

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ.

Թե ճառայում ես քո կոչմանը և չես դալաճանում սիրելի գործին, Արան
ևս նվիրում հնգու ու մորի բոլոր ուժերը, գալիս է նաև ճանաչումը:

Ռուբեն Զարյանին գիտեն և սիրում են շատերը: Նա այսօր դարձել է
Կենդանի հեղինակություն, իբրև արվեստի և գրականության պատմաբան,
շերսափիրագետ, խատերական քննադատ: «Հայ նոր գրականության մեկն-
անս» նաև, ինչպես Արան անվանել է Պարույր Սևակը, որի բանաստեղծա-
կան հզորությունն ու յորոինակությունը առաջիններից մեկը ճանաչեց Ռու-
բեն Զարյանը՝ իրոք տաղանդավոր, եռանդուն, ճշմարիտ արվեստով կան-
վոր ու տարվող և որիշներին իր եռևից տանելու շնորհով օժնված մի
մարդ: Նրանից մշտապես ակնկալով են հետաքրքիր մի գիրք, հոդված, ե-
լույս կամ գոնե կարծիք և ոչ միայն մեր երկրում, այլև արտասահմանում:

Գերմանական շերսափիրյան ընկերությունը՝ Շերսափիրի ուսումնափրո-
թյան գիտական հնագույն օջախներից մեկը, որի անդամն է իրավամք Ռու-
բեն Զարյանը, շերսափիրյան տարեգրում («Շերսափիր Ցարքում») Ռուբեն
Զարյանի անունը հիշատակելիս, մշտապես Արան անվանում է «մեր բարե-
կարիք»: Նման համակրանքի հայ գիտականը արժանացել է Շերսափիրի նը-
կատմամբ այն համարարմությամբ և ակնածանքով, որն սատ էության ակ-
նածանք է ընդհանրապես բարձր արվեստի հանդեպ:

Զարյանի ընթերցողների շրջանակը բավականին լայն է: Այն էլ ավելի
ընդլայնվեց շնորհիվ Արա որոշ աշխատությունների ուսական հրատարա-
կությունների: 1955 թվականին Մուլիվայում «Զննիե» հրատարակչությունը
լույս ընծայեց «Խաչատոր Արույսան՝ հայ ժողովրդի մեծ զավակը» բովածուք:

Դա մի սրտահույզ պատմություն է հայ լուսավորչի ճակատագրի և զարմանալիողնեն խորհրդանշական կյանքի մասին, որն «իր սրտի լուսով մի պահ բոցավանեց հայ ժողովրդի խավարն ու մթուրդյունը և ինքն այրվեց այդ բոցի մեջ» (Էջ 32): Ռուբեն Զարյանի այս խոսքերի մեջ և՝ հապատություն կա իր ազգի հանդեպ, Աղառնություն նրա ճակատագրի համար: Անվանելով Խաչատոր Սրբովանեն սրբանշելի և ազնվարարո մարդ, նրա կյանքի ու գործունեության մեջ ամենից առաջ գնահատելով հարազատ ժողովրդի հրկատմամբ ունեցած սերն ու մեծ հայրենասիրությունը, հեղինակն ինքը և ովելորդում է իր երկրի լավագույն որդիների ճկատմամբ անելոյն սիրով և բուն ցանկությամբ՝ ներկայացնել նրանց այլ ժողովորդներին: Նույն զգացմունքով են ներշնչված ոստերնեն լուս տեսած նրա մյուս երկու գրքերը՝ «Արտա Ռուկանյան» (Երևան, 1957) և «Աղամյանի Շեքսափիրը» (Երևան, 1964): Վերջինս, որը բնի այդ հիմնալի վարպետի կյանքի և գործունեության մասին Ռ. Զարյանի երկանատոր ուսումնասիրության լոկ մի մասն Ե, ընդունվեց ոգևորությամբ ու մի շարք մանրամասն և լրջմիտ գրախոսությունների, դատողությունների առիթ դարձավ: Գրախոսություններով հայկական մամուռուն հանդես եկան Պարույր Սևակը, Գևորգ Էմինը, Սիմվա Կապուտիկյանը, չեխ շեքսափիրագետ Զդենեկ Ստրիժենին այդ գրքի կապակցությամբ բաց համակ ուղարկեց «Կոմունիստ» թերթին: Գ. Ն. Բոյաջիկը, Ռ. Մ. Սամարինը, Մարիետա Չահինյանը իրենց կարծիքը հայտնեցին Զարյանին ուղղված համակներում: Նրանք բոլորն էլ հայտնեցին իրենց հավանությունն ու երախտագիտությունը, նշեցին աշխատության կարևորությունն ու գիտական արժեքը, որը ոուս ընթերցողին մոտեցնում էր հոչակած արտիստ ստեղծագործության առավել խոր ըմբռնմանը:

Այս երեք գրքերում, որոնք ներկայացվեցին ոուս ընթերցողին, հայ գիտնականը հանդես է գալիս որպես բարձր ուսալզմի շատագով: Հայ բազմադարյան մշակույթից նա առանձնացնում է և ուսումնասիրության առարկա դարձնում հենց այն ներկայացուցիչների ստեղծագործությունը, որոնք հայ արվեստում և գրականության մեջ ուսալզմի զարգացման ընթացքի որոշակի վկայությունը դարձան: Ինեւալականի և պուտականի հետ համատեղ դեսի ճշմարտություն և բնականություն ունեցած մի ձգուու, որը չի ինեւականացնում իրականությունը, այլ հաստատում է ապագայի հետ կապված իդեալները՝ ահա այն հիմնական մեկնակետող, որը միանում են Ռուբեն Զարյանի այս գրքերում ուսումնասիրած այդքան տարրեր ստեղծագործական անհատականությունները և որի մեջ է դիտարկում հեղինակը նրանց արվեստի հիմնական պահուսը: «Ոչ թե ինեւականացնել կերպարը, այլ կերպարել ինեւալը»՝ կառուցված ոչ թե բացադիկի, այլ իրականի պատկերնամա-

ուեալիատական հիմքի վրա (տե՛ս «Աղամյանի Ծերսպիրը», Երևան, 1964): Սյսպես դիպուկ և հատակ բնորոշում է գիտնականը երկու ուղղությունների՝ ոռմանանդիմի և ուեալիզմի տարբերությունը արվեստում, նշում է հրանց սահմանները:

Սովորաբար գրողի կամ նկարչի ոճին անդրադառնում են ավելի հաճախ, քան գրականությանը և արվեստին նվիրված ուսումնասիրությունների ոճին: Մինչդեռ այս դեպքում ևս պահան կարնոր չէ, թե ինչպես, ինչ ձեւվող է կատարվում քննությունը: Առանձնապես հարկավոր է դա այն դեպքում, եթե գիրքը կամ նորմածը շոշափում է մի այնպիսի նյութ, որը չի կարելի վլյայակոչել իրեն արվեստի փաստական նմուշ: Նկատի ունենք, մասնաւորապես, դերասանների ստեղծագործական նկարագրի վերատեղման, հրանց անցած բեմական որդին արձերքալորելու հանգամանքը: Պետքու Ադամյանին և Արուս Ուկանյանին նվիրված ոուսերեն հրատարակված այս երկու մենագրությունների հիմքը նաև և առաջ կտրականության բացակայության մեջ է: Ընթերցողին կոնկրետ փաստերից դեպի լույսաներություններ տանելով, Ռուբեն Զարյանը ոչ մի տեղ չի չարաշամում հրա վստահությունը, չի դիմում հեղինակությունների՝ իր թեզը ապացուցելու համար: Նրա համար գոյությունը չտնել անվիճելի փաստեր: Փաստերը համեմատվում են, բախվում, վիճում միմյանց հետ: Ընթերցողն ինքն է մասնակցում ապացուցման ընթացքին, ներկա գտնվելով արվեստի փաստի, կոնցեպցիայի, ընդհանրացման ստեղծմանը, դատում ստեղծագործական պրոցեսի ականատես: Արա մեջ է Ռուբեն Զարյանի գործերի համոզեցողից ուժը, գորեր, որ իրավամբ մտել են քատերագիտության և շերսպիրագիտության գիտական շրջանագրության մեջ:

Բավականին պերճախտու երկու օրինակ բերենք:

Լենինգրադի գիտնականների «Ծերսպիրը և ոուսական մշակույթը» մեծածավալ աշխատության մեջ, որը հավակնում է Ծերսպիրի մասին մինչև 20-րդ դարի սկիզբը ոուսերեն գոյություն ունեցող գրականության ըստ հնահանուրին լիակատար և միտեմավորված նկարագրությունը լինելուն, վկանակություն է Ռուբեն Զարյանի հետեւ «Աղամյանի Ծերսպիրը» գիրքը, որպես առավել հեղինակավոր, փաստերն ընդհանրացնող ուսումնասիրություն, և ոչ թե, ասենք, այն բազմաթիվ հոդվածներն ու քննադատականները Պետքու Ադամյանի մասին, որոնք հայտնվեցին ոուսական մամուլում 80-ական թվականներին (Էջ 694):

Մ. Վ. և Դ. Մ. Ուրանովների «Ծերսպիր: Շարժում ժամանակի մեջ» (Մուլգիա, 1968) գրքում հեղինակները անդրադառնալով շերսպիրյան պիեսների բնամական ավանդությունների մեկնարանմանը 19-րդ դարում, նշում են

«19-րդ դարի հայ խոշորագույն ողբերգակ Պետրոս Աղամյանի Օթելլոյի, Լիլի, Համեսի դերերի իրազննական առումով հոյակայ վերլուծությունը» Ռուբեն Զարյանի գրքում, ընթերցողի ուշադրությունն են հրավիրում պատմելու տեղ գտած «հումանիզմ» հասկացության «զգուշակոր, գիտական, պատմականորեն ստուգ գործածության վրա», հասկացությունն, որը, ուսումնասիրության հեղինակների կարծիքով, բազմաթիվ այլ հետազոտություններում հաճախ օգտագործվում է «պատմական և ներառելեքտիկ և թիս թե շատ կոմեկելու իմաստից դուրս» (Էջ 21):

Զարյանի «Աղամյանի Ծերապիրը» գրքի գիտական ճակատագիրը եկավ հաստատելու Մարտիրոս Սարյանի այն միտքը, որ նա արտահայտել է գրքի նախաբանում. «Ռուբեն Զարյանի հիմնայի մենագրությունը արժեքավոր ավանդ է ոչ միայն Աղամյանի ժառանգության և ողջ հայ թատրոնի պատմության ուսումնասիրության մեջ, այլև շերսպիրագիտության» (Էջ 7): Այսուն Մարտիրոս Սարյանը համաձայնում է նաև Բովարեստի համալսարանի պրոֆեսոր, հայագետ Վաղարշ Բենեցիշանով այն ցանկությանը, որ հանելի կլիներ տեսնել Զարյանի գրքի թարգմանությունը եվրոպական լեզուներով:

Մինչև այժմ գրքի միայն առանձին մասերն են հրատարակված օտար լեզուներով: 1971-ին Վենետիկում Պարմի համալսարանի մատունաշարում անգլերեն լուս ընծայվեց Ռուբեն Զարյանի «Աղամյանի Համեստը», որի մասին հիտական մասուլում ծավալուն և դրվագական հոդվածով հանդես եկավ ակադեմիկոս Չորշի Նորիշանին: Նույն 1971-ին գերմանական շերսպիրյան տարեգիրը («Ծերսպիր Յարրուս») իր 107-րդ համարում արդարեց Ռ. Զարյանի «Հայ շերսպիրյան թատրոնի պատմությունց» գեկուցումը՝ նվիրված Աղամյանի Օթելլոյին: Այդ գեկուցումը կարդացվել է 1970-ին Վայնարում, գերմանական շերսպիրյան ընկերության հիսուներից մեկում: Նույն ժողովածնի 109-րդ համարում գերմաներեն տպագրվեց նաև Ռուբեն Զարյանի մեկ այլ գեկուցումը, որը կարդացվել էր 1972-ին Վայնարում շերսպիրյան օրերին: Այն նույնպես նվիրված է Օթելլոյի թևնական մեկնարանությանը, բայց արդեն մեկ այլ հոչակավոր հայ ողբերգակի՝ Վահրամ Փափազյանի կողմից:

«Ծերսպիրը և հայ թատրոնը», «Աղամյանը և Ծերսպիրը» թեմաներով Ռուբեն Զարյանը գեկուցումներ է կարդացել նաև Սրմելքի երկրներում՝ Սիրիայում (1964) և Եգիպտոսում (1969):

Հատկանշական է նաև 1965-ին, Լոնդոնում, Զարյանի կարդացած, Ծերսպիրի և հայերի մասին, ծավալուն և հանգամանայի գեկուցման տպագրության անգլերեն և ֆրանսերեն (տե՛ս «Ծերսպիրը և հայերը», 1969, անգլերեն, նոյնը, Ժնև, 1973, ֆրանսերեն):

Իսպանացի ընթերցողը հնարավորություն ունեցավ ծանոթանալու հայ մեծ լուսավորիչ Խաչատրը Աբրվանի կյանքի գործունեության հետ: Նրա կյանքի համարու ակնարկը, որ գրել էր Ռ. Զարյանը, լույս տեսավ Բուևնոս Այրեսում 1964-ին:

Անս օտար լեզուներով լույս ընծայված Զարյանի աշխատությունների լիմի ցանկը, որը սակաւ նրա բազմավաստակ ստեղծագործական գործունեության մի փոքր մասն է միայն: Այս հրապարակումները հիմնականում ծավալով մեծ չեն՝ ընդամենը 50—100 էջ, կամ պարզապես ոչ ընդարձակ գեկուցումներ են: Նրանցից ելենով, դժվար է դատել հայ գիտնականի ընդգրկումների մասին: Այնուամենայնիվ, Ռ. Զարյանը այլազգի ընթերցողին Կիլավորակներ ենթացնում է այս, ինչը իրոք նրա գիտական գործունեության հիմքն է հանդիսացել երկար տարիների ընթացքում: Դրանք վկայությունն են այն բանի, որ Զարյանը ունի իր հակումները, իր հեղինակները, որոնց նա դիմում է առավել հաճախ: Եվ դա առաջին ներթին Ծերապիրն է և այն հայերի նվիրական անունները, որոնք իրենց ստեղծագործական նակատագիրը կապեցին Ծերապիրի հետ, դրանով իսկ հաստատուն, արժանի փառք բերելով յօն իրենց ժողովորդին և թե իրենց: Հովհաննես Մասեհյան, Պետրոս Սղմանան, Վահրամ Փախազյան՝ համաշխարհային հանաչման արժանի անուններ, որոնց արվեստն էլ Ենթայացնում է Ուրբեն Զարյանը օտար ընթերցողին: Ենդորում, գիտնական-արվեստաբանը կարողանում է այս ստեղծագործողների կյանքի և գործունեության զանազան պարագաները Ենթայացնել վաս, կենդանի լեզվով, խուսափելով վերացական տեսական բանաձևումներից: Նրա լուրաբանչուր տողում անկրկնելի անհատականության՝ գիտնական-բաղարացու անձնավորության կնիքը կա: Պատահական չեն գիտնական գործունեության կամ կարողացան անդամների չեն, որ Վահե Գողելը և Մարին Վերդոնեն՝ նրա երկու աշխատությունների չեն Ծերապիրը և հայերը՝ ֆրանսերն, «Արմայանի Համեստը» իտալերեն) («Ծերապիրը և հայերը» ֆրանսերեն, «Արմայանի Համեստ» իտալերեն) նախարանների հեղինակները կարողացան ստեղծել Ուրբեն Զարյանի ճշշմարիտ նկարագրը, և ընթերցողը, դեռևս չծանոթացած նրա գործերին, հնարավորություն է ստանու հանաչելու հեղինակն և հավատ ձեռք բերելու նրա նկատմամբ: Անս յօն ինչ է գրում Վահե Գողելը Զարյանի մասին: «Ազատ, միաժամանակ նորը և ճշգրիտ ոգին, իր փայլուն միտքն ու հարուստ գգայական աշխարհը կիրառում է ոչ միայն թարորնի ոլորտուն, այլև գրական քննադատության, գեղագիտության: Արվեստին և հատկապես Հայաստանի արվեստին վերաբերող ոչ մի բան օտար չէ նրան»: Այնուհետև «Ծերապիրը և հայերը» գրքի մասին Ենթածականի հեղինակը ասում է: «Գիրքը լուսավոր է մեծ կրբով, ծանրակշիռ փաստարկումներով, հնարավորություն ըստ գրված է մեծ կրբով, ծանրակշիռ փաստարկումներով, հնարավորություն է տալիս դիտարքելու Ծերապիրի՝ հայ թատրոնի և գրականության մեջ ամե-

ցած ուղին, որը մինչև այժմ միայն մասնակիորեն էր հայտնի... Զարյանի գիրքը բացահայտում և արժեքավորում է այն զգայի ազդեցությունը, որ թողել է Ծերսափիրի ժառանգությունը հայ ժողովորի ազգային գիտակցության արթնացման և զարգացման վրա, ժողովորդ, որ ինչպես հայոնի է, տուրքերի բարբարոսական ֆանատիզմի զոհն էր...» («Ծերսափիրը և հայերը», Ծնն., 1973):

Վահե Գոդելը փաստորեն նշում է Զարյանի մտքի հիմնական ուղղվածությունը, գիտնականի, որն արվեստի մեջ կատարվող ամեն մի երևոցը դիտում է պատմական շարժման, իրադարձությունների տեսանկյունից: Սրվեստի և ազգի ու երկրի հասարակական և տցիալական կյանքի միջև գոյություն ունեցող կայի գաղափարը հարազատ և հասուկ է Զարյանին: Օստար ընթերցողին ներկայացնելով հայ դերասաններին, թարգմանիչներին, ուժիուրուներին և նկարիչներին, Զարյանը նաև և առաջ շոշափում է իրեն ամենից շատ հոգող պրոբլեմը, այն է՝ ստեղծագործ արվեստագետոց ազգային աղետների և պատմական իրադարձությունների դեմ հանդիման:

Հայաստանում Ծերսափիրի յորացման և ընկալման պատմության հետ կապված փաստերի, մտքերի, գգացմունքների և դատողությունների մեջ, որոնք Զարյանը ներկայացնում է բազմազնու ընթերցողի դատին, ուրիշ գծում է բարդ, բայց և բավականին պերճասոս մի պատկեր, որի մեջ ուղաղիր և նրազգաց գիտնականը տեսնում է Ծերսափիրի ապագա ըմբռնումների որոշակի հնարավորությունները:

Ինչպես հայտնի է, հայ միտքը շորջ մեկուկես դար է, ինչ անդրադառնում է Ծերսափիրին, և այժմ, շնորհիվ Ռուբեն Զարյանի ջանքերի, սկսվում է Ծերսափիրի սիստեմավորված գիտական ըմբռնումը, որն իր մեջ է առնում նաև Հայաստանում նրա ստեղծագործության յորացման արդյունքների ամփոփումը և դրանք մեկ երկրի մեջ շրջանակից համաշխարհային ասպարեզ դուրս բերելը: Այսպես, քայլ առ քայլ Ռուբեն Զարյանը օտարազգի ընթերցողին հաղորդակից է դարձնում իր երկրի հոգևոր մշակույթին, նրա որոնումներին և ձեռքբերումներին, օժանդակելով, անկասկած, ընդհանուր զարգացմանը գիտության այն ասպարեզի, որին ինքը հավատարմորեն ծառայում է երկար տարիներ:

ԱՆԵԼԿԱ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Թատերագետ

ԾԵՔՍՊԻՐԻ ՀԵՏ

1964-ին, երբ կազմակերպվեց Հայկական շեքսափիրյան կենտրոնը, ունաց դա անպատճեն շուպլոթյուն թվաց՝ հատուկ քննության չարժանացած հայագիտուական բազում բնագավառների սպասողական ֆոնի վրա: Քչերը միայն կուտեցին, որ զարյանական այս «օտարամետ» ձեռնարկը իր խորքում մարդենի մշակույթի գիտական ճանաչման ու գնահատման մտահոգությունն ունի:

Որոքեն Զարյանն առաջարկում էր քննել հայ հասարակական մտքի, թատերական ու թարգմանական այն ծանրակշիռ իրողոթյունները, որոնք իր իսկ մեկնությամբ, առնչված լինելով Շեքսափիրին, բուն հայկական դրսևություններ են: Համաշխարհային մշակույթի ամենախոշոր դեմքերից մեկը, այս առողջությունում էր այն իրական չափը, որով կարելի էր վերստեղծել այդ անդրդարձությունի ծավալն ու արժեքը: Ասել է թե չափ չափի դիմաց, սա արդեն ոչ միայն մեթոդ է, այլև ըմբռնում ու տեսակետ: Տեսակետ, որ կիրակել էր նա Աղամյանի ու Սիրանուշի արվեստին նվիրված հետազոտություններով, և որը պարզո՞շ ձևակերպումով ի հայոց եկալ «Շեքսափիրը և հայերը» Էսաւատիսյան ուսումնասիրության մեջ: Թեև սրանք զուս շեքսափիրագիտության էջեր չեն, բայց այն, ինչ կազմում է Աղամյանի, Սիրանուշի, Մագիստրան Էջեր չեն, բայց այն, ինչ կազմում է Աղամյանի, Սիրանուշի, Մագիստրանի և այլոց ստեղծագործության հույսը հենց Շեքսափիր է, ուստի վերաբերյալ և աղջուածական այսպիս անհստավիելի և հիմնորդ խնդիր է:

Անհետացող արվեստի գոլփագործոցների («Սիրանուշ», «Աղամյան») վերստեղծման անհրաժեշտության ստիպմամբ, թե անհատական կերտվածքի բերումով զարյանական այս Էջերը կրում են ոռմանտիկական քննության պարուն ու դրոշմը: Շեքսափիրի լայն ու բազմակողմ իմացությունը թույլ է

տալիս նրան անսայթաք յափամեցելու շեքսափիրյան ստեղծագործությունների խորթերը, հայտնաբերելու նոր և նորը շերտեր, դրանորելով ընկալման կամդանի անմիջականություն և երևակայության այնպիսի թոփշը, երբ գիտական քննությունն ու էտողինավ վերապրումը դառնում են անբուժանելի միասնություն։ Այստեղից էլ դրույթի, մտքի, կոահումի արտիստականություն, մի հատկանիշ, որ փաստական, վերյուժական ու տեսական մեծ բենվածք ունեցող Զարյանի շեքսափիրյական մեկնությունների տարրերից առանձնահատկությունն է («Շեքսափիրի հետ», «Եշեր հայկական շեքսափիրյապատումից»)։

Եթե Սոդամյանի ու Միրանուչի խաղարկումների վերլուծության մեջ Զարյանի համար Շեքսափիրը այն վաստելի վավերական կործ էր, որ դառնում էր հիմք՝ գիտական ըմբռնումներով ու ինտուիցիալով ոգեկոչվող դերակատարումների համար, ապա Մասեհյանի գործը հետազոտելի՝ թարգմանված Շեքսափիրն ինքը թարգման էր դառնում այն եռյան, որն ընկած էր հայերեւ թարգմանությունների հիմքում։

Սովորական ականավոր շեքսափիրագետներ Մ. և Դ. Ուրնովների գնահատությամբ այս ուսումնասիրություններին բնորոշ է «Էպետիկական սկրդբունքայնությունն ու լայնախոնությունը, նրանք դորս են գալիս խորագրի շրջանակներից, և Զարյանի առաջադրած՝ Շեքսափիրի ազգային լորացման պրոբլեմը ծնունդ է տալիս Շեքսափիրի դրամատորգիայի նորովի մեկնության»։

Զարյանի այս ուսումնասիրությունների հիմնան վրա, որ չեխ հշանավոր շեքսափիրագետ Զենենեկ Ստրըժոնին համարում է բարձր մակարդակի ու կարևորության գործեր, նույն Ստրըժոնին՝ աչքի առաջ ունենալով համաշխարհյան թատերական փորձը, գրում է. «Սոդամյանը ճանապարհ էր հարթում Շեքսափիրի ամենաառաջարիմական և խորապես ճշմարտացի մեկնության համար»։

Այս գործերի շնորհիվ է, որ վաստակաշատ շեքսափիրագետ, Կալիֆորնիայի համալսարանի դրամատիկական արվեստի բաժնի տնօրեն Մարվին Ռոգենքերդի մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում հայտնվում են Սիրանուչի, Սոդամյանի, Փափազյանի, Զարիֆյանի դերակատարումները, Վենիսականի թատրոնի շեքսափիրյան բեմադրությունը։

Այս ուսումնասիրությունների հիմնան վրա համաշխարհյան շեքսափիրյան մասնագիտության մեջ՝ գերմանականի, ուսականի և այլոց կողքին, իր ուրույն դիմագծով և հավասարի իրավունքներով կանգնում է նաև հայցի Շեքսափիրը՝ ներկայացնուցների իր շքեղ կազմով։

Զարյանի հետազոտություններում մշակված հիմնական թեզերը դարձան այն ամոր հիմքը, որը հնարավոր դարձեց Շեքսափիրին նվիրված գի-

տական պարբերականի՝ «Ըերսպիրականի» լույս ընծայումը: Յու. Շվեդովի պատահայտությամբ. «Դա հիրավի Ռուբեն Զարյանի երախայրիքն է. ևա ոչ թե սովոր խմբագիր է, այլ այդ կարևոր ու վեն գործի հոգին: Զավազանցություն չի լինի ասել, որ վերջին տարիներին դա Ըերսպիրին նվիրված ամենապատկառելի հրատարակությունն է մեր երկրում»: Զարյանի այս ձեռնարկը համարելով մեծ և լաճում լին ու չես շերսպիրագետները (Ս. Հեղատինակի, Զ. Մորթըրոնի, Վ. Օստրովսկի) անհետաձգելի համարեցին նման պարբերականի հրատարակումը՝ իրենց մշակուցի շաների տեսանկյունից: «Ըերսպիրականի» փառահեղ հատորները,— գրում է Լոնի համարարանի անգիտական ամբիոնի տնօրեն Վ. Օստրովսկին,— տասապահց աշխատանքի ու համառության աշն վկայություններն են, որոնց արժեքը կարող է խորապես ըմբռնել միայն նա, ով գիտե, թե ինչ ասել է Ըերսպիրի գիտական քննության կազմակերպումն ու հրատարակումը»:

Այս ամենը, որ Ս. Անդրեասի բնութագրմամբ «անտարակուսելի ավանդ է սովորական շերսպիրագիտության մեջ», Ռուբեն Զարյանին փրակամը դարձրին աշխարհի հնագույն ու ամենապատկառելի՝ Գերմանական շերսպիրյան ընկերության պատվալոր անդամ:

ԼԵՎՈՆ ԽԱԼԱԹՅԱՆ
Մրգեատագիտության թեկնածու

ԱՐՎԵՍՏԻ ՈՒՍՈՒՑԻՉ, ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ

Գրել Ռուբեն Զարյանի մասին այնպես, ինչպես այդ ինքն է անում նման առիթներով, եթե շատեմ անկարելի, համեմայն դեպս շատ է դժվար. մանավանդ, եթե լրացել է նրա ծննդյան 70-ամյակը և պարզեցնելով է Ժողովության շքանշանով: Սքանչելի մի պարզեցնելու համար մասնաւում է մեր հորելլարին, նրա գրական-հասարակական գործի բնույթին, ընդգրկած շրջանակներին, մարդկային և գեղարվեստական փոխհարաբերություններին, մեծ վաստակին և, ի վերջո, քաղաքացիական ծառայությանը: Եվ ականա մտածում ես, ինչ լավ է, որ շքանշանները այդպես բարեհաճ ու ճիշտ ժամանակին գտնում են իրենց հասցեատիրոջը:

Թատրոնն ու գրականությունն արդեն բարեկամության ամբողջ մի աշխարհ են խորհրդանշում, իսկ Զարյանն այդ ոլորտներում է շորջ կես դար: Երշանիկ ժամանակ և երշանիկ աստղ լուսավորելու այն ուղին, որի մեջ կան հայ գրականության և թատրոնի գրեթե բոլոր հշանավոր դեմքերն ու իրադարձությունները:

Զարյանը լայն մթնոլորտի մարդ է, նրան գիտեն գրականության և արվեստի ամենայն բնագավառներուն: Կարդում են, լսում են: Սիրում վիճում են նաև: Ոչ միայն նրան կարդալը, այլև նրա ներ վիճելը առանձին մի հաճույք է, ասես համեմզային երևոյթ լինի: Նաև դրամատիկան երևոյթ: Այ, ասենք, ո՞վ չի գրել կամ նրապարակային երկություններին: Բայց Զարյանի գրածը կամ պատմածը ուրիշ է: Նա կարող է ամբողջ չորս ժամ Ղափանի պղնձագործների առաջ խոսել և դահլիճը կլի համակ լուրջուն

Դարձած: Գրավոր և բանավոր խոսքի համերաշխությունն է պատճառը, որ նրան ինչպես կարդում, այնպես էլ լսում ես, քանի որ նա ինչպես գրում, այնպես էլ խոսում է: Պատահական չէ, որ նրա «Հուշապատումների» երկինադրյալը կառուցված է գլխավորապես անկաշկան գրուցների, երկխոսության վրա: Ամսագրում կարդալով «Հուշապատում» առաջին հրապարակումը, որ կոչվում էր «Չարենցի հետ», մեր ավագ գրականագետներից մեկն ասաց. «Կարծես մի նոր եզրաման լինի մեր Գյոթեր կողքին», և սա երամենքիս ուրախությունը: Պատմական հերոսի հետ ունեցած գրուցներ լինեն, թե արտասահմանյան տպավորություն, Զարյանը երկխոսության միջոցով նորոք լարում է մինչև դրամատիկական պրկածություն և հոգական այնպիսի լիցը է հաղորդում խոսքն, որ հասով է միայն գեղարվեստական լայն մտածողության տեր մարդուն: Այստեղից էլ նրա պատումի համոզիչ ոգին և գաղափարական հագեցվածություններից:

Զարյանի լայն ճանաչումը, որպես համակրթմանի և ժողովրդականություն վայելող արվեստաբան-քննադատի, վկալում է 50-ական թվականներից, երբ նա գիտովին տրված էր գեղարվեստին, այս կամ այն հարցը շոշափող հավաքույթներին, գիտական հատաշրջաններին, թեծ բանավեճներին: Իսկ այդ բանավեճների թեծ լինելը մեծ մասամբ պայմանավորված էր նրա մասնակցությամբ: Ինքը էր տոն տվյալը, կրակ թեժացնողն ու հանգցնողը, կրակից իր իսկ ձեռքով շագանակներ հանողը: Ոչինչ, որ առանձին դեպքերում Վաղարշանն ու Աճեմյանը, Զանիբեկյանն ու Գոլգակյանը կարող էին դգնի մնալ նրանից: Սկզբունքը էր կարևոր, ընդհանուրի շահերը: Բավկան է, որ մի ենթակայացման քննարկմանը եղույթ չունենար: «Ինչո՞ւ դուք չեք խոսում, ընկեր Զարյան և այլն... Իսկ այդ «և այլն»-ը գանգատի թանձը գունդորում ուներ: Տեղից հացորդեց կարուկ մի պատասխան՝ «չխոսեցի, որ այդքան խոսեցիր, բա որ խոտի, որքան կխոսեիք»: Եվ ամեն ինչ ավարտվեց: Բանավեճ այլևս տեղի չունեցավ: Սպասվելիք ճառը ժամ առաջ վերածվեց հականատի:

1960-ին Լենինականի թատրոնում կազմակերպել էինք ժամանակակից պիեսների ստուգատես: Մեզ հետ էին նաև Սովորովյանի անվան թատրոնի մի խոսք վարպետներ Աճեմյանի գլխավորությամբ: Քննարկման ժամանակ, մինչև Ռ. Զարյանի եղույթ ունենալը, բոլորս միաբերան դրվագներ էինք Փաշյանի խաղը «Վարդեր և արյուն» ներկայացման մեջ: Բայց անա նորուն Զարյանն իր եղույթում ասաց. «Ես սրամագծորեն հակառակ կարծիքի եմ, ինձ բոլորովին չի բավարարում Փաշյանի դերակատարումը, և ահա թե ինչո՞ւ...»: Եվ Փաշյանը բոլորին կարծիքը մի ռոպեում չուրը նետեց և հավատաց միայն նրան՝ մտածանցությունների մեջ ընկալվեց:

Բացման խոր՝ հազար ու մի գիշեր, ապա և գրքի առաջաբան, որ նույնպես բացող, սկսող, բացահայտող խոր է: Խ. Արդվաճի «Վերք» ու «Բայաթիները», Հովհ. Հովհաննիսյանի «Հատընտիրը», Բակունցի երկերը, Դեմիրճյանի «Բաջ Նազարը», Գ. Տեր-Գրիգորյանի պիեսները, Ամենյանի ժողովածուն, դրանց կողքին լրացել է Վաղարշյանի 75-ը, Համիլկի 100-ը, Ավետիսյանի 80-ը, Գուլազյանի 80-ը, Հրաչյայի 80-ը, իսկ Փափազյանը նրա համար տարիք չունի, միշտ հոբելյանական է, նրա համար տեղ բացել պետք չէ: Մինչ այդ թվում էր, թե ինչ-որ փակված բան կա, որ պիտի բացել բաց պահել:

Այս, բացման խոր և առաջաբան,— սա Զարյանի նախասիրած ժանրերից է, որ ամենից տպակորիշ է դրսերվում նրա կարծիքի ուժը, գրական տաղանդի ողջ փայլատակումներով: «Սլասու ձին Ռաֆֆու ներուներից շատերի տակ խաղաց»,— ասում է նա, կամ «Հրաչյան ուներ մի պիտ, որ իրենն էր և իրենը չէր, մի սիրու, որ լցնում էր անհայ սրտեր», կամ «Պեպոյի դերակատարը կործը պիտի ունենա», որ նշանակում է թե մեծ շոնչ և կրակու սիրու պիտի ունենա, կամ «Վաղարշյանի տեղը մեր թատրոնում դեռ բաց է», կամ «Ի՞ն լինիր մեզ համար տոնածառ», ինչպես նա դիմեց Փափազյանին, երբ նա Մեծ հայրենականից հետո առաջին անգամ էր Լենինգրադից եկել Հայաստան: Եվ Փափազյանը դրանից հետո ավելի թանկ դարձավ բոլորի համար, գնահատվեց որպես շքեղ, լուսածիր տոնածառ, այսինքն անվերջ սպասվող անձ, մշտական բաղդավի անուն: Ել ինչպես մեր Զարյանը չափ, թե Փափազյանի տեղը բաց է ու բաց...

Անառարկելի հեղինակություն և կարծիքի անկուրում ուժ, արտահայտված գեղարվեստական պատկերի, բանականի և հոգականի սերտ միասնությամբ: «Թաշչինակի տեսարանի» վրա որիշմերն ել էին ուշադրույուն դարձել, բայց բոլորովին այլ էր, երբ ուշադրույուն դարձեց Ռուբեն Զարյանը: Վերլուծական անցավ բերեն-բերան, ընդհանուր խոսակցության և որպիս ատուլիս նշուր դարձավ: Ինքը Փափազյանն ել առանձին հանույրով էր վերընթերցում և հիշում այդ հորվածը: Վաղարշյանն ել, որ ակզեռներուն համաձայն չէր Զարյանի համեստյան քննադատությանը, այդպես ել չկառողացավ մոռանալ թեև վիճակի, բայց շատ կորմերով ուսանելի և դիպուկ այդ հորվածը և ասում էր, թե Յու. Յովովակու վերլուծականը «Դարձ ու Կերպարը» գրքում չէր լինի այդքան բազմակողմանի ու հետաքրքրական, եթե մինչև գիրքը գրելը, հեղինակը Զարյանի ակնարկին ծանոթացած չինք:

Այդպես է Զարյանը: Նրա գրածի կամ ասածի կողքով անտարքեր անցնել չեն կարող, մոռանալ՝ առավել ևս: Ինքը չէ մեղավորը, այլ մենք, որ նրա

իսկ դրդմամբ զարգացրել ենք մեր մասնագիտական հիշողությունը: Պատահական չէ, որ երբ տակալին ուսանող Հակոբ Սալահյանից հարցրել են կարծիք Զարյանի մասին, պատասխանել է՝ «Չառ բան չեմ կարող ասել, միայն այն, որ երբ որևէ նոր գիրը է լուս տեսնում կամ ցուցադրվում է նոր ներկայացում, շատերը պատում են, թե ինչ կամ Զարյանը»: Թվում է ավելի ճիշտ բնութագիր տալ չի կարելի, մասնավանդ և սպատերազմյան շըրժանի Ռուբեն Զարյանին:

Հետոպա տարիները նրան ավելի թերեցին դեպի թատրոն, և ինքը չեր մեղավորը, այլ «Պատվի համար», «Ժայռ», «Եգոր Բոլըչով», «Դիմակահանդես» ներկայացումները, նաև Համբիկի, Օ. Գուլազյանի, Ա. Ուկանյանի, Հրաչյանի, Վ. Վաղարշյանի, Ա. Ավետիսյանի անձիր հմայքը... Եվ մինչև օրվա խնդիրներին անցնելը բնական է, որ Զարյանը պիտի պեղեք նրանց մեծ հախորդների, ասել է թե, հայ դերասանական թատրոնի զարգացման ծաղկուն շրջանը: Այստեղից ել՝ «Սիրանուշը», «Պ. Ադամյանը», Փափազյանին նվիրված հոդվածաշարը:

Երբ կարում ես այդ աշխատությունները, իսկուն զգում ես, որ նեղինակին զրադեցրել է ո՞չ միայն և ո՞չ այնքան այդ մեծ վարպետների բուն արվեստը, որքան նրանց արվեստի գաղափարական դրդապատճառները, որ ազատության տեսնչն է, մաքսուման ողին, ներուսական պայքարը: Ասես այդ ազնիվ մաքառումների վկան ու մասնակիցը նաև ինքը՝ Ռուբեն Զարյանը է եղել: Նաև ցամու, նաև տառապել է իր բեմական ներուսների հետ՝ նրանց համար, նրանց նման: «Սիրանուշ» մենագրության վերջում այսպիսի տողեր կան՝ «Սակայն արեգակը ինչպես էլ շողա ու ճառագայթի, միևնույն է, երեկոյան մայր է մտնելու: Մայրամուտը, ինչքան էլ փառահեղ լինի, մայրամուտ է... Ծառ թիշ արտիստներ են ապրել իրենց փառքի մայրամուտի խըռովքն այնպես դառնագին, ինչպես Սիրանուշը»:

Պետք էր Զարյան լինել, որ մասմովի խայտարդես կարծիքները, ժամանակակիցների երրեմն ապակողմնորոշող հուշերը բերեր մի ընդհանուր հայտարարի և մի նոր Արշալուս բերեր Սիրանուշին, մի նոր Արեգակ, որ վերըստին ծագում է հայ խոշորագույն դերասանունու բազմաշարժար կյանքի Վրա, շնորհիվ Զարյանի:

Այդ աշխատությունների մեջ Ադամյանի, Սիրանուշի, Փափազյանի (առանձին դեպքերում նաև Մանեհյանի, Արեկյանի) շերսպիրյան վաստակի արդիական լուսաբանությամբ, Զարյանը Շերսպիրյան ավելի հայամուտ է դարձնում, քան մինչ այդ եղել էր, Շերսպիրյան դարձնում է հայ ազգային ողբերգության և դարավոր տաճաշալքների, խմերի ու դամու ճակատագրի կախարդ թարգման: Այստեղից ել՝ «Շերսպիրյական» տարեգրի հայտնու-

թյունը մեր գեղարվեստական իրականության մեջ՝ որպես պատմականորեն հաստինացած ձեռնարկ, որպես օրգանական անհրաժեշտություն: (Չի կարելի մոռանալ նաև այն ազնիվ հետաքրքրությունը, որ նա տարբեր առիթներով ցուցաբերել ու ցուցաբերում է նաև Ա. Գրիբոյեդովի նկատմամբ: Խթանը նույնը է՝ ուս մեծ գրողի նվիրական սերն ու անձնազո՞ն վերաբերմունքը հայ ժողովոյի ճակատագրի համեմեա):

Ոգերդիկու և ոգերդնու վարակիչ ուժ, հնեսորական բացառիկ տայանդ, երևոյթների բանաստեղծական ընկալում և սահուն-ընդհանրացնող գեղագիտական միտք: Ինչպես Սղասու ձին մինչև օրս խաղում է Շաֆոն և բաֆֆիական հերոսներից շատերի տակ, այնպես էլ Զարյանի հժոյցը, ահա արդեն քանի տարի, ծառս ելած դոփում է մեր կողքին:

Մենք մեր ստեղծագործական կյանքի առավոտյան հանդիպեցինք նըրան, որ երեկոյան շքաժանվենք: Ոչ միայն մեր լավագույն արվեստաբան քննադատներից շատերը, այլև Մենք Մկրտչյանի նման ժողովորական արտիստը կոչում է նրան իմ ուսուցիչ:

Բնական է, որ նրան պիտի սիրեին և բարձր գնահատեին նաև Սփյուռքում: Այստեղ նա տոնածառ է, այսինքն սպասվող, բաղնայի անձ: Ո՞ւր ամես, որ նա դասխոսություններ չի կարդացել: Նյութը՝ խորհրդային հայ մշակույթը, Աղամյանը, հայոց Ծերսապիրը: Բեյրութ, Լոռիոն, Բովսարեստ, Մոնթեալ, Հալեայ, Փարիզ, Կամիրե, Բերգամո... Ընդ որում, ոչ միայն Սփյուռքի հայության, այլև բոլոր նրանց համար, ում թանկ է հայ արվեստը, նրա անցյալի վեհաշուր էշերը և փառավոր ներկան:

Ամենքի արվեստաբանը, ուսուցիչ և ուսուցչապես: Այլ կերպ դժվար է նրան կոչել:

ԱԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆ
Բանասիրության դոկտոր

ՈՒՐԻՇՆԵՐԻ ՄԵԶ

1954-ի գարնանն էր, մայիս ամսին: Սուրեն Քոչարյանը համերգաշարով հանդես էր գալիս Երևանում: Ասմոնքի վարպետի մասին ես մի հոդված գրեցի, որ լուս տեսավ «Գրական թերթում»:

Այդ օրերին Ծովուն Զարյանն առաջարկեց՝ գնա՞նք լսենք Սուրեն Քոչարյանին: Ասացի, որ մի բանի անգամ լսել եմ ու դեռ հոդված եմ գրել հրա մասին, չե՞ք կարդացել: Նա թէ՝ կարդացել եմ, դրա համար եմ ասում:

Գնացինք, լսեցինք: Հետո՝ գնա՞նք թեզ ծանոթացնեմ ասմոնքի վարպետի հետ: Գնացինք, ծանոթացա, երկար ու բարակ զրուց արեցինք: Տուն դառնալիս հարցընք իբրև թէ ակամա՝ չէի՞ր ուզենա գիրք գրել Սուրեն Քոչարյանի մասին, ամրողական մենագրություն, այսպիսի ճանաչման հասած արտիստ՝ և ուստեղևն մի փոքրիկ գրքուկ միայն, որի մեջ հայկական ուղղութարի մասին՝ ոչ մի խոր:

Ծատ վախեցա. ասմոնքի մասին հոդված, այդ՝ կարելի է գրել, բայց գիրքը, և ինչո՞ւ պիտի լցիլ գիրքը:— Մի շտապիր նգրակացության գալ, այդ արվեստը ծալքեր շատ ունի, կիսորանաս՝ կիսամոզվես: Ժամանակ կը տանիք: Արի մտածիք:

Մտածեցի, համոզվեցի և անցա գործի: «Սուրեն Քոչարյանի արվեստը» մենագրությունը լույս տեսավ 1959-ին: Անցավ մի որոշ ժամանակ: Այն տարիներին, հրապորված Վարդան Աճեմյանով, երա ներկայացումների մասին գրում էի հոդված հոդվածի ետևից: Մի օր Ռ. Զարյանը հարցրեց՝ շա՞տ ես հավանում Աճեմյանի ռեժիսորան: Ծա՛տ: Այդ դեպքում ինչո՞ւ գիրք չգրել երա մասին, այդքան վաստակ ու հոչակ՝ և թատերագիտական ոչ մի ուսումնասիրություն:

Վերատին երկյուղ և կրկին՝ հիմնավորված. ռեժիսորական արվեստը դեռ այնքան լավ չգիտեմ մի ամբողջ գիրք գրելու համար, Աճեմյանի անցածքնացած հայտնի բեմադրությունները չեմ տեսել:

Վերատին տարակուանքի փարատում՝ կիորանաս կիմանաս, անցածքնացած հայտնի բեմադրությունների մասին շատ են գրվել՝ կիարդան, հինը կապատմի՝ կիմանաս, վերշապես, տեսածդ բեմադրությունների վրա կիենալիս:

Համոզվեցի, գործի անցա: Ֆրանչացիք ճիշտ են ասում՝ եթե ուզում ես մի բան իմանալ— նատիր գիրք գրիր դրա մասին: «Կլասիկան և մեր օրերը. Վարդան Աճեմյանի արվեստը» լույս տեսավ 1962-ին: Այստեղ, դարձյալ ավագ ընկերոցս խորհրդով, հիմնականը հայ դասականների գործերի բեմադրության վերլուծությունը եղավ՝ մանրամասն նկարագրություններով՝ ապագա մասնագետներին շղշափելի պատկերացում տպու համար:

Մի անգամ էլ, Սունդուկյանի հորելյանի օրերին, ոգեռված խոսում էի ինստիգ զարգացնելու, դիալոգ կառուցելու երա վարպետության մասին: Ընդհանուր ինչո՞ւ ինչո՞ւ չգրել Սունդուկյանի գեղագիտության մասին:— Կարիք կա՞ որ, այնքա՞ն են գրել:— Գրել են, ճիշտ է, բայց ոչ բեմական արվեստի տեսանկյունով, իբրև թատեռագրի, իբրև դիալոգի փարագանի: Սեղմ, խոսցած գիրք՝ Սունդուկյանի գեղագիտությունը: Հետո էլ, նույն դիտանկյունով՝ Պարույսն, Շիրվանզարդ, Ծանթ:

Իրոք, հրապորիշ ծրագիր, որ իսկույն սրտիս նատեց ու մինչև օրս էլ մնում է այստեղ՝ իրագործման սպասելով: Մարդուս ժամանակն ու հնարավորությունները շատ են նկազ ցանկերությունների ու հղացումների համեմատ:

Մեջտեղ եկավ «Հայ սովորական թատրոնի պատմությունը» գրելու անհրաժեշտությունը: Հեղինակներին խոսքը (Բ. Հարությունյան, Խ. Ավագյան, Ա. Թիգան, Լ. Խալաթյան և նու) շատ ծանրութեքն արինք՝ գլուխ շիացնելով, թե ով ինչը պիտի գրի: Ավելի խառնվեցինք: Խճճված կծիկը քանդեց Ռ. Զարյանը: Յորաքանչյուրի հակումի ու նախասիրության նորոք զգադեց Ռ. Զարյանը: Եղողաքամբ արեց աշխատանքի ըստ հնարավորին ճիշտ բաժանում: Հեցողությամբ արեց աշխատանքի ըստ հնարավորին ճիշտ բաժանում:

բերվող Բարձրենին տաջարկեց, գրեթե ասիսկեց՝ թողնել ամեն ինչ և զբաղվել հայ թատրոնի տարեգրությամբ: Ու ավելացրեց՝ մեր գրքերը ժամանակի հետ կիսանան, քո տարեգրությունը կմնա:

Բարձրենս ոգևորվեց, թերը քշեց ու անցավ գործի, որ իր կյանքի գործը եղավ: Լոյս տեսան հայ սովորական թատրոնի տարեգրության երկու ամառները (1961 և 1969): Դրանցից հետո անցավ XX դ. առաջին երկու տասնամյակի և XIX դ. տարեգրություններին, որոնք երեք գրույ տպագրվեցին 1980—1981 թք: Այսպէս, Բարձրեն Հարությունյանը դարձավ հեղինակը հայ բնական արվեստի ամրողական (1801-ից մինչև մեր օրերը) տարեգրության, որ միայն մեր թատերական մշակույթը ունի:

Հայ թատերագիտության հիմնորոշ, մնացուն գործերից մեկն է Գառնիկ Ստեփանյանի «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության» եռահատոր աշխատությունն է: Եվ սրա մեջ էլ Ռ. Զարյանի մասը խառն է: Զրոյց մի գավար սուրճի շորքը հենց իր՝ արևմտահայ մշակույթի լավագույն գիտակի տանը: Երբեք թե ակամա այցելություն, իբրև թե ակամա զրոյց:— Յոթ-ութ ուսումնասիրություն և գրել արևմտահայ թատրոնի տարրեր համագույցների մասին, ժամանակը չի՝ ստուծել արևմտահայ թատրոնի ամրողական պատմությունը, որիշ էլ ո՞վ պիտի գրի, ո՞վ կարող է գրել, եթե դու չգրես:

Եվ արեց Գառնիկ Ստեփանյանը իր կյանքի գործը՝ տարիներն անցան: Իրար ետևից շարելով աշխատության երեք հատորը (1962, 1969, 1975), հուրախությունն հեղինակի և ընթացողների:

Գրականագետ Սուրեն Աղարարյանը պաշտպանում էր իր դոկտորական՝ դիսերտացիան՝ «Ալկել Բակրոն»: Մեկ էլ տեսնեմ,— պատմեց ինձ Սուրենի, — Ծովեն Զարյանը կանգնեց գլխիս: — Գիտես ի՞նչ պիտի գրես սրանից: Բնոտություն:— Ի՞նչ:— Մեծ, ամրողական աշխատություն Եղիշեն Զարենցի մասին, մթնոլորտի մեջ ևս, բեզ ի՞նչ է պակասում:

Համոզվեց, գրեց: 1973-ին և 1977-ին լոյս տեսան «Եղիշեն Զարենց» մենագրության հատորները, երկյուղ չկրենք կրկնելուց՝ հեղինակի կյանքի գործը:

1979-ի գարնանը թատերագետ Հենրիկ Հովհաննիսյանը պաշտպանում էր իր դոկտորական դիսերտացիան՝ «Հայ միջնադարյան թատրոնը»: Գրքի մասին գովական խոսքը շատ ասվեցին այդ երկարաշունչ պաշտպանության ընթացքում: Վերջում, ինչպես կարգն է, պաշտպանողն ասաց երախտագիտության խոսքը: Սովորաբար զուսպ Հենրիկն այդ պահին հոգվեց՝ այս աշխատությունը չէր գովի, եթե դրդութ չինենք Ծովեն Զարյանը: Դըրդումը նաև սաստիկ վախեցրել է՝ կարող կիմնե՞մ, ուժերս կրավե՞ն, այն բայց նաև պիտի սովորել՝ գրաբար, այդքան ձեռագրեր, բյուզանդագիտության պիտի սովորել՝ գրաբար,

յշուն... Հորդորել է. Կյուրանաս՝ կիմանաս, ժամանակ կտանք: Եվ, ահա, շատ տարիներ տքնության արդյունքը՝ նոր խոսք ոչ միայն բատերագիտության, հայագիտության մեջ առնասարակ: Եվ, կրկնենք մի անգամ էլ, իր հեռանելարի մեջ՝ հեղինակի կյանքի գործը:

Ի՞նչ է վկացու այս շղթան, որ դեռ պիտի շարունակենք. իր տնօրինած գիտական հաստատության ուժերի լավագույնս օգտագործո՞ւմ (քանի որ հիշած հեղինակներից շատերն այդ հաստատության աշխատակիցներն են): Այո՛, ինչո՞ւ չէ: Բայց վճռողն այստեղ տնօրեն լինելը չէ, այլ ինեաներով, հղացումներով հարուստ լինելը: Խոկ դրանք տարբեր բաներ են. կարելի է լինել և անհղացու տնօրեն: Իդեալը համադրումն է՝ տնօրեն, որ հարուստ է հղացումներով: Նաև օժոված անվիրեակ գգացողությամբ՝ ինչի՞ կարիքը կա օդի մեջ, ի՞նչ քար պիտի տաշվի ու տեղը դրվի, ո՞վ ինչ և ինչպես կարող է տաշել: Ուրեմն նաև՝ մարդկանց տվյալների ստոյգ ճանաչում, հնարավորությունների կուահում, որ իրենք խոկ չեն կուահել:

Դա էլ ակներն է ու անհերքելի: Արան Բարագանը իրոված կգրի Ծիւլերի հոբելյանի առիթով, Ռ. Զարյանը կիուշի ականջին՝ ինչո՞ւն գիրը չգրել: Եվ շատ շանցած մեջտեղ կգա գիրը՝ «Ծիւլեր հայ գրականության մեջ և թատրոնում»: Կնկատի Սերիկ Դավթյանի սերը կիրառական արվեստի համեակ և արդեն տարիք առած կնօշը կմղի մասնագիտացման՝ ու նա իր մեծահարուստ անհատականությունը կիսատափի, կյանքը կիմաստավորի կիրառական արվեստին նվիրված գրքերի հիմանի շարքով:

Կրոնեկի շեքսաֆիրյան գրադարան և շեքսափիրագիտական հայկական օջախ ստեղծելու հղացումը՝ և աշխարհի տարբեր ծաղրերից շեքսափիրյան հարյուրավոր գրքեր կգան-կրազմեն նորաստեղծ գրադարանուն, որի նմանը թիշ ազգեր ունեն, և իրաք եւուից լուս կտևեն «Ծեքսափիրականի» փառակազմ հատորները, դրանց հետ էլ Ծեքսափիրի առաջին անգամ բարգանված բրոնհիկների հատորները: Ծառ և շատ եմ ափսոսում, որ անկատար մնաց նրա մյուս մեծ հղացումը՝ ստեղծել «Հայ գրականությունն օտար լեզուներով» գրադարան՝ աշխարհի բոլոր ծաղրերից հավաքելով օտարալեզու հրատարակված բոլոր հայ հեղինակների գործերը:

Այս մեկը չարվեց, բայց արվածներն ալերան շատ են, որ մեծաթիվ գրքերի հեղինակ, վաստակով ծանրաբեր արվեստաբան և գրականագետ Ռուբեն Զարյանին հոչակում են ասպարեզի կատավարիչ: Այս դեպքում՝ արվեստագիտության ասպարեզի, ինչպես երիտասարդ տարիներին եղել էր գրականությանը, երբ Հայպետիրատի գեղարվեստական բաժնի վարիչն էր՝ Եղիշե Զարենցի փոխանորդն այդ պաշտոնում, ապա և «Սովորական գրականություն» ամսագրի խմբագիրը: Երբ կերպարանափոխվում էր ամսագիրը

ըստ լավ ճաշակի, երբ հորդորում էր Արքուն Տայանին, որ նա թարգմանի Դամուի «Աստվածային կատակերգությունը», երբ ճանապարհ էր բացում Վիզեն Խեչումյանի, Գևորգ Էմինի, Անահիտ Սահմանյանի, Պարույր Սևակի առաջ՝ ամեն կերպ, ամեն գնով, ամենայն ամրով:

Ուրեմն, իրոք, հոգևոր մշակույթի տօնօրինության հազվագյուտ մի ձիրք:

Բայց կա և մեկ ուրիշ պարագա, որ ինձ դրդեց մի կողմ դնել Ու Զարյանի հեղինակած գրքերը և գրել այս էջերը: Դա այն բավականությունն է, որ Ռուբեն Զարյանը զգում է որիշներին հղացումներ տախու և արդյունքը տեսնելիս: Որիշների մեջ ապրելու բավականությունը: Առանց դրա, հենց միան իր մեջ ապրելով, ի՞նչ բավականություն:

Երբ իմ մղումով, իմ հուշելով դուք գիրք եք գրում,— ասաց մի անգամ,— ինձ այնպիս է թվում, թե ես եմ գրում: Դուք իմ գրքերն եք գրում, որ ես չեմ հասցրել: Ի՞նչ տարրերություն:

Իրոք որ՝ ի՞նչ տարրերություն:

Եթե սա Թումանյանի «ամենքի հետ լինելու» կամ Մեծարենցի «անանձնական երշանկության» բախուր չէ, ապա դրա նվիրական ձգուուն է հաստատորեն:

ԼԵՂԵՐԻ ԲՐԵՏԱՆԻՑԿԻ Սրբեատագիտության դոկտոր

ՆՐԱ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՏԱՂԱՆԴԸ

Հիշելով Ռուբեն Զարյանին, ես միաժամանակ միշտ հիշում եմ մայիսի վերջի այն հիասքանչ օրերը, երբ ինձ բախու վիճակվեց ծանրանալ ճրա հետ, հիշում եմ վարդագոյն մշոշաբոլը վաղորդյան Երևանի վրա, ուս ոչ կիզիշ արևի շողերով պարուրված գեղահրաշ զարդարանդակները՝ Հայատականի հպարտ լուսերի հայացքի ներքո: Մոտ մեկ տասնամյակ է անցել այն օրերից, և ես հետագայում ել բազմից հանդիպեցի այդ հիանալի մարդուն: Բայց այն զոգորդումը, որի մասին սասցի, առաջվա պես միշտ ուղեկցել է Զարյանի վերաբերյալ իմ պատկերացմանը, և ես ժամանակի հետ ավելի ու ավելի եմ համոզվում, որ դրա պատճառը ինքը՝ Ռուբեն Վարդսովիչն է. ճրա հնայիշ նկարագրից եկող մեղմությունն ու չերմությունը, որուն ինտելիգեն-

տուրքունը, որ բնորոշ է Արան իբրև մարդկային հատկանիշ, անքածան է ճշանավոր գիտնական-շեքսպիրագետի խորաթափանց մտքից ու աներեր սկզբունքայնությունից, հայկական Արվեստի ինստիտուտի բազմանյա ղեկավարի կազմակերպչական վարպետությունից ու բուն գործունեությունից:

Գիտահետազոտական ինստիտուտի ղեկավարի արժանավորության և արժեքի մասին կարելի է դատել հաստատության գիտական արգասիքի բազմակողմանիությամբ, նաևառակային ուղղվածությամբ և որակով: Հայկական ՍՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտը, իր բազմապրոֆիլ նկարագործ, այս տեսակետից վաղուց արդեն հայտնի է մեզանում: Հայտնի է նաև գիտական լայն ու ամոր կապերով: Ես նկատի ունեմ նաև և առաջ ինստիտուտի անցկացրած բազմապիսի գիտական սեսիաները, կոնֆերանսները, սիմպոզիումները՝ միջինաբրապետական, զուալ, համամիութեանական, միջազգային: Դրանք վերջին տարիներին երևանու սովորական երևոյթ են դարձել: Սովորական, բայց և գիտական հասարակայնության համար իրենց կարևորությունն ու գրավչությունն բնավ չկորցրած երևոյթ:

Գիտության ներկայացուցիչների երևանան նման համարվումներից թերև ևս ամենաճշանակալին հայ արվեստին նվիրված Միջազգային երկրորդ սիմպոզիումն էր, որ տեղի ունեցավ 1978-ի սեպտեմբերին: Անս թե երբ կատարելապես բացահայտվեց Ռուբեն Զարյանի գիտա-կազմակերպչական տաղանդը:

Որոշ ժամանակ անցնելուց հետո առավել ցայտում են երևում այդ սիմպոզիումի առանձնահատկությունները ու բարդությունները:

Սիմպոզիումի համար հաստանաշական էր որոշակի «սուանցքի» առկա լուրջունը, որ ուշադրությունը կենտրոնացնում էր հայ արվեստի, նրա պատմության կարևորագույն պրոբլեմների վրա, և սապա՞ այդ պրոբլեմների ասպեկտներին բազմազանությունը, որ հայաստանի հետաքրքրութ էր հայագետներին և բյուզանդագետներին, արևելագետներին և ճարտարապետներին, արևմտաբաններին, պատմաբաններին, հնագետներին... Անտիկ աշխարհ և «քրիստոնեական» Արևելք... Հայ միջնադարյան տաղեր և Մարտիրոս Սարյանի ստեղծագործությունը... Հին Ուրարտուսմ սկզբացիների պորբեմը և հայ կերպարվեստի գործերը Եփրովայի սոցիալիստական երկրների հավաքածուներում... Միջնադարյան նկարչություն և նորագոյն միտուսներ Սովորական Հայաստանի ճարտարապետության մեջ... «Օքենատալիքացիան» Լեհաստանի արվեստում և «ոճի», «տարածության», «ոդքմի» պրոբլեմները Հայաստանի արվեստում... թեմաներ, որ ճարտարապետական կոնկրետ հուշարձաններ ուսումնասիրելու նպատակն էին հետապնդում, և թեմաներ, որ կյանքի էին կոչված տարբեր երկրների ու ժողովրդների մշա-

կույցների հետ Հայաստանի մշակույթի պատմական փոխառնչություններով...

Սովետական պատվիրակներ, Մուսկվայի և Լենինգրադի, Թբիլիսիի և Բաքի, Կիևի և Կրասնոդարի երկրամասի գիտության ներկայացուցիչներ, համապատասխան գիտական և գործադրական աշխատակիցներ, Արևի և Արևի աշխատակիցներից, արարական Արևելքից...

Հյանալի էր մտածված ու կազմված այն ծրագիրը, որի հիման վրա հյուրերը ծանոթացան հայ մշակույթի հին ու նոր հուշարձաններին, եղան Հայաստանի տեսարժան վայրերում. ծրագրի մեջ էին մայրաբաղարի թանգարանները, իմաստնության գանձարան Մատենադարանը, Գառնիի հեթանոսական տաճարը, Գեղարքունիքի վանքը, Զվարթնոցը, Հոփիսինեն, Գայանեն, Սարդարապատի զրուազի-հուշարձանը՝ իր կապուտակ շրերով ու իշխանով հոչալիքած Սևանա լիճը, և համերգներ, որ հնչեցին հայ հնագույն գուսանների տաղերն ու Կոմիտասի երգը, Զուգեպատե Վերդիի և Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները, Չութակահարների անսամբլն ու տավղահարների կվարտենող, թավածալար դուրուկն ու սիմֆոնիկ հավաքախումբը...

Ինչպես տեսնում էր, ես չսխալվեցի՝ գիտության այդ հոյակապ ֆորումը թեկող և անտեսանելիորեն գլխավորող Ռուբեն Վարսովիչի տաղանդը քննութագրելով իբրև գիտա-կազմակերպչական տաղանդ: Հարազատ ժողովը դիմումը մշակույթի խոր հմացություն՝ երա պատմական հեռանկարներում և փոխառնչությունների մեջ, մարդու ստեղծած և մարդկանց միջև լեզվական և այլ պատմեններ խորտակող հավերժ գեղեցկությունն ընկալելու հոգեբանության նրբին ըմբռնում, չափի զգացում ճաշակի ու վարվեցողության մեջ, որ զգացվում էր սիմպոզիումի կազմակերպման լուրաբանչուր մանրամասում, ընդուակ մինչև երա մասնակիցներին սպասարկելու բնույթն ու ոճը, հուշանվերների բնույթն ու ոճը,— այս ամենը վկայում էր, թե ինչ նրամիտ ու խորագետ արվեստի մարդ և գիտության մարդ է նեկավարում այդ հիանալի միջոցառումը, որ աշխարհի առաջարկեալ գիտության ներկայացուցիչների առավել մերձեցման և փոխարժեալ մասնակին ուներ:

1979

Բարու

ՄԱՐՍ ՄԱՐԻՍՈՍՅԱՆ
ՀՍԽՀ արվեստի վաստակավոր գործիչ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԱՎԱԳ ԸՆԿԵՐՈՂ ՄԱՍԻՆ

Հաճելի է գրել մի մարդու մասին, որին անկեղծ հարգում են և սիրում, որի նկատմամբ ակնածանքը արդյունք է ոչ թե դիրքի, պաշտոնի և կոչման, այլ մարդկային բարձր հատկությունների, խոր գիտելիքների և արտասակագործության:

Ուորեն Զարյանը ինձ դաս չի տվել, բայց ես նրան համարում եմ իմ ուսուցիչը: Ուսուցչությունը, չստ երևությն, միան դաս տալը չէ: Այն մարդկային հատկությունների, խառնվածքի, գործունեության մի ամբողջ համակարգ է, որն այնքան էլ հեշտ չէ բացատրել: Դա, թերևս, մարդու վրա ներգործելու, ինչ-որ լավ բանով նրան վարակելու կարողությունն է: Ասում են հմայքը շատ անհրաժեշտ է դերասաններին. ավելացնենք, որ այն ավելի շատ պետք է ուսուցչին: Ուորեն Զարյանը օժտված է այդ հմայքով, ուսուցչի հմայքով:

Քիչ է պատահում, որ գիտնականը լինի այնքան արտիստիկ և հոգով արտիստ՝ այնքան գիտնական, որքան Զարյանն է: Եթե ոգենքը գտնել դրա պատճառը, երևի գանք այն ճշմարտությանը, որ նա, Ուորեն Զարյանը նախ և առավելապես օժտված է արվեստի, գեղեցիկի գգացողությամբ և սիրով: Դա ի ծնե արտիստ է: Բայց վերլուծական փայլուն կարողությունները ժամանակի և հանգամանքների բերումով եկել են առաջին պլան և այդպիսով ել առաջացել է այն անձը, որն այսօր զարմանալի օրինականությամբ գլխավորում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտը: Ասում եմ զարմանալի, որովհետև, ցալոր, մեր օրերում հաճախ չեն այն դեպքերը, երբ որևէ գործի գլուխ կանգնած է լինում այն մարդը, որն իրոք

Կոչված է այդ անելու: Կոչված է իր տաղանդով, աշխատանքային փորձով, եռանդով, տեսքով, վերջապես: Ռուբեն Զարյանն այդ երջանիկ դեպքերից մեկն է:

Մեր ավագ ընկերոջը, ես ինձ թույլ եմ տալիս այդպես կոչել նրան, ավելի շատ հաճաշում եմ իմ բարեկամների՝ Լևոն Հայսմերդյանի և հանգուցյալ Սարի Ռիզակի միջոցով: Ինարկեն, մենք քիչ չենք առնչվել նաև զուսգործի բերումով՝ ներկայացումների քննարկման ժամանակ, զանազան գեղարվեստական խորհրդների հիմներին և, վերջապես, հետեւ այնպես, այս կամ այն առիթով, ուղղակի փողոցում, հիմնարկում, հնատիտուտում և այլուր: Այդ հանդիպումները միշտ շատ հաճելի են եղալ ինձ համար, որովհետև յորպահնչյուր անգամ Ռուբեն Զարյանը պատմելու մի հետաքրքրական բան է գտնում, հաղորդելու մի նոր միտք: Եվ, ընթանարապես, կարողանում է այդ հանդիպումներին, լինի դա որպաս թե թախծող, անպայման նոր երանց, նոր հմասն ներարկել, և դրանք, այս կամ այն չափով, իմաստպից, ուսուցողական դարձել: Եվ, որ ամենակարևորն է, ամել այդ վերին աստիճան անբռնագրու, արտիստիկ ձևով:

Արվեստի բնագավառում հաճախ չի լինում, որ մեծը, փորձառուն, հաճախածը, դեկավարը հաճույքով հանդուրժի իր կողքին տաղանդավոր երիտասարդի հայտնվելը, որ մնաց թե՝ նրան, ըստ ամենավելի, օգնելը, առաջ մղելը, խրախուսելը... Երանի թե մեր քննագավառում էլ լիներ աղուսիս մեկը՝ որքա՞ն դա կօգներ, որ պայօն մեր թատերական արվեստը կանգնած շիներ այսպես կոչված «ուժիշտրական պրոբլեմի», իսկ ավելի ճիշտ՝ ուժիշտրական ճգնաժամի առջև:

Սարին ու Լևոնը, որոնց ես խորապես հավատում եմ, և հավատալու էլ մի կողմ, պարզապես տեսնում եմ իրենց կյանքի օրինակով, բազմիցս պատմել են այն մասին, որ այդ հմաստով իրենց բախտը բանել է, որ հաճախ Ռուբեն Զարյանի նրանք ունեցել են իրոք նոգատար, սրտացավ ընկերոջ, որևէ ամեն ինչով աջակցել է նրանց գիտական-ստեղծագործական առաջնաժամկետ արդարացին, որը ոչ միայն չի կաշկանդել նրանց անհատականությունը, այլև նրբորեն, իմաստքով զարգացրել է այն, խրախուսել համարձակ, ինքնուրույն մտքի յորպահնչյուր դրսություն:

Ռուբեն Զարյանը հայտնագործող է իր էությամբ: Երիտասարդ (անենք հիմա էլ ինչ երիտասարդ) արվեստագետների, թատերագետների մի ամբողջ խումբ նրա հայտնագործությունն էն: Բայց դա նրա էության մի կողմն է միայն: Նա զարմանալի նրանկատությամբ կարողանում է հայտնագործել մարդկանց մեջ նրանց երբեմն անսպասելի, բայց շատ արժեքավոր հատկությունները:

Եղել է, որ դժվար ժամանակներ ենք ապրել, խառը ժամանակներ: Հիմա նույնիսկ տհաճ է հիշել: «Սննատի պաշտամունքի տարիներ», «Պայքար ֆորմափակմի դեմ», «Հականայտենասեր թատերագետների խոմք» և ելի շատ բաներ: Ո՞րև ասես, ո՞րը բողնես... Այդ ժամանակներում միշտ չէ, որ մարդիկ կարողանում եին մնալ իրենց բարձրության վրա: Մասնավորապես գաղափարական բնագավառի աշխատողները հաճախ կորցնում եին ոչ միայն արվեստի և գրականության գործերի իրական չափանիշները, այլև իրենց մարդկային դեմքը, քաղաքացիական դիրքորոշումը, տարրական ազնվորյունը: Ռուբեն Զարյանը այն քերից է, որ բոլոր այդ մասնակիցներին և տեղատվություններին կարողացավ հակադրել իսկական արվեստագետի իր խիմքը և մարդկային բարի եւրիշունը:


Նրա այդ հատկությունները, որոնց պետք է ավելացնել նաև բարձր սկզբունքայնությունը, այսօր ել անշատի պիտանի են: Թերևս դա է պատճառը, որ մենք բոլորս հրան համարում ենք մեր ազգային բատերական արվեստի կրթուս և բանհմաց շինարարներից:

Հիացմունք են պատճառում նրա աշխատությունները: Դրանք ոչ միայն ունեն բարձր վերլուծական, գիտական մակարդակ, այլև համեմատ են ընթերցանության համար, հարուստ են լեզվական ֆակտորայով, գրավիչ՝ բովանդակությամբ, կուռ՝ կառուցվածքով:

Հանրահայտ է, որ Ծերապիրը համար միշտ եղել է նվիրական, հարազատ անուն: Կես կատակ-կես լորջ երբեմն Ծերապիրին անվանում ենք մեր ազգային դրամատորգ: Զարյանի գործունեությունը լրջորեն նպաստել է դրան: Հայ Ծերապիրագիտության ավանդույթների հիմանավոր շարունակողներից մեկն է նա, և նրա լորաքանչյուր գորին, որ նվիրված է ինուն կողմերին, մենք սպասում ենք այնպես, ինչպես կապատեն շատ անհրաժեշտ դասագրքին:

Ռուբեն Զարյանի աշխատությունների, ուսումնասիրությունների կամ պարզապես նողվածների մասին, որոնց պարտաճանաչ ընթերցողն ու երկրության մասնակիցները կգրեն նրա բարեկամ մասնագետների կողմանը և անգամ հանգանակություն կատարեն կամ անհամար առավել հնուտ են այդ ու պաշտոնակից ընկերները, որոնք, անհամեմատ, առավել հնուտ են այդ գործունակից ընկերների, որոնք, անհամեմատ, առավել հնուտ են այդ գործունակից ընկերների այս մի քավագ ընկերոց՝ Ռուբեն Զարյանի մասին զուտ անձնական տպավորությունների այս մի քանի խորով:

ԳՐՉԱԿԻՑ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԽՈՍՔԸ



ՍԻԼՎԱ. ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ
Քանաստեղծութի

ԶԱՐՅԱՆ ԽՐԵՆՈՎ ՄԻԱՑՆՈՒՄ Է ԲՈԼՈՐԻՄ¹

Սպոտ են, որ հին Հունաստանում յոթ քաղաքներ վիճել են, թէ ո՞ւմ է պատկանում Հոմերոսը: Մենք յոթ քաղաքներ, դժբախտաբար, չունենք, բայց, որ յոթ հաստատողոյն կարող են վեճի բռնվել, թէ ո՞ւմ է պատկանում ամենից շատ Ռուբեն Զարյանը, դա հաստատապես կարեի է ասել: Այսպիսի հորելլանական երեկո կարող էր գումարվել և՝ Ակադեմիայի դահիճնում, որը հարդար առաջ էր առաջ արակում, և՝ թատերական ինստիտուտում, և գումարվել է, և՝ գրողների տաճ սրահում, և՝ թատրոնապետների միությունում, և՝ հաւ և հերիշների միությունում, և՝ ճարտարապետների միությունում, և՝ հաւ և հիջուրքի կոմիտեում, և ամեն տեղ էլ կհնչեր բնական, որովհետև Ռուբեն Սիհյուրքի կոմիտեում, և ամեն տեղ էլ կհնչեր բնական, որովհետև Ռուբեն Զարյանը ո՞չ միայն իր վաստակով, բազմաբովանդակ, բազմաշերտ, հասարակության առաջատար է այս հաստատողությունների բնույթի և կոչման հետ, այլ բուստ աղերս ունի այս հաստատողությունների բնույթի և կոչման հետ, այլ նաև իր անձնավորությամբ, իր խառնվածքով, մարդամոտ կեցվածքով, նետառքբորությունների բազմազանությամբ այս բոլոր շրջանակներում բարեկամներ ունի, մտերիմներ ունի, բոլոր տեղերը այցելում է, եղույթներ ունենում, իր մասնակցությունն է բերում այս հիմնարկների ամենօրյա կյանքին: Այս հատկությունը, ի թիվս բոլոր մյուս հատկությունների, շատ է զարդարում նրան և ես կասեի՝ մեր ժողովոյին շատ անհրաժեշտ է:

20-ական թվականներին, 30-ական թվականներին, երբ մեր բոլոր ստեղծագործական հիմնարկները տեղափոխված էին Կովոտուրայի տուն կոչվող շենքների առաջին հարկում, ընդամենը մի 6—7 սենյակում, այն ժամանակ բնաշենքի առաջին հարկում, ընդամենը:

¹ 1979-ի նոկտնմերի 21-ին Զարյանի ծննդյան 70-ամյակին նվիրված երեկոյում ունեցած եղույթը: Տպագրվում է առաջին անգամ:

Կանորեն շատ էին իրար մերձենում, իրար այցելում, մտերմանում մեր արվեստի տարբեր ճյուղի մարդիկ՝ քանդակագործները, նկարիչները, երաժիշտները, արտիստները: Հիմա մենք ամել ենք, քազմացել ենք, ամեն մեկս մի քանի հարկանի շենք ենք գրադեցնում և, բնական է, նախկին մտերմությունը չենք կարող ունենալ, բայց, որ մեզ շատ անհրաժեշտ է, որ գոնք փոխադարձ այցելություններով, փոխադարձ մասնակցությամբ իրար մոտ լինենք, բնականանք իրար, բաժանենք մեր ուրախությունները, այդ մասին, երկի, չի կարելի վիճել: Ուրեմն Զարյանը այն հազվագյուտ մարդկանցից է, որ իրենով շարունակում է այն ժամանակների մեր մեծերի՝ Մ. Սարյանի, Ռ. Մելիքյանի, Ար. Սարգսյանի, գրականության ասպարեզում՝ Եղիշե Զարենցի, Բակունցի, Ալազանի, Նաիրի Զարյանի և մյուսների ավանդույթները՝ իրար մոտ լինելու, միասին համագործակցելու, միասին մտածելու, խորհիլու և գործ անելու: Ահա այս ավանդույթը Ո. Զարյանը շարունակում է գեղեցկութեան, հաջողությամբ, և որը, թերևս նրա խառնվածքի ամենագնահատելի հատկություններից մենք չենք: Ու այսօր պատահական չենք, որ այս դահլիճնում հավաքվել են մեր արվեստի և գրականության բոլոր ճյուղերի ներկայացուցիչները, որովհետև, կրկնում են, Ուրեմն Զարյանը իրենով միացնում է բոլորին, դարձնում է նոյն խոհերի, նոյն մտածությունների շուրջը համախմբված մարդիկ:

ԱԼԻՍԻԱ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ Բանաստեղծութի

ԵՐԶԱՆԻԿ ԵՄ, ՈՐ ԲԱՐԵԿԱՄՄ Է

Ուրեմն Զարյանը, անկասկած, հայ ժորովրոի ընտրյալ և անփոխարինակի զավակներից մեկն է: Այն մարդկանցից՝ որոնցով հպարտանում են, որ ազգի են պատկանում, երջանիկ են՝ որ բարեկամն է: Այն մտածողներից է, որ կարող է որապ մորիդ ամենանորը ծալքերի հոսանքները:

Արվեստի այնպիսի բարձր ճաշակով շաղված են իր գրքերը, որ պիտի փափագեի, եթեն մի օր Ալիսիա Կիրակոսյանի մասին գրվեր՝ լիներ այդ նոյն որակով:

1979

Լու Ազգեան

ՄԱՐԴ, ՈՐ ԱՊՐՈՒՄ Է ԱՅՐՎԵԼՈՎ

«Մարդ, որ ապրում է այրվելով», — ահա այն խոսքերը, որոնք շատ դիպուկ են բնորոշում իմ լավ բարեկամ Ծովեն Զարյանին: Բայց այդ խոսքերն ինքը չիորինեցի, այլ վերցրի եեց իրենից՝ Ծովեն Զարյանից: Նման ենթավերնագիր ունի նա իր «Հուշապատումի» մեջ, որ վերաբերում է մեր անցած (ոչ վաղոց) և ոչ գնացած մեծերին:

(ης φυλητικής) και η φύσισσα πανορμία. Σημειώθηκε ότι το παρόν έγγραφο είναι ο πρώτος πίνακας στην Ελλάδα που απεικονίζει την αρχαϊκή γλώσσα.

տերական արվեստի ուսումնասրդության գործընթացը՝ համապատասխան աշխատավորության համար է:

Նա հասկանալի է դարձնում վաղոց գնացած-անցած Ծերսպիրին՝ հեռավոր հորիզոններից հրան քերելով ու ձովելով Արարատի հորիզոնի հետ։ Մենք կարծես տեսնում ենք Պետրոս Սղամյանին, որովհետև Զարյանը կարողացել է անհայտության մշտական իշեցնել հանճարեղ արտիստի մարմարավոր Համբատին ու դնել մեր՝ ընթերցողներին առջև։ Եվ այդպիսի հեռավոր աստղ էր ոչ միայն Աղամյանը, այլ անև Սիրակովյանը, Համբիկը, Արուս Ուկանյանը ու եղի որիշ վաղոց հանգածներ։ Հանգածներ, որոնք սակայն են տպին ու շերմություն, երբ արմեստարանը թափանցում է այդ անցածների հոգու ու հոգերանության մեջ և դրանք դարձնում այսօրվա համար խիստ անհրաժեշտ ու հասկանալի։

վաստանելի ու մեծ շարժումը ծագում է այրվելուց: Այրվելուց, ոչ անտեղի մոխրանալուց, այլ այրվելով՝ կենդանացնելու և ապրեցնելու կարողությունից: Եթե չարվես, ինչպէս լուս ու ջերմություն տաս հողին, մարդուն, արվեստին:

Մորթեն Զարյանի «Հուշապատում» սքանչելի երկը մեզ համար հանրագիտարանային արժեք ունի՝ արվեստի մեռունվ թաթափաված: Ահավասիկ «Նար-Դորը»: «Նար-Դոր» բաշված, ինքնամփոփ, կարծես «հասարակ», կարծես «անտարերե», սակայն մեջք այրվող հոգի ու կիրք և կրակ, որ ոչ թե խանձում է ձեռք, այլ լուսավորում ճանապարհ, ջերմացնում հոգիդ: Կամ ահա առասպելական Ծիրվանզադեն՝ իր եսիլական հանդարտությամբ ու անզիջումությամբ ամեն ստվերի նկատմամբ: Ահա վիթխարի Զարենցն իր փոթորկու կյանքով՝ մեծ կյանքով, մարդկային կյանքով, ցավի ու տառապանքի, բայց ոչ խնարդիվող կյանքով:

Սրանք շատ մեծերն ու շատ հայտնիները: Բայց Զարյանի մոտ կենրանանում են նաև թիշ հայտնիները, ոչ թիշ գործ արած թիշ հայտնիները: Եվ սա մեծ սրտի բարախումներից ծնված երևոյթ է, ավելի շուտ՝ երևոյթներ են, որ շերտ առ շերտ գալիս են «Հուշապատում» մեջ ո... չեն գետու:

Նենդանանում են նաև մեր ժամանակակիցները, որոնք անժամանակ հեռացան... Ահա Գորգեն Մահարին՝ իր կրքու ասպետականությամբ, Վիգեն Խեչումյանը՝ գիտնականի իր պրատող հոգով ու անապատական գրիշի տառապանքով իր «Զվարդնոցը» հյուսելիս: Ահա մեծ Պարույր Սևակը, որ կարծես աղմուկով ու մանկական ծիփոտով ահա մերս խուժեց քո տունը, քո Էության մեջ ու գոչեց.— «Տո լաճ տնամեր»:

Իր գրածի մասին ինքը՝ Զարյանն ասում է՝ «հասարակ աշքով դիտված հրաշքներ»: Ասում է, բայց այնքան էլ մի հավատաք: Նրա աշքը բոլորովին էլ «հասարակ» չէ: Նրա աշք-ներին աշխարհը լոյսի գոյների ընկալման կենտրոն է, հոգու ազնվության խոտացում և պատկառանք՝ դեպի մեր կյանքնեկելից եղած մեծերը: Զարյանի ստեղծագործական ոգին ընկալում և ապա անդրադարձնում է մի ող կյանք, շորջ կես դարի կյանք:

Կրկնում եմ Մորթեն Զարյանի վաստակը անկշելի մեծ է ու արժեքով անհամեմատելի, դա հանրագիտարանային Էություն ունի իր մեջ, որ ստացվել է գրողի, գիտնականի, արվեստաբանի, քաղաքացու և սքանչելի մարդու հատկությունների կենտրոնացմամբ: Զարյանի ոճը պարզ է, դասական ու մատչելի: Եվ ես իս այս համեստ խոսքը կապել-կշռելուց առաջ, նորից եմ Մորթեն Զարյանի մասին ասում.

— Մարդ, որ ապրում է այրվելով:

ՎԱՐՈՂԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Սրճակագիր

ՆԱ ՄԵՐ ՔԱՂԱՔԻ ԵՎ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳՈՒՅՆԵՐԻՑ Է

Նրա հետ ունեցած մեր բազում գրուցների ժամանակ՝ կյանքի մանրութերին են վերաբերել, թե արվեստի, գրականության մեծ ու բարդ երեւոյթներին, երբևէ չեմ զգացել մեր տարիքների տարրերությունը: Եվ ամեն անգամ համոզվել եմ, որ երիտասարդությունը ծննդյան թիվ չէ, այլ հոգու որոշակի կառուցվածք, հայացքի ուղղությունն: Ես հավատում եմ նա հասուն մտավորական է եղել 20—22 տարեկանում, ինչպես որ երիտասարդ է թրվում հիմա՝ ժամանակի գրգիռները զգալու իր զարմանալի ունակությամբ, իր կրքու հավատով կյանքի և արվեստի նկատմամբ: Եվ արտիստիզմով, որ, ափառ՝ գնալով հազվագյուտ մետաղ է դառնում մեր մթնոլորտում: Իր կարծիքները նա չի պարտադրում, թեպես կայտն նախասիրություններ ու ճաշակ է ունեցել միշտ, նրա հետ՝ վեճի մեջ պարտվելով, դու նվաստացած չեմ զգում թեզ և նա ինքը՝ չի վախենում ասել՝ այսինչ բանը չգիտես, որովհետև իմացածը շատ է՝ լայն ու խոր: Խոևս անհայտ, անանուն ստեղծագործների մեջ իմկական՝ գրով կամ արտիստը կունելու նրա նախանձելի բնագոր (ինտուիցիան) հաստատվել է մեկից ավելի անգամ: Այդ բնագորը, որ հավանութեա ինչ-որ աստվածաւոր շնորհ է, տարիների ընթացքում ամրապնդվել է բարձր ինտելեկտով, արվեստի և գրականության հին ու նոր երևոյթների նրբին իմացությամբ և գլխավորը՝ սիրով: Այո՛, սիրով—սա նոյնական, ափսո՞ս, հազվագյուտ մետաղ է դառել՝ մեզանում, իսկ գրականության պատուիները, պիտի ուրախանա ու տիրի և գրողի կամ արտիստի որևէ ձախողում (իսկ դա նոյնական է) պիտի ոչ թե հըրճվանք, այլ ցալ պատճառի նրան:

Ես այդպես եմ տեսել նրան իր գրքերում, իր հուշագրություններում, իր բանավոր և գրավոր եղույթներում և, դրա համար, եթե անգամ համամիտ չեմ նրա հետ ինչ-ինչ հարցերում, նրան հավատում եմ միշտ և նրա կարծիքը անպայմանորեն մտածել է տալիս:


Եվ ապա՝ ամեն քաղաք, ճան ամեն ժողովրդի մշակույթ գույներ ունի և այդ գույները մարդիկ են: Նա մեր քաղաքի և մշակույթի գույներից է, անգամ նրա արտիստիկ արտաքինը անբաժանելի է մեր քաղաքի և մշակույթի խմանկարից: Ես չեմ ովում նրա գրքերի և հոդվածների խորագրերը մեշքերել, ես չեմ ովում գրողների և արվեստագետների անունները թվարկել, որոնց կյանքում նրա մասնակցությունը հաճախ բախտորոշ է եղել — դա ընդունում են նույնիսկ նրանք, որոնց կյանքում նա այդ դերը խաղացել է (պարդո՞քս):

Ես կամեցա (չգիտեմ, կարողացա) հակիրճ տողերի մեջ խոսացնել այն երևույթը, որի անունը Ռուբեն Զարյան է:

Վերշերս, դպրոցահասակ մի աղջկա տեսրակում ևս կարդացի նրա գրած մի տողը. «Տարիքից չեն ծերանում, այլ ձգումներից հոգենելոց»: Այդեմն, Ռուբեն Զարյանը երիտասարդ է, որովհետև նա երազներ ու ձղգումներ շատ ունի, որոնցից չի հոգնել և իրավունք չունի հոգնելու:



1932



1964

ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ
Բանասիրության դոկտոր, պրոֆեսոր

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊՈԵԶԻԱՆ

Ռուբեն Զարյանի անունը հայտնի դարձավ արդեն երեսնական թվականների վերջին, երբ մամուլում երևացին նրա առաջին հոդվածներն ու գրախոսականները:

Իմ սերունդը դեռ նոր միայն դասնոմ էր ընթերցող և, բնականաբար, ներություն էր կատարում տպագիր խորի ժիշտի մեջ:

Քննադատ բանասերներից մեզ հատկապես գրավեց Ռուբեն Զարյանը՝ Խաչատոր Մքոնյանի մասին գրած հոդվածաշարով։ Դրանց մեջ մեզ համար թանկ էր կենդանի հայացքը, բանաստեղծական շունչը, շարադրանքի արտիստական փայլը, որով Ռ. Զարյանի խորը շանեկանորեն տարրերվում էր ոչ միայն պաշտօնական, չոր ու ցամաք, աղյուսաբենունային բառակույտներից, այլև անբովանդակ խորային ճարճատյունից։ Զահել տարիների նոր արտիստականորեն գեղեցիկ էր, բայց երբեք՝ վերամբարձ, երբեք՝ պերճաշուր, երբեք՝ սանամեց։

Արտաքին գեղեցիկ տարազի մեջ Ռուբեն Զարյանի խորը պարունակում էր նաև ներքին խոր ու հարուստ բովանդակություն, կարելի է անգամ ասել՝ ալբանեմիական խոհունորդցուն և լոշություն։

Աղդպես երևացին ոչ միայն նրա գրական ու թատերական քննադատությունները, ինչպես, օրինակ, «Համետի» բեմադրության և Վաղարշ Վաղարշյանի Համլետի մասին գրած հավատավոր ու հիմնավորված բանավեճը, ոչ միայն հայոց թատրոնի գագաթներին՝Պետրոս Սոդամյանին, Սիրանուլիշին, Վահրամ Փափազյանին ևլիրված հետազոտական արվեստաբանական էջերը, այլև անգամ զտարյուն բանասիրական հետախուզումները, ինչպես ««Նախաշավիդին» ևլիրված գողտրիկ ուսումնասիրությունը, ինչպես Գ. Սունդուկյանի երկերի ժողովածովի մանրակրկիտ և ճաշակավոր գիտական կոմենտարները:

Ոուրեն Զարյանը գիտության արտահայտման լեզուն հասցրեց բանաստեղծական արտահայտման բարձրության՝ թևավ չհեռանալով գիտական ճշգրտության և տրամաբանական ապացուցման սկզբունքներից:

Սրա մեջ է նրա հանդեկ եղած համընդհանուր վերաբերմունքի գաղտնիքը:

Իր անհատականության հենց այս կողմով էլ Ոուրեն Զարյանը մեզանում քննադատ, գրականագետ, թատերագետ, արվեստաբան հասկացություններին բերեց հասարակական ճանաչում:

ՄԵՐԳԵՅ ՍԱՐԻՆՅԱՆ

Քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՈՌԻԲԵՆՁԱՐՅԱՆԱԿԱՆԸ ՄԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ

Ուրբեն Զարյանի անոնն ինձ հայտնի էր դեռևս 30-ական թվականներին: Մշնակարգի բարձր դասարանների աշակերտ էի իմ հայրենի Լեռնային Ղարաբաղի Սելիխեն գյուղում, երբ կարդացի Գ. Տեր-Հովհաննեայանի «Տեր-Մարգիս» վեպի առաջաբանը, Վրթ. Փափազյանի երկերի երկնատոր-յա ճաշակավոր հրատարակության գեղեցիկ ու թարմաշոնչ նախախոսքը, Խանդավան գրով գրված «Արովյանի կյանքը» գրական դիմանեկարը: 40-ական թվականների երկրորդ կեսին, արդեն Երևանում, ես ականատես էի երա անվան հողովումներին՝ մշակութային կյանքի անցուդարձերում, իսկ 50-ական թվականների սկզբից ի վեր գրական ու գիտական նույն միջավայրի ուղեկիցներ էինք: Եվ երբ տանամյակների միջով դիտում եմ երա անցած ուղին, իմ պատկերացման մեջ երա անհատականությունն ուրվագծվում է պայտես.

Անձի և գործի ամբողջականությունն և ավարտվածությունն սկսական ոճի, հետազոտական նախասիրությունների, նպատակի հատակ ընթոնում: Հայացքի ուղղվածությունը միշտ դեպի առաջ և մոտի դիմամիկա, որ հրան տալիս է նորի գգացողություն:

Ինտելիգենտությունն, մեր օրերում հազվագյուտ դարձած մարդկային մի արժեք, որ գեղեցկությունն է տալիս ճաշակավոր կեցվածքին, հասարակացում չհանդուրժող բարձր պահվածքին:

Ներքին կարգապահությունն, որ երաշխիք եղավ ստեղծագործական արգասալոր ինքնապահության՝ «Արովյանի կյանքը», «Արամյան», «Թատեգասաւոր ինքնապահության»՝ «Հովհապատում», «Վահրամ Փափազյան», «Սիրանական դիմանեկարներ», «Հովհապատում», հայոց շեքսպիրական, Արշուուչը, հարյուրավոր հոդվածներ ու ելույթներ, հայոց շեքսպիրական, Արշեպատի ինստիտուտի տնօրեն, ուսանողներ, ասպիրանտներ, երկրպագուներ... Այսպես ձևավորվեց ու ամբողջացավ ուրբագարյանականը հայ մշակույթի պատմության մեջ:

1979

ԳՐԻԳՈՐ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, դրամատուրգ

ԽՈՍՔ՝ ԱՍՎԱԾ ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ
70-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

Միրելի ուսուցիչ

Ինչպես քաջ Թայտնի է քեզ, դեռ վաղնջոց, գիտուն մարդիկ իրենց ուսումնառության սիրեցյալ օշախն անվանել են աղմա-մատեր՝ սնող մայր:

Գիտեմ, շիտակամուղամուն չի հանդորժում խոսքի պահանում, բայց կարծում են, գեր այս երեկո կիմես զիշող և թույլ կտաս ինձ՝ համընդիմանոր ճանաչման արժանացած «աղմա-մատեր»-ը տարակոչել «աղմա պատե»՝ սնող հայր:

Հիրավի, դեռ տասնամյակներ առաջ, սիրելի պատրեն, դու հիմնեցիր քո դպրանոցը, որի խառնարանով անցան անդիվ-անհամար աշակերտներ՝ գրողներ ու գրականագետներ, բեմադրիչներ ու դերասաններ, նկարիչներ ու արվեստագետներ...

Դու, մագիստրոսի նման բարեզարմ և քաջախորհուրդ ամենայն արվեստաց, քո խառնարանով տակ առար գրչին ու գեղարվեստին նվիրյալ մշակներին և քո օրինակով սովորեցրիր նրանց՝ ինքնամոռաց ծառայել հայրենական մշակույթին, սրբությամբ պահպանել ու զարգացնել հոգևոր արժեքները, որ դարերով կտակել են սերունդներին մեր երջանկահիշատակ մեծերը:

Դու շանացիր միավորել սաներիդ ստեղծագործական միտքը՝ իրարամերժ ու տարակենատրոն: Դու դարձար այն երանելի «արվեստաթորթիչը», որի միջով անցնում ու գտվում է լոկ լավագույնը, բարձրաճաշակն ու հանրապիտակն:

Երևի հենց դրա համար էլ տաղանդները ծարավ են եղել խոսքիդ: Քեզ ունկնդրել են՝ Փափազն ու Վաղարշը, Վարպետն ու Աճեմը, Նաիրին ու Սևակը...

Դու այնքան ներհուն ես անման դասականներին, անս անվերջ մեղան ես նատել Շեքսպիրի և Սունդումյանի հետ, Զեխովի և Շիրվանզադեի հետ:

Քանի՞-քանի՞ մարդ մտավ դպրանոցդ, գինովցավ իմաստնությամբ լի գալառով, կողոպտեց գանձերդ անհատնում, բայց դու, մեր պատրե, եկի մնացիր մեծահարուստ ու ընչաշատ, քանզի անպարփակ է զորավոր մըսքիդ շունչարանը:

Որովհենքան դպրանոցից եկեղով, կյանք են առել և ժամանակակից դրա մատորգները: Մեծ պատրի ու երշանկությունն է վիճարկվել ինձ՝ լինելու քո մշտօրյա աշակերտը:

Սունդագործական ճիգերի մեջ, հաջողությունների ու ձախորդությունների այս ամենի լարիրինքուստ, մտաբերել եմ քեզ, իմ լայնախոն ոստոցին, որից ակնածել եմ հանապազ:

Երբ թատրոնի դահլիճում դիտել ես ամենայն պիեսին բեմադրությունը, ես, զգաստացած, մերը բեմին եմ նայել, մերը քեզ, տագնապալից մտորենով. տեսնես ի՞նչ կասի այս ճերմակալարս-մտասուզ այրը, որի ճակատն աղբառա խոկ ունի:

Եվ քննարկումների ու բանավեճերի թեժ պահերին, տաքացած գլոխականը մեկնեն խաղաղվել են, երբ ընդդիմախոսները, վկայակոչելով քեզ, ազդարաբեկ են՝ «Մագիստր դի՛քսիտ»— «Մագիստրոս ասել է»:

Եվ այսպես շարունակ, անսարդ քո մողական ձայնին, անծայրածիր քարպանի պես եկել ու անցել է մտավորականների մի ամբողջ բանակ: Ու դեռ պիտի գան նորատի մերունդներ, երազանքով մտնեն օրինված դրաբնոցդ, որի ճակատին անշեշ տառերով գետեղված կլինի միայն երկու քառ՝ Ռուբեն մագիստրոս:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՌԱՔՍՄԱՆՑԱՆ
Դրամատորգ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ

ՎԱՍՏԱԿ, ՈՐ ԾԱՌՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ռուբենին ճանաչում եմ տակավին քանական թվականներից, երբ որպես սկսնակ գրող հաճախում էի Թրիլիսի «Հայարտուն»՝ հայ մշակութային կենտրոնը։ Մեր բարեկամությունը հաստատվեց ավելի ուշ, բայց ես այսօր հստակ եմ պատկերացնում հենց այդ շրջանի, ինձնից ընդամենը երկու տարով մեծ Ռուբենին։

Իմ տպավորությամբ, այդ հասակում էլ նա հասուն, կազմակերպված մարդու տպավորություն էր թողնում, մինչդեռ ես՝ բնորոշ իմ պատանեկան տարիքին, բավական անխոհեմ ու անշրջահայաց էի։ Դեռ այն ժամանակ, երբ Ռուբենը՝ Ռուբեն Վարոսավիչ չէր, կշիռ ուներ, հեղինակություն։ Եվ դա միայն կեցվածքից ու հմայքից չէր (այս նա դերասան դատնայու լորջ հավակնություն ուներ), այլ, հնապես հիմա եմ կարծում, ինչ-որ առանձնատուր գրավչությունից՝ խոսքի, համոզմունքների մտածողության մեջ։ Նա իր հասակից մեծ էր երևում, դրա համար էլ նրա շփոմները այն ժամանակվա մեծերի՝ Սորիսաթյանի, Նար-Դոսի, Արշավիր Մելիքյանի, Պողոս Մակինցյանի, Արտաշես Կարինեանի և որիշների հետ, անքնական ու արտատպվոր չէր թվում։ Նա հրանց հետ «լեզու էր գտնում», գիտեր լսել, բայց գիտեր նաև միշտամուել, հայտնել իր տեսակետը այս կամ այն հարցի մասին։ Նա ուներ ընկերների իր շրջանը՝ Ռուբեն Աղարքը, Ժիրայր Հակոբյան, Սարգիս Պայազան, հիմա չեմ հիշում էլի ովքեր, բայց երիտասարդներ, որոնցից շատերն էին ակնածում։

Տարիներ հետո, երբ Ռուբեն Զարյանը դարձավ մեր առաջնակարգ գրականագետներից մեկը, ընթացավ գիտության արահետներով, անկախ նրա բոլոր տեսակի կոչումներից ու աստիճաններից, նա ամրացրեց իր հե-

դիմակությունը ո՞չ միայն ասելիքով (դրա մասին ստորև), այլ երևույթը (լինի գրական թե բատերական) պրատեղու, երա մեջ խորանազու, յորովի, նետաքրքրական տեսանկյունից գնահատելու, իր տեսակետը պարզ, տրամաբանական հատկությամբ շարադրելու հետևողականությամբ: Այն, ինչ բնութագրում է գիտնականին:

Ժամանակին Զարյան իրեն հիմանալի դրսուրեց որպես հրատարակիչ: Մի քանի տարի նա աշխատեց որպես գեղարվեստական գրականության բաժնի վարիչ Պետքարատում և «Անվետական գրականության» պատասխանատու խմբագիր: Ինչպես վկայում են երա հուշագրությունները, այդ տարիներին ստեղծվեցին երա կապերն ու մտերմությունները շատ գրողների հետ: Նորք հոտառությամբ ու հեռատեսությամբ նա հայտնաբերում է երիտասարդ տաղանձնելու, խրախոսում երանց: Զարյանը եղավ Զարենից հրատարական ճաշակի հետևորդներից ու կիրառողներից մեկը, գոյց մինչև այսօր Էլ միակը, որ այնքան նախանձախնդիր է այդ հարցում: Մեր գրողներից շատերը մտածում են միայն գիրքը լույս վճարելու մասին, և բնավ նոգաված չեն, թե այդ գիրքը, թեևուզ շատ տաղանդավոր գրված՝ ինչ տեսրով է մատուցվում ընթերցողին:

Իսկ հանդեսանո՞ւմ... Զարյանը մի քանի բաժիններ առեղծեց, վերտառություններ, որոնցից մեկը առանձնապես տպակիրթ է, որովհետև առնչվում է նաև ինձ հետ: Այդ բաժինը կոչվում էր «Անտիպ ձեռագրերի մասին»: Նըպատակի՛ խոստումնալից երիտասարդ ուժերին խրախոսելու էր, երանց չիրատարակված գործերին գրախոտթյուններով գրական-մեթոդոլոգիական օգնություն ցուց տալը: Այսպես, Զարյանը նախապես ծանոթանալով իմ «Ա-Վերումից հետո» վեպի ձեռագրի հետ, հանձնեց Դերենիկ Դեմիքյանին կարծիքի: Որոշ ժամանակից հետո այդ կարծիքը տպագրվեց հանդեսում: Ինքին հասկանալի է, թե դա ինչ էր հաշնակում մի սկսնակ գրողի համար: Ցավոք, այլև ոչ մի խմբագիր չօգտագործեց այդ հորմությունը գրական մասնություն: Կարծում եմ, ձեռագրերի հնան քննությունը կարող է խիստ շահաբեր լինել երիտասարդ գրողի հետագա հակատագրի համար:

Ուրեմնին հասուում է մի համելի արտիստիզմ, նույնիսկ, եթե նա անքինի վրա չէ: Արտիստիզմը շահաբեր է մարդու համար ինչպես կրաքրում, այնպես էլ պաշտոնական հանգամանքներում: Արտիստիզմը զարդարում է ձիրքը, տաղանդը, մատուցման հմայք ու տպալիրությունը և ստեղծում: Ուրեմնի արտիստիզմը միայն արտաքին հատկանիշ չէ: Նրա գրչի արգասիք տաղանդը հասորներ ու հատորյակենք, Աղայանի, Սիրանուշի, Փափառնանի, Ծերսափիրի բատրոններ, իր ժամանակակիցների մասին, սովորված են ո՞չ թե միակողմանի գիտական հայեցաղությամբ, սառը դասողությամբ ու

Վերլուծությամբ, այլ՝ առավել չափով, պատուի տաք շնչով, պունտականությամբ, քնարականությամբ և, մանավանդ՝ ինքնադրսկորմամբ, ինչի մասին էլ գրելիս լինի: Դրա համար էլ նրա ծավալուն մենագրությունները կամ հուշապատճենները շատ են մոտենում բեկորի աստիճանին, օրյեկտիվ լինելով, միաժամանակ սուբյեկտիվ են: Դա արթեստական ու բռնազրու չե, որ արժանանա լորջ ու անվերապահ կշտամբանքի: Դա էություն է, մոտածողություն, գեղարվեստական նախապահարում: Դա արտիստական բնույթ է՝ փաստը, իրադարձությունը, դիմումը և ինքը՝ իր աշքը, իր հոգին, իր վերաբերմունքը, իր սրտի անտես թելերի կապերն ու հանգույցները:

Օորեն Զարյանը ամենից առաջ գրող է, նովելիսի թատերախոսական-ներում գրող է: Նրա ասելիքը միշտ շաղախված է էնոցիաներով, զգում ենք միտքը հաստատելու կիրք, պատկերայնություն: Անկախ այն բանից, կհամաձայնվեր նրա հետ, թե ոչ, կըսեր կամ կկարդաք մեծ հետաքրքրությամբ, հոգմունքով: Այստեղ ուղղակի նմանություն եմ գտնում Զարյանի ու Գ. Բոյաչիսի միջև: Վերջինին գրքերն ել տպագրվում են որպես գեղարվեստական պատումներ: Ինձ թվում է, ժամանակակից ներեցողի համար գիտական գրական որոշակի ձևի մեջ մատուցելը գիտությունը մատչելի ու մասապահան դրանքներու անենավատահելի միջոցն է:

Բարեկամն՝ Օորենը յոթանասու տարեկան է: Հաճախ, ոգեշնչման պահին, այն րոպեներին, երբ նա չի մտահոգված իր առողջական վիճակով, լցում է երիտասարդական ավլունով, անենաւում են կնճիռները, փայլում են աչքերը, և ինձ ակամա թվում է, թե տասնյակ տարիներ չեն անցել, կամ ինչ-որ մոգական ուժով վերադարձել է անցյալը, նոր է նա սկսում իր դժվարին ու ձիգ ճանապարհը, նոր է նվաճելու իր բազում երկրպագուներին ու բարեկամներին... Բայց, ավա՞ն, պատրանքն ակնթարթացին է. յոթանասունը՝ յոթանասուն է: Միայն՝ հասակի կեղաք չի կարող, անզոր է խացնել կրաքարին, որի առաջիկա բուն պողոշկումներին մենք հավատում ենք...

ԺՈՐՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Դրամատուրգ, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ

ԽՈՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԵՎ ԱՆՍԱՀՄԱՆ ԲԱՐԵԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ոտոքեն Զարյանը յոթանատու տարեկան է:

Դեռ նո՞ր:

— Այո՛, ասես խորքները մեկ արած հաստատում են օրաթերերը, ամսագրերը, ուղերձ-շնորհավորանքները, մեծարման երեկոների հրավիրատոմները, և նոյնիսկ ճրա մերձավոր բարեկամներից մի քանիս՝ իրենց շերմ ողջույնների տակ ստորագրելով:

Մենում է հալատով, սրտաց շնորհավորել, բայց և զարմանալ՝ իսկ ե՞րբ է Ոտոքեն Զարյանը եղել քան տարեկան, երեսու տարեկան, քառասուն... Կամ, մեր մեջ ասած, ե՞րբ չի եղել նա յոթանատու տարեկան:

Ակամա հիշում ես Գյորժեի խորքերը. «... սովորաբար կարծում են, որ մարդ ծերության հասակում է իմաստնակում, մինչդեռ իրականում տարիքի հետ նա ձգուում է պահպանել նախկինում ունեցած իմաստությունը»:

Զեր մասին ասած այս խորքերում Գյորժեն սիսալ է գործածել միայն «ծերություն» բառը, որի մեջքերման համար, սիրելի Ոտոքեն Վարոսովիչ, ես Անդրություն եմ խնդրում:

Հիշո՞ւմ եք, Գառնիի դեռ չվերականգնած տաճարի բակում, վիշտարի նեկուգենու տակ բացված սուփրա-սեղանի շորջ նատած, Դուք լսում եք «Զանգակատունը»:

Լսում եք Պարույր Սևակի շորթերից, լսում եք դեռագիր, դեռ սեփագիր «Զանգակատունը»:

Քիչ-քիչ խմում եք ու լսում:

Հետո բոլորը խոսում են ու խմում... Խակ Դուք լուս եք, լուս ու անձայիս: Եվ ինչ լավ եք լոել:

Հետո խոսեցիք: Երկար, շատ երկար խոսեցիք...

Մի՞թե Դուք այդ օրը յոթանասուն տարեկան չեիք:

... Իսկ այն օրը, եթե սգո մեղեդին ձյան փաթիլների հետ իշնում, շուտում էք, առևս, Վարդան Աճեմյանին ամփոփող թարմ ծաղիկները:

Դուք այն օրը հարյուր տարեկան էիք:

Զեր տարիքի և իմացության միջն հենց էն գլխից եղել է մի հաճելի հակասություն՝ վաղ հասակում՝ իրենից մեծ, այս տարիքում՝ վաղ հասակի ձբգտութեր, որով էլ, թերևս, բացատրվում է Զեր դասական-ավանդականի և ժամանակակից հայացքների ներդաշնակությունը:

Դուք հասցել եք ընկեր ու մտերիմ լինել մեր գրականության ու մշակույթի մեծ երախտավորներին, և լինել մեր ընկերը՝ որքան ավագ, այնքան էլ հասակակից:

Հասակակից...

Հիշո՞ւմ եք, մի քննարկման ժամանակ, Դուք տարիքի զգացողության ինչպիսի կրքով էիք մարտնչում ապացուցելու, թե՛ Ռումենի երիտասարդ դերակատարը լավ չի սիրում, չի բացահայտում այդ մեծ սիրո այրումը, նվիրումը, ինքնամոռացումը:

Այդ ինքնամոռացումը հենց Զեր էք վերաբերվում, քանզի Դուք այդ պահին Ռումենի տարիքին էիք, առևս: Մինչդեռ Զեր մազերը վաղուց արդեն ներմակ էին և քունքերը բացված: Ի դեպ, իմ տպավորությամբ Դուք երբեք էլ սև մազեր չեք ունեցել, երբեք երեխա չեք եղել, խաղալիք չեք ունեցել, այլապես Դուք այսուհետ սպասած լինետիք մարդկային այն հազվադեպ բարեմանությունները, ինչպիսիք են՝ գարմանալը, հավատալու հաճույքը, չիմանալու խոստովանությունը, հարցենելու պարզությունը, լսելու հետաքրքրությունը, որոնց միասնությամբ, ավելացրած նաև խորը գիտելիքներ և անսահման բարեկրթություն, մեր առաջ հառնում է մի շքեղ իրողություն, մի պայծառ մտավորական, որի կրողը Դուք եք, սիրելի Ռուբեն Վարդոսովիչ:

ՈՍՉԾԻԿ ԴԱՎՈՅԱՆ
Բանաստեղծ

ՄԵՐ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՈՍԿԵ ԿԱՊԸ

Հայ իրականության մեջ հայոց մշակույթին անշահախնդիր նվիրված Անհատը չի կարող, կամ իրավունք չունի իր ուժերն ու օժովածությունն սպառել սկզբուն մի ճյուղի մեջ, որովհետև որքան էլ կործք ծեծենք, թե՛ ամեն ասաբրեգում էլ տաղանձների համատեղություններ ունենք, այնուամենայնիվ զարմանալիորեն քիչ է այն Անհատների թիվը, որոնք կարողանում են մեր մշակույթը փրկել անհնակալ անկումներից, և լավ իմաստով, գոնեւ մի քանի միջիմետր տեղից շարժել:

Եթէ դա աղյուս է, որեմն ինչպես կարող ենք Ռուբեն Զարյանին քննոշել իբրև միայն թատրոնագետ, և թատրոնագիտության մեջ էլ իբրև բացադիկ չերսպիրագետ, կամ իբրև միայն փայլուն արվեստարան, կամ իբրև միայն գրող, որ չունի պատմելու գոյքակից ձևեր, որամատիկ հնարանքներ, բայց ընթերցվում է արտավարդ հափշտակությամբ...

Սոր ժամանակներին հարմարվելու ընթունակությունը, որ արվեստագետի համար դիտվում է իբրև կենսունակ լինելու բացառիկ շնորհը, եթք շատ զորավոր է լինում, ամրողջովին բացասում է պյու հովն արվեստագետի հախվին դեմքը, և որեմն՝ նրա ստեղծած արժեքն ու ժամանակը նունավես: Իսկ եթք չի բացասում, ոոր ժամանակի վրա շողում է նրա ազնիվ դեմքը, և այն պայծառ հավատը, թե՛ հարմարվելոց զատ կա ժամանակը պահճաց-

նելու և արժեքավորելու քաղցր ու տաժանակիր մղումը: Մուրեն Զարյանի ազնիվ դեմքը շողոս է մեր ժամանակի վրա, և նրա ստեղծած դիմանեկարերն այս սկզբունքով են ապրում մեզ հետ:

Կյանքը նոր սկսող ամեն մի սերնդի թվում է, թե իր հետ ապրող ավագույն սերունդն արդեն բավական անջատվել է կյանքից: Մինչդեռ իրականում հենց ինքը դեռ չի կարողացել սաս արժանվուն միանալ կյանքին, որովհետև դեռ չի կարողացել իր մեջ հայտնաբերել այն անզուգական կապը, որով իմաստավորվում է կյանքը՝ պատմական շղթայի մեջ, և հանդես են գալիս ժողովորդը պահպանող այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ սերը, կարեկցանքը, անձնազոհությունը, կենափորձի իմաստությունը, աշխարհի վրա իր տեսակը շարունակելու մղումը...

Մուրեն Զարյանը մեր ձեռքն է տալիս մեր հիշողության ոսկե կապը, որ ինքն է հյուսել իր տրանսառնամայա գեղեցիկ ու դժվարին կյանքի և հայ սրանցելի մտավորականության բազմազուն թելերից:

ՎԱՐԴԻՄ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ
Թատերագետ

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻ ԱՎԱՆԴԸ

Կյանքում իրենց աշխատանքային և հասարակական ակտիվությամբ հարատևող գործիշների հորելյանական պատկառելի տարեթվերն անգամ չեն տրամադրում խոսելու հրանց միայն արդեն կատարածի մասին: Դրանք ասիր են ընձեռուուն նաև ուժեղ հավելյալ գործադրման ու նորանոր հղացումների: Բանող մարդուն կենդանության օրոք մասուցվող դափնիները, ինչպես ասել է աշխարհանուն մի բանաստեղծ, նրա իսկ խնամած պարտեզի դպրարից պիտի հյուսվեն, որպեսզի շրապանեն ու թմրեցնող ննջահոտ չտարածեն:

Ռուբեն Զարյանի խնամած «պարտեզն» այսօր շնչում է թարմ պտղահոտով: Որովհենու մշակութային գործունեության այն օջախը, որը նա հիմնադրեց ու գլխավորեց, շեռիմիվ պետական և հասարակական շահագրգիռ աշակեցության, այժմ արդեն վերածվել է մեր ազգային գեղարվեստի մի խկալական դպրանցի, որի գիտական ու բարդական հիմնակությունը տարեցտարի ամրապնդվում է իր թե հրատարակած ուսումնասիրությունների բազմազանությամբ և որակով, թե նորահան մասնագետների հարածուն մակարդակով, թե, մանավանդ, ձեռնարկած միջոցառումների, այդ թվում նաև միջազգային գիտաժողովների, հետզհետեւ ավելի ընդլայնվող օրակարգով: Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ և Արվեստի ինստիտուտի տնօրեն Ռուբեն Զարյանի դերն այդ ամենում դժվար է գերազանատել: Նա իրոք, որ օժնված է հոգևոր մշակութի տնօրինման հազվագյուտ մի ունակությամբ:

Օծոված է նաև իր անհատական ու հիմնարկային ծրագրումներն ի կատար ածելու անհանաց մղումով: Պատաճության օրերից նրան գիտցողներն

իսկ չեն մտաքերում, որ ովածդ անպատեհությունն ու արգելքներն ի զորու լինեն կատեցնելու մարմնի զորությամբ աշքի շընկնող այդ մարդու բուռն ընթացքը դեսի իր ճախաձեռնած ամեն ինչի բարեհաջող վերջնավարությունը: Զարյանի համար կրանքը մարդկային հնարավորությունների լիովի օգտագործման, ևունիսկ անհրականալի թվացող փափագների իրականացման միջոց է: Նրա մեջ, ասես, համատեղվում են իդեալիստի ներշնչվածությունն ու գործատիրոջ աշարժությունը: Յուրաքանչյուր նոր միտք ու հոգում նըրան հայտնությունների են նորում, իսկ սոույգ հաշվարկն օգնում է հաղթահարել ամենայն դժվարությունն ու պատվարներ:

Արգասավոր է Զարյանի գրական աշխատանքը: Մեծ թվով ուսումնասիրությունների ու հոդվածների հեղինակ լինելով, առանձնահատուկ ձգուում ունի մատենագրելու հան իր ապրած ժամանակն ու ճանաչած երախտավոր գործիչներին: Նա կարողանում է «քեղմնավորել» իր գրչակից ընկերներին ևս. աեփական գրքերից եռապատիկ ավելի գործերի հեղինակնան ու հրապարակման անմիջական հրահրիչն է եղել: Եվ ճրա «ուսնահետքերով» քչերը չե, որ ճանապարհ հարթել ու հաստատվել են մեր հայրենի գրականության, գրականագիտության կամ թատերագիտության բավիրաներում:

Մուրեն Զարյանը հասել է իր ուստանի շեմին: Խ՞աչ կարելի է մաղթել նրան այդ առթիվ: Ըստ երևույթին, միայն առողջություն և ուժերի կայունությունն, քանի որ պատվարեր կյանքի ու համրօգուս գործունեության մնացյալ բոլոր հիմքերի վրա նա ամուր կանգնած է ի վեր արդեն յոթ տասնամյակ:

ՅՈՒՐԻ ԼԵՎԻՆ

Քանայիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՇՈՒՅՅԻ ՀՈԳԻ

Իմ ծանոթությունը Ռուբեն Զարյանի հետ սկսվեց 1968 թվականի հունվարից, այն բամից հետո, երբ ես անսպասելիորեն ստացա նրա «Արամյանի Շեքսպիր» հիմնայի գրքի ոռուերեն հրատարակությունը հեղինակի ընծայագրով. «Շեքսպիրագետների լեզեռնի ակտիվ մարտիկին՝ լավագույն ցանկություններով»: Այստեղ հարկ չկա բնութագրելու այդ գիրքը. Զարյանի աշխատությունը քաջ հայտնի է և բարձր գնահատանիքի է արժանացել մամուլում: Ինչ խոր, այն ժամանակ ինքնասիրությունն իսկան շրյակեց, երբ նըման նվեր ստացա. հաճելի էր այն գիտակցությունը, որ իմ համեստ աշխատանքները Ռուսաստանում Շեքսպիրի ընկալման վերաբերյալ գրավել են այդպիսի հեղինակավոր գիտակի ոշադրությունը և նրա հավանության արժանացել: Արդեն ավելի ոչ, երբ ինձ բախտ վիճակվեց հանդիպել Ռուբեն Վարդսովիչին և նրան նախաչել անձամբ, ես հասկացա, որ այստեղ արժանիքն իմը չի եղել, այլ իրենք: «Նա իսկապես նկատել էր իմ աշխատանքները, որովհետու ոշադիր հետևում էր մեր շեքսպիրագիտության զարգացմանը, և իր պարտը էր համարել պաշտպանել, խրախուսել այդ դժվարին ուղու վրա ուրք դրած հետազոտողին»:

Մեր անձնական ծանոթությունը կայացավ 1969-ի ամռանը, երբ ինձ վիճակվեց մեկ շաբաթով լինել Երևանում: Ռուբեն Վարոսովիչն ինձ գրավեց միանգամից, առաջին իսկ հանդիպմանը: Ես հանձին երա տեսա ինտելեկտուրյան մարմնացման, որ իր մեջ միավորում էր ներքին կուտորան, հոգեկան հմայքը, նորր ճաշակը, շահագրգիռ վերաբերմունքը զրոցակցի նկատմամբ, համեստությունը: Ինչպես միշտ, Ռուբեն Վարոսովիչը ծայր աստիճան գրաղված էր՝ հիսուեր, հանդիպումներ էր անցկացնում, գիտական պատվիրակությունների, արտասահմանական գիտականների ընդունում և այլն: Շաբաթվա ընթացքում մենք համարյա չհանդիպեցինք: Բայց, չնայած իր գրաղվածությանը, նա չէր մոռացել ինձ: Ամեն առավոտ այն տանը, որ մնում էի ես, հնչում էր ենուախոփ զանգը, և Ռուբեն Վարոսովիչն ասում էր. «Ժամը 10-ի սու նեկը, խնդրեմ, ինստիտուտ: Այսօր այսինչ տեղը պիտի գնանք»: Եվ իրոք, Արվեստի ինստիտուտի դռանը ինձ մեքենա էր սպասում շատ սիրավիր ու նրավայր ուղեկիցներով, և մենք մեկնում էինք Գառնի, Գեղարդ, Էջմիածին, Զվարթնոց, Էրեբունի... Ռուբեն Վարոսովիչը շոալորեն ինձ էր պարզեւում հայ մշակույթի գանձերը, հարատացնում իմ հոգևոր աշխարհը: Նա ել իր կողմից պահանջում էր, որ ես իրենց բաժին հանեմ իմ ունեցածից: Համառորեն պետում էր, որ ինստիտուտում գեկուցում կարդամ արտասահմանայն գրողներին ընկալելու ուսումնասիրության ակզրութեների մասին:

Միայն վերջին օրը՝ իմ մեկնելու օրը, որ կիրակի էր, Ռուբեն Վարոսովիչը կարողացավ ինձ ժամանակ տրամադրել: Անմոռաց օր էր. նա ինձ տարավ Երևանի Ակադեմիական թատրոնում աշխատանքները: Մենք եղանք Արմինե Կապենցի մոտ, որ ցուց տվեց հանդուցյալ ամուսնու և իր Ակադեմիայի քաղաքացործ Արտոն Զաքմաքյանի, հրաշալի նկարիչ Մինաս Ավետիսյանի մոտ, որ հետո այնպիսի ողբերգական վախճան ունեցավ... Եվ ահա այդ ժամանակ, ըստ իս, Ռուբեն Զարյանը, լիովին բացվեց իմ առաջ: Ես տեսա ոչ միայն արվեստի գիտակի և գնահատողի, այլև մի մարդու, որ իր պարուն է համարում իրեն մատչելի բոլոր միջոցներով ակտիվորեն աշակեց արվեստի զարգացմանը, օգնել արվեստագետներին, նրանց համար աշխատելու հնարավորություններ ստեղծել: Այսուել ի հայտ եկավ նրա հոգու շոալորությունը, այն շոալորությունը, որ նրան դրդեց 1964-ին Ծերպապիրյան գրադարան հիմնել՝ հիմքում դնելով սեփական շերպիրագիտական համարածուն, այն շոալորությունը, որ նրան ստիպում է անխոնչ, անձնվեր աշխատել տարբեր գիտականների և արվեստագետների շաների միավորնան վրա՝ հանուն մարդասիրական վեհ հապատակների:

Ցավոք, մետագայում ես քիչ հանդիպեցի Ռուբեն Զարյանին,— 1970-ին

Յու. Շվեդովի շեքսպիրագիտական դիսերտացիայի ընթիմախոսներն էինք,
1972-ին մասնակցում էինք Թբիլիսի Շեքսպիրյան միմպոզիումին: Ինձ չվի-
ճակեաց այլևս լինել Երևանում, իսկ Ռուբեն Զարյանին ոչ մի կերպ չի հա-
շողվում գալ Լենինգրադ: Սակայն ինձ համար կարևոր է այն գիտակցումը,
որ հեռավոր Հայաստանում կա նաև, ապրում է և աշխատում՝ իրագործելով
իր բարձր ու ազնիվ առաքելությունը: Այդ բանն օգնում է ապրելուն:

Մեզնից յուրաքանչյուրի մեջ կյանքի ընթացքում կազմավորվում է սե-
փական պատկերացումն որիշ ազգերի մասին: Նման պատկերացումներն
առանձնապես վատ են, երբ վերացական ինչ-ինչ հասկացություններ միա-
նում են մարդկանց հետ անմիջական ծանոթությունից ծնված որոշակի տր-
պավորությունների. այնտան մեր այդ ծանոթներն ընկապվում են արդեն ոչ
թե իբրև սույն մասնավոր անձինք, այլև իրենց ժողովորդների մարմնացում-
ներ: Ինձ համար նայ ժողովրդի լավագույն գծերի, երա հոգևոր կուլտուրայի
և հոգեկան շոայության այդպիսի մարմնացում է ահա Ռուբեն Զարյանը:

1979

Լենինգրադ

ԴՄԻՏՐԻ ՌԻՐԵՆՎ

Բանահրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՄԵԿԱՍԲԱՆՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՂԸ

Երկար ժամանակ մեր ծանոթությունը մնում էր հեռակա: Ռուբեն Զարյանին հանդիպեցի նրա տպագիր աշխատություններն ու նամակները կարդալուց շատ հետո: Եվ Զարյանի ստեղծագործություններն իմ գիտակցության մեջ միահյուսվեցին թատերական ամենավայր տպավորություններից մեկի՝ Վահրամ Փափազյանի խաղի հետ: Այն ամենում, ինչ գրում էր Զարյանը, ես իմ տեսածի հաստատումն ու բացատրությունն էի գտնում:

Նման տպավորությունները, առանձնապես բևից ստացածները, սովորաբար առավ են լինում նույնիսկ ամրող կյանքում: Կարելի է վերընթառնել գիրքը, մի անգամ ևս դիտել ֆիլմը, ու թեև նախնական հիացումը միշտ չէ, որ վերակենդանանում է, այնուհանդերձ վերապրումը կարող է կրկնվել նորից ու նորից: Իսկ թատրոնը, ներկայացումը մեկ անգամ է միայն... Եվ ահա նման ուժի տպավորություն ես ստացել եմ ընդամենը մի քանի անգամ,— Ալեքսեյ Դիկին «Արդյունավոր պաշտոնում», Բորիս Լիվանով-Նոգորյան, Լոռուեն Օլյվյե-Օթելլո և Վահրամ Փափազյան-Օթելլո:

Անմիջական տպավորության և դրա շորջ խորհրդածելու միջև նոյնապես զգալի ժամանակ է ընկել: Ես Փափազյանին տեսել եմ դեռ դպրոցական հասակում, Մուկվայի Հայ կոլտորայի տանը: Հանդիսատեսները գըլ-խավորապես հայեր էին, սակայն Փափազյանը խաղում էր ոռուելուն, ավելի ճիշտ՝ ինչ-որ մի տրահատոկ լեզվով, որը հասկանալի էին ոչ թե բառերը, այլ մեղեդին, զգացմունքները:

Որոշ տեղերում հանդիսարարն վեր էր թոշում մեկ մարդու նման: Բը-նազդաբար վեր էի թոշում և ես, հնարավորություն ունենալով, աղբախուի, մի տեսակ ես գնալ դարերի միջով և զուտ շեքապիրյան կրքեր վերապրել:

Եվ ահա դրանից հետո, Զարյանի հոդվածները կարդալով, ես գտա այն սահմանումը, որ իմ վաղեմի, բայց չխամրած ու կայուն տպավորությունների արտահայտությունն էր: Զարյանն ինձ համար Փափազյանի համոզիչ մեկնարանը եղավ, նա արտիստի մասին գրեց իիմնականը՝ Փափազյանը ժամանակակից դերասան է, իիստ ժամանակակից, որը, սակայն, պահպանել է, — հենց պահպանել է և ոչ թե վերակենդանացրել, — «կրքերը պատառ-պատառ անելու» ունակությունը: Հրաշքով պահպանված ունակություն: Եվ դա այդպես էլ ներկայանում էր՝ հրաշք:

Որոշ իմաստով հրաշք է թվում նաև Ռուբեն Զարյանի ատեղծած Ծերըս-պիրյան կարինետը: Եթի մենք վերջապես հանդիպեցինք Երևանում, և Ռու-
բեն Վարոսովիչն ինձ այդ կարինետը տարավ, ես հիշեցի Կուբան, Հավա-
նան և... Նապոլեոնի թանգարանը: Սպասիս մի թանգարան կա Հավանա-
յում, որ դեռ անցյալ դարում հիմնել է մի վաճառական՝ Բոնապարտի մոլի, սակայն հեռակա երկրպագուներից մեկը՝ իրենց՝ Կուբացիների վկայությամբ, թանգարանը, ստեղծման օրից իսկ, նոյն տարակույս-հարցն է առաջ բե-
րում «Կուբացիներն ի՞նչ գործ ունեն Նապոլեոնի հետ»: Բայց, ըստ եռ-
յան, Ծերսպիրի հայկական կարինետում այդ թանգարանը մտաքերեցի Ակգրունքորեն հակառակ հիմաստով. «Ահա մի հարց, որ չի ծագում այստեղ», —
մտածեցի ես: Իհարկե, հասկանալի է և բնական, որ Պետրոս Աղամյանից մինչև Վահրամ Փափազյանը իր շեքսպիրյան ավանդույթներն ունեցող ազ-
գը հնան գրադարան-կարինետ ունի: Այստեղ էլ է համոզիչ Ռուբեն Զար-
յանը:

Համոզիչ՝ իբրև ավանդույթի մեկնարան և իբրև գործնականում նոյն ավանդույթը պահպանող:

1979

Մուկա

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ
Քանաստեղծ

ԻՄ ԳՐԱԿԱՆ ԿՆՔԱՀԱՅՐԸ

Երանի ճրան, ով կյանքում և այն էլ ոչ թե ուշ, այլ ժամանակին, հանդիպում է իրեն հասկացող խելոր, տաղանդավոր, հոգատար մարդու կամ մարդկանց: Ես ինձ համարում եմ այդ երանելիներից: Ընդամենը 16—17 տարեկան էի, երբ հանդիպեցի ճրան, ում ամենից ավելի էի երազում հանդիպել՝ մեծն Եղիշե Զարենցին, իսկ 20 տարեկանում հանդիպեցի այն ժամանակ արդեն 30 տարեկան Ռուբեն Զարյանին, որը դարձավ իմ գրական կերպարարը, բանաստեղծական առաջին գրքովին ոգեշնչողը, կազմողը, խմբագիրն ու հրատարակիչը:

Հինա նա իմ ավագ ընկերն է, իսկ այն ժամանակ 10 տարվա տարբերությունը թվում էր համարյա անհասանելի՝ և ոչ միայն և ոչ այնքան տարիքի իմաստով, ինչքան արած գործի, դերի ու նշանակության: Տե՛ որ ես ընթամենը մի բոթովախոս սկսան բանաստեղծ էի, իսկ Զարյանը արդեն համալսարան էր ավարտել, աշխատել որպես ուսուցիչ, գրել պատմվածքներ, նաև քննադատական հոդվածներ ու գրքեր, դասականների գրքերի ստացարաններ...

Եվ դեռ այդ ամենը կարծես թիշ էր, նստած էր— որտե՞ղ կուգենայիր, որ նստած լիներ— այն աթոռին, որի վրա նստում էր Եղիշե Զարենցը, մարտերնի համար ամենից սուրբ մարդը, որի լուսապապակից ընկած ցոլը ավելի խորիրդավոր ու զարմանալի էր դարձնում Ռուբեն Զարյանին...

Սյստես, հանդիպեցինք 1939 թվականին, երբ ես 20 տարեկան էի, Ռուբեն Զարյանը՝ 30 տարեկան, և այսպես էլ բայցում ենք միասին, մի տարբերակ կամ պարզապես 10 քայլի տարբերությամբ, նա առջևից, ես՝ ետևից, և երբ նա 40 է դառնում, ես դառնում եմ 30, նա՝ 50, ես՝ 40, նա 60, ես՝ 50,

և վերջապես (ո՞յն ես շտապում, սիրելի Ռուբեն, և ինչո՞ւ...) ճա՞ 70, իսկ
ես... 60:

Մեծ պարզն է ինձ համար, շնորհ, մեր այդ 10 քայլ հետավորության վրա
քայլելը... Նախ իմ առջև օրինակ կա, որին միշտ ճգուտմ եմ հասնել, հետո,
ողիղ քայլ ու ուժահետք կա, որ հեշտացնում է իմ ճանապարհը...

Ո՞վ է ասում, թե 70 տարին ծերություն է,— անս խնդրեմ, նայեք ա-
ռաջվա ճնան առողջ, թեթև ու... ուստիուսիվ Ռուբեն Զարյանին: Եթե այդ
է յորանասութը, ի՞նչ կա որ, կարելի է...

Պարզն ու շնորհ է ճան այն, որ անհնար է հասնել (Ել չեմ հանդնում
ասել... անցնել) իմ առջևից քայլող Ռուբեն Զարյանին: Ձե՞ որ, քացի իր
քազում առարինություններից— հիմանալի գրող-քննադատ է, քենադատ-
գրող, թատերագետ, շեքսպիրագետ, կիրթ, գուապ, արտիստիկ մարդ ու քա-
ղաքացի— Ռուբեն Զարյանը ունի ևս մի առավելություն, որից ավա՞ն, զորկ
են մեզանից շատերը և առաջին ներթին... ես:

Ո՞ւմ հայտնի չէ, որ Ռուբեն Զարյանը միշտ այնուղ է, որտեղ մի գե-
ղեցիկ ու ազնիվ գործ է արվում:

Արդի՞ւմ... ո՞չ— անում... Ել ի՞նչ Ռուբեն Զարյան, եթե որնէ գործ ար-
վեր առանց նրա— Շեքսպիրան կենարոնի կազմակերպումը լինի այդ, թե
Հայոց արվեստի հարցերին նվիրված միջազգային սիմպոզիումը...

Անո՞ւմ... ո՞չ— ճան անել տալիս որիշներին:

Անվիրեակ աշքով նկատելով, թե ում մեջ ինչ շնորհիք կա թաքնված և որն
է նրա կյանքի ամենից կարևոր գործը, Ռուբեն Զարյանը չի հանգստանա,
մինչև նրա միջից դորս չկրոգի, նրան անել շտա այդ գործը՝ բանաստեղ-
ծության գիրք լինի այդ, թե պուտ, թատերագիտական աշխատություն, թե
հուշերի գիրք...

Ձե՞ որ Ռուբեն Զարյանը ոչ միայն մեր ծամանակի լավագույն հուշա-
գիրներից մեկն է— (Կրտ այրախի կոչում լիներ, ապա՝ Հայկական ՍԱՀ
Վաստակավոր հուշագիր...), այլև այն նարդը, ում շնորհիվ որիշները ստեղ-
ծել են բազմաթիվ հիմանալի հուշերի գրքեր— Վահրամ Փափազյանի ան-
ման «Հետարքարձ հայացքից» սկսած մինչև...

Գեղարվեստական գրքի ճաման հակիշտակությամբ ընթերցվող հուշա-
գրությունը այնքան է հասուլ Ռուբեն Զարյանին, որ եթե ճան նոյզեմիկ գրում
է իրենից շատ առաջ ապրած և ստեղծագործած այնպիսի դեմքերի մասին,
ինչպես ասենք Պետրոս Աղամյանն ու Սիրանուշը, գրում է այնպես, կար-
ծես թե նրան ծամանակալիցը լինի...

Նա այնքան է ընտեղացել և այնքան սովորական է համարում ոչ մի-
այն հուշ գրելու, այլև որիշներին հուշեր գրել տպակ փաստը, որ իր «Սի-

բանուց» գրքում, ինչքան հուզիչ, նույնքան էլ միամիտ զարմանքով բացականչում է.— «Այդ ինչպես է պատահել, որ Սալինային, Մուրացանին կամ Վարդգես Սուրենյանցին չեն հորդորել ու խնդրել, որ նրանք հուշեր ու տպագործութեներ գրեն Սիրանուչի խաղի մասին...»:

Յոթանասուն տարեկան է արդեն Ռուբեն Զարյանը...

Իսկ Ռուբեն Զարյանը դեռ շատ բաներ ունի հասցնելու և անելու...

Յանձնաք միայն, որ նրա գործերը, փառքը, հոչակը, կոչումները շատանան ու ավելանան, իսկ նա (եթե անհնար է ավելի ջամկանալ...) գոնեն մնա այնպես, ինչպես որ կա այսօր— շարժուն, անհանգիստ, որոնող, ստեղծագործող...

Ինչպես ժողովրդական խոսքն է ասում «Ինչքան երկար ապրի նա՞մ այնքան իր պատիվն է...»: Իր պատիվը և... նաև մեր օգուտը...

Եթեն, աստված մի արասց, մեզանից որևէ մեկին մի քան պատահի, ո՞վ ավելի լավ հուշեր կգրի, քան իմ սիրելի, ձեր սիրելի, մեր սիրելի Ռուբեն Զարյանը:

«Գրքերի աշխարհ», Երևան, 1979, 15 նոյեմբերի, № 11:

ԱՆՍՀԻՏ ՍԱՀԻՆՑԱՆ
Արձակագիր

ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԸ ՄԵՐ ՍԵՐՆԴԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Սերունդներից ամեն մեկը իր որախտվայուններն ունի, որոնցից զուրկ են մնան հետնորդները:

Հետնորդներին անփոխանցելի մեր որախտվայուններից էր այն, որ տեսնում ու լսում էինք Խաճակյանին, Դեմիրճյանին, Զորյանին: Հապա որպիսի բախտ էր նրանց ներկայությունը հրատարակչության աշխատողների համար:

Ամեն օր գրասեղանի առջև իրենց անելիքն ավարտելուց հետո, ոտքը տանից դրսուն պէս, մագնիսական մի զորությամբ նրանք քայլերն ուղղում էին դեպի հրատարակչություն, վատահ, որ այնուղի հանդիպելու են իրար: Հաճախ գործ էլ չունենալով, գալիս էին հավաքվում գեղարվեստական գրականության բաժնում, որը վարում էր Ռուբեն Զարյանը, և նաում էին ասովիսի... Ո՛չ, դա պարապ ժամանց չէր: Չեմ հիշում, որ այդ զրոյցները վերածվեին սուր ու աղմկոտ վեճների, պատճառ դատնալով, որ մեկն ու մեկը հեռանա վշտացած: Անձի գերազանցության, իմացության մրցույթի ոչ մի հշույլ: Դրանք հոգեպարար զրոյցներ էին, մասք կրքերից վեր, վեճացնող ու հարստացնող... Այո՛, զրոյցել գիտեին մեր մեծերը: Նրանց ունկընդույլ գերագույն բախտ էր, գերագույն վայելք:

Երբ թվում էր թե զրոյցն ավարտվելու վրա է, Ռուբեն Զարյանը կարծեա: Թե զրոյցին հարևանցիորեն միայն առնչվող մի հարց էր ուղղում հրաց, ասես փայտ էր ավելանցում մարդ կրակին, և զրոյցը նորից աշխուժանում էր, գնապով թեժանում... Գեղարվեստական գրականության բաժնի անպատճուն կողեգիայի հիստեր էին դրանք, որը կյանքի էր Կոչվել տարերայնորեն, բաժնի վարիչի առինքնող հմայքների շնորհիվ: Այդ ասուլիսների բազում արգասիքներից մեկն էլ, լավ հիշում եմ, այն եղավ, որ հրատարակչական պահնի մեջ մտավ ու լուս տեսակ համաշխարհային գրական գոհարներից «Տիլ Ուլենշվիգելը», Սվետիք Խամականի ընդարձակ առաջարանով, որը ևս գրեց Ռուբեն Զարյանի խնդրանքով: Այդ ասուլիսները շատ բան էին հիշում Ռուբեն Զարյանին, ասուլիսի հատածներից ևս հմտորեն քաղում էր իր հրատարակչական ու գրականագիտական գործի համար անհրաժեշտը, կարողանում էր անսխալ կուսիկ լուրաքանչյուրի մտահղացումը, և ապա լորրաքանչյուրի հետ առանձին գործնական զրոյցի ընթացքում ճշտում էր կուսիմները, հաճախ և ինքը ստեղծագործական մտահղացումների մղում հրաց, և ճնշում էին գրքեր, որոնք այսօր մեր գրականության գանձներից են, ինեւց ծնունդով կապված Ռուբեն Զարյանի անվան հետ:

Շատերին այսօր կարող է լեգենդ թվալ, որ «Վարդանանքի» շատ էջեր զրոյել են հիվանդանուցում: Ծանր շնչարգելությամբ հիվանդ Դերենիկ Դեմիրճյանը գլուխ-գլխի եռևից գրում էր ավելի արագ, քան Ռուբեն Զարյանը կիսացներ կարդալ, խմբագրել ու գետելի ամսագրում: Նա կարդացածը տանում էր հիվանդանոց, իր ուղղումները ցույց տալիս, հեղինակի համաձայնությունն աստանում, գրված նոր էջերը հետև առած վերադառնում: Ռուբենն ինքն էլ, բոլորին հայտնի է, թե որքան վատառողջ էր այդ տարիներին: Պատահում էր, Դեմիրճյանն ապաքինվում, տուն էր Վերադառնում, անկողին էր ընկնում Ռուբենը: Այժմ էլ Դեմիրճյանն էր, ձեռնախախտին կրթելով, այցելում հրան՝ թևի տակ, թղթապանակի մեջ «Վարդանանքի» նոր գլուխները:

Լավ չեմ հիշում «Վարդանանքից» առաջ էր, թե նետու, Դեմիրճյանը թերեւ Ռուբեն Զարյանին հանձնեց կարճ զրոյցների մի շարք, և ասաց՝ մի հարմար ընդհանուր խորագիր չգտա սրանց համար, խորհրդակցեցին և կանգ ստան Ռուբենի առաջարկած «Մանրապատում» բարի վրա, այդ օրվանից առաջ «մանրապատում» բարը մտավ մեր գրականության մեջ: Նա եղակի օրինակ չէ: Ամսագրի խմբագիր և գեղարվեստական գրականության բաժնի վարիչ Ռուբեն Զարյանի աշխատանքը երկու հավասարազոր կողմ ուներ՝ կազմակերպչական և ստեղծագործական: Նա հեղինակների իսկ խնդրանքով մոտք էր գործում հրանց ստեղծագործական խոհանուցը, և իր

միաշնորհյունը բերում նրանց ստեղծագործական աշխատանքին: Նրա ճաշակի, գեղագիտական ըմբռնութերի նկատմամբ այդպիսի հավատու ու վըստահությունը իր հերթին բախտավորություն էր նրա հետ անշվլող գրողի համար:

Ռուբեն Զարյանի կապն ու մտերմությունը չեր սահմանափակվում այսգների՝ կենդանի դասականների շրջանակով: Ցուալել անգնահատելի եղավ նրա դերը իրենց առաջին գրական բազմերն անող երիտասարդների կյանքուն:

Նրա աշխատանքային ընկերներից ո՞վ կարող է մոռացած լինել, թե առ ինչպես էր ոգևորված պոյտենիսիկական ինստիտուտի մի ուսանողով, որ բանաստեղծությունների փոքրիկ մի գրքով էր ներկայացրել: Ռուբեն Զարյանն ինըն էլ հենց դա խմբագրեց ու մինչև տպարան ուղարկելը, հաճախ հնանում էր դարձակից և սրան ու նրան կարդում, ասելով. «Տեսեք ինչ թարմություն է բերում թե՛ բոլվանդակության, թե՛ ձևի»: Այդ ուսանողին, որի անուն-ազգանունն էր Կարլեն Մուրադյան, Ռուբեն Զարյանը տվեց ո՞չ միայն կյանքի ուղեգիր, այլև բանաստեղծական անուն ազգանուն՝ Գևորգ Էմին, որը մեր այսօրվա պուեզիայի պահանջի անուններից է:

Հասրա ի՞նչ ոգևորություն էր ապրում Ռուբեն Զարյանը դրանից մի երկու տարի անց, իր ոգևորությամբ համակելով հրատարակչության ողջ կոլեկտիվին ու ողջ գրական հասարակայնությանը, եթե մեկը, համալսարանի առաջին թե՛ երկրորդ կուրսի մի ուսանողի ձեռագիր բանաստեղծությունները բերեց, տվեց նրա ձեռքը... Ռուբեն Զարյանը դրանցից երկուուր տըպագրեց իր խմբագրած «Սովետական գրականություն» ամսագրուն: Դրան հետևեց մի ամսբրուպ, որ ճայթեց առաջին հերթին ամսագրի խմբագրի գրւինն: Ռուբեն Զարյանը շնչերկեց, շարունակեց քաջալերել և հովանավորել երիտասարդին, որի անուն-ազգանունն էր Պարույր Ղազարյան, տալով նըրան Պարույր Աւելի այսօր պաշտամունք դարձած անունը:

Ելի կան գրողներ, որոնք բախս ու պատիվ են ունեցել արժանանալու Ռուբեն Զարյանի ուշադրության ու բաջականական կապահովության համար, և խոստովանեն երախտագիտությամբ, դրանցից մեկն էլ են եմ:

Ռուբեն Զարյանի գրծունեությունը գրականության ասպարեզում որքան կազմակերպչական, նույնան էլ ստեղծագործական էր: Դրանք հանդես էին գալիս միասնաբար, և հավասարապես արգասարեր եղան մեր գրականության համար:

Իմ հիշողության մեջ Ռուբեն Զարյանի ամեն մի հրապարակային եղույթը մնացել է իրեն իրադարձություն մեր գրական կյանքուն:

Զեկուցում էր Աքրովանի մասին. դամիճն այնպես էր շիկացել, որ եթե հնչեցին «Աքրովանի Աղասու ձին հետագայում խաղաց Շաֆփու հերոսների

տակ» խոսքերը, ունկնդիրների հայացքի դեմ ասես շողաց Դավթի թուր կեծակին և լսեց Քուուկիկ Զալպալու խրխինչը...

Զարյանի արտասանած հենց միայն այդ թևավոր խոսքը բավական էր, որպեսզի ո՞չ այնքան բարի այդ ժամանակներում նրա ճակատին խարանվի նացիւնապիստ պիտուկը:

Ծիրազի մասին կարդացած իր անմոռանալի գեկուցումից առաջ, նա երկար ու խնամքով պատրաստեց ու խմբագրեց հեղինակի «Երգերի գիրքը», մի փոքրիկ գրքովկ, որի նայտակն էր ցուց տալ բանաստեղի տաղանդն իր անհատ հնայլցներով։ Այդ ժողովածուն կարելի է համարել Ծիրազի ստեղծագործության զուլած, մաքոր ուկին։ Այդ աշխատանքը կատարելին, որ կարծեն ամիսներ ունեց, Ռուբեն Զարյանը ձեռքից ցած չէր դնում Ծիրազի բանաստեղծությունները, լցված էր միայն և միայն նրանով։ Ով մտնում էր իր աշխատանելյակը, հանում էր դարակից և կարդում մեկ կամ մյուս բանաստեղծությունը, կրկին և կրկին ստուգում իրեն։

Այդ ժողովածուն դարձավ մի գեղեցիկ պարզ ընթերցողին։ ձեռքդ առելիս չէիր ուզում ցած դնել։

Ժողովածուն կազմելուց հետո, իրեն բանաստեղի ստեղծագործական աշխարհի թափանցումների ամփոփում, Զարյանը գրողների միությունում հանդես եկավ գեկուցումով Ծիրազի մասին։ Ծիրազն իր առաջին «Գարնանամուռ» ժողովածուով արդեն ճանաչված ու սիրված բանաստեղի էր։ Ռուբեն Զարյանի տառմնասիրությամբ Ծիրազը երկրորդ անգամ հայտնագործվեց, բարձրանալով մի նոր պատվանդանի վրա։ Բանաստեղին այդ պատվանդանը իր կարծածից ցածր թվաց, իսկ նրա հակառակորդներին, ընդհակառակը՝ շափից ավելի բարձր։ Իսկ ունկնդիրներս հեռացանք սրանցից օրվա բանախոսից շնորհակալ մեզ պարգևած վայելքի համար, անշնչելի տպավորություն տառնելով մեզ հետ։

Չեայած գրական հասարականության աճող համակրանքին Ռուբեն Զարյանի նկատմամբ, նրա ներվերն, ավաղ, չիմացան։ մարդկանց խեղճացնելու համար մարդկանց կացվում էին բաղաքական պիտակներ, որոնցից մեծ բաժին հասավ Ռուբեն Զարյանին։

Ի մեծ ցավ բոլորին, նա նահանջեց գրական ասպարեզից, և գնաց ապաստանեց, իր կարծիքով անմեղուկ մի ասպարեզում, որպիսին թատրոնն էր։

Սակայն բախտից ուր կարող ես փախչել։ Նրա բախտն իր հետ էր։

Ովքեր ներկա էին Փափազանի Օթելլոյի մասին կարդացած նրա գեկուցմանը, չեն կարող սոսացած լինել այդ երեկոն։ Եվ դա էլ դարձավ աղմուկի պատճառ, ու ճարան տրված բազում այլ պիտակների կողքին տեղ գը-

տավ «ապոլիտիկ» պիտակը, որը մինչ այդ էլ անծանոթ չեր նրան: Այդ պիտակին արժանանում էին արվեստի մեջ արվեստ փնտրողները:

Անցել են տասնամյակներ:

Սասօր արդեն Ռուբեն Զարյանն առաջվա պես խոցելի չէ:

Նա հրապարակ է հանել մի շարք մեծարժեք գրքեր՝ «Սիրամյան», «Սիրանուշ», «Հուշապատումի» հասորները: Բեղուն եղավ նրա գործունեությունը բատրոնի ասպարեզում, ել ավելի հարատացավ իր մանկավարժական աշխատանքով:

Բարձր գնահատելով այդ ամենը, այնուամենայնիվ, չեմ կարող ու չեմ ոգոս թաքցնել, որ այն սերունդը, որը վկան եղավ Ռուբեն Զարյանի գրական բուռն գործունեության, ավելի էր բախտավոր: Եվ մենք դեռ հոյս ունենք, որ նա կվերադառնա այնուհետ, որտեղից սկսել էր իր գործունեությունը, հոյս ունենք նրան կրկին տեսնելու գրական ամբիոնի վրա և լսելու այն խոսքը, որ նա պիտի ասեր ու շասած իշել է ամբիոնից...

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Բանաստեղծութի

ՌՈՒԲԵՆԸ, ԻՐ ԽՍՌՈՎՎԱԾՔՆ ՈՒ ԻՐ ՏՈՒՆԸ

Նրա կյանքը մի խոր խոհական, մի նորք քնարական բանաստեղծություն է, մեր մանրաքանդակներին բնորոշ գծերի նման, իրար հաջորդող և իրար չկրկնող պատկերներով մի երկար բանաստեղծություն, որովհետև նրա ողջ կյանքը որոնում է և ստեղծագործություն՝ տաք, հոգայթաթավ ու թըրթըռուն, իր բախտություն, անկրկնելի գյուտերով ու գաղտնիքներով, որոնք սակայն բոլորին են, քանի որ այդ ամբողջ ընթացքի մեջ մեզ համար կա մի մտերիմ գիծ, միշտ նվիրումի պատրաստ մոտիկ հարազատի հատկանիշ:

Նրա բազմանույ տաղանդի բոլոր շնորհները, իր բոլոր հոգումները, իր բոլոր բոլչքներն ու թևածումները շատ մոտիկից կապված են յուրաքանչյուրին կյանքի հետ, տաք-տաք ներծծված են մեր առօրեայի մեջ: Նըռանք մեզ հետ են, մեր շուրջը և մեզ համար:

Սա Ռուբեն Զարյանն է, բոլորիս մտերիմը և հարազատը:

Կան մարդիկ, որոնք այրվելով, կազմկտալով ու ճառագյայելով են անցնում իրենց կյանքի ուղին և իրենց այրումի լոյսով լողում են շրջապատը, փոխանցում են մոտիկներին և նրանց էլ առած գևոս դեպի հեռուս: Այդպիսի մարդանցից է Ռուբենը: Միշտ բարձր բանաստեղծական տրամադրությամբ, գերզգայուն ոռմանախկ խառնվածքով Ռուբենը իմ կյանքի առաջին և ամենաթանկ ուղեկիցներից է: Եվ ոչ միայն իմ, այլև գրեթե իմ բոլոր ընկերների: Երբ զգացել ենք նրա խորհրդի կամ օգնության կարիքը, նա միշտ եղել է մեզ հետ, մեր կողքին՝ հասկացող հարազատի նվիրումով:

Իմ կյանքից պակաս կլիներ շատ բան, եթե նրա դժմար ճանապարհին հանդիպած չկլնեի Ռուբենին, եթե այդ զարմանալի անձնվեր, որոնոյ, ստեղ-

ծող ու շռայլ կյանքը չընթանար մեզանից այդքան մոտիկ, եթե նա չլիներ այդքան տաքսիրու բռնկումներով ու հաղորդական: Համոզված եմ, որ այսպես մոտածում են շատերը՝ ամեն մեկը նկատի առելով իր սեփական կյանքը:

Մեզ համար սիրելի կյանք է նրա հյուրընկալ տունը՝ սեղանը միշտ բաց, այցելուների համար փափուկ աթոռները շարած, և ինքը խոնամ ու խորուն, համակ ուշադիր հատած կենտրոնում: Ոչ միայն որպես մեր ցավերի ու հոգսերի ունկնդիր և հաղորդակից, տաք-տաք կապված անրող կյանքի ընթացքի հետ, այլև ստեղծագործական աշխատանքների, ճանապարհի որունուների նորք ընկալող ու խորիրտատու, ապային, օգնող ու ընդառաջող:

Հայունի է, որ մեր լավագույն բանաստեղծներից մի քանի համար սեղանավորել է և օգնել շատ հարցերուն, սկսած նրանց կյանքի հախաչափիդից: Նույն նա արել է շատ նկարիչների ու քանդակագործների համար: Հիշում եմ սքանչելի Կալենցի կյանքի ծանր օրերը: Պատահել եր ամսան, որ ես նկարչի առաջին շրջանի ծանուներից եի և մի անգամ լսելով նրա տրտունջները, իր նորք նորարարական պողովուների համար կրած նեղությունները, առաջին ներթին մտածեցի ծանուացնել Ռուբենի հետ, համոզված լինելով, որ և կիսականա, և անպայմանեն կաշխատի ոգեամնել, օգնել: Այսպես էլ եղավ: Մենք միասին գնացինք Կալենցի մոտ, իսկուն ստեղծվեց հաղորդական մուերությունը: Ապա ես խրված իմ հոգսերուն անհետաց և մեկ էլ տեսնում եմ, որ մեր Ռուբենը ամբողջապես նվիրված գործում է Կալենցի համար, օգնում է, համեռ ամեն պահին՝ մտերին, հոգատար, ալվագ ընկերոց հետան:

Այդպիսին նա եղավ շատերի համար: Օգնեց, առաջնորդեց, հոգվեց, այրվեց, ոգերորվեց, խրհուրդներ և գաղափարներ տվեց և ողջ կյանքի ընթացքուն, սիրատորի ու խրապտորի նետեց նրանց կյանքին, նրանց ուղունուներին ու խոյանքներին, նրանցից ավելի շատ տիրեց ձախողման օրերին, նրանցից ավելի շատ ուրախացավ հաղթանակների ու հաջողությունների ժամանակ:

Այդպես եղավ նա ինձ համար իմ ամբողջ կյանքի ընթացքուն: Գրեթե կես դար քայլում ենք իրար շատ մոտիկ: Անհավատավի է, թե նա որքան բան հասցրեց անհանգատություններով ին իր բարդ ու դժվարին կյանքուն: Այն, որ նա հաստորներ դարսեց, այն, որ նա Ծեբապիրյան բացադիկ գրադաւան, Ժերապիրյան ավանդներ ու նայ շեքսափիրագիտություն ստեղծեց, այն, որ ակադեմիայի արվեստի հնատիտուսի աշխատանքներն այդպես հնտորեն տարավ, տասնյակ տարիներ եղավ դասախուս, ուսուցիչ, այն, որ արվեստի աշխարհում բոլորին նետեց, բոլորին հասավ, ու այսպես շատ ու շատ ազ-

Այս ջանքեր, անթիվ, անհամար, ժամանակի առումով թեկուզ անհայտապես էին: Եվ ամենազարմանալին, իհարկե, այն է, որ նա միշտ ժամանակ էր գտնում ամեն այցելողի, ամեն խնդրողի, ամեն հարցնողի համար: Հենց այդ գերմարդկային լարվածության պատճառով էլ նա հաճախ ուժարափ էր լինում, հիվանդանում էր: Իսկ նրա անթիվ-անհամար բարեկամներն անկեղծ անհանգատացած, վշտացած ու վախեցած նորից էին վազում, այս անգամ արդեն մտահոգված նրա համար: Բայց հենց որ շունչը տեղի էր գալիս, սկսվում էին նորից խոներն ու խորհուրդները, օգնության միջոցներն ու ճանապարհները, նոյնիսկ ամենահոգեած վիճակում, որովհետև դա նրա կյանքըն էր, նրա շնչառությունը, նրա մշտապես լարված ու լցված գոյությունը՝ բոլորի հետ ու բոլորի համար:

Միշտ մի լավ գործով, միշտ մի լուսավոր ծրագրով, երբեմն բանաստեղծական թևածումներով, երբեմն գիտական որևէ ձեռնարկ նկատու հայագծերով, երբեմն էլ շատ պարզ ու կենցաղային խնդրանքով Ռուբենի տանը հանդիպում են շատ տարրեր շրջանակի մարդիկ: Մեկը օտար է ինձ համար, մի որիշին ևս չեմ հանձնի, երրորդին անհասկանալի: Բայց դրանք բոլորը ընդունելի են Ռուբենի համար, հասկանալի են և, իհարկե, բոլորին ինչ-որ ձևով անպատճառ պիսի օգնի: Բոլորն իրենն են, բոլորին նա հասկանում է ու մերժում չկա ոչ մեկի համար: Եվ առեն ինչում առկա է բանաստեղծական խառնվածքը, ատեղծագործող ոգին, հիացող, հորինող, հարատես ոգին: Նաև՝ կարող, նաև հնարամիտ, ստեղծող, միշտ եղք ու աստիճան գտնող բարձրացնող ոգին:

1933 թվի ուսումնական տարվա սկիզբն էր: Դաւերն արդեն սկսվել էին: Ես Թիֆլիսի Նկարչական ակադեմիայի առաջին կորուս անցնած ուսանողութիւն էի: Վրացական սրտարաց մթնոլորտն ինձ վերաբերում էր արտակարգ լավ: Սակայն ես ոչ ոչ վրացերեւն գիտեի և ոչ էլ ուստեղեն, դասախոսություններից ոչինչ չեմ հասկալում: Մատածեցի, որ այսպես քան դուրս չի գա, գնամ Հայաստան: Մյուս կողմից էլ բանաստեղծությունը սրտիս մեջ հորդում էր, իսկ մթնոլորտ չկար: Սուս ու փոս հավաքեցի իրերս, եկա ուղիղ Երևանի համալսարանի կիսամասուց հանրակացարանը, որի կոտորք դեռ ծածկված չէր և վերին երկու հարկերի դուռն ու պասոռները դեռ դրված չեն: Երկորորդ հարկում ապրում էր համազյուղացի ընկերութիւն իր համակուրսեցիների հետ: Փոքրիկ փայտն համարուկս առած եկա սրանց մոտ: Սոյցիկներն ինձ ընդունեցին իրենց կորած որքի հման, անմիջապես կերպեցին և տեղավորեցին դեռ չկառուցված հարկում, որից նորեկ աղջկների հետ:

— Զվախենար, Էս սենյակները մինչև ցրտերն ընկնելը բերդի նման

ամոր սարքած կիրեն: Ինչի կարիք ունենաք, մեզ իմաց կտաք: Ուսանող ձևակերպելու համար մեր Ռուբենին կատենք, նա խելացի տղա է, մի եթ կգտնի, կձևակերպի...

— Բա ընկույրյունները... — վախով հարցրի ես:

— Քննություն պետք չի, դու ուսանողուի ես, փոխադրվում ես մեզ մոտ: Ռուբեն կրտսավորի: Նա առաջին կորպի ավագն է...

Ես միայն ունեի նկարչական ակրատեմիայի ուսանողական գրքովկ գրքավ վրացերեն: Եվ ահա առած այս գրքովկը, ընկերություն հետ, ներկայանում ենք կորպի այդ ամենազոր ավագ Ռուբեն Զարյանին: Բարախիկ, գունատ, ներշնչված դժմբով, ու խոշոր աշքերով, կոլիկ վեր սահրած ու գանգուր մազերով, ու սատինե բլուզով, ընդգծված վայելուց սրահվածքով, միշտ բարեկիրթ երիտասարդ: Ընկերությին թախանձագին ու գովասանքով է ներկայացնում ինձ, որպես շատ ընդունակ աղջկա և ապագա բաևատեղծություն, ու այս արխատուրաստ երիտասարդը ծպտայով հանգստացնում էր երան և խոստանում մացնել իմ ազգանունը ցուցակի մեջ, ծպիտի մեջ սակայն մի թերև հեգանակ կար և հասկանալի էր. իմ փոքր, վտիտ, վատ հագեցված տեսքը որևէ հույս չէր ներշնչում երան: Եվ ազնուամենայնիվ հաստանելոց հովանակիրթ դեր, և մի բանի օրից ես ուսանողուի էի արդեն:

Երանեկի ժամանակներ էին: Համապարանը նման էր մի տաք ընտանիքի, տեղավորված Աքովյան փողոցի վերին մասի սև, բայց շատ բաշող ու մտերիմ շենքուն: Եվ ովքեր էին մեր դասախոսները՝ Աճատան, Աքեղյան, Մանանդյան, Տերտերյան... Եվ ընթրնվելով հեշտ, ձևական կողմերը թեթև, մի արտօնակարգ բարյացկամություն բողոքի կողմից, ուսանողները իրար հանդեպ չերմ, հոգատար ու հարազատ: Ահա այդ ֆոնի վրա Ռուբեն Զարյանի նման արդեն հարգված, ընդունված հեղինակության հովանավորությունը...

Եվ այդպես էլ, այդ հովանավորությամբ էլ թե համապարանում և թե հետո ընթացավ մեր լյաները մաքառելով, սայաթելով երեւնն, վերկենալով, հաճախ վեր խոյանալով, ձգտելով, հասնելով միշտ բարձրին ու գեղեցիկին, վերին ու վայելուին: Եվ Ռուբենը այս ամենի կենտրոնն էր, իր խկապես կարող ուժերով, իր հրաշալի ողբանտիկ քնավորությամբ, իր կազմակերպված աշխատափրությամբ, իր անհանգիստ, անհամերեք ձգտումներով ու խոյացումներով, առաջին խոյ օրերից դասախոսների ու առհասարակ բոլորի ուշադրությունը կենտրոնացնելով իր վրա, շարունակ հիացնելով ու զարմացնելով շատերին:

Մի անգամ, Արսեն Տերտերյանը հարցրեց, թե ով կուզի խոսել Աքովյանի մասին: Ռուբենը ձեռք բարձրացրեց ու կանգնեց և սկսեց շատ մտած-

ված, շատ համարձակ ու տպավորիչ խոսել, մոտ կես ժամ: Տերտերյանը շատ ուշադիր լսում էր և հենց որ Ռուբենը դանդաղում էր կամ կանգ առնում, Տերտերյանն ասում էր շարունակիր, ու այս շարունակում էր: Այսպէս վերջացավ առաջին ժամը: Սկսվեց երկրորդ դասը: Տերտերյանը եկավ-ինսորեց ուրախ ներշնչումը զապած ու լուրջ նատած Ռուբենին և ասաց՝ շա-րունակիր...

Բոյրը դասախոսները Ռուբենին վերաբերում էին նույն հիացուունով ու հավաստով: Համալսարանն իսկապէս նման էր մի ընտանիքի, որտեղ բոլորը գիտեին ով ինչ հաջողորդյուն է ունեցել, ով որտեղ է վրիպել կամ ձախող-վել, իսկուն հավաքվում էին և մոտածում, թե ուս ինչպէս օգնեն: Բայց հաս-կապէս 1933-ի ուսման տարին ծանր էր, հացի մեծ պակասություն կար, սենյի դժվարություն և արտակարգ խիստ ձմեռ էր: Ռուբենը լողեց-գնաց: Հիշում եմ, բոյրը դասախոսները հարցնում էին, թե որ է Զարյանը և շատ ախտուում էին, իսկ Տերտերյանը մի բամի ամօամ հարցուեց.

— Եւկա՞վ Ռուբենը, լոր չկա՞ Ռուբենից... Ախտու, շատ ախտու...

Սակայն երանց ախտուանը երկար չտևեց: Ռուբենը եկավ, արագ ըլլ-նությունները տվեց, չորս տարփա կուրսը երկու տարում հանձնեց, ավար-տեց համալսարանը և անցավ գրալսան աշխատամքի: Նրան անմիջապէս հաջորդեց երիտասարդ գրողների մի սերունդ, որը ձևավորվեց համալսա-րանի պատերի մեջ ու առաջին իսկ օրերից վայելում էր նաև գրողների միու-թյան հովանավորությունը: Անհնար է մոռանալ Վահրամ Ալազանի արտա-կարգ սերն ու հոգատարությունը երիտասարդ գրողների հանդեպ, որոնց մեջ մեծ կախարդանքով թնդում էր Ծիրազի անունը, նետու եկավ Սիլվան, Անեահիտ Սահինյանը, դեռևս ուսանողութի, լուրջ վեա գրեց, մի փոքր անց հոյն համալսարանի պատերից դորս եկան Պարույր Սևակը, Վահագն Դա-վորյանը:

Ռուբենը, թեև երիտասարդ, արդեն պատկառելի գործիշների թվին էր պատկանում և, իհարկե, տարբերվում էր իր օր-օրի աճող, փայլատակող հմայքով ու ձիբքերով և մանավանդ հիշու ու օգտակար պահվածքով, բա-ցանիկ նվիրվածությամբ ու խիզախությունով իր գործի մեջ: Եվ ամենակա-րևորը, որ նա միշտ պահեց զորեղ հովանավորի դերը:

Ես նույնպէս մյուսների նման սիրով ու մեծ հավատով իմ առաջին բա-նասանդությունները, դեռ քանիքը չչորացած, առնում էի ու վազում Ռու-բենի մոտ, սոսոգելու հաջողորդյուններս: Ես պատրաստում էի առաջին գիրքս, որն անցավ դժբախտ օրերի շարքով: Մի քանի երիտասարդների գորերը կազմում էր և խմբագրում մի աննկարագրելի սիրով ու ոգերոր-դյամբ Ալազանը: Իմ գիրքն անցավ Մկրտիչ Արմենի, Ալազանի և Եղիա

Ռուբարի ձեռքերից: Վերջինը իր ամենածանր օրերին չէր մոռացել և իմ խեղճ գրքովի սևագիր օրինակը տվել էր Ավետիք Խաչալյանին, որ հանձնի ինձ: Ռուբենն այդ գրքի անոնքը դրեց ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆ և այդպես էլ լույս տեսավ ու մինչև հիմա ինձ թվում է, թե այն սերն ու շերմությունը, որով վերդունվեց իմ անդամնիկ գրքովը, ինչ-որ չափով պարտական եմ նաև այդ շատ գեղեցիկ ու հարմար անունին, որ ինքնին մի բանաստեղծություն էր արդեն: Այն ժամանակ, երբ չարենցան շնորհացող օրերից հետո եկել էր չոր ու ցամաք, մերկ ներբողների, կեղծ աշուղների, ճաների ու ճարտասանությունների, ճարճատող «պոեզիայի» մի շրջան, նեաց այդ բարդ ու դրսվարին մթնոլորտում էլ մեզ համար առավել թանկ էր դառնում Ռուբենին, որն ի դեպ արդեն գրական համեմատի խմբագիր էր, ճշմարիտ, նորր ու գույզալ պոեզիան կրցու կերպով պաշտպանողի, այն հովանավորողի ազնիվ կերպարանքը:

Եվ ես իմ բանաստեղծություններում հաճախ եմ հիշել Ռուբենին, բանի որ նա երիտասարդական օրերից իմ ամենահարազատ և ամենաբանաստեղծական, բացադիկ մարդկանցից մեկն է եղել: 1945-ին լոյս տեսած փոքրիկ գրքովինս կա մի բանաստեղծություն նվիրված Ռուբենին: Այդ բանաստեղծության մի բաղադր մեր կյանքի համար շատ քննորոշ տողեր ունի: Ես հաճախ եմ հիշում ու անշրադառնում այդ տողերին.

Կյանքը նոզ տվեց նման խնդություն
Ու նման ցավեր.
Ու գնում են դեռ ճամփաները մեր
Իրար հանդիման, իրար գուգանեռ...

Եթե չեմ սխալվում, գրված է 1942-ին կամ 1943-ին, հարազատի ջերմ գիտումնվ, գրված այն ժամանակ, երբ մեր գիտակցական, ստեղծագործական կյանք կյանքը նոր էր միայն սկավել: Եվ ահա մի կողմից Ռուբենի մեծ ու բազմակողմանի վաստակը, մյուս կողմից լայնածավալ հնուուները հասնող բանեկանական կապերը, համեմետիանոր սերն ու հարգանքը և իր տաքսիրու կյանքի ուսանելի հանապարհը ու խոտցող իմաստությունը բերին-հասցրին այն վիճակին, երբ նա պատկանում է արդեն բոլորին և բոլորը՝ իրեն: Ու ամենին համար թանկ է Ռուբենի կյանքը՝ նրա ազնիվ վաստակը և միշտ բանաստեղծական ուսմանուիկ բարեկամությունը:

1979

129

ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԽՈՍՔԸ

ՎԱՀՐԱՄ ՓԱՓԱԶՅԱՆ
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂԻ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՇՈՒՆՆԵՐ 2011ՆԵՐ¹

Իր կյանքի հիսուն տարին բոլորեց իմ բարեկամ Ռուբեն Զարյանը:

Երեկ, եթք դեռ նոր էի զարթենել կամ դեռևս չեի քննել... որովհետև ժամանակի ու ստվորույթի հետ չի կապված ինձանում նարդիկային այդ երևույթը,— մի հրավիրաստում պարզունակ մի ծրարի մեջ, ինձ հայտնեց այդ տոքը:

Զարմացած:

Չեի կարծում, ավելի շուրջ չեի հավաստում, թե անհանգիստ ու ծանրանոր, զվարթ ու թափծուտ, երբեմն մեղմ, երբեմն անհաշու, բայց միշտ միրակի բարեկամն կարող է իր նորքը ուտերի վրա աղքան տարիների ծանրություն վերցնել ու թաքցնել այդ բոլորի աշքից, նույնիսկ ինձնից:

Եվ գալիս այդ պատվի երեկոյին՝ համոզում էին ինձ, թե այդ չի կարող ինձել, որովհետև հորելյար պատկերացնում էի տարիքից հոգմած, գոնեւ հավոր պատշաճի քիչ կորաքամակ, անձպիս մի մարդ և անպայման երկար պորությով:

Նման մի փորձանք այս օրերս իմ գլխին էլ է պատրաստվում... Եվ որովհետև հակառակ իմ օրերի մեջ թվին ու բարեկամատարար անմորու կերպարանքին ինձ չեմ տեսնում հորելյարի ընդունված կերպարանքով, չեի ուզում և նման վիճակում տեսնել երիտասարդ բարեկամին՝ Ռուբենին, որի գործերին ծանոթ էի, ճիշտ է, բայց նրա օրերի գումարը չեի գուշակում:

Եվ ահա ի՞նչ անակնելիալ:

Սցրքան երիտասարդություն դեռևս չեին տեսել այդ պաշտոնական սրահի պատերը, որը բարեկամին տունը պես է կատարվեր: Եվ Ռուբենը, հակառակ իր հորելյարի հանգամանքին, երբեք այդքան երիտասարդ չէր եղել:

¹ Հոդվածը գրել է 1959-ին, բայց մնացել է անտիպ: Լուս է տեսել տաս տարի հետո, մեղմանակի մամվաճից մեկ տարի անց, Զարյանի ծննդյան 60-ամյակի առիջիվ («Սովորական գրականություն», 1969, № 12, էջ 145—146):

Ինչ չար հերցուրանք են այդ հիսուն տարիները, քանի որ հոգեխուզ
քննադատու,— որի տողերի մեջ ես ինք ինձ տեսա, — պատաճի հման նըս-
տել էր աթոռին, համակիր ժպիտով ու համբերությամբ լսելով գովարանո-
թյունների տարափը, որոնք դասավորեց ու հարդարեց մեր երանգարանա-
կի արքան՝ Մարտիրոս Սարյանը, ու հերոսաբար մարտիրոսացավ ամրող
երկու ժամ, գոնեւ այս անգամ առանց ճառախոսների անոնները շիտորելու:

Ծանոթ էի բարեկամիս գործերի որակին, հպատու նրա հարուստ ար-
տադրականությամբ, նրա մորթի լայնաշունչ խորությամբ, նրա մարգարտա-
հյուս լեզվով, վերջապես, բայց չգիտեի նրա գործերի քանակը ու ներշնչման
սահմանները:

Այդ ի ծնե քննադատի ոգին է, որ սկզբից եղել է և կա Ռուբենի մեջ,
որ շաղվել է նրա էությանը, որ նրա կոչումն է այսօր, ավելի քան կոչումը
նրա ամբողջական սիրելի անձը:

Մեծ ու թանկարժեք կարողություն է այս, և իգոր չեր, որ այդ երեկոյան
գորողների, Ակարիշների և ճարտարապետների կողքին մեծարանքի առաջին
ջութակը մեր թատրոնը եղավ ու թատրոնի մարդիկը: Որովհետև թատրոնի
մարդը, ինչ և ով էլ որ լինի, նա, զգում է, ովքենա այդ թե չուցենա, որ բարձ-
րողորս քննադատությունը ոչ միայն խարիսս է իր ատելագործության, այլև
որպես հայելի իր ինքնագիտակցության: Քննադատը դերակատարման հե-
ռուու ծովերու նավող դերասանի փարուն է, նրա վերլուծական պատսումնե-
րի ուսկ բանալին: Քննադատը ուղեցուց է թատրոնին ու առանցքը և իր
համայնքի ու ճաշակի արքիորը:

Եվ թեև շատ ընդարձակ է բազմաբեղուն ու բազմատեսակ բարեկամիս
արտադրանքի խոյանքը ու գործունեությունը խիստ բազմաշավիդ, կուգեի,
սակայն, որ Ռուբենը բյուրեղանար իր կոչման մեջ: Եվ այդ միայն նրա հա-
մար, որ գոնեւ ես, ավելի քան երեք, զգում եմ քննադատության արժեքը
և խորհուրդ կտայի արվեստակիցներին՝ զգալ այդ նույն չափով:

Եվ շնորհավորելով ոսկեգրիս բարեկամիս հիսուն տարիները, մսիթար-
վուն եմ մոտածելով, թե նման մարդկանց կյանքը չի չափվում ժամանակի
թափառություն, այլ նրանց գործերի թվով: Որովհետև ստեղծագործողի տարի-
ներն աշուններ չտնեն, և ծիծողուն գարունների մի ամբողջ շարան են մեր
քննադատի ամբողջ ճանապարհին, և կովենայի, որ նա չտեսներ հանգը-
լվանն այդ գարունների, չմուտասաշվեր նրանով, ինչպես ինքս չեմ մուծել
այդ մասին իմ օրերի ընթացքին, ու ինքնախար համոզմամբ գնում եմ իմ
ճանապարհով, ջնջելով որևէ հավանական հանգրվանի գաղափարն անգամ
հիշողության տախտակներից:

ԲԱԶՄԱՀՄՈՒՏ ԹԱՏԵՐԱԳԵՏԸ

1960—1961 թթ. երկու հատորով լույս տեսավ տաղանդավոր և խորապես բազմահմտութափական նույնեն Զարյանի ֆունդամենտալ հետազոտությունը Պետրոս Ադամյանի կյանքի և առեղծագործության մասին։ Այդ աշխատության հեղինակի հավաքած հարուստ փաստական հյութը և նրա կողմից Ադամյանի առեղծագործության խորաթափանց վերլուծությունը նոր լույս են սփոռում շեքսպիրյան կերպարների ադամյանական մեկնարանության վրա։

ՀԱԴՐ ԳՈՒՂԻԱԾՎԻԼԻ
ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ

ՆԺԱՆԱԿԱԼԻՑ Է ՆՐԱ ՎԱՍՏԱԿԸ

Նույնեն Զարյանին ես գիտեմ վաղոց, գիտեմ իբրև գիտնականի, իբրև հայ քատորնի պատմությանը և տեսությանը նվիրված մի շարք գրքերի հեղինակի, իբրև մի մարդու, որն հակայական ներդրում ունի հասարակական գիտությունների բնագավառում։ Նշանակալից է նրա վաստակը թատերագիտական կադրերի պատրաստման գործում։ Երկար տարիներ նույնեն Զարյանը կապահած է Վրաստանի մտավորականության հետ, հաճախ է մեզ մոտ, զանազան կոնֆերանսներում և խորհրդակցություններում, հանդես գալիս թատերագիտության և արվեստագիտության հարցերին նվիրված երությունով։

1974

Թբիլիսի

ՀՐԱԶՅԱ ԴԱՓԼԱՆՅԱՆ
ՍՍՀՄ ժողովրդական արտիստ

ՄԱՅՐԵՒԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿԸ

Անհնար է առանց կրքոտ վերաբերմունքի խոսել մարդ և արվեստագիտ Ռուբեն Զարյանի մասին, որովհետև այն, ինչ արել և անում է նա՝ հարցստացնում է մեր ժողովրդի հոգևոր գանձարանը, բազմապատկում նրա նվաճութերը։ Ավելի քան կես դար նա հանդիսանում է մարտենի սշակույթի զարգացման առաջամարտիկը։ Գրչով ու գործով, անդով ու նվիրական աշխատանքով նա մեր սեփականությունն է դարձնում արվեստի գոհարաներ, ազատելով դրանք մոռացության փոշոց, հնարավորություն տալով հիանալու նրանց անկրկնելի գոյներով, ներքին թաքնված բովանդակությամբ։ Զարյան-արվեստագետի այս հատկության շնորհիվ էր, որ մենք հաղորդակից դարձանք մենք Պետրոս Սորմյանի հրաշունչ հոգու տվյալնանքներին, բնամարմատի սապարեզու ունեցած նրա սավանումներին։ Դա է պատճեռը, որ հիմա մեր ու համայն մարդկության հավերժական ուղեկիցներն են դարձել շերամիրյան նրա կերպարները՝ Համեստն ու Օթելլոն։ Ծնորհիվ նույնական մենք այդ կերպարները տեսանք ու զգացինք ֆիզիկապես գրեթե շոշափելի, ճաշակեցինք նրանցից ստացած գեղագիտական հաճույքի հոգեարար պահեր։

Լայն են Ռուբեն Զարյանի ստեղծագործական հետաքրքրությունների շրջանակները. գրականություն, թատերագիտություն, շեքսպիրագիտություն, արվեստաբանություն ընդհանրապես։ Նրա մարդկային, ստեղծագործական խառնվածքը չի սիրում անողոք։ Բուռն կրով ու եռամշով նա միսրճլում է հանրապետության մշակութային իրադարձությունների հորդանուի մեջ, զգալով նրա խրտացող տար շունչը, կանոնավորելով նրա թրոռուն զարկերակի տրոփունք։ Հայ շեքսպիրագիտությունը նրա եռամշուն շանքերի շնորհիվ լայն ճանաչում ձեռք բերեց մեր Միության սահմաններից դորս։ Այս գործում անգնահատելի դեր է խաղում Գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտին կից նրա շանքերով ստեղծված շեքսպիրագիտական հայկական կենտրոնը։

Չեմ կարող շիմեկ նրա ակտիվ վերաբերմունքը Երևանի դրամատիկ թատրոնի կազմակերպման առաջին օրերին և ընդհանրապես հետագա գործունեության ընթացքում։ Նոր թատրոնի ստեղծման փաստի առաջին խրախորդներից էր նա։ Այժմ էլ շարունակում է մնալ թատրոնի լավագույն բարեկամը, որ գիտի ոգևորվել նրա գեղարվեստական հվաճումներով և տըրումել անհաջողությամբ։

Ո. Զարյանը առաջինն էր մեզանուն, որ փայլուն կերպով գոգորողեց արվեստուն ո գիտությունը և տվեց դրա արտահայտություն հանդիսացող բազմաթիվ աշխատություններ։ Նրա գործերում զգացվում է կրակու ու միշտ անհանգիստ արվեստագետի ներկայացրունքը, որն ընթերցողին առաջնորդում է գեղարվեստական անակնելիալների նորանոր ուղիներով։

Ծանրակշիռ ավանդ ունի Ռ. Զարյանը նաև գիտա-մանկավարժության բնագավառում։ Նրա սաներից շատերն այսօր արվեստագիտության ասպարեզում ճանաչված դեմքեր են և մեծ դեր են խաղում ստեղծուահայ թատերագիտության զարգացման գործում։ Նրանց կողմելու շանքերի շնորհիվ է, որ մինչև օրս հմտությունը դեմքաված գիտնականն ու մանկավարժը, ստեղծեց «Հայ ստեղծուական թատրոնի պատմություն» ծավալուն հասողավագը, որ ամփոփված են մայրենի թատրոնի շուրջ 40-ամյա հիմքում հնարինությունը։ Այսպես, ինչ գրվել և գրվում է արվեստի ինստիտուտի կատարկան աշխատողների կողմից, և ոչ միայն արվեստի ինստիտուտի, կատարկան գումարում է Ռ. Զարյանի անմիջական դեմքավարությամբ ու գիտությամբ։ Նա զարմանալի կերպով գիտի ուղղություն տալ իր ասելերին, ցույց տալով այն արգասաբեր ճանապարհը, որ նրանք կարող են առավել արդյունավետ կերպով դրսևորել իրենց գիտական կարողությունները։ Եվ երբեք, մինչև հիմա, չի սխալվել իր կուսումներում։

Հաստիսպես ոգում են նշել նրա ակտիվ հասարակական գործունեությունը

թյունը, մասնավորապես հայկական թատերական ընկերությունում, որի հախագահության անդամն է երկար տարիներ ի վեր: Ինչ հարց էլ որ քննարկ-վի նախագահության նիստերին, նա հանդես է բերում կրբու վերաբերմունք արծարծվող խնդրի նկատմամբ և իր նեղինակավոր ու ծանրակշիռ խոսքով ցույց տալիս դրա ամենաշնորհների լուծումը: Ռ. Զարյանը թատերական ընկերության ատեղծագործական աշխատանքների ակտիվ մասնակից է: Ներկայացումների քննարկումների ժամանակ նրա նկույզները, վերլուծական խոսքը բեմադրող-ուժիւրների համար հետագա աշխատանքի գործնական ուղեցուց են, լի դիպուկ ու խորիմաստ բնույագորումներով, քենարվեստի երևոյթները ժամանակին համընթաց քայլող արվեստագետի աշքերով մեկնաբանելու բազմաթիվ օրինակներով:

Հարուստ է Ռ. Զարյանի գրական-արվեստագիտական ժառանգությունը: Այն դեռևս ապատում է իր մեկնարանին, որ հնարավորություն կտա ընթերցողներին այլ աշքերով տեսնելու մեր թատրոնի անցյալն ու ներկան, ապրելու նրա պայծառ ապագայով:

Իսկ այժմ նա մեզ հետ է, մեր շարքերում և մեր այսօրվա ու վաղվա անեկիքներում մենք մշտապես զգում ենք նրա տաք շունչը, ոգևորվում նրա վարակիչ խոսքով, լցոլում մայրենի արվեստին բոլորանկեր ծառայելու բռնական ցանկությամբ:

ՕԼԳԱ. ԳՈՒԽԱԶՅԱՆ

ՀՍՍՀ ժողովրդական արտիստութիւն

Գ. Ն Ա Հ Տ Ո Ւ Մ Ե Մ

Թատերական քննադատներից հարգում ու գնահատում եմ Ռուբեն Զարյացին, ոչ թե նրա համար, որ իմ մասին շատ է գրել, գովերգել, ո՛չ, նրա համար, որ ստեղծել է Սիրանուշի կերպարը, այն մեծ ու անկրկնելի արտիստութու, որին չի տեսել:

«Հայաստանի աշխատավորութիւն», Երևան, 1968, № 2, էջ 10:

ՄԱՐԻԱՄ ԱՍԼԱՄՍՅԱԶՅԱՆ

Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ

ԻՆՉ ԼԱՎ. Է, ՌՈՒԲԵՆ, ՍԻՐԵԼԻՄ, ՈՐ ԴՈՒ ԿԱՍ

Խոյստայում, աշխանային մի երեկո, երբ ծովի հայելանման հարթությունը ձուլվել էր երկնքին, և հարավային արևի հրավառ գունդն էր միայն հայտնի դարձնում հորիզոնը, երբ վեհատարած անդրորսն էր իշխում օդում, թափուր լողափին տեսա միջահասակ, բարեկազմ, նրբին կիսադեմով մի մարդու, որ նատած էր վայելչագել կեցվածքով, գլուխը ես գցած և կկոցված աչքերով նայում էր մայր մոնող արևին. նրա դեմքին հազիվ նկատելի ժղովություն էր լսում:

Բնության հետ էր այդ մարդը, բնությանը ձուլված:

Ես համոզված էի, որ երաժիշտ է նա, ուստի հուշիկ անցա մոտով, որպեսզի չխախտեմ այդ դաշնությունը:

Հետո, երբ մեզ ծանոթացրին, իմացա, որ այդ մարդը գրականագետ և թատերագետ Ռուբեն Զարյան է:

Մարդիկ նման են գրքերն. կան գրքեր, որ ձեռքդ ես առնում, թերթում մի քանի էշ և մեռում ընդմիշտ: Բայց կան նաև գրքեր, որ կարդում ես հափշտակությամբ, առանց կորովելու, երբեմն վերընթեռնում ես մի քանի անգամ և ամեն անգամ մի տեսակ թախիծով բաժանվում:

Ուորեն Վարդովիչի հետ բարեկամանապոց հետո ես բազմից խոր հոգումով ու հափշտակությամբ լսել եմ նրա հետաքրքիր գրուցներն ու պատմությունները: Նրան կարելի է անվերջ լսել, քանզի նա օժտված է անսպառ գիտելիքներով և մարդկային թանձ հիմաքրով:

Ինձ միշտ զարմացրել են նրա դատողությունների իմաստուն խորությունը, խոհականությունն ու փիլիսոփայական մոտեցումը կյանքին ու Կենսական երևություններին: Նա հավերժ երիտասարդ է սփրանքաված կյանքին, մարդուն ու բնությանը: Նրան խորթ է անտաքրեռությունն: Ինչի մասին եւ խոսելիս լինի՝ խոսում է իրեն հասուկ կրօով, այրվելով ու արելով դիմացինեն: Ուստի միևնու վերջ նրան օտար կիհնի ծերությունը:

Ես հիշում եմ նրա հոյակապ եղուցները մեծ լսարանի առաջ, որ նրան ունկնդրում էին շունչները պահած: Կարդացել եմ նրա սրանչելի հոդվածները Շեքսպիրի, թատերական այլազայ թեմադրությունների, դերասանների մասին: Վերջերս մի առանձին հետաքրքրությամբ կարդացի նրա հուշերը Վահրամ Փափազյանի, Ավետիք Խասհակյանի և նայ մշակույթի ուրիշ ականավոր գործիչների մասին: Մեծ վարպետությամբ են գրված այդ հուշերը: Ընթերցողի հայացքի առջև հատնում են նշանավոր մարդկանց կենդանի կերպարները, այնպէս որ նրանց դիմանելարները կարելի է անել Ուորեն Զարյանի հուշերի հիման վրա:

Ես մեծ սիրով եմ մտաքերում մեր երկարատև գրուցները ծովափին, երեկոյան կամ վաղ առավոտյան: Ձե՞ս որ այնքան էլ հաճախ չես հանդիպում մեծատառով Մարդու: Խակ դա ինձ համար ամենամեծ պարզեն է կրաքրում:

Ինչ լավ է, Ուորեն, սիրելիս, որ դու կաս:

ՄՀԵՐ ԱԲԵՂՅԱՆ
ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ

ՈՒՐԱԽ ԵՄ, ՈՐ ՆԱ ԻՄ ԺԱՄՄԱՆԱԿԱԿԻՑՆ Է

Նրբ հարգում և պիրում ես ընկերոջ, քո Հայրենիքի մշակույցի տաղանդավոր գործին, որպահանում ես, որ նա քո ժամանակակիցն է, որ դու ապրում և ստեղծագործում ես հրա հետ: Նա դատնում է քո մտերիմք: Նրա արտաքինը նոյնագեն իր ամբողջությամբ՝ դեմքը, հասակը, քայլվածքը, շարժումները, ժախտն անգամ դատնում են քեզ հարազատ: Ոչ միայն հարազատ ու մտերիմ, այլև անկրկնելի, անփոխարինելի: Ազևս դու չես պատկերացնում քո շրջապատը, քո հարազատ քաղաքն ու հրա մտավոր կյանքը տանց հրա: Անենուրեք, լինի դա ժողովրդական տռն կամ հանդիսավոր պահ, դու հրա հետ ես:

Ահա այդպիսին է մեզ համար սիրելի Ռուբեն Զարյանը: Մենք միշտ զգում ենք մեր կողքին հրա ներկայությունը, որպահանում անկեղծ հրան տեսնելիս: Ծնորհակալություն հրան՝ իր ազնիվ ստեղծագործական գործունեության անցած քեղմնավոր տարիների համար: Թող միշտ որպահանք հանդիպելով հրան և հրա ստեղծագործություններին: Թող ելի շատ աղիթներ ունենանք սրտանց որպահանապու և շնորհավորեն հրան նորանոր ստեղծագործությունների աղջիվ:

1979

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՐՈԱՐՅԱՆ
ՀՍԽ ԺՊԴՎՐԴԱԿԱՆ ՇԼԱՐԻՀ, ՍՍՀՄ ԳԵՂԱՐՎԵԱՏԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԹՂԹԱԿԻՑ անդամ

ՈՍԿԵԲԵՐՍԱՆ ՌՈՒԲԵՆԸ

Օրերս հեռուստատեսային հաղորդում էր Անդրեադի ֆիլմարմոնիայի դահլիճից: Ելույթ էր ունենամ հանրահայտ գրականագետ և ասմոնքող՝ Դրակիլի Անդրոնիկովը: Թեևան էր Հոոմի օպերայի «Անդրե Շենք» Շերկայացումը:

...Հոեստրական ականոռ արժանիքը, ձայնի, առոգանության կախարդի ելևէջներ, դրամատիզմի և հումորի, երգի և եւլրոպական լեզուների փոխանցումներ...

Դահլիճը լեփ-լեցուն էր Անդրոնիկովի երկրապագուներով, իսկ բարձրահասակ, թիկնելու հոեստրը բեմում զգում էր ինչպես տանը, նա առուզ մասն էր գալիս բեմահարթակով, թէև խմում, բրբջում հանդիսատեսների հետ մեկտեղ և մերժնելություններու ընթատում խոսք՝ սպասելով ծափահարությունների ավարտմանը:

Գամկած կապտավլուն Էկրանին՝ ակամայից հիշեցի մի որիշ պատկեր, տարիներ առաջ վայելած բավականություն, բավարարություն, հաճուք:

Հայաստանի կոմպոնդստորների սուսը: Փոքրիկ մեղամբն ծվարած է ոչ խոշոր, ոչ թիկնելու, ոչ առուզ Ռուբեն Զարյանը... Նոր է վերադարձել Հունաստանից, տեսել է վերականգնված ամֆիթատրոններից մեկում անտիկ ողբերգությունն. Էլե՞րորա, Մեղե՞ա, Իֆիգե՞նյա: Չեմ հիշում, արդ չէ կարևոր: Կարևոր նրա պատմածն է, նկարագրածը:

Դահլիճում՝ աշխարհ շրջած, տեսած, լսած ու կարբացած արվեստագետներ, ահել ու ջանել կոմպոնդստորներ, դերասաններ, գրողներ, նկարիչներ: Նրանց զարմացնե՞լ: Հազիլ թէ: Հոոգե՞լ, ոգևորե՞լ, այ՞ն:

Ամենքին համակել է մի գգացում՝ երախտագիտություն։ ԶԵ՞ որ Ռուբենը գրավում է իր հոգում կուտակված գանձերով, վերապրում ու վերադարձնում այն ամենը, ինչ ստոցել է Հեղադաշտում։

Նա սուզվել է աստվածային ողբերգության ալիքներում, ընկրնվել է մինչև ականջները, միայն աչքերն են փայլվում և նվազ ճայնը ճարտար հայերենով պատկերում, կենդանագրում է դերասանութիւն խաղն ու Վերպահանդիսութենքը։

Դահլիճնում քար լուրջուն է։ Ո՞չ ծիծառ, ո՞չ ծափահարություններ։ Կարծես թե ողբերգության հերոսների հետ կաթարդիզ են ապրում բողոք՝ և ինքը՝ Զարյանը, և ունկնիդները։ Եվ, այսպէս, մի քանի ժամ...»

Ռուբերեան Ռուբեն...

Ո՞րն է նրա ոգևորության աղբյուրը, ուժը։ Սերը, այն մեծ սերը, որը տառենակ տարիներ կյանել է Ռուբեն Զարյանի կյանքը կախարդիչ թեամհարյակներով, պարուրել բանաստեղծության էջերով։ Հիրավի, առանց մեծ սիրությունից չեղանակ ու անձնուրաց Աղամբանին, ոչ վեհաշուր Սիրանուշին, ոչ հախուն Փափազյանին, ոչ անզուզական Հրաշյային, չեւ տեսնի Զարենցի մեծությունը, Աւելի հարստությունը, Ծերսպիրի անծայրածիրությունը։

Սերը, անձնուրաց սերը դեսի արվեստն ու արվեստագետները, սիրահարվածությունը։ Սա է Ռուբեն Զարյանի գործունեության ուղեցուցը, Եշանակը, արժանիքը։

... Չեմ հիշում ի՞նչ էր պատմում Ռուբենը այն անմոռաց երեկոյին, ի՞նչ մանրամասներ էր օրինակ թերու (ևս մանրամասների-դետալների վարպետ է), հիշում եմ միայն անշնչելի տպագործություն ունկնիդների սրտերում և շերմ գգացմունքներ, որոնք մինչև օրս կ կենդանի են իմ հոգում։

ԱՐՈՒՆ ԱՄՐՅԱՆ
ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի

ԻՄ ՎԱՂԵՄԻ ԲԱՐԵԿԱՄԸԸ

Ոուրեն Զարյանի մետ մեր բարեկամությունը ավելի քան կեստարյա վա-
ղեմություն ունի: Այսօրվա պես հիշում եմ մեր առաջին հանդիպումն ու ծա-
նոթությունը Թթիկսիի Հայարտանը, Հայ դրամայի փորձերի ժամանակ, ո-
րոնց, իբրև ստուդիայի ուսանող, մասնակցում էր պատաճի Ռուբենը: Այս
հաճելի տպավորությունը, որ նա թողել է ինձ վրա այդ ժամանակ, գնալով
ավելի է խորացել ու տարիների ընթացքում վերածվել նվիրական սիրո ու
գիտակցված հարգանքի այն խոչը վաստակի համար, որ նա անդուլ աշ-
խատահրությամբ ու համար հետևողականությամբ կուտակել է հայ թատ-
րոնի պատմության, նրա հայտնի գործիչների առեղծագործության ուսում-
նասիրության ասպարեզում:

Նա մեր այն նշանակոր թատերական քննադասու-
թերից է, որի գրավոր և բանավոր խոսքի հանդեպ դերասաններս ունենք
մեծ հսկան ու վատահություն, եթե նովնիսկ նրա կարծիքին համամիտ չենք:
Ամուսնու՝ Վարդան Անեմյանի մետ միասին Ռուբեն Զարյանին միշտ հա-
մարել ենք մեր ընտանիքի հարազարդ, այն ամենամոտիկ մարդկանցից, որի
մետ ունեցած մշտական շփումները ձեռք են բերել առանձնահատուկ ար-
ժեք ու նշանակություն:

Ես նրան շատ եմ սիրում իր պարզ ու շիտակ, մարդամուռ, լայնեղոքի, զգայուն, փափուկ բնավորության համար: Զնայած իմ ստեղծագործությամբ ես հատկապես չի գրաղվել, բայց զանազան առիթներով նրա հայտնած կարծիքներին միշտ վերաբերվել եմ հասով ուշադրությամբ: Ավելին. եղք ունեցել եմ իմ վիճակից դժգոհելով ներքին պատճառներ (ասենք՝ Անձմանցից կամ Գուլայանից ուզած դերերը չստանալու պատճառով), Զարյանի հետ եմ կիսել իմ մոքերն ու զգացումները, նրանցից եմ ստացել բաշալերող բարի խորհուրդներ:

Ես Ռուբեն Զարյանի բնադրասական հոդվածների և թատրոնագիտական աշխատությունների երկրպագուներից եմ: Ինձ վրա նրա շարադրանքի պատկերավոր ոճը առանձնապես ոժեղ տպավորություն է թողել «Հուշապատումուն», որի Էջերից հարություն են առնում, կենացանում, միևնու արյուն ստանում, օժնովով իրենց բնորոշ հերեանից մարդկային հատկանիշներով մեր ազգային հոգևոր մշակույթի շատ ու շատ մեծեր...

Ռուբեն Զարյանը մնամ է մեր բատրոնի ամենամիրած, անշահախնիքի բարեկամներից Յոյնիսկ այն դեպքերում, երբ նա դժգոհ է ու չբավարարված մեր աշխատանքից: Արվեստաբանական լայն գիտելիքները, գեղագիտական բարձր ճաշակը, հուեսորական խորի ներքին երկարյան տրամաբանությունը, Էմոցիոնալ համոզականության ուժը նրան դարձրել են մեր կուլտուրայի ականավոր դեմքերից, որին շատ բարձր են գնահատում և որի մկանմամբ իմ սրտում ունեմ մի խոր ու անսահման հավատ:

ՎԱՐԴԻՆԱԿ ՄԱՐԳՈՒԵՒԻ
ՀՍՍՀ ժողովրդական արտիստ

ՀՄՈՒՏ ՔՆՉԱՌԱԾԼ

Ուուրեն Զարյանի հետ մոտիկից ծանոթացա Դիլջանում, 1932-ին, երբ երկրուս էլ 23 տարեկան եխճը, բայց նա դեռ այն ժամանակ իր տարիքին անհամեմատ հասուն մտքի տեր էր և հարգանք ու վստահություն ներշնչով այնպիսի հմտութեադատի տպավորություն էր թողնում, որ թվում էր, թե տարիքով շատ ավելի մեծ է:

Ժամանակի ընթացքում գունե ինձ համար պարզ դարձավ, որ այդ առաջին տպավորությունը արդյունք էր ընտրած գործի հանդեպ ունեցած արտակարգ լուրջ և պատասխանատու այն վերաբերմունքի, որն ի հայտ եկաւ նրա առաջին իսկ կերպներում և անփոփոխ մնաց մինչև օրս: Հիմա արդեն են դա կարող եմ որամել իրեն քննադատի կուլտուրա, ասել է, թե նույնական արվեստագետ-քաղաքացու դիրքորոշում, որն սաս եռության ժխտում է անտարբերությունը, ասոն հայեցողությունը, անհաղորդ մասնակցությունը: Հազվագյուտ է այդպիսի թատերագետը, որին իրոք կարելի է թատրոնի մարդ կոչել, որը դեռասանի հետ բաժանի նրա որախությունն ու տիսրությունը, ընկալի նրա ձեռքբերումն ու վիճակում այնքան սրտացավ, որ, կարծես իրենը լինի: Ցավոք, ավելի տարածված է քննադատի այն տիպը, որ ձևացնում է այդ ամենը, ներքուստ մնալով սառն ու օտար: Սակայն այդ ձևացնը հնարավոր չէ բոլարկել ո՛չ հնարամիտ ու նորը ձևակերպումների փայլով, ո՛չ էլ նարտասանական և այսպես կոչված գիտական ապացույցների ուժով: Ինարկել թուղթն ավելի հանդործող է, պակաս անողոք, բան բեմը, և դիմանում է ամեն կարգի կեղծության, սակայն դժբախտաբար, վավերագիր դարձող այդ իրողությունը աղավաղում է թե՛ դերասանի, թե՛

թատրոնի ճշմարիտ նկարագիրը: Բայց այդպիսի քննադատը առաջին հերթին կրծանում է ինըն իրեն, իբրև ստեղծագործող մարդ:

Ռուբեն Զարյանի բազում երուցելում, մանուկում և բանավոր քննադատում հայտնած կարծիքներում և վերջապես հոդվածներում ու գրքերում մշտապես զգում են թատրոնի մարդում՝ կրքու և անաչառ, հոգական և ճշմարիտ խոր ասելու, ցատ էության գնահատելու նրա բացառիկ կարողությունը: Եվ որպիտան ճշմարիտ են նրա տված գնահատականները, ուստի հաճախ դառնում են նաև ճշմարիտ կանխագուշակումներ: Իր արտիստական խառնվածքի ներշնչանքով և անխաղ ինտուիցիայով նա կարողանում է որոշել, թե ինչ է և ինչ կարող է դառնալ արվեստի, գրականության և ընթականական մշակույթի մեջ հայտնված այս կամ այն իրողությունը:

Բոլորին հայտնի է Ռուբեն Զարյանի հետաքրքրությունների լավ շրջանակը, նրա գերգաբարձրագույքը, հասարակական և մշակութային մեծ ձեռնարկների մեջ նրա մշտական ու անփոխարինելի մասնակցությունը: Բայց այս ամենը նրան չեն կորում թատրոնից: Նա միշտ եղել և մնում է մեր թատրոնի գեղարվեստական խորհրդի ամենաակտիվ խորհրդատուն: Նրա ծանրակշիռ, նորք, երեմն դառն դիտողությունները միշտ ի շահ դերասանի են և թատրոնի: Իսկ դերասանները, որ սովորաբար անհավատ են քննադատության հանդես, վերաբերումներ, որ նոյնին քննավորություն է դարձել, իրենց կամքից անկախ ունենալիք են Զարյանի խորին, հաշվի են նաև առում նրա հետ, վարահում և հավատում են նրան: Ակամա այս հնագանդում գաղտնիքը Ռուբեն Զարյանի պրոֆեսիոնալ բարձր նրբաճաշակության և երիկայի մեջ է:

«Քո ներուներին պիտի սիրես, եթե այդպես չէ, ոչ մեկին խորհուրդ չեմ տա գրիշ վերցնել, շատ տիհան բան կստացին, այդպես էլ իմացեք»: Մ. Բովգակովի «Թատերական ոռմանում» ապլած այս ճշմարտությունը Ռուբեն Զարյանի համար եղել է և կա անվիճելի ու պարտադիր հանգանակը:

Զարյանի հերոսները մտացածին կերպարներ չեն, այլ իրական մարդիկ են, որ գործում են մեր կողքին, կուլտուրայի և արվեստի բնագավառում: Նոյնիսկ նրա ծանրակշիռ ուսումնասիրությունները՝ նվիրված Ծերապիրի հայ թարգմանիչներին, մեկնաբաններին և արտիստական մարմնավորություններին, ունեն անցյալի դասը ներկա և ապագա դարձնելու խորհուրդը: Այս իմաստով բոլորովին պատահական չէ, որ բազմահնուս արվեստագետն համաշխարհային մշակույթի գանձարանից իր գիտական հետաքրքրությունների համար հյութ է դարձել հավերժ կենդանի Ծերապիրին:

1979

145

ԲԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՍ ՌԻՂԵԿԻՑՆ ՈՒ ԽՈՐՃՐԴԱՏՈՒՆ

Ոռովեն Զարյանն ինձ համար հարազատ անուն է: Նա է եղել իմ բնական կյանքի մշտական ուղեկիցն ու խորհրդաստուն, երբեմն մոտ ու նեռու, երբեմն տեսանելի ու անտեսանելի, քայլ միշտ քայլ է իմ կողքին:

Երբ նոր դեր եմ խաղացել, առաջին հարցը, որ ծագել է իմ մորում և որից սիրու անհանգիստ անդմիւն է, եղել է այն, թե ինչ կասի Ռուրեն Զարյանը: Մեզ, դերասաններին համար, որն է գլխավորը, միայն քննադրատ, որի օգնությամբ առավել առուց գիտենանք մեր արածի արժեքը, թե մարդքնադրատ, երբ մարդկացին բարիությունը խանգարում է քննադրատին լինել անաշար ու ճշմարիտ: Ռուրեն Զարյանը թե մեկն է, թե մյուսը, որովհետու նև նրան հասկացել եմ նաև այն ժամանակ, երբ ժպտապով նայել է ինձ, լուս քայլ և իր այդ հայացքով ինչքան շատ բաև ասել...

Հիշում եմ իմ դերյուտային աշխատանքը Թատերական ինստիտուտում՝ Անանին «Եյ մեկ զոհում»: Ներկայացումից հետո Վարդան Անձնանը, որը մեր կուրսի դեկանալիքն էր, մոտեցավ ինձ: «Մետարս, գիտես, թեզ հավանեց Ռուրեն Զարյանը»: Ես հոգված հարցրեցի. «Ով է նա»: Անձնանը բազմանշանակալից և խորեքը շեշտելով պատասխանեց: «Ծառ խեղոր ու խառսապահանց քննադրատ է, նրա կարծիքը շատ կարող է»: Մոտեցա վարպայիրին և սկսեցի նրա մեղքից դահիճուն արդեն ցրվող համերիստների մեջ փետրել այն քննադրատին, որի կարծիքները, միսած այդ օրվանից, դարձան իմ ողջ ատեղճագործական կյանքի ուղեկիցները: Եվ ամեն անգամ, երբ ինձ դրվագանքի խորեք էր ասում, շատ ուշադիր հետևում էի նրա արտահատիչ ու խեղոր աշքերին, նրանցում փնտրելով այն, ինչ չի ասում... Այս, պատահում է և այնպես, որ չինելով անկանի ու սիրված դերասան, քննադրատը նրանից ոչ պակաս ճանաչում ու ժողովրդականությունն է վայելու քայլության և ժողովրդի լայն խավերի կողմից: Այդպիսի քննադրատ է Ռուրեն Զարյանը:

1979

ՎԱՐԴՈՒՀԻՆ ՎԱՐԴԵՐԵՍԱՅԱ
ՀՍՍՀ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԻՍՏՈՒԹԻ

ԽՈՐԱՄԻԾ ԹԱՏԵՐԱԳԵՏԸ

Գրել Ռուբեն Զարյանի մասին և հավակնել ապարիչ գնահատական տալ նրա գործին, շատ է դժվար, եթե չասեմ՝ անհնարին: Պատճառը գուցե այն է, որ խատերագետը այնքան շատ, և կարևորը՝ այնպես է գրել թատրոնի ու թատրոնի մարդկանց մասին, որ հազիվ թե դերասաններս, բոլոր միասին կարողանանք հասուցել նրան արժանի խոսք:

Ռուբեն Զարյանի կենսագրությունից հայտնի է, որ նա պատահելիան տարիներից հրապուրվել է թատրոնով, և կարծեմ, թեմ էլ է բարձրացել: Բնումում նրան տեսնողները ասում են, որ իբրև դերասան անփայլ է եղել: Ես թատերական հարցերում հավատում եմ իրեն՝ Զարյանին, իսկ նա հաստատում է, որ ինքը չի ծնված թեմի համար, ավելի սուոյգ՝ դերասանության համար: Հայտնի է, որ երբ թեմում երևում են ոչ կոչեցվածներ, դա իսկաման դժբախտություն է թատրոնի համար ու սրտամաշ տիպություն՝ հանդիսատնի: Բայց ահա այդ օրինաչափության եզակի բացառությունը՝ Զարյանի «անիմալլությունը» թատրոնի ու թատերական հասարակության երշանկությունն է ենել: Հազվադեպ է պատահում, որ թեմի գայթակղությանը ենթարկված մարդն առմիշտ իշեն թեմից: Ու Զարյանը ողջանորեն թողել է թեմին՝ առմիշտ թատրոնում մնալու համար, և նրա այդ ասպետական քայլի պատճառով թեմը համարյա ոչինչ չի կորցրել, իսկ նայ թատրոնը գտել է գերազանց, խորամիտ մի թատերագետի, որի գոյությունը մեզանում կենսական անհրաժեշտություն է եղել միշտ ու դեռ կիմնի:

Թատրոնի գաղափարով ներծծված թատերագետն է Ռուբեն Զարյանը բային բովանդակ իմաստով: Նա այնքան բան է արել թատրոնի համար, այնքան մեծ է փաստակը, որ իրական շահերի մեջ նմարել ու գնահատել կարելի է մեկ պարմանով միայն. գրել իրեն իսկ՝ Ու Զարյանի գրչով... եթե հնարավոր լիներ:

1979

ԱՐԱ ԲԵՔԱՐՅԱՆ
ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ

Մեր ազգային մշակույթում նշանակալից դեր կատարած արվեստաբան Աերից է Ռուբեն Զարյանը: Հակառակ այն բանի, որ նա բոլորեւ է իր իմաստավորված կյանքի 70 տարին, աշխատում է պատանուն հասուլ ովարությամբ և նախանձելի եռանդով: Ես իմ պարտքն եմ համարում հարգանքի և երախտագիտության արժանին հասուցելու Զարյանին այն բեղմնավոր գործունեության համար, որ ունեցել է և այժմ էլ ունի թատերագիտության և հայ ազգային արվեստագիտության զարգացման գործում:

Նրա գրիչը, նույնիսկ իր սկզբնական շրջանում, ուներ բոլոր հշանեները ապագա փոյլի և պայծառության: Այն երևում էր նենց սկզբից: Պետքիրատում, երբ նա գլխավոր գեղարվեստական խմբագրի դերն էր ստանձնել: Այդ երևում էր և նետագայում, երբ սկսեց դասավանդել Թատերական ինստիտուտում, որի առաջատար դասախոսը դառնալով՝ փոխանցեց ամբարած փորձը երիտասարդ արվեստագետներին:

Ռուբեն Զարյանի մենագրական աշխատությունները Սովորմանի, Սիրանուշի, Վահրամ Փափազյանի մասին և, վերջապես, Շերսափրական տարեգործի շարքը տարածել են նրա անոնք որպես ստեղծագործողի և գիտնականի ոչ միայն մինչև մեր Միության սահմանները, այլև նրանից շատ ու շատ հեռո՞ւ Ամերիկա, Գերմանիա, Անգլիա և այլուր:

Սխալված չեմ իմն, եթե ասեմ, որ նա ստեղծագործական գործունեության նենց սկզբից իր խառնվածքին հասուլ եռանդով արտահայտել է մեծ հրճվանքի զգացողություն հանդեպ նկարչությունը, քանդակագործությունը: Ես գիտեմ, որ նա մեր արվեստի հետ կապված է հոգու բոլոր թեկերիվ: Ոչ

միայն նրա համար, որ դեկտավարում է Ավաղեմիայի արվեստի ինստիտուտը, այլև նրա համար, որ չի պատկերացնում իր կյանքը առանց պատկերների, առանց գույների, առանց նորի զգացողության արվեստի մեջ:

Ոորբեն Զարյանի կյանքի այս հշանակավից պահին, եթք նա արվեստաբանության ասպարեզում արդեն մեծ համբավ է վաստակել, համոզված էն, որ պիտի գտնի իր մեջ դեռ երկար տարիների անհրաժեշտ կրորվ ու նուան՝ երիտասարդական թափով շարունակելու ատեղծագործական այն գեղեցիկ աշխատանքը, որը նոյն է և մնում է նրա կյանքի գործը:

1979

ԽՈՐԵՆ ՍԲՐԱՀԱՄՅԱՆ ՍՍՀՄ ժողովրական արտիստ

ԻՄ ԽԻՍՏ ՈՒ ՊԱՀԱՆՁԿՈԾ ՈՒՍՈՒՑԻՉԻ ՀԸՆ

Իբրև մարդ, իբրև արվեստագետ ձեռավորվելուս ժամանակ, սկսած ուսանողական տարիներից, խոշոր ազդեցություն են կրել Ռուբեն Զարյանից: Մեծ սերը դեպի թատրոնը, ահազին գիտելիքները, անձնական հնայքը, զարմանալի կարողությունը, շնայած տարիների տարրերությանը, մեզ հետ ատեղծերու անկաշկան, համարա ծնկեր-տղացական ազատ փոխհարաբերություններ, երբեք չգիշելով խիստ ու պահանջկոտ ուսուցի դիրքերը, — այսպիսին է տպավորվել Ռուբեն Զարյանը իմ մեջ:

Միշտ զայտնի հույս եմ փայտայել, թե երբեմ, գունե թատրոնի վերաբերյալ, այնքան գիտելիքներ կունենամ, որ կիսարդանամ այս կամ այն հարցի շորջը վեճ փարել իմ պատկանելի ուսուցչի Ռուբեն Զարյանի հետ: Սակայն ստացվել է այսպես. եթե ես ինչ-որ գիտելիքներ կամ փորձ եմ ձեռք բերել, ապա Ռուբեն Զարյանը շատ ավելի մեծաքայլ է առաջ գնացել, միշտ էլ զարմացներով իր աշխատելու հնկացական կարողությամբ, որևէ, ամենաքիչը, զարմանալի է այդ տարիքում և գիտելիքների այդ պաշարով: (Չի կանգնում, գոնե մի պահ, որ մարդ հասնի):

Թատերական ինստիտուտի նրա դասերում, միտումնավոր չեմ օգտա-

գործում դասախոսություն կամ լեկցիա բառը, մեծ տեղ էր գրավում, ահա-
գին տեղ, Վահրամ Փափազյանը, ոչ մի բանի հետ, ոչ մի մեծության հետ
շխամեմատվող մեծություն: Եվ եթե իմ մեջ կա մի երկրողած, մի անհասկա-
նալի, մի սուրբ, մի հարատև սեր դեպի այն, ինչ կոչվում է Շեքսպիր՝ դրա
համար պարտական եմ Ռուբեն Զարյանին:

1979

ԶԱՎԵՆ ՏԱՏԻՆՑՑԱՆ ՀՍՍՀ ժողովրդական արտիստ

ՀԱՎԱՏԱՑԻ ՆՐԱՆ ՈՂՋ ԿՅԱՆՔԻՍ ՀԱՄԱՐ

Ես եղել եմ Ռուբեն Զարյանի ուսանողը, իսկ լինել այդպիսին՝ մեծա-
գույն երջանկություն է: Որքան ինքնամոռաց ժամեր է նա պարզմել մեզ:
Հայ թատրոնի այն տարիներին դեռևս չգրված պատմությունը կենդանանում
էր մեր աչքի առաջ, շունչ ու հոգի առևտուն, մեկը մյուսի ետևից մեր առաջ
էին հատեռում հայ բեմարվեստի տիտանները՝ իրենց կերպավորված հերոս-
ների հետ միասին: Զարյանը նրանց ներկայացնում էր մի առանձին խան-
դադաստանքով ու սրբությամբ: Դրանք ոչ թե դասախոսություններ էին, այլ
իսկական պոեզիայի երեկոներ...

Մեր կրանքում գալիս է մի ժամանակաշրջան, երբ տարիքային տար-
բերությունը կարծեալ վերանում է և մենք դառնում ենք կոլեգաներ, համա-
խոհներ, մտերիմներ: Այդպիսին դարձավ Ռուբեն Զարյանն իմ և մեր՝ Պա-
տանի հանդիսատեսի թատրոնի համար երկար տարիներ: Միիրեն՝ նրան չենք
դիմել մեր թատրոնի հետ առնչված ստեղծագործական կնճոտ հարցերը
լուծելիս: Միիրեն՝ մեզ համար տոն չի եղել Զարյանի յորաքանչյուր այցը
թատրոն, նրա յորաքանչյուր նոր գիրքը, նոր նոդվածը, ելույթը, հեռախո-
սային զանգը, նաևնակը...

Հիշում եմ քառորդ դարի վաղեմություն ունեցող այսպիսի մի դեպք:
Հայֆիլհարմոնիայի փոքր դահլիճի առջև երիտասարդություն էր հավաքվել:
Մոտեցաւ խառնված բազմությանը: Պարզվեց, որ գրողների ինչ-որ հավա-
քույթ է: Կողքին կանգնած մի աղջկկ հեծկլտաց: «Մենենմ էլ, ներս պիտի
մտնեմ, այս Ռուբեն Զարյանն է խոտում»: Այդ աղջկան «մահից» փրկելու
համար գործի դրի բազուկներս և մի բանի բայց հետո դուրս մնացածների
խումբը արդեն դահլիճում էր:

Սմբիոնի մոտ կանգնած էր միջահասակ մի երիտասարդ՝ մարդ՝ սև, փառահեղ մազերով։ Սրահում մթնոլորտը էլեկտրականացած էր։ Զարյանի աչքերը ցատումից այլում էին, ձայնը հնչում էր հաստատ, ինքնավատան, անողոք... Նա խոտմ էր Սունդուկյանի անվան թատրոնի «Փորձադաշտ» ներկայացման մասին, պաշտպանում ուժինոր Վ. Անեմյանին և պիեսի հետին Նաիրի Զարյանին չգիտեմ ում հարձակումից։

Ես «Փորձադաշտը» չեի տեսել, բայց այնպէս տարվեցի Ռուբեն Զարյանի հնայքով, նրա տրամարանությամբ, նրա հուսոտրական ձիրքն այնպէս համակեց ու գերեց ինձ, որ ես հավատացի նրան, հավատացի ընդմիշտ, հավատացի ամբողջ կյանքի հնամար։

Իսկ մի՞շե սա չէ արվեստաբանի ամենախոշոր արժանիքը, նրա՝ ունկընդիրի վրա թողած ազդեցության ուժի գաղտնիքը։

ԵՐՎԱՆԴ ՂԱԶԱՆՉՅԱՆ
ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ

ԱԶԳԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱՀԱՊԵՏԸ

Այս տարի լրացավ քառանինգ տարի այն օրվանից, ինչ մեր մերունդը, հիմա արդեն այսպէս կոչված միջին մերունդը, պատիվ է ունեցել Թատերական ինստիտուտում ուսանելու, ճանաչելու, սիրելու ու հարգելու, բազում անգամներ իր առեղծագործական հաջողությունների և, որ անխուսափելի է, նաև պարտությունների ժամանակ հիշելու իր վարպետներից շատերին՝ նրանց հետ միասին մտքում վերլուծելով իրեն մտահոգող բազմաթիվ խընդիրներ: Շատերի մեջ առաջին շարքում վստահորեն եղել ու մնում է Ռուբեն Զարյան ազգանունը: Եվ ահա այս դաժան հորելլանները հնարավորությունն են տափի բարձրաձայն ասելու նրան մեր սրտի խոսքը:

Թող թույլ տրվի հայունել մեր տարակուսանքը կասկածելի 70 թվանշանի կապակցությամբ, որովհետև այս երկար ու ձիգ տարիների ընթացքում նա կարողացել է պահպանել պրոֆեսիոնալ սպորտամենին հասուլ թերթ քայլվածք, ամեն ինչ նկատող սուր հայացք, մորքի զարմանալի շամելություն: Եվ եթե այս ամենի մեջ կարողանալինք լուծել նաև մազերի գույնի խնդիրը՝ 70-ամյակի մասին լսել անգամ չէինք ուզենա:

Հիմա ես փորձում եմ տասնամյակներ հնանելով մեր կյանքից նու գնալ այն երանելի տարիներ և փորձել հիշել մեր կորսը՝ Նորայր Սարգսյան, Արծրուն Մանուկյան, Կըրար Ղարագյան, Գուծ Մանուկյան, Ներսես Հովհաննիսյան, Օթար Տեր-Հովհաննիսյան, Ալեքսանդր Քոչարյան, Գալյա Նովյանց, Հենրիկ Հովհաննիսյան, Արմեն Զիգարիսանյան և որիշներ: Բողորդանիստիր, ներկա են: Եվ ակավում եք հերթական դասը, ներթական հուզմունքը, ներթական տոնախմբությունը: Դասախուտթան բովանդակության և ձևի այնպիսի մի համադրություն, որ ափսոսում եիր այնքան քիչ և կար-

Հանդիպումների համար: Ոուրեն Զարյանը մեզ սովորեցրեց շատ բան: Բայց մի գաղտնիք, այնուամենայնիվ, մնաց առ այսօր:

Մեր բազմաթիվ տար զրոյցներից մեկի ժամանակ խոսք բացվեց երազների մասին: Մեր աղջիկներից մի քանիսը նախորդ օրը երազում տեսել էին, որ բռչում են: Այն ժամանակ մեր աղջիկները երազներ շատ էին տեսնում: Դասի ժամանակ, պարզ է, դիմեցին Զարյանին, չոգեց պատասխանել, բազմանշանակ ժամանակ և ասաց, որ երրորդ կորուսում կպատասխանի: (Այն ժամանակ մենք երրորդ կորուս էինք): Հասկանալի է, որ երրորդում էլ խոստացավ՝ չորրորդում բացարել, հետո՝ ավարտելոց հետո և այդպես էլ չափազեցինք մեկնաբանության նրա գաղտնիքը: Հիմա արդեն մենք չենք շտապում և չենք ստիպում նրան՝ այսօր բացել գաղտնիքը: Այսքան սպասել ենք, մի երեսուն տարի էլ կդիմանանանք:

Մեր ինստիտուտը ամենահայոյ էր, որովհետև նրա միջանցքներում քայլում էին Լևոն Քալանջյանը ու Արմեն Գուլակյանը, Վալիկ Վարդանյանը ու Արա Սարգսյանը, Վաղարշ Վաղարշյանը ու Վարդան Առեմյանը: Եվ հիմա էլ մենք որպա՞ս ենք ու հսկարտ, որ մեզ հետ էր և է ու կիմի այն խկական հզորներից մեկը՝ մեր ազգային մշակույթի նահապետը՝ Ոուրեն Զարյանը:

1979

ՌԱՖԱՅԵԼ ԶՐԲԱՇՅԱՆ

Գեղարվեստա-թատերական ինստիտուտի դոցենտ

ՀԱԶՎԱԳՅՈՒՏ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

Ոուրեն Զարյանը Գեղարվեստա-թատերական ինստիտուտի այն հազվագյուտ մանկավարժներից է, որի դասախոսություններին ուսանողները գնում են հաճույքով, ստանց մեզանում հաճախ կիրապվող կազմակերպչական միջոցառությունների: Անս այն պարագան, որը նրա երեկով և այսօրվա սաների երախտապարտ սրտերում միշտ վառ է պահում ջերմացնող բոցը և ուսուցչի անձը բարորում սիրով ու անմեացորդ նվիրվածությամբ: Եվ աս

պատահական չէ: Խնադանուսում են բազմից բարձրացրել եմ այն հարցը, որ տեսական առարկաները ամեն ֆակուլտետում պետք է ավանդվեն յուրմի՝ ջամապու նպաստել ապագա դերասանի կամ ուժիւրդի մասնագիտական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը: Համաձայնվում, բայց չեն կատարում: Խնադանով, որ Ռուբեն Զարյանը հայ թատրոնի պատմությունը պահպան է միայն «դերասաններին», խնդրեցի համաձայնվել նոյն առարկան կարդալ նաև իմ դեկավարած ուժիւրդական ուսումնավորմբում: Մերժեց, ասելով, որ ինքը առարկան պատրաստել է միայն «դերասանների» համար, իսկ «ուժիւրդական» կարդալը կապահանջի հյուրի համապատասխան վերամշակում: Սա այն մերժումն էր, որը հարստացնում է մարդուն: Ուր է, թե մյուսներն ել այսպես մտածեին:

Կան մարդիկ, որոնք քաղում են ծամանակի հետ համաքայլ, կանխատեսնում նրա պահանջները, նրան ընդուած գնում և իրենց խորությամբ, արվեստով ու գիտությամբ գեղեցկացնում կրանքը, ծողովորդը, քաղաքը, որոնք ուսուցիչ են նենց նրա համար, որ գոյություն ունեն, նրա համար, որ աճող երիտասարդությունը ձգում է հսմանվել նրանց: Զարգացման ամենագոր խթանը աս է: Եվ ամենակարող ուսուցիչն այն է, որի լսարանը անհրեարին է սահմանափակել չորս պատով: Զարյան այս կարգի ուսուցիչ է: Բավական է միշել այն բանավեճը, որ մեր երիտասարդ տարիներին տեղի ունեցավ նրան և Վաղարշ Վաղարշյանի միջև Համբետի կերպարի մեկնաբանության շորջը: Մեզ համար դա ոչ միայն ինքնաշխատության խթան էր, այլև մոռավոր զարգացման, գիտական մակարդակի ու արվեստագետ-մարդու նրբագեղ տակուի չափանիշը:

Մեզանից ամեն որ այսօր տեսնելով ուսանողության անհուն սերն ու համայնքանը Ռուբեն Զարյանի նկատմամբ, նորից ու նորից գալիս է այն եզրակացության, որ երիտասարդության համակողմանի դաստիարակության ամենազորելի միջոցն այն է, եթե շատ են այնպիսի դասախոսները, որոնց նա կարող է հմանվել: Այ թե կգեղեցկանար ու կհարստանար կրանքն ել, ինստիտուտն էլ, երիտասարդությունն ել:

ԳԵՐՈԳԻ ՏԻԳՐԱՆՈՎ
Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ԽՆՔՆԱՏԻԴ ՄՏԱԾՈՂ ԱՐՎԵՍՏԱԲԱՆԸ

Ավելի քան 30 տարի է ճանաչում և Ռուբեն Զարյանին: Ավելի քան 30 տարի հրա հետ շփվելը ինձ պատճառում է հներական ուրախություն: Նրա աշճն ինձ միշտ գրավել է ու գրավում է բազմաթիվ այնպիսի հրաշալի հաստկանիշներով, որոնք այնքան շատ անհրաժեշտ են մարդուն, գիտնականին, արվեստագետին: Գիտնականի սուր ինտելեկտը, գեղագիտական նորր ճաշակը, լայն աշխարհայացքը հրանում զուգակցվում են դեկավարի և կագ-մակերպիչի տաղանդի հետ:

Անահինան սիրահարված լինելով թատրոնին, Ռուբեն Զարյանն այն հետ- տազուտում է ինչպես կյանքի, այնպես էլ արվեստի մյուս բնագավառների՝ երաժշտության, կերպարվեստի, պոեզիայի, ճարտարապետության, ճան հու- մանիտար գիտությունների՝ պատմության, փիլիսոփայության, տցիոլոգիա- յի, հոգեբանության հետ լայն առնությունների դրույներում:

Ռուբեննափրեկով թատերական կյանքը, Ռուբեն Զարյանը կարողանում է տեսնել երևույթների և պրոցեսների ինկարան եղությունը, հրանց սոցիա- լական ու գաղափարա-գեղարվեստական նշանակալիությունը: Ահա յեն ին- չու հրա աշխատությունները ստիպում են մտածել մեզ, մեալ գամլած հրա- տապ պրոբլեմների լայն շրջանակում:

Ինքնատիպ մտածող գիտնական, հրապարակախոս, թատերագետ ու թատերական քննադատ, հուսորական արվեստին փայլուն կերպով սիրա- պետող դասախոս, անխոնչ հասարակական գործիչ և կազմակերպիչ, — ա- հան ինչպիսին գիտեմ և սիրում եմ Ռուբեն Զարյանին:

1979

ՀԵՆՐԻԿ ՄԱԼՅԱՆ

ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր

«ՄԻԱՅՆ ՄԻ ԴԱՍՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ»

1942 թև 1943 թվականի մի ցուրտ հոկտեմբեր էր: Լսել էինք, որ Երեւանից մի քննադատ է եկել Թբիլիսի և Վրաստանի գրողների տանը դասախոսություն է կարդալու:

Այն օրերին ինձ համար Երևանը մի անհասանելի երազանք էր, սրբավայրի հմանվող մի քանի: Այն օրերին...

Մենք մի խումբ երիտասարդացող հայ պատահներ, ոչ այնքան զուգաված ու զարդարված, որքան ձգված ու սարսափած, Թբիլիսիի Սոլոլակ կոչվող արհստոկրատական թաղամասում, որոնում էինք Վրաստանի գրողների տան շենքը, հայաստանցի մի քննադատի լսելու սպասումով:

Հսկիչի շեղ հայացք...

Մարմարասաս սրահու շարժվող-շշարժվող թաց կոշիկներ...

Մի քանի հանրածանոթ վրացի գրող-քննադատների ծպտուն, փայլուն դեմքեր...

Մի քանի անծանոթ հայ գրողների հիմքը, անառողջ դեմքեր...

Եվ ծայրենայր լցված մի հանդիսասրան...

Իսկ ամրիոնի մոտ մի լորչ, խորոն, իմաստուն, գեղեցիկ, ներշնչված, քուրմ, Քրիստո, մարտիկ, հայ քննադատ՝ Ռուբեն Զարյան:

Ես այն օրերին ամեն ինչ տեսնելու շնորհի ունեի... Եվ տեսա, որ դանիմիմի օդը մագնիսացավ: Ես տեսա, ինչպես հառակ, մատաղյա, հայերեն, հայկական բառերը, հագեցած ազնիվ, ճշմարիտ, վսեմ, իմաստուն բոլանդակությանը, զարկվում էին երես առած, շրեղ մարմարյա պատերին, զարկվում էին և, ազնիվ խոր, լուս էին առկացնում...

Մենք անխոս վերադառնում էինք մեր տները:

Մեր ներսում ճշում էր ամեն բան... Ծշում էր հաղթանակած, մոլեգին, երջանիկ... Մենք հպարտ էինք, գուցե իսկապես հպարտ էինք առաջին անգամ մեր կյանքում...

Ես այդ օրը հնակացա, թե ինչ է իսկական գրականությունը...

Ես այդ օրը հնակացա, թե ինչ է իսկական խատրոնը...

Ես այդ օրը հնակացա, թե որն է իսկապես մեծը...

Եվ այդ օրը հնակացա, որ հայ լինելը դա լուրջ, չափազանց լուրջ բան է...

1979

ԷՌԳԱՐ ԷԼԲԱԿՅԱՆ ՀՍՍՀ ժողովրդական արտիստ

ԵՐԶԱՆԻԿ ՈՒ ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ԵՄ, ՈՐ ՇՓՎԵԼ ԵՄ ՆՐԱ ՀԵՏ

Դեռ մանկուց, երբ հայրս՝ Գևորգ Էլբակյանը Ախալքալակի տեխնիկումի դիրեկտորն էր, իսկ Ռուբեն Զարյանը՝ հայոց լեզվի և գրականության դպասուու, սովորի պես պոտվում էինք շուրջը:

Գուցե, դա գալիս էր նրանից, որ միջամասակ, թխատեմ, քախծոտ հայացքով, լիրիկական կեցվածքով երիտասարդը, հմայել էր բոլորին... Ծնողներս՝ հագիկ մեկ տասնամյակով մեծ նրանից, սիրով ու շերմուրյամբ էին շրջապատել նրան:

Թրիլիսիի մանկավարժական տեխնիկումը նոր ավարտած, դեռ կյանք չմտած, գործողվել էր Ախալքալակ, կապվել մերոնց հետ: Ու համարյա օր չկար, որ միասին շլինեինք:

Հիշում եմ ծննդերին ու Ռուբեն Զարյանի գրուցներն ու վեճերը արվեստի, գրականության, խատրոնի, կյանքի շորք: Եվ այդ խոսակցությաներից մետք հայրիկիս հիացական խոսքը.

— Նա մեր ժամանակների Բելինսկին կրառնա:

Մենք հավատում ենք նայրիկին...

Սևան տարիներ: Վերադարձանք Թբիլիսի: Ռուբեն Զարյանը գնաց Երևան՝ ուսումը շարունակելու: Հետևում էնքն երա ամեն քայլին, անհամ-թեր սպասում համակեներին: Մեր կապը Հայաստանի, հայ կողսուրայի գործիչների հետ՝ այդ համակեներն ենք, բացիկներ, որ մի քանի տողում ավելի շատ բան եր ասվում, բան ընդարձակ համակեներում: Դրանք Սարյանի, Կո-ջոյանի, Աղաջանյանի և մյուս միարիների վերտապոթումներն ենք: Մենք նրկար տարիներ պատել էնքն մեզ համար թանկ այդ համակեները, որ մի գեղեցիկ կյանքի պատություն էր:

Իսկ ինչպիսի՞ ցնծություն էր մեզ համար Ռուբեն Զարյանի այցելություն-ները Թբիլիսի:

Պատմեմ մի միջադեռ իմ կյանքից: Փողոցում խաղում էի, ասացին, որ «Ռուբեն դադյան» եկել է: Գյուսապատու, գծի պես, վազելով, մտա բակ: Բակում մեծ փոս էր փորված, սուսն առջև հայելու ընկա փոսն ու գրիսս կոտրեցին... Բոլորի ուրախությունը տիրության վերածվեց: Իսկ ես ուրախ էի: Զեայած գրիսս շարդիկ էր ու աշք փակվել, բայց ես երշանիկ էի, օրվա հերոսն էի...

Ուրախություն էր Ռուբեն Զարյանի Թբիլիսի գալը ոչ միայն մեզ, այլև մեր դասղեներների, հայ երիտասարդության ու ինտելեկտուալիստ համար: Սննհամբերությամբ էնքն սպասում երա դասախություններին ու գեկու-ցուններին, որոնք 40-ական թվականներին կարդում էր Գրողների միության լեփ-լեցուն դարիհնու: Այդ տարիներին եմ լսել Փափազյանի Օթելոյի, Հո-վաննես Ծիրազի, հայ մշակույժի նորությունների մասին: Այդ գեկուցումները մեծ դեր խաղացին իմ կյանքում: Եվ ո՞չ միայն իմ, այլև բոլորի:

Մենք ճգուտ էնքն հմանվել Ռուբեն Զարյանին:

Ավարտեցի դպրոցը: Եկա Երևան: Կատարվեց իղձս: Ընդունվեցի Թա-տերական ինստիտուտ: Եվ ի՞նչ, իմ դասախուսն է ևս... Կարդում է հայ թատրոնի պատություն: Ի՞նչ եմ անելու, ինչպէս պետք է պատասխանեմ... մեծ դեր խաղացին իմ կյանքում: Եվ ո՞չ միայն իմ, այլև բոլորի:

Այդ առարկան հատկապես էի պարապում, բայց պատասխանելիս ինձ կորցնում էի... Երևի ինքն էլ չէր նկատում այդ:

Հիմա էլ հախանձով եմ նայում այն տղաներին, որոնք երբեմ լինելով Զարյանի ուսանողը՝ այժմ խոսում են հետու, ինչպես հավասար-հավասարի:

Շատ անգամ եմ ինձ հարց տվել. ես երբեն կկարողանա՞մ...

ՀԵ՛, չեմ կարող... Ու չկարողացա... Քանի՛ անգամ եմ փորձել ինձ հոգող հարցերի մասին կիսվել հետու, խորհրդակցել, բայց իզոր, այդպես էլ չի առացվում: Այդ ակնածանքը շարունակվում է...

Հիացումն այնքան էր մեծ, որ տարիներ հետո, երբ ինձ բախտ վիճակ-վեց խաղալ լիրիկական ու ռոմանտիկ Լևոնի դերը Ծիրվանզադեի «Արտիստում», իմ առջև կանգնեց երիտասարդ տարիների Ռուբեն Զարյանը: Նա է եղել իմ Լևոնի նախատիպը:

Գովեստների մեջ ծլատ էր: Ինձ երբեք երես չէր տալիս: Արտիստն է չհավանեց: Ու մի անգամ էլ, դա Գոգոյի «Ռևիզորում» Խլեստակովի դերակատարումից հետո էր, քենարկման ժամանակ, գովեց, կանգ առավ հատկապես իմ Խլեստակովի թերթության ու պլաստիկայի վրա. «Կարծես օրու քայլի...»: Արտից խոսեց: Ես այդպես էլ մտածել էի. փշոց է ուրքից գոյնս, տին:

Հետագայում էլ խոսել է մյուս դերակատարումներին մասին, բայց Խլեստակովն առաջինն էր...

Այնպես ստացվեց, որ ես, եղբայր և քոյս մնացիմք մենակ... Այստեղ արդեն կարծես կամքը կրկնվեց: Նելլին՝ Ռուբեն Զարյանի տիկինն ու ինը մեզ պարուրեցին հոգաստարությամբ ու ուշադրությամբ, ինչպես մերնք տարիներ առաջ: Կորսի տղաներով հավաքվում էինք հրանց տաեր և ժամերով լսում Զարյանի բովանդակապից ու հումորով լի զրոյցները: Մեզ համար երազ էր լինել հրա կողքին, խոսել, լսել հրան: Մտքնելով անգամ չեր անցնում, որ խորս ենք հրա թանկ ժամանակը: Եվ համարյա ամեն օր կրկնվում էր հույնը: Այդ սուսնը դարձել էր մի տեսակ հավաքանեղի երիտասարդ առեղծագործողներին համար:

Հիմա, երբ արդեն հիսունն անց եմ, իսկ Ռուբեն Զարյանը բոլորուն է իր յոթանառունը, երջանիկ ու երախտապարս եմ, որ շիվել եմ հմայիչ ներքինով, պայծառ ու տաղանդավոր այդ մարդու հետ, որ լցրեց մեր հոգիները գեղեցիկի գգացողությամբ:

ՀՈՎԱՐԴ ՄԻՐՋՈՅԱՆ
Կոմպոզիտոր, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ


ԱՐՎԵՍՏԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՍՁ ՈՒՂԵԿԻՑԸ

Դնձ համար դժվար է բացատրել, թե ինչու արվեստությանն ու քննադատությանն ամրողապես նվիրված մարդու գործունեությունը միշտ չէ, որ առանում է պատշաճ գնահատություն և ճանաչում. նաև ավելի շուտ հանդեն է զայխու որպես ուղեկիցը որիշ երևույթի, բացատրելով նրա դերը, սրբության մեջ այն, օգնելով նրա հաստատմանը: Պատկերն արմատապես փոխվում է, եթե գործ ունենք մի անհատի հետ, որն զբաղված է «զուտ» ստեղծագործական աշխատանքով (և ուս բարձր երևույթ է): Նաև գրեթե անշիշապես դառնում է ոչադրության կենսորոն, շրջապատվում է իր տաղանդի երկրպագուների մեծ շրջանով, մի խորով, դառնում է նշանակալից և ազդեցիկ դեմք:


Սհմա այս սովորական և բնորոշ իրավիճակում Ռուբեն Զարյանի՝ գիտնականի, արվեստաբանի, քննադատի օրինակը հազվադեպ բացառություն է: Որն է նման բացառության պատճառը: Ինչու է նա զբաղեցրել այդքան մեծ ու նշանակալից տեղ մեր հասարակության հոգևոր կյանքում:


Խնդիրն ինարկե զուտ այն չէ, որ նա տաղանդավոր, մեր մշակույթի ու արվեստի զարգացման նախառագործ կենսավանորդեն շահագրգուված մարդ է: Գլխավորը, ինչպես ինձ թվում է, այն է, որ Ռուբեն Զարյանը խոշոր անհատականություն է, արտասովոր, հոգական և մտավոր ներաշխարհի միայն իրեն հասուն հարատությամբ: Եվ շնորհիվ այդ հատկության նա, որպես մեր իրականության ամենից ավելի կարևորուն անհատներից մեկը, շատ բանի վրա է ազդում իր իրազեկությամբ, ուժով, համոզումով:

Անհատական անկրկնելիությունը բահանցում է անզամ նրա արտաքինից... Դեռ պատահեկան տարիներից հիշում եմ մի մարդու, որին անձնաւես չի ճանաչում, չգիտեի թե ով է նա, բայց համայն տեսնում էի նրան



1966





1979

Երևանի փողոցներում և ակամա առանձնացնում էի շրջապատից: Նա հի-
նար էր, շատ անսովոր արտաքինով, միշտ քայլում էր արագ, նպատակա-
մոված ու շտապ. նրա մարմինը միշտ առաջ էր մղված և կարծես փոքր-ինչ
թերված մի կողմ (դա ընդգծում էր նրա վլացիկ քայլվածքը), և, որպես կա-
նոն, թեփ տակ ուներ որևէ բան՝ թղթապահակ կամ պորտֆել: Հետո իմա-
ցա, որ հետեւ դա էլ ինքը Ռուբեն Զարյանն է, որի մասին լույլ էի:

Սյուն տարիներին մենք շփվելու առիթ չունեցանք: Ինձ միայն լուրեր էին
հասել շատ աղմուսությունների մասին, կապված նրա կարծեցյալ
«սխալների» ու «մոլորությունների» հետ, որոնց համար հանդիրավի տուժել
էր: Կարող եմ խոստովանել, որ դա իմ մեջ ավելի մեծ համակրանք ու հար-
գանք էր առաջացնում նրա հանդեպ: Այդ զգացումը տարիների հետ ուժե-
ղացավ ու ամրապնդվեց, մանավանդ, եթե ինձ վիճակից անձամբ ծանրա-
նալ նրա հետ ու համոզվել, թե ինչ հսկայական դեր է նա կատարում մեր
արվեստի ճակատագրում:

Ռուբեն Զարյանին որպես արվեստաբանի հոգում է հարցերի ու պրոբ-
լեմների լայն շրջան, այդ թվում և երածշուրջան մետ կապված խնդիրները:
Ոչ ասկա ստիթեներ են եղել համոզվելու, թե որքան ճշգրիտ ու դիպուկ է
ևս գեահասում այն երևույթները, որոնք հատկանշում են մեր երածշուրջան
մշակույթի զարգացումը: Երածշուրջան մասին նրա դրասուրությունները
միշտ կրքուն են, «պայտունակ» (լավ իմաստով), հաճախ կտրուկ և կատե-
գորիկ: Եթե ոչ ողջակիորեն (երածշուրջունը նրա անմիշական բնագավա-
ռու չէ), ապա դրանք անպայման ներգործում են մեր երածշուրջան կյանքի
վրա: Եվ դա հասկանալի է, քանի որ նրանցում առկա է Ռուբեն Զարյանի
հսկայական կենսափորձը, արտիստական նորր ինտուիցիան և ամենագրլ-
իալորը՝ այսուել զգացվում է մշտական զգայուն ուշադրություն ու հոգա-
տարրոցն այն խնդիրների ու երևույթների նկատմամբ, որոնցով ապրում
է մեր հասարակությունը:

Ինձ անձանոթ է Ռուբեն Զարյանի կենցաղի կանոնակարգը (ուգլա-
մենտը), աշխատանքային օրվա նրա կազմակերպումը: Բայց ինձ միշտ զար-
մացրել ու հիսացրել է, թե որքան շատ բան է նա հասցնում անել: Դա մի
ահնելի ներքին ակտիվություն է, որ գոնվում է մշտական գործողության
մեջ՝ նրա խառնվածքի ամենաբնորոշ գիծը, հատկույթուն, որ այժմ էլ բնու-
թագրում է մեր արվեստաբանության համապետի գործունեությունը ոչ պա-
կաս, ինչպես և անցյալ տարիներին:

1979

161

ՀՈՅԵԼՅԱՆԱԿԱՆ ՓՈՍՏԻՑ

ՊԱՎԼՈ ՏԻՉԻՆԱ

ՌԱԿԱՆԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔԱՆԱՍՏԵՂԾ

Միտանց ողջունում եմ և շնորհավորում ականավոր գիտնական, գրականագետ, արվեստաբանական ուժերի կազմակերպիչ թանկագին Ռուբեն Վարդուփիշ Զարյանի փառավոր հիմնամյակը։ Ծառ բան է արել Ռուբեն Վարդուփիշը հայ սովորական մշակույթի զարգացման, ուս ժողովրդի գրլխավորությամբ մեր երկրի եղբայրական ազգերի կուլտուրաների համագործակցության համար։ Ընկեր Զարյանից, բարեկամության թերին հատած, շատ հաճախ մեզ են հասնում տեղեկություններ նրա նվիրական գործութեության մասին՝ հանուն երկրագնդի վրա ապրող բոլոր մարդկանց խաղաղության և երշանկության։

Մենք նրան ՌԱԿԱՆԱՅԻ լավ գիտենք և սիրում ենք։

1959
Կիւ

ՍՈՒՐԵՆ ՔՈՉԱՐՅԱՆ

ՌՍՅԱՀ և ՀՍԽՀ ժողովրդական արտիստ

Ցավում եմ, որ անհապաղ մեկնելու անհրաժեշտության պատճառով հնարավորություն չունեցաւ անձամբ շնորհավորելու Ռուբեն Զարյանին՝ նրա ծննդյան 60-ամյակի առիթով, հայրենի արվեստին մատուցած բազմամյա ծառապությունների համար։

Այդ փայլուն գրականագետը, թատերագետը, հայ գիտնական-իմաստութեարի մեծ ականահոգութեարի արժանավոր ժառանգորդն ու շարունակողը,

որ հիմնավի կերպով հայ արվեստաբանությունը համալրում և ճոխացնում է ուսումնակույցի նվազումներով, հայկական տպետական անդրանիկ արվեստի ինստիտուտի անդրանիկ տնօրինեան՝ Ռուբեն Զարյանը սեր ու ճանաչում է ձեռք բերել Հայաստանի սահմաններից շատ ու շատ հեռու, շնորհիլ իր հոյակապ ծանրակշիռ աշխատությունների, թատերագիտական բազմաթիվ հոդվածների և ասույթների, որ հիմք ու օրինակ են իմ հայրենիքի թատերագիտական հետազոտական աշխատավոր ուժերի համար:

Սրտանց շնորհավորում եմ, հպարտանում համեստ ընթերոջ, հմայիչ մարդու, ականավոր գիտնականի համար: Գրկում եմ, սեղմում սրտիս:

1969
Մոսկվա

**Գ.ՐԻԳ.ՈՐԻ ԿՈԶԻՆՑԵՎ
ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր**

Թանելիագին Ռուբեն Վարոսովիչ.

Սամրոջ սրտով ողջունում եմ Ձեզ՝ Զեր հոբելյանի առթիվ: Այդ հոբելյանը մեծ տռն է բոլոր հրանց համար, ովքեր սիրում են Հայաստանի բարձր մշակույթը և Շեքսպիրին:

Զեր գրքերից ես ծանոթացած հայ ժողովրդի մեծ ողբերգակների հիմնավի ավանդներին և ինացա, թե որքան հարուստ է հայ շեքսպիրագիտության դպրոցը, որի համար դուք այնքան բան եք արել:

Հանելի էր տեղեկանալ, թե անզիստի ներք Շեքսպիրի հայրենիքում ինչպիսի հարգաճքով են վերաբերվում Ձեզ և Զեր աշխատանքին:

Յանելիագին եմ Ձեզ առողջություն և երջանելություն, անհամբերությամբ սպասում եմ Ձեր նոր աշխատանքներին:

«Գրական թերթ», 1969, 5 դեկտեմբերի, № 48:

**Վ.ԵՐԻԿՈ Ա.Ն.ԶՍ.ՓԱ.ՐԻԶԵ
ՍՍՀՄ ժողովրդական արտիստուիժ**

Թանելիագին Ռուբեն Վարոսովիչ. ի խորոց սրտի շնորհավորում եմ Ձեզ՝ Զեր ծննդյան 70-ամյակի առթիվ, Ձեր գեղեցիկ, հագեցած, ներդաշնակ

կյանքի, ատեղծագործական անսահմանափակ հնարավորություններով հաս-
կանչփող կյանքի լորանանամյա տարելիցի առջիվ: Զեր անսպառ ձիրքն
ու անձնվեր, ոգեշունչ հայրենափրությունը անխղեղորեն միաձով են եղել
ի սկզբանե՝ նվիրվելով արարման գործին, Հայաստանի մշակույթն ու ար-
վետուն առաջ մղելու գործին: Դա Զեր մտքի ու սրտի պահանջն է: Ես միշտ
զգացել եմ Զեր հոգու շերմությունը: Մարդկայնորեն գեղեցիկ եք Դուք, և
դուք համար ես սիրում եմ Զեզ: Ապրեք երկար-երկար: Դուք արժանի եք
երջանիկ լինելու: Գրկում եմ Զեզ:

1979
Թիվ 1

ՊԱՎԼԵ ՄԻՅՈՎԻՀ

Բեղդրապի հնագիտության ինստիտուտի պրոֆեսոր

Պրոֆ. Ռուբեն Զարյանին՝ հայ գրականության և արվեստի ականավոր
պատմաբանին, թատերագետին և շեքսպիրագետին, որի անմոռանալի հո-
գատությունը, հյուրասիրությունն ու բարեկամությունը ես պատիվ ունե-
ցաւ վայելելու Հայաստանի արվեստին նվիրված երկրորդ միջազգային սիմ-
պոդիումի ժամանակ մեր հանդիպման առիթով՝ 1978-ին Երևանում, հարգ-
ված պրոֆեսորին՝ երա ծննդյան 70-ամյակի առթիվ հոյում եմ իմ ամենա-
սրտագին շնորհավորանքները և լավագույն մատղանքները՝ երան ցանկա-
նալով երկար կյանք և գիտական բեղմնավոր գործունեություն: Մեծ հաճույ-
քով հարավավական մամուլում ես հանդես կգամ հանգամանալի մի հոդ-
վածով՝ նվիրված Զարյանի հորելյանին:

1979
Բեղդրապ.

ՖՐԱՆԶԵՍԿՈ ԳԱՆԴՈՒՅՈ

Ծարտապետության տեսաբան, Հոռոմի համալսարանի դասախոս

Սիրելի Ռուբեն Զարյան.

Զեր ծննդյան 70-ամյակի առթիվ ես մեծ հաճույքով միանում եմ բոլոր
երանց, ովքեր ստեղծում են այդ իրադարձությունը: Զեր արժանիքները որպես
թատրոնի պատմության գիտակի, մասնավորապես Զեր գործերը նվիրված

Ծերսպիրին և գրականության այդ մեծ դասականի թողած ազդեցությանը հայ դրամառորդիայի վրա և ամենը, ինչ Դուք արել եք մյուս ասպարեզ-ներում օժանդակելու համար մշակութային փոխվարդուումներին և բարեկա-մությանը Հայկական ՍՍՀ-ի և Խոհակայի միջև խոր երախտագիտությամբ է, որ ես հիշում եմ ներկա առիթով: Ես անդրադառնում եմ հաստիավել այն գերազանց հյուրասիրությանը և անվիշարինելի համագործակցությանը, որը, Զեր դեկավարությամբ, հայկական գիտությունների ակադեմիայի ար-վաւոհի հնատիտուտը այնքան հաճախակի ցուցաբերել է իմ գործընկերների և իմ նկատմամբ: Վերջին առիթը անցյալ տարի Երևանում կայացած անսո-ուանայի գիտաժողովն էր, որ մեզ հնարավոր լավագույն պայմանները ըն-ձեռնեց ուսումնաասիրելու Հայաստանի միջնադարյան ճարտարագետությունը, որ համաշխարհային մշակութային ժառանգություն է: Ես կարծում եմ, որ այս բոլոր Զեր աշխատանքները՝ գրական ըննադատության և պատմության վերաբերյալ, Զեր, որպես գիտնականի արժանիքներն են ի ցուց հանում, երկու դեպքում ել Դուք ցուց եք տվել, թե ինչպես գիտելիքները կարող են հապատել փոխվարդուումնան մեր անվիշարինելի հարաբերությունների ստեղծ-մանը:

Ցանկանալով Զեր երկար տարիների բեղմնավոր գործունեություն, ես Զեր իմ ամենաանկեղծ և սրտագին շնորհավորանքներն են հղում:

1979
Հոռոմ

Բ. ԲՐԵՆՑՅԵՍ

Վիտենբերգի համալսարանի պրոֆեսոր

Դ.Բ.—Պ.Ռ.Ֆ. ՌՈՒԲԵՆ ԶԱՐՅԱՆԻՆ.

Մեծարդող կոլեգա.

Թույլ տվելք ինձ՝ հայ արվեստի և հայ ժողովրդի իր ազգային անկախու-թյան և հայ մշակույթի վերածնության համար ցուցաբերած արիության առջև ակնածանքով խոնարհողին, Արա մշակույթի ականավոր ներկայացուցին շնորհավորել հոբելյանի առջիվ: Ցանկանում ենք Զեր տասնամյակներ շա-րունակ հոյն ոգով և ոգևորությամբ ծառայել հայ մշակույթի կառուցման գործին, ինչպես արել եք մինչև այժմ:

Զեր ղեկավարած ինստիտուտը մեծագույն գիտական ձեռքբերումների շնորհիլ համաշխարհային համբավ ունի, որի ապացուցն եղավ 1978 թվականին կայսացած Երկրորդ միջազգային գիտաժողովը՝ Ավիտված հայ արվեստին: Հաճույքով և շնորհակալության գգացունով ենք մենք մտաքերում այն: Վերատին ընդունեք իմ բարի մաղթաները Զեր 70-ամյակի առթիվ:

1979

Վիտենբերգ

ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿՈՄԵՆՍԿԻ Արվեստաբան

Թանկագին և մեծարգո Ռուբեն Վարոսովիչ:

Սննդեղ ուրախությամբ ընդունեցի այն հաղորդագրությունը, որ Դուք քարձը պարզէի եք արժանացել Զեր հորեալանի կապակցությամբ: Ես ընդհանրապես ամեն տեսակ կոչումներին և պարզեներին վերաբերվում են սկեպտիկորեն, բայց լավ հիշում եմ Անատոլ Ֆրանսի սարկաստիկ դիտողությունն այդ առիթով («Ժամանակակից պատմության» մեջ). «Պարոն Բերժերեն արհամարհում էր շքանշան սաված բանը, սակայն հոգու խորքում խստովանում էր, որ այդ արհամարհանը համոզիչ է սուկ այն ժամանակ, եթե շքանշանը կախված է կրծքիդ»...

Այսպէս որ, հիմա Դուք կարող եք դավանել նույն հավատը, ինչ պարուն Բերժերեն, միայն թե չվախենարով կօր ակնարկներից:

Իսկ ինձ այդ պարզեն ուրախացել է այն պատճառով, որ ես ի դեմս Զեզ տեսնում եմ Հայաստանի ժամանակակից մտավորականության ամենաարժանապիր և իմաստուն ներկայացուցիչներից մեկին: Ես Զեզ հետ ծանրացել եմ վաղոց և հեռակա կերպով, եթե իմ հոդվածներից մեկում խսում էի Զեր դիմաքանդակի մասին, որ Կոլսա Նիկողոսյանի տաղանդավոր գործերից է: Եթե տեսա Զեզ միմպովիտի ժամանակ, հասկացա, որ, այնուհանդերձ, Կոլյան ամեն ինչ չէ, որ նկատել է Զեր նկարագրում, ինչ-ինչ նըրքություններ սպրդել են նրա ուշադրությունից: Մասնավորապես հոգևոր կյանքի ազատությունը և իրոնիայի այն չափը, որ միշտ ուղեկիցն է իմաստնության:

Երկար տարիներ մոտ լինելով Հայաստանին և նրա արվեստին, ես սպորել եմ ազգային դարավոր ավանդությունների հետ ճշմարիտ տարրերել

արևելյան ոգով ու ձևով «կեցվածք ընդունած» առերևութից: Դուք, ինարկե, ճշմարիտների թվին եք պատկանում, այն ճշմարիտների, ինչպիսին եք անմոռանալի, իմ հոգուն ու մտքին հարազատ Մարտիրոս Սերգեևիչը, որ իր մեջ հայ գեղջուկի՝ հավերժ աշխատավորի հատկանիշները միավորում եք հայ ազգային ստեղծագործական հանճարի մեծ տարերքով դաստիարակված արվեստագետի փայտու արտիստականության և իմպրովիզացիոն ներշնչանքի հետ:

Եղեք առողջ և երշանիկ, թանկագին Ռուբեն Վարտովիչ:

1979
Մոսկվա

ԴՐ. ՖԵՆՋԵՆ

Դոցենտ, հրատարակչության դեկան (Բենվին)

Մեծարգու պարոն պրոֆ. Ռուբեն Զարյան.

Իմ հիացմունքն ու եզակի տպակիրությունը մշակովային ավանդույթ-ենու հարուստ և նշանակալի Զեր Երկրից միշտ կապվում է Զեզ հետ: Զեզ նաև աշխատում ու հարգում են իրեն հայ արվեստագիտության առաջնորդի և կազմակերպչի: Մենք Զեզ ներ պարուական, որ հայ արվեստի և ճարտարապետության պատմության և ներկայի ազգային ինքնությունն ու միշագգային ազդեցությունը դարձավ ընդլայնված գիտաժողովների և բրն-ճարկումների առանցքային խնդիրը և դուրս բերվեց համաշխարհային ասպարեզ:

Ընդ որում Դուք՝ որ հրատարակչության վաղեմի գործիչ եք, միշտ առանձնակի իմաստավորել եք խմբագրական ու հրատարակչական գործությունը:

Սուանց Զեր գործնական աջակցության հնարավոր չեր լինի Զեր աշխատայիցների գրչին պատկանող միշնադարյան հայ արվեստի Ակարագարդ հաստիրի ձեռնարկումը Union Verlag-ում:

Զեր այս բոլոր իմաստանք գործությունն համար ի սրտեւ շնորհակալություն եմ հայունում Զեր հոբելյանական պատվավոր տարեղարձին: Եվ շնորհավորում եմ Զեզ մեծապատիկ ձեռքբերումների համար ի բարօրություն Զեր Երկրի: Ցանկանում եմ Զեզ նորանոր հաջողություններ, առողջ և երշանիկ ներկար տարիների կյանք:

1979
Բենվին

ՎԱԼԵՆՏԻՆԱ ԿՈՄԱՐՈՎԱ

Բանասիրության դրկտոր, Լենինգրադի համալսարանի
պրոֆեսոր, շեքսափիրագետ

Մեծարգո Ռուբեն Վարոսովիչ.

Ընդունեք իմ շերմագին շնորհավորանքները և՝ հորելյանի, և՝ պարգե-
վատրման առջիվ: Ես մեծագոյն հարգանքով և երախտագիտությամբ եմ վե-
րաբերվում Ձեզ՝ իրք Շեքսափիրի ստեղծագործության ամենախոր և ինսա-
տուն հետազոտողներից մեջին: Իհարկե, Ձեր բազմակրողմանի գիտական
գործունեության մեջ Շեքսափիրը նրա բնագավառներից մեկն է միայն, բայց
ինձ համար հատկապես խանկ են Ձեր աշխատությունները Շեքսափիրի և
թատրոնի մասին:

Ես միայն մեկ անգամ եմ Ձեզ լսել (Յու. Ֆ. Շվեդովի պաշտպանությա-
նը) և հիացած եմ մնացել Ձեր հետաքրքիր ու գրավիչ եղութով: Հոյս ունեմ,
որ ինձ կիաջողլի լինել Ձեր Շեքսափիրյան գրադարանում:

Ցանկանում եմ Ձեզ բարի ողջություն, գրականության և Շեքսափիրի
ստեղծագործության մասին նոր գրքերի ստեղծում:

1979

Լենինգրադ

ԼԵՎՈՆ-ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ

Գրող

Սիրելի Ռուբեն Զարյան.

Խնդրեմ ներեք ինձ անգլերեն գրելու համար: Այդ ավելի դյուրին է: Ես
«սպիտակ շարդի» մի այլ զո՞ն եմ: Շնորհակալություն, որ ինձ ուղարկել եք:
Ձեր հուշագրությունների մի օրինակը: Այս առաջին հատորը գրավիչ կեր-
պով ընթերցվում է: Դա կարևոր փաստաթուղթ է, լավ գրված, գեղեցկու-
թյամբ և իմաստությամբ լի: Ուրախ եմ, լսելով, որ Դուք լիովին ապարինվել
եք երկրատու հիվանդությունից հետո:

Ես խորապես տպավորված եմ Ձեր ներկա հիաջողություններով, և վըս-
տահ եմ, որ նոր հայժանակներ են Ձեր առջևում: Դուք մեծապես օժտված
մարդ եք և լավ մարդ: Ձեր կարիերայի ցորաքանչյուր բնագավառ ունի իր
ուրուց հաշմանդաւորությունն ու դրաման, Դուք առեղծագործող եք եղել շատ-

ասպարեզներում, և ես մասնավորապես տպավորված եմ այն հոկայական աշխատանքով, որ Դուք կատարել եք Հայաստանում որպես շեքսպիրագէտ և Էնուուզիաստ: Մեր փոքրիկ հանրապետության մշակութային սահմանները ընդարձակ են: Մենք կարիք ունենք այդպիսի միջազգային կապերի: Խճշոր ձևով համերը միշտ եղել են աշխարհաբարազիներ՝ շատ մոտ շիտմերով Արևելքի և Արևմտաքի բաղադրակրթությունների հետ, Արևելքն ու Արևմտաքը մերձնեցնելով միմյանց, և Դուք շարունակում եք այդ ազգային ավանդույթը Ձեր թերոր ձևով:

Որպես Արվեստի ինստիտուտի հիմնադիր և տնօրեն Դուք մի հզոր զենք եք պահել Ձեր ձեռքում որպես մարդկային արարածների՝ մեր գոյատևման համար և ոչ միայն Հայաստանում, այլև ամենուր: Մենք չենք կարող ապրել առանց գեղեցկության: Ավելի շատ գեղեցկություն, ավելի շատ լուս: Գեղեցկությունը, ինչպես սերը, բոլորին եղբայրացնում է: Սօգերի իրական պատմությունը նրանց արվեստների փառավոր հաղթանակն է և Հայաստանը պատկանած է փառքով:

Ձերը մի հոգիչ և ներշնչող նվաճում է: Ես կասեի հերոսական կարիերա: Հաջողություն, երկար կյանք, անվերջ հաջողություններ՝ մեր ժողովրդին և համայն մարդկությանը ծառայելու Ձեր ուրախավոր որոշման համար:

1979

Կալիֆորնիա

ՄԱՐՏԻՆ ԼԵԶՆԵՐԸ

Գերմանական շեքսպիրյան ընկերության պրեզիդենտ

Ռուբեն Զարյանը, շնորհիվ խոշոր գիտական գործունեության և իբրև իր հիմնադրած գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի տնօրեն, ձեռք է բերել լավ ճանաչում: Նրա աշխատությունները ստացել են ինչպես ազգային, այնպես էլ միջազգային ճանաչում: Մենք երջանիկ ենք նրան տեսնել Վայնարյան շեքսպիրյան ընկերության պատվավոր բարեկամների շարքում, ընկերություն, որը կազմակերպվել է 1864 թվականին, և նրա հիմնադրման ստացին իսկ օրերից արտասահմանական անդրամասիկ անդամների շարքում եղել է ուս գրող Ի. Ս. Տորգենները, որը մինչև իր մահը մեծ նուանդով պաշտպան էր կանգնած մեր ընկերության: Ծատ տարիներ է արդեն, որ նը-

մանօրինակ հետևողականությամբ ու շանասիրությամբ նույն է անում նաև
Ռուբեն Զարյանը:

Առանձին շերտությամբ ենք մտաքերում Ռուբեն Զարյանի ակտիվ մաս-
նակցությունը 1970 թվականին, գլխավորապես ոռու և սովորական շեքս-
պիրագիտության նվիրված «Շեքսպիրյան օրերին» Վայնարդում, որտեղ հրա-
ամանուամբ եղածի թեման էր «Հայ շեքսպիրյան թատրոնի պատմությու-
նից», որը նետու տպագրվեց 1971 թվականին «Շեքսպիրյան տարեգրի»
107-րդ համարում:

1975
Վայնար

ՆԻԿՈ ԿԻՍՍԱԾՎԻԼԻ

Բանասիրության դոկտոր, պրոֆեսոր,
Թքիլիսի համալսարանի Շեքսպիրյան կարիերայի դեկանար

Կողենայի առանձնապես ընդգծել Ռուբեն Զարյանի անխոնչ ու բեղմ-
անվոր գործունեությունը հայ շեքսպիրյագիտության ասպարեզում: Նրա կող-
մայց շեքսպիրյան հոյսակազ գրադարանի հիմնադրումը, բազմահասոր «Շե-
քսպիրյան» ժողովածորի հրատարակությունը, ՍՍՀՄ գիտությունների ա-
կադեմիայի գիտական խորհրդի շեքսպիրյան հանձնաժողովի հայկական
բաժանումների դեկանարությունը վկայում են Հայաստանի ժամանակակից
մշակույթի մեջ և գիտական կյանքում այդ ականավոր անհատականության
հսկայական դերի նախին:

Ռուբեն Զարյանի բազմաքանակ գիտական հետազոտությունները և
մանկավարժական գործունեությունը նպաստում են հայ շեքսպիրյագիտու-
թյան հետագա զարգացմանը և այդ բնագավառում նոր գիտական կադրերի
աճին:

Խորապես ծանրակշիռ է Ռուբեն Զարյանի ավանդը սովորական շե-
քսպիրյագիտության մեջ:

1979
Թքիլիսի

ՎԻՃՈՂԴ ՕՍՏՐՈՎՍԿԻ

Պրոֆեսոր, Լոձի համալսարանի անգլիական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն (Լեհաստան)

Ուորեն Զարյանի գրքերով և «Շեքսպիրականի» հատորներով ինձ համար բացահայտվել է Շեքսպիրի հայկական մեծությունը:

1979
Լոձ

ԷԴՄՈՆԴ ՇՅՈՒՑ

Պրոֆեսոր (Բուդապեշտ)

Տանեամյակների ընթացքում, համառ ջանքերով Ուորեն Զարյանը ամուր հիմք է դրել Հայաստանի գիտությունների ակադեմիայի գեղեցիկ արվեստների զարգացման գործի համար, դրանով հետարակորդություն է տվել երիտասարդ մերնորդներին իր ստեղծագործական ունակությունները նվիրաբերելու գեղարվեստի տարբեր ճյուղերի ուսումնասիրության գործին:

Նրա մենագրությունները Հայաստանի դրամատիկ արվեստի առաջնորդող շրջանի հոչակավոր դերասանների և դերասանուհիների մասին կմնան որպես հայ դրամական թանարվեստի մշտական հուշարձաններ: Շեքսպիրագիտության ասպարեզում նրա գրական ակտիվության շերտիվ հայկական դրամատիկական և գրականագիտական ուսումնասիրությունները կանգնել են համաշխարհային շեքսպիրագիտության նվաճումների շարքում: Նույն նպատակին հասնելու համար անոր հիմք է դարձել նաև շեքսպիրյան համարածուն, որը նույնպես ինքն է հիմնադրել ստեղծագործական նախաձեռնության և տարիների անխոնչ հոգատարության շերտիվ:

Նրա գրականագիտական աշխատությունները հայ նոր գրականության վաղ շրջանի կազմակերպման նշանաձողերն են: Նրա հայրական հոգատարությունը ճանապարհ հարթելով հայ պոեզիայի խոստումնալից երիտասարդ տաղանդների ապագայի համար՝ Ուորեն Զարյանին դարձել են ժամանակակից հայ գրականության մի խոկական հովանավոր:

1979
Բուդապեշտ

ՄԱՐՎԻՆ ՌՈՋԵՆԲԵՐԳ

Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր, շեքսափիրագետ (ԱՄՆ)

Ծնորհավորանքներ պրոֆեսոր Ռուբեն Զարյանին նրա ծննդյան 70-ամյակի առթիվ, ևաև շնորհավորանքներ հայկական գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտին նրա առնչության համար մի այդպիսի հշանավոր շեքսափիրագետի հետ: Ես մեկն եմ նրա ամերիկյան գործընկեր-ներից, որն օգտվել է նրա ուսումնասիրություններից և ազնիվ օժանդակու-թյունից: Թող նա ավելի շատ արդյունավետ տարիներ ունենա:

1979

Կալիֆորնիա

ՀՅՈՒՍԻԵՆ ՔԻՏԱՐ

Գրենորի համալսարանի պրոֆեսոր, շեքսափիրագետ (Ֆրանսիա)

Ես առանձնապես երջանիկ եմ միանալով հոգով և սրտով պրոֆեսոր Ռուբեն Զարյանի ծննդյան 70-ամյակի տոնակատարության կազմակերպիչ-ներին և մասնակիցներին:

Խնդրեմ քարի եղեք նրան հաղորդել իմ ամենալավագույն և քարեկա-մական ցանկությունները՝ ի նշան այն մեծ ակնածանքի, որ ես անձնապես տածում եմ նրա ակնառու ներդրումների համար շեքսափիրագիտական ուսում-նասիրությունների ասպարեզում, որը նրան բերել է համաշխարհային հար-գանք և հիացում:

1979

Գրենորի

ՌՈՒԴՈՒՔ ՀԱԲԵՆԻՆՏ

Ամերիկյան շեքսափիրյան ընկերության հիմնադիր

Ամերիկայի Շեքսափիրյան ընկերությունը խորապես պարտավորված է Ռուբեն Զարյանի ներդրումների համար համաշխարհային շեքսափիրյան մա-

ՎԻՏՈԼԴ ՕՍՏՐՈՎՍԿԻ

Պրոֆեսոր, Լոձի համալսարանի անգլիական ուսումնասիրությունների ինստիտուտի տնօրեն (Լեհաստան)

Ուրբեն Զարյանի գրքերով և «Ծերապիրականի» հաստրեներով ինձ համար բացարձայովել է Ծերապիրի հայկական մեծությունը:

1979
Լոձ

ԷԴՄՈՆԴ ՇՅՈՒՑ

Պրոֆեսոր (Բուդապեշտ)

Տանեամյակների ընթացքում, համար ջանքերով Ուրբեն Զարյանը անոր հիմք է դրել Հայաստանի գիտությունների ակադեմիաի գեղեցիկ արվեստների զարգացման գործի համար, դրանով հնարասակորությունն է տվել երիտասարդ սերնդին իր ստեղծագործական ունակությունները նվիրաբերելով գեղարվեստի տարբեր ճյուղերի ուսումնասիրության գործին:

Նրա մենագրությունները Հայաստանի դրամատիկ արվեստի առաջնորդող շրջանի հոչականուր դերասանների և դերասանութիւնների մասին կմնան որպես հայ դասական թեատրալաւուսի մշտական հուշարձաններ: Ծերապիրագիտության ասպարեզում նրա գրական ակտիվության շնորհիվ հայկական դրամատիկական և գրականագիտական ուսումնասիրությունները կանգնել են համաշխարհային շերապիրագիտության նվաճումների շարքում: Նոյն նպատակին հասնելով համար անոր հիմք է դարձել նաև շերապիրյան հավաքածուն, որը նույնպես ինըն է հիմնադրել ստեղծագործական նախաձեռնության և տարիների անխոնչ հոգաւարության շնորհիվ:

Նրա գրականագիտական աշխատությունները հայ նոր գրականության վաղ շրջանի կազմավորման հշանաձողերն են: Նրա հայրական հոգաւարությունը ճանապարհ հարթեղով հայ պոեզիայի խոսումնալից երիտասարդ տառանդների ապագայի համար՝ Ուրբեն Զարյանին դարձել են ժամանակակից հայ գրականության մի խոկական հովանավոր:

1979

Բուդապեշտ

ՄԱՐՎԻՆ ՌՈԶԵՆԲԵՐԳ.

Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր, շեքսպիրագետ (ԱԱՄՆ)

Ծնորհավորանքներ պրոֆեսոր Ռոբեր Զարյանին նրա ծննդյան 70-ամյակի առթիվ, նաև Հնորհավորանքներ հայկական գիտությունների ակադեմիայի արթատի հետխոտութին նրա առնչության համար մի այլպիսի հշանավոր շեքսպիրագետի հետ: Ես մենք եմ նրա ամերիկյան գործընկերներից, որն օգտվել է նրա ուսումնասիրություններից և ազնիվ օժանդակությունից: Թող նա ավելի շատ արդյունավետ տարիներ ունենա:

1979
Կալիֆորնիա

ԼՅՈՒՍԻԵՆ ՔԻՏԱՐ

Գրենորի համալսարանի պրոֆեսոր, շեքսպիրագետ (Ֆրանսիա)

Ես առանձնապես երշանիկ եմ միանալով հոգով և սրտով պրոֆեսոր Ռոբեր Զարյանի ծննդյան 70-ամյակի տոնակատարության կազմակերպիչներին և մասնակիցներին:

Խնդրեմ բարի եղեք նրան հաղորդել իմ ամենապայմանագույն և բարեկամական ցանկությունները՝ ի նշան այն մեծ ակնածանքի, որ ես անձնապես տածում եմ նրա ակնառու ներդրումների համար շեքսպիրագիտական ուսումնասիրությունների ասպարեզում, որը նրան քերել է համաշխարհային հարգաճը և հիացուած:

1979
Գրենոր

ՇՈՒԴՐՈՒՅ ՀԱԲԵՆԻԼՍ

Ամերիկյան շեքսպիրյան ընկերության հիմնադիր

Ամերիկայի Շեքսպիրյան ընկերությունը խորապես պարտավորված է Ռոբեր Զարյանի ներդրումների համար համաշխարհային շեքսպիրյան մա-

տենագիտության մեջ: Համաշխարհային շեքսպիրագիտությունը բավականին հարստացել է Հայաստանում Շեքսպիրի վերաբերյալ Զարյանի անձնական մերդումների շնորհիվ:

1978
Նոյ Յոր

ԵԼԵՆԱ ՍՏԵՊԱՆՈՎԱ

Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր

Մեծարգու Ռուբեն Վարդսովիչ.

Զեր ծննդյան յորանաստենայալի օրը ցանկանում եմ ամբողջ հոգով շնորհագործել Զեր այդ կարևոր տարեթվի առթիվ: Թող տարիներ ու տարիներ շարունակվի Զեր գիտական, գրական և մանկավարժական գործունեությունը, որ այնպես սերտորեն կապված է ոչ միայն ազգային, այլև համաշխարհային մշակույթի հետ: Հանդիպումն ամսափառ մարդու հետ, ինչպիսին Դուք եք, ճակատագրի շնորհ է: Այն ժամանակ, 1972-ին, Թրիխիսում Դուք ասացիք ինձ, թե մարդուն ճանաչելը աստիճանական պրոցես է, և ես այդ խոսքը պահում եմ հիշողության մեջ իբրև այն դասերից մեկը, որ միայն կյանքն է ուսուցանում: Դուք օժտված եք այն հատկանիշով, որ ես մարդկային բոլոր հատկանիշներից բարձր եմ գնահատում, — բարություն է դա, և ես եթե հավատացյալ լինեմ, կիսնորեի անհմանայի գորությանը, որ Զեր կյանքը երկարեր անվերջ...

«Нас мало избранных, литомцев праздных,
пренебрегающих презренной пользой,
единого прекрасного жрецов».

Ես ինձ չեմ դասում այդ «մենք»-երի թվին, ես ընդամենը «ենթավարպետ» եմ, բայց դրա պատճառով ևս չի՝ կարելի խեղաթրութել Պուշկինի սովորը՝ փոխարենը «դուք» դնելով:

Եղեք առողջ և երջանիկ:

1978
Մոսկվա

ՅՈՒՍՈՒԹ ՔԱՐԾ
Լուսանկարիչ (Կանադա)

Սիրելի պրոֆեսոր Զարյան.

Ես միանում եմ Երևանում և արտասահմանում գտնվող Զեր բազմաթիվ գործընկերներին և բարեկամներին՝ Զեզ ցանկանալով ծննդյան ամենահրաշալի մի յոթանասունամյակ:


Զեր կյանքը եղել է արտիստական և մշակութային մի մեծ հանրագումար՝ ինքնատիպ ներդրումներով հայ գրականության մեջ, շերսպիրագիտական աշխատություններով և գրականության ու թատրոնի երիտասարդ մարդկանց հանդեպ բաշարականություն:

Ես անձամբ կարող եմ ասել, թե որքան մեծ հաճույք էր ինձ համար ողջունել Զեզ և Զեր բարեկամ արվեստագետներին, երբ Դուք այցելեցիք Օտարական հոկու ունեմ, որ մեր ճանապարհները մի օր նորից կիսաշամալվեն:

Թող Զեր ծննդյան յոթանասունամյակին հաջորդեն արվեստի ասպարեզում բեղմնավոր և առեղծագործական աշխատանքի բազում տարիներ:

1979

Օտուավա.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՐԴՎԱԾՆԵՐ

Տիգրան Հայումյան—Ռուբեն Զարյանի միսնամյակը	5
Լուս Քաղաքար—Սիրանովշագինուրյան մլպրնավորումը	13
Պարույր Սևակ—Վերակենուացած Ադամյանը և իր վերակենուացնողը	15
Վարդան Աճեմյան—Հպարտ ենք, Բավատում ենք	18
Լև Վագեներ—Սյոյանի մարդիկ չեն ծերանում	21
Սարգիս Մելիքսեյյան—Արվեստագետի Բաշվեկշիոյ	24
Սրտածն Մխիթարյան—Հայրենաշունչ գիտնականը	27
Վիգեն Խելումյան—Սիրեկի մարդու և Բանրամայստ գիտնականը	30
Պարույր Սևակ—«Դու»-ով և սրտի թթիռով	32
Արամ Գրիգորյան—Ռուբեն Զարյան	34
Լոիս Մարտիրոս—Առաջնակարա շերափրագետներից մեկը	40
Տ. Սաբաներ—Հայկական շերափրայան կենտրոնի միսնադիրը	41
Նշան Մուրադյան—Ռուբեն Զարյանի վաստակը	41
Հրանտ Թամրազյան—Բարձր Աերշնչումների գիտականը	46
Դիոն Հակոբյան—Ռուբեն Զարյանի գիտական վաստակը	52
Ճրաշյան Հովհաննեսիսան—Մարդու գեղեցիկ կոչմամբ	57
Դերմ Զեյթունցյան—Նշանավոր արվեստաբանը	61
Ռուզան Մարգուհի—Ռուբեն Զարյանի աշխատությունները այլ լեզուներով	65
Անելիկա Գրիգորյան—Ծերսապիհի մեն	71
Լուս Խալալյան—Արվեստի ուսուցիչ, ուսուցապետ	74
Լուս Համբերդյան—Ռիշիների մեջ	79
Լևոն Բրետանեցիկի—Նրա գիտակազմակերպչական տաղանդը	83
Մարտին Մարինոսյան—Մի քանի խոսք ավագ ընկերոջ մասին	86
ԳՐՉԱԿԻՑ ԸՆԿԵՐՆԵՐԻ ԽՈՍՔԸ	
Միրվա Կապուտիկյան—Զարյանն իրենու միացնում է բոլորին	91
Ալիսիա Կիրակոսյան—Երշամիկ եմ, որ բարեկամն է	92
Մերո Խանզադյան—Մարտ, որ ապրում է ալրվելով	93
Վարդգետ Գետրոյսյան—Նա մեր բաղաքը և մշակույթի գումարից է	95
Սուրեն Սալարյան—Գիտության պոեզիան	97
Մերգել Սարինյան—Ռուբենգալոյանականը մեր մշակույթում	99
Գրիգոր Տեր-Գրիգորյան—Սիրեկի ուսուցիչ	100
Ազերսանդր Արքամանյան—Վաստակ, որ շարունակվում է	102
Ժորա Հարուրյունյան—Խորը գիտեկիցներ և անասման բարեկրթություն	105
Ռազմիկ Գավոյան—Մեր միջնորդյան ուկել կապը	107
Վաղիս Մելիքսեյյան—Ռուբեն Զարյանի ավանդը	109
Ցուրի Ասիմ—Ծոռալ ուզի	111
Դմիտրի Ռոբառ—Ավանդություն մեկնարան ու պամանողը	116
Գևորգ Էմին—Իմ օրական կարամալը	114
Անահիտ Սամինյան—Ռուբեն Զարյանը մեր սերմոյի կանքը	119
Մարտ Մարգարյան—Ռուբենը, իր խառնվածքը ու իր տունը	124

Վահրամ Փափազյան—Ստեղծագործողի տարիները աշուններ չունեն	131
Մարտիրոս Սարյան—Բազմամուտ թատերագետը	133
Լադո Գովիդաշվիլի—Նշանակալից է նրա վաստակը	133
Հրաչյա Ղափանյան—Մայնենի մշակովի տաշամարտիկը	134
Օգա Գոյազյան—Գնահատում ևն	137
Մարիամ Ապամազյան—Ինչ լավ է, Ռուբեն, սիրելիս, որ դու կաս	
Մինք Արեգյան—Ռուբեն ևն, որ նա իմ ժամանակակիցն է	139
Հովհաննես Զարդարյան—Ռակերերան Ռուբենը	140
Արու Սարյան—Ին վաղեմի բարեկամը	142
Վաղինակ Մարգոնին—Հճուտ բննախաղը	144
Մետաքսա Սիմոնյան—Բնմական կյանքին ուղեկիցն ու խորհրդատուն	146
Վարդուհի Վարդերեսյան—Խորամիտ թատերագետը	147
Արա Շեքարյան—Վաստակաշատ արվեստաբանը	148
Խորեն Արքանամյան—Ին խիստ ու պահանջվող ուսուցիչը	149
Զավեն Տատինցյան—Հավատացի նրան ողջ կյանքին համար	150
Երվան Ղազանչյան—Սզգային մշակովի համապետը	152
Ռաֆայէլ Ջրբաշյան—Հազվագյուտ մանավարդը	153
Գեղրդի Տիգրանով—Խեցնատիպ նոտանող արվեստաբանը	155
Հենրիկ Մալյան—«Միայն մի դասախոսություն»	156
Էղօքար Էլքակյան—Երջանիկ ու երախտապարտ եմ, որ շփվել եմ նրա մետ	157
Էղվարդ Միրզոյան—Երվեստի և արվեստագիտության անխոնց ուղեկիցը	160
 ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՓՈՍԹԻՑ	
Պատ՛լու Տիշինա (Կիև)	163
Սուրեն Քոչարյան (Մոսկվա)	163
Գրիգորի Կողինցն (Լենինգրադ)	163
Վերիկո Անջափարիձե (Թբիլիսի)	164
Պալլի Միջովիչ (Բելգրադ)	164
Ֆրանչեսկ Գանդուլիս (Հռուս)	165
Բ. Բերնարդս (Բերլին)	165
Վակերսանիր Կամենսկի (Մոսկվա)	166
Ֆենակին (Բեռլին)	167
Վալենտինս Կոմարովս (Լենինգրադ)	168
Լուի-Զավեն Սյուրմալյան (Կալիֆորնիա)	169
Մարտին Ամեներս (Վայմար)	170
Նիկո Կիասաշվիլի (Թբիլիսի)	171
Վիտոլդ Օստրովսկի (Լոնդ)	171
Էղման Շյուր (Բուլղարիա)	172
Մարիմի Ռոգեներեր (Կալիֆորնիա)	172
Լուիժին Քիտար (Գրենուլ)	173
Ռուդոլֆ Հարեմիխս (Վոյտ Ֆորբ)	173
Եղինա Ստեփանովա (Մոսկվա)	173
Յուսուֆ Քարշ (Օստավա)	174
	175

ՌԱԴԻԱՆ ՎԱՐՈՍԻ ԶԱՐՅԱՆ

Նկարիչ՝ Կ. Կ. Ղաֆարյան
Գեղ. Խմբագիր՝ Զ. Ի. Մարգսյան
Տէս. Խմբագիր՝ Ա. Ս. Մարգսյան
Վերատուրող պրագրիչ՝ Մ. Ն. Բարյան

ՎՖ 04558,

պատվեր 1476,

տպարանակ 1000

Հաճանված է շարվածքի 8.07.1980 թ., ստորագրված է տպագրության 4.04.1981 թ., թուղթը
տպագրական № 1 70×90^{1/16} տառատեսակը «նորբ», տպագրությունը «բարձր»,
14,04 պայմ. տպ. մամլզ, 8,0 դրամ. մամ+5 ներդիր զինը 1 ռ.:

Հայլական բառերական ընկերություն Երևան-9, Լենինի պ. 48:

Երևանի պետական պատմապատման տպարան, Երևան, Արտվան փ. 52:

Армянское театральное общество, Ереван-9, ул. Ленина, 48.

Типография Ереванского госуниверситета, Ереван, ул. Абовяна, 52.

1 fl.

A ii
65715



220065715